

ԴԱԻԻԹԻ ՍԱՂՄՈՍՆԵՐԸ

Աշխարհաբար

2019



Հրատարակութիւն

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

Օժանդակութեամբ՝

**ՍՈՒՐԻՈՑ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ**

ISBN 978-614-8001-60-4

ՍԱՂՄՈՍԸ՝ ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՊԱՏՇԱՃՈՂ ԱՂՕԹՔԸ

Սաղմոս բառը, որ առնուած է յունարէն *Psalms* բառէն եւ գործածուած է միայն Նոր Կտակարանին մէջ, կը նշանակէ քնարական երգ կամ օրհներգութիւն: Ան, իր իւրայատուկ ձեւով, կը համարուի իբր խտացումը Հին Կտակարանի մէջ պարունակուած կրօնական գիտելիքներուն ու գործադրելիքներուն: Նոր Կտակարանը, իր կարգին, մեծաւ մասամբ որդեգրած է զանոնք եւ օգտագործած շատ մը առիթներով, ցոյց տալով թէ Նորը Հինին շարունակութիւնն է՝ կատարելագործուած եւ իրագործումն է խոստացուած փրկութեան:

ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Սաղմոսները յօրինուած են Քրիստոսէն երեք դար առաջ: Անոնց հեղինակները մէկէ աւելի են, սակայն մեծամասնութեամբ, այսինքն 73-ը, կը վերագրուին Դաւիթ մարգարէին, եւ ասոր համար ամբողջութեամբ մանչցուած են իբրեւ «Դաւիթի Սաղմոսները», իսկ մնացեալները կը պատկանին նուազ ծանօթ մարգարէներու կամ անծանօթ հեղինակներու: Սակայն անոնք բոլորը նոյն հոգեւոր ներշնչումի արդիւնք են եւ կրնան օգտագործուիլ կեանքի բոլոր պարագաներուն մէջ ու պահանջներուն համեմատ:

ՈՃՆ ՈՒ ՀՈԳԻՆ

Սաղմոսներեն ոմանք, հակառակ իրենց պարունակած երբեմն ծայրայեղորեն բուռն արտայայտութիւններուն, մանաւանդ երբ կը հային Հրեայ ժողովուրդին կրած տագնապներուն եւ դիմագրաւած թշնամիներուն, կը մնան միշտ հոգեւոր կեանքի աղբիւր ու ներշնչարան. կարելի է որակել զանոնք ընդհանրական ու այժմէական, որովհետեւ անոնց արտայայտած զգացումները, իդճերն ու նոյնիսկ պոռթկումները, մանաւանդ յոյսով համակուած խրախուսիչ աղօթքները, կը համապատասխանեն բոլոր ժամանակներու մարդոց հոգեբանութեան եւ զգացողութեան:

ՀՐԱՒԷՐ ԶԳՉՈՒՄԻ ՈՒ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ

Յատուկ կերպով շեշտուած է սաղմոսներուն մէջ մարդու բնածին տկարութիւնն ու մեղանշականութիւնը, եւ անոնց սերտօրէն առընչուած՝ աներածիշտութիւնը զղջումին եւ ապաւինումը Աստուծոյ ողորմութեան: Այս կէտը յաճախ կը յայտնուի ու կը շեշտուի սաղմոսերգութիւն մօտ. ամէնէն ցայտուն օրինակը՝ շատ տպաւորիչ կերպով արտայայտուած հանրածանօթ 50-րդ սաղմոսն է, «Ողորմեա ինձ, Աստուած», զոր յաճախ կը գործածենք թէ՛ հասարակական եւ թէ՛ անհատական մեր աղօթքներուն ընթացքին, իբր աղերս զղջումի ու ապաշխարութեան:

Անոր կ'արձագանգէ Աստուծոյ անչափ գթասրտութիւնը մեղաւոր մարդուն հանդէպ. երբ արարածը գտնուի տագնապի ու տառապանքի մէջ, իր Արարչին մօտ կը գտնէ միտիթարութիւն ու համակամութիւն աստուածային կամքին, դիմագրաւ-

ւելու համար կեանքի բոլոր դժուար պահերը. «Տէրն է իմ օգնականս, ես որմէ՞ պիտի վախնամ». կամ՝ «Տէրը իմ հովիւս է, եւ ոչինչ կը պակսի ինծի...»:

ՍԱՂՄՈՍԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Յիսուս, երբ տաճար կ'երթար աղօթելու համար, յայտնապէս Դաւիթի սաղմոսները կը գործածէր, զԱստուած փառաբանելու եւ անոր օգնութիւնը հայցելու համար, յետեւ հաւատացեալ հոգիի նման: Առաքեալները նոյնը կ'ընէին երբ կը համախմբուէին Տիրոջ օրհնութիւնը երգելու համար:

Քրիստոնեաներու յաջորդ սերունդները եւս, հետեւելով անոնց օրինակին, իրենց հոգիին առօրեայ սնունդը կը դարձնեն զանոնք. մինչեւ օրս, մեր ծիսական պաշտամունքի մատենաները լայնօրէն կ'օգտագործեն զանոնք: Ժամերգութեան մէջ յատկապէս, տիրական տեղ կը գրաւեն անոնք:

Սուրբ պատարագը կը սկսի մուտքի սաղմոսով. «Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ...»: Երբ կը պատրաստուինք Սուրբ Հաղորդութիւնն ընդունելու, սարկաւազը կը յորդորէ մեզ ըսելով. «Սաղմոս ասացէ՛ք Տեսնոն Աստուծոյ մերոյ ձայնիւ ցնծութեան», որու կը պատասխանեն դպիրները՝ սաղմոս երգելով. «Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք զի քաղցր է Տէր. ալէլուիա»:

ՄՆՈՒՆԳ ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԻ

Մենք, այսօր եւ միշտ, կրնանք սաղմոսներուն մէջ գտնել այն ինչ որ կը փնտոնենք՝ մեր հաւատքի կեանքը սնուցանելու, մեր կեանքի դժուար պահերը դիմագրաւելու, մեր երբեմն

տատանող հաւատքը ամրապնդելու, յուսալուծմի եւ այլ մարդկային տկարութիւններուն մէջ ուժ ամբարելու համար: Ազգու միջոցներ եւ անոնք Աստուծոյ շնորհքները ընդունելու եւ մեր կեանքին պայքարը անվիատ յառաջ տանելու համար:

Սաղմոսները մեր սնարին գիրքը պէտք է ըլլան եւ մեր քրիստոնէական ճանապարհորդութեան ուղեցոյց, ինչպէս նաեւ ներշնչարանը մեր աօրեայ կեանքին յարափոփոխ հանգրուաններուն:

Սաղմոսարանը պարզ ընթերցումի մատեան չէ. գանձարան մըն է եւ խնկոյժի սեղան, որ մեզի առիթ կու տայ խոկալու Աստուծոյ խօսքին վրայ, ճաշակելու զայն եւ յագեցնելու մեր քաղցը հոգեւոր սնունդի, ինչպէս կ'երգէ ինքն իսկ մարգարէն. «Նդնիկին նման որ աղբիւրներու ջուրին կը ցանկայ, այնպէս ալ հոգիս՝ կը ցանկայ թեզի, ո՛վ Աստուած»:

ԱՅՍ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Սուրբ Հոգիէն ներշնչուած այս հրաշալի աղօթամատեանին նոր հրատարակութեան ցանկութիւնն է ու գոհացումը պիտի ըլլայ, ամէնէն առաջ՝ հրահրել ԱՂՕԹՔԻ ՍԵՂԸ հաւատացեալի հոգիին մէջ, եւ արծարծել հոգեւոր սնունդի տեւչը, յատկապէս մեր կեանքին ամէնէն վնասական պահերուն:

Աշխարհաբար Սաղմոսարան պատրաստուած ու հրատարակուած է արդէն Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ երկու եկեղեցականներու կողմէ. Հ. Օգոստինոս Վ. Սէֆուլեան, Վիեննական Միթրարեան, 1987-ին, Հ. Մեսրոպ Վ. Ճուրեան, Զմմառեան Միաբան, 1990-ին:

Ներկայ հրատարակութիւնը յաւակնութիւն չունի գերացանելու այս երկու պատուական մտաւորական Հայրերուն աշխա-

տանքը: Նկատի առնելով երկու թարգմանութիւններուն առաւելութիւններն ու պակասները, ուզած է օգտուիլ առաջիններէն եւ սրբագրել երկրորդները: Ուզած է նաեւ զայն աւելի դիւրագործածելի դարձնել՝ ներկայացնելով զայն առձեռն գրքի ձեւով եւ աւելի ընտիր թղթանիւթով:

Գալով ներքին պարունակութեան, հիմնականին՝ ան անուած է Հ. Օգոստինոս Վ. Սէֆուլեանի թարգմանութենէն, որ իր կարգին վերատեսուած է ատենօ՛ք՝ Հ. Բարսեղ Վ. Ֆերիաթեանի կողմէ եւ ապա Հ. Մանուէլ Եպս. Պաթագեանի կողմէ՝ այս վերջին հրատարակութեան առիթով: Իսկ նօթագրութիւնները՝ մեծ մասամբ աշխատանքի արդիւնքն են Հ. Մեսրոպ Վ. Ճուրեանի:

Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը, գիտակից մեր հաւատացեալներու հոգեւոր պապակին եւ զայն գոհացնելու կարիքին, յարմար դատած է ձեռնարկել այս նոր տպագրութեան, յուսալով նպաստել մեր ժողովուրդին հոգեւոր կեանքի անումին, մատուցանելով անոնց կեանքի մատեան մը որ համայն քրիստոնեայ Եկեղեցւոյ մէջ սիրուած ու փնտռուած աղօթքներու աստուածահաճոյ փունջ մըն է: Կը մաղթեմք որ մեր հաւատացեալ ժողովուրդն ալ օգտուի այդ սնունդէն:

ԾԻՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ԴԱԻԻԹԻ ՍԱՂՄՈՍՆԵՐԸ

ՍԱՂՄՈՍ 1

Երկու մամբաները

1 *Երանի՛ այն մարդուն
որ ամբարիշտներու խորհուրդին չէ հետեւած,
որ մեղաւորներու ճամբուն վրայ չէ կանգնած,
եւ չարամիտներու աթոռը չէ նստած,*

1- Երկրորդ սաղմոսին հետ, ընդհանուր ներմուծումն է ամբողջ սաղմոսարանին: Կը խտացնէ անոր բարոյական, վարդապետական եւ մեսիական ուսուցումը: Գովքն է արդարին որ կը սիրէ Աստուծոյ օրէնքը, կը խորհրդածէ գայն, կը լեցուի անոր նոխութեամբ եւ կու տայ, ըստ եղանակին, պտուղները հոգեւոր կեանքի: Արդարին հակադրուած է ժանտը. մարդը որ հեզմանքով կը վերաբերի կրօնական եւ բարոյական իրականութիւններու հանդէպ (Սո 1,22. 3,34) որովհետեւ «օտարացած է ամէն բարիքէ» (Ներսէս Լամբրոնացի):

2 *այլ անոր կամքը ուղղուած է Տիրոջ Օրէնքին, եւ գիշեր-ցերեկ անոր Օրէնքին մասին կը խորհի:*

3 *Ան նման է ջուրի ափին տնկուած այն ծառին, որ ժամանակին կու տայ իր պտուղը. անոր տերեւները երբեք չեն թափիր, եւ ի՛նչ որ ան ձեռնարկէ՝ կը յաջողի իրեն:*

4 *Այսպէս չեն սակայն ամբարիչտները, ո՛չ, այսպէս չեն, այլ նման են փոշիին՝ որ օդի հոսանքէն կը տարուի հողի երեսին վրայ:*

5 *Եւ այդ պատճառով, ամբարիչտները պիտի չկանգնին դատաստանին մէջ, ոչ ալ մեղաւորները՝ արդարներու խումբին մէջ:*

6 *Որովհետեւ Տէրը կը ճանչնայ արդարներու ճամբան, իսկ ամբարիչտներու ճամբան՝ կորուստի կը տանի:*

3–Հակադրութիւնը արդարին եւ ժանտին տրուած է երկու պատկերներով. առաջինը նման է ծառին որ տնկուած է ջուրերու հոսանքին ափին, այսինքն կ'ապրի գերբնական իրականութիւններու աշխարհին մէջ, կ'առնէ հոգեւոր սնունդը եւ կը պտղաբերէ: Իսկ ժանտը նման է յարդին, կամ յարդի փոշիին, դատարկ է գերբնական իրականութիւններու ծանրութենէն, եւ գերդ փոշի, հողմը կը ցրուէ գայն:

6– Արդարին քանակարհին քանաչումը Աստուծմէ, քանաչումն է սիրոյ եւ հոգածութեան: Պատասխանն է Աստուծոյ՝ արդարին, որ սիրեց Աստուծոյ խօսքը եւ անկէ առաւ սնունդը հոգիին: Ամբարիչտին քամբան կը կորսուի, որովհետեւ ոչինչ քաղեց Աստուծոյ խօսքէն եւ ոչինչ պիտի թողու իր ետին: Ընթերցումը եւ խորհրդածութիւնը Աստու-

ՍԱՂՄՈՍ 2

Տէրը եւ օձեալը

1 *Ինչո՞ւ հեթանոսները խռովեցան, եւ ժողովուրդները սնոտի բաներ խորհեցան:*

2 *Երկրի թագաւորները դէմ առ դէմ ելան, եւ իշխանները քով քովի հաւաքուեցան, Տիրոջ եւ անոր Օծեալին համար:*

3 *Խզէ՛նք, ըսին, անոնց կապանքները, թօթափէ՛նք մեզմէ անոնց լուծը:*

ժոյ խօսքին կը տանին մեզ գերբնական իրականութիւններու աշխարհը, որուն սեմին կանգնած է Քրիստոս եւ կ'ըսէ մեզի. «Փնտոցե՛ք զիս եւ պիտի գտնէ՛ք, ինդրեցե՛ք եւ պիտի տրուի ձեզի» (Մտք 7,7): «Երանի՛ք անոնց, որ կը լսեն Աստուծոյ խօսքը եւ կը պահեն գայն» (Ղկ 11,28) որովհետեւ Աստուծոյ խօսքը պիտի պահէ գանձնէ, եւ աշխարհի հողմերուն դիմաց, պիտի տայ անոնց գերբնական ծանրութիւն:

Մեր շարականը այս համարին խօսքը վայելչապէս կը պատշանեցնէ Աստուածամօր. «Աստուածատունկ խնկաբեր ծառ անուշահոտ բուրաստանէն, դուն տնկուեցար Հոգւոյն վտակին հոսանքին մէջ եւ ժամանակին տուիր մեզի պտուղն անմահութեան (Քրիստոս):

1–Սաղմոսը ունի երկու հեռանկարներ. առաջինը կը հայի թագաւորի մը օձումին եւ գահակալութեան: Երկրորդը հեռանկարն ունի մեսիական տարողութիւն: Թե՛ հրեական եւ թե՛ քրիստոնեայ աւանդութիւնները այս սաղմոսը մեկնաբանած են իբր մեսիական: Նոր կտակարանին մէջ վերագրուած է Դաւիթի (Գ Առ 4,25): Առաքեալները յաճախ կը յառաջերեմն գայն ցոյց տալու համար թե՛ Յիսուս սպասուած Մեսիան է (Գ Առ 13, 32–33. Եբր 1,5. Յառտ 2,26,27):

- 4 Այն որ երկինքի մէջ կը բնակի,
պիտի ծիծաղի անոնց վրայ,
եւ Տէրը պիտի արհամարհէ զանոնք:
- 5 Այն ատեն, բարկութեամբ պիտի խօսի անոնց հետ,
եւ իր սրտամտութեամբ պիտի խռովէ զանոնք:
- 6 Ես թագաւոր կարգուեցայ անոր կողմէ,
անոր սուրբ լերան՝ Սիոնի վրայ,
Տիրոջ պատուէրները հռչակելու համար:
- 7 Տէրը ըսաւ ինծի.
Իմ որդի՛ս ես դուն, եւ ես ա՛յսօր ծնայ քեզ:
- 8 Խնդրէ՛ ինծմէ, եւ հեթանոսները
պիտի տամ քեզի՝ իբրեւ ժառանգութիւն,
եւ երկրի բոլոր ծագերը՝ իբրեւ իշխանութիւն:
- 9 Երկաթէ գաւազանով հովուէ զանոնք,
եւ փշրէ՛ զանոնք՝ բրոստի անօթներու նման:
- 10 Լա՛ւ իմացէք այս բանը, թագաւորներ,
եւ խրատ թող ըլլայ այս՝ ձեր բոլորին համար
որ երկիրը կը կառավարէք:

7–Հայր Աստուծմէ ետք կը խօսի Մեսիան: «Դուն ես իմ Որդին»: Եկե-
ղեցույ սուրբ Հայրերը այս համարը կը պատշանեցնեն Յիսուսի յաւի-
տեմական ծնունդին՝ Հօրմէն:

9–Աստուածային հովիւին գաւազանը, նոյնիսկ երկաթեայ, կը փոխ-
ուի հովիւի խաղաղ ցուպի՝ Քրիստոսի ձեռքերուն մէջ (Ս. Աթանաս):

- 11 Երկիւղո՛վ ծառայեցէք Տիրոջ,
եւ դողալո՛վ ցնծացէք անոր առջեւ:
- 12 Հետեւեցէ՛ք անոր խրատին, որ չբարկանայ Տէրը,
եւ դուք չխտտորիք արդարութեան ճանապարհէն,
- 13 այն ժամանակ՝ երբ բորբոքի անոր բարկութիւնը:
Երանի՛ բոլոր անոնց, որ Տիրոջ վրայ կը վստահին:

ՍԱՂՄՈՍ 3

Հալածուած արդարիւն աղերսը

- 1 Սաղմոս Դաւիթի, երբ իր Արիստոմ որդիին առջեւէն կը
փախչէր:
- 2 Տէ՛ր, որքա՛ն բազմաթիւ են անոնք որ կը նեղեն զիս,
չատե՛ր են որ ինծի դէմ ելած են:
- 3 Շատե՛ր ըսին իմ մասիս՝
թէ փրկութիւն չկայ ասոր համար իր Աստուծմէն:
- 4 Բայց դուն, Տէ՛ր, իմ օգնականս ես,
դուն իմ փառքս եւ գլուխս բարձր կը պահես:
- 5 Զայնս արձակելով՝ Տիրո՛ջ աղաղակեցի,
եւ ան լսեց զիս իր սուրբ լեռնէն:
- 6 Ես ննջեցի եւ քուն մտայ,
արթնցայ, եւ Տէրը ապաւէնս է:

6–Սաղմոսերգուն կը ննջէ եւ կ'արթննայ, կը պահէ անասան վստա-

7 Ես չեմ մ վախնար այն բիւրաւոր զօրքերէն,
որոնք շրջապատած, պաշարուած կը պահեն գիս:

8 Ե՛լ, Տէ՛ր, եւ փրկէ՛ գիս, Աստուած իմ,
որովհետեւ դուն հարուածեցիր բոլոր անոնք՝
որ անիրաւ կերպով կը հալածեն գիս.
դուն պիտի փշրե՛ս ակռաները չարագործներուն:

9 Տիրոջմէ՛ կու գայ փրկութիւնը.
քու օրհնութիւնդ ժողովուրդիդ վրայ թող ըլլայ:

ՍԱՂՄՈՍ 4

Աստուծոյ պաշտպանութիւնը գիշեր ատեն

1 Սաղմոս Դաւիթի՝ Օրհնութեան վերջաւորութեան Երգեցուելիք:

2 Երբ դիմեցի քեզի՝ դուն լսեցիր գիս, Աստուած իմ՝
քու արդարութեանդ համեմատ.
եւ նեղութեան մէջ հանգստացուցիր գիս.
ողորմէ՛ ինծի եւ լսէ՛ աղօթքս:

հուփիւնը թէ՛ Տէրը կը մնայ իր օգնականը: Կը հայցէ անոր պաշտպանութիւնը ընդդէմ հակառակորդներուն, որպէսզի ասոնք տեսնեն թէ՛ ո՛րքան սխալ էր իրենց դատաստանը:

1- Հաւատացեալին աղօթքն է թաթաւուն՝ ուրախութեամբ եւ վստահութեամբ: Անուղակի կը հրաւիրէ անոնք որ հետամուտ են թիւր բարիքներու, որ փնտոնեն վաւերական բարիքները:

3 Մարդու որդիներ,
մինչեւ ե՞րբ պիտի մնաք խստասիրտ,
մինչեւ ե՞րբ սուտին ետեւէն պիտի երթաք:

4 Գիտցէք որ Տէրը սքանչելիքներ ըրաւ իր սուրբին,
եւ Տէրը պիտի լսէ գիս երբ դիմեմ իրեն:

5 Մի՛ մեղանչէք երբ կը բարկանաք.
ինչ որ ձեր մտքին մէջ կ'ըսէք՝
ձեր անկողինին մէջ զղջացէք:

6 Զոհեր մատուցէք արդարանալու համար,
եւ Տիրոջ վրայ դրէք ձեր յոյսը:

7 Շատե՛ր կ'ըսէին. ո՞վ պիտի ցուցնէ մեզի բարիքներդ:
Քու երեսիդ լոյսը շողաց մեր վրայ,

8 եւ դուն ուրախութիւն տուիր մեր սրտերուն.
ցորենի, գինիի եւ ձէթի բերքով լեցուցիր զանոնք:

4- «Սուրբը» Աստուծոյ հաւատարիմ հոգին է, հաւատացեալը:

5- Անկողինը կրնայ ըլլալ խսիրի կամ գորգի կտորը որուն վրայ ծերագիր՝ կ'աղօթէին տանարին ուղղութեամբ (Ովս 7,2): Խաղաղ լուսութիւնը՝ խորհուրդին դիմաց, կը խաղաղեցնէ սրտին զգացումները եւ հոգին կը համակուի Աստուծոյ ներկայութեան երկիւղով եւ վստահութեամբ:

7- Աւելի քան առատութիւնը նիւթական բարիքներուն, հոգեկան արժեքներն են որ կու տան վնիտ երջանկութիւնը եւ սիրտը կը համակեն ուրախութեամբ: Ուրախութիւնը կու գայ Տիրոջ դէմքին լոյսէն: Սուրբ Հայրերը այս համարը կը մերձեցնեն հոգիին անմահութեան:

9 *Խաղաղութեամբ ննջենք եւ զարթնունք, վստահ ըլլալով թէ յոյսիդ մէջ կը բնակեցնես մեզ:*

ՍԱՂՄՈՍ 5

Առաւօտեան աղօթք

1 Աւարտին: Անոնց համար՝ որոնց վիճակուած է: Սաղմոս Դաւիթի:

2 *Մի՛տ դիր խօսքերուս, Տէ՛ր, եւ ընդունէ՛ աղաղակս:*

3 *Աղօթքիս ձայնը նկատի առ, թագաւոր իմ եւ Աստուած՝ իմ:*

4 *Քեզի՛ կ'աղաչեմ առտու կանուխ, Տէ՛ր, լսէ՛ ձայնս. պատրա՛ստ եմ առջեւդ ելլելու ամէ՛ն առաւօտ:*

9– Աստուծոյ դէմքին լոյսով կը փարատին մթութիւնները եւ հոգիին մէջ կ'իջնէ խաղաղութիւնը: Ի վերուստ եկած լոյսերով հաւատացեալը կարող է գտնել խորունկ միութիւնը իր էութեան եւ այնուհետեւ ապրիլ կեանքը անվրդով: Սաղմոսը կու տայ մեզի վկայութիւնը բացարձակ վստահութեան աղօթքին վրայ. Տէրը կը լսէ, կը պատասխանէ...

2– Տաճարին գաւիթին վրայ, արշալոյսին, սաղմոսերգուն կը բարձրացնէ դէպի երկինք առաւօտեան աղօթքը: Հաւանաբար դիւտացի քահանայ մըն է: Կանչուած Տիրոջ ծառայութեան, կ'ապրի իր կոչումը եւ անոր մէջ կը գտնէ խորունկ եւ խաղաղ վստահութիւնը՝ գոր կը հաստատէ Աստուծոյ ներկայութեան եւ մերձադրութեան վրայ: Իրբեք առաւօտեան աղօթք, հայ Եկեղեցին այս սաղմոսը կ'աղօթէ առաւօտեան հասարակաց Աղօթքի ժամուն:

5 *Որովհետեւ անօրէնութիւն չէ՛ս ուզեր, Աստուած, եւ չարերը քու քովդ չէ՛ն բնակիր:*

6 *Թող անօրէնները չբնակին քու աչքիդ առջեւ. դուն՝ կ'ատես անօրէնութիւն գործողները:*

7 *Դուն կորուստի կը մատնես սուտ խօսողները, Տէ՛ր, պիղծ կը համարիս արիւնահեղ եւ նենգաւոր մարդը:*

8 *Իսկ ես, շնորհիւ քու մեծ ողորմութեանդ՝ տունդ պիտի մտնեմ, եւ սուրբ տաճարիդ մէջ՝ երկիւղով երկրպագութիւն պիտի ընեմ քեզի:*

9 *Տէ՛ր, քու արդարութեամբդ առաջնորդէ՛ ինձի, եւ ուղիղ ըրէ՛ ճամբաներդ՝ իմ թշնամիներու դէմ:*

10 *Որովհետեւ անոնց բերնին մէջ ճշմարտութիւն չկայ եւ անոնց սիրտը ամայացած է. անոնց կոկորդը բաց է գերեզմանի նման, եւ իրենց լեզուով նենգաւոր դարձած են:*

4– Գիշերային հանգիստէն ետք, առաւօտը առանձնաշնորհեալ պահն է աղօթքի: Սաղմոսերգուն կը պատրաստուի կանգնիլ Աստուծոյ դիմաց եւ վերաբաղի իր աղօթքը, որուն կ'ընկերանայ գոհը եւ ապա մնալ ունկնդիր Աստուծոյ պատգամին, որ պիտի տրուի քահանային բերնով (1 Թագ 1,9,17 Թւ 23,1-6):

10– Դատարկ է մարդուն սիրտը երբ անկէ չեն բխիր խօսքերն ու կեցուածքները արդարութեան եւ նշմարտութեան: Դատարկ սրտին կիրարկած նամբան՝ նամբան է Դրախտի օձին: Բաց գերեզմանին պատկերը ցոյց կու տայ ապականութիւնը նշմարտութենէ գուրկ սրտին:

11 Դատէ՛ զանոնք, Աստուած,
որպէսզի հրաժարին իրենց գէշ մտածումներէն,
մերժէ՛ զանոնք՝ իրենց ամբարշտութեան համար,
որովհետեւ դառնացուցին քեզ անոնք:

12 Թող ուրախանան ամէն անոնք՝
որ քու վրադ դրած են իրենց յոյսը-
թող ցնծան յաւիտեան՝ երբ բնակիր անոնց մէջ:
Թող քեզմո՛վ պարծենան քու անունդ սիրողները:

13 Որովհետեւ դուն կ'օրհնես արդարը, Տէ՛ր,
իբր վահան՝ քու հաճութեամբդ կը պսակես զանոնք:

ՍԱՂՄՈՍ 6

Աղերսներ՝ մեծ նեղութեան ատեն

1 Աւարտին: Օրհնութիւններուն հետ: Ութադեղեայ նուագարանի վրայ: Սաղմոս Դաւիթի:

2 Տէ՛ր, քու սրտմտութեամբդ մի՛ յանդիմաներ զիս,
եւ քու բարկութեամբդ մի՛ պատժեր զիս:

11- Ձարամադութեան կամ վրէժնդրութեան արտայայտութիւնները որոնք յաճախ կը կրկնուին սաղմոսներուն մէջ, կը գրանցուին արդարութեան պահանջքը: Հին Կտակարանի մէջ, երբ տակաւին յստակ չէր վարձատրութիւնը անդեակակնի մէջ, հաւատացեալը զայն կը հայցէր այս աշխարհի վրայ:

13- Գեղեցիկ է պատկերը Տիրոջ հանութեան պաշտպանութեան որ կը տրուի արդարին:

2- Սաղմոսը աղօթքն է լքուած եւ մահուան դուռը հասած հիւանդին:

3 Ողորմէ՛ ինծի, Տէ՛ր, որովհետեւ հիւանդ եմ ես,
բժշկէ՛ զիս, որովհետեւ բոլոր ոսկրներովս խռոված եմ:

4 Հոգիս խորապէս խռոված է,
իսկ դուն, Տէ՛ր, մինչեւ ե՞րբ:

5 Դարձի՛ր, Տէ՛ր, եւ փրկէ՛ իմ հոգիս,
քու ողորմութեամբդ կեանք տուր ինծի:

6 Որովհետեւ չկայ՝ մէկը, որ մահուան ատեն յիշէ քեզ,
կամ դժոխքի մէջ փառաբանէ քեզ:

7 Ես ուժասպառ դարձայ հեծեծալէն,
լացովս լուացի իմ մահիճս
եւ ամբողջ գիշերը արցունքներովս թրջեցի անկողինս:

8 Աչքերս բորբոքեցան մտատանջութենէ,
եւ բոլոր թշնամիներէս աւելի տառապեցայ:

Ներշնչուած է Երեմիայի մարգարէական գանգան անցքերէն (3,22 . 10,24 . 14,17 . 23,13): Աղօթքը կը ծաւալի ողբի եւ ապաշխարութեան արտայայտութիւններով: Ինչպէս ամէն Եկեղեցիներու, այնպէս ալ հայ ծիսարանին մէջ ներկայ սաղմոսը մաս է Ապաշխարութեան կարգի եօթը սաղմոսներուն (6,31 . 37 . 50 . 101. 129 . 142):

3- Սաղմոսներգուին տառապանքը գոյացած է հիւանդութեամբ, ֆիզիքական եւ հոգեկան լքումով: Լքումը կ'ընդունի իբր պատիժ մեղքին, կ'ընդունի պատիժը եւ կը խոստովանի մեղքը եւ կը հայցէ բարկութեան վերջը:

5- Հիւանդ, լքուած եւ հասած մահուան դուռը, սաղմոսներգուն կը հայցէ Տիրոջ վերադարձը, կը խնդրէ որ փրկէ զինք, յանուն ոչ թէ սաղմոսներգուին արդարութեան, այլ Աստուծոյ սիրոյն եւ հաւատարմութեան:

9 Հեռացէ՛ք ինծմէ, դուք բոլորդ
որ անօրէնութիւն կը գործէք,
Տէրը լսեց լացի ձայնս:

10 Տէրը մտիկ ըրաւ աղօթքներուս,
եւ Տէրը ընդունեցաւ իմ խնդրանքներս:

11 Թող ամէնան եւ խռովին բոլոր թշնամիներս,
թող ետ դառնան անմիջապէս եւ ամօթով մնան,
եւ խռովութեան մատնուին անոնք:

ՍԱՂՄՈՍ 7

Աղօթք հալածանքի ատեն

1 Սաղմոս Դաւիթի, գոր Յիմենի որդւոյն՝ Քուսիի խօսքին
պատճառով ուղղեց Տիրոջ:

2 Տէր Աստուած իմ, քու վրադ դրած եմ իմ յոյսս,
փրկէ՛ զիս եւ ազատէ՛ իմ բոլոր հալածիչներէս:

3 Մի՛ գուցէ յափշտակէ ան իմ հոգիս՝ առիւծի նման,
եւ չգտնուի մէկը որ փրկէ զիս,
ո՛չ ալ մէկը որ ազատէ զիս:

4 Տէ՛ր Աստուած, եթէ ե՛ս ալ գործեմ նոյնը,
եթէ իմ ձեռքերս ալ ըլլան լի անօրէնութեամբ:

5 Եթէ երբեք չարով հատուցանեմ
չարիքը զոր ուրիշներ հասցուցած են ինծի՝
ե՛ս ալ, պարապ տեղ, պիտի իյնամ թշնամիներու ձեռքը:

6 Թող հալածէ՛ զիս թշնամին, թող ետեւէ՛ս հասնի
թող հողին վրայ կոխկռտէ իմ կեանքս,
եւ գետնի տակ թող առնէ իմ պատիւս:

7 Ոտքի՛ ել, Տէ՛ր, քու բարկութեամբդ,
եւ թշնամիներս սպառելով՝ դո՛ւն փառաւորուէ:
Ձարթի՛ր, ո՛վ Տէր Աստուածս,
եւ պատուիրէ որ հրամաններդ կատարուին:

8 Ժողովուրդներու բազմութիւններ
պիտի հաւաքուին քու շուրջդ,
ուստի բարձունքները վերադարձիր, Տէ՛ր:

9 Տէ՛րն է որ կը դատէ իր ժողովուրդները:
Դա՛տս տես, ո՛վ Տէր, իրաւունքիս համեմատ,
անբժուութեան համեմատ որ կայ իմ մէջս:

10 Մեղաւորներուն վրայ թող գան չարիքները,
եւ այն որ կը քննէ սրտերն ու երիկամները,
արդա՛րն Աստուած՝ յաջողութիւն տայ արդարին:

11 Իրաւացի է Աստուծմէ ինծի եկած օգնութիւնը,
որ կը փրկէ անոնք որ ուղիղ են սրտով:

12 Աստուած Արդար դատաւոր է, հօր եւ համբերող,
որ իր բարկութիւնը չի գործադրեր ամէն օր:

13 Սակայն, եթէ դուք դարձի չգաք դէպի իրեն,
ան իր սուրը սրած է, եւ լարած է իր աղեղը:

14 Ան պատրաստած է մահուան գործիքները,
եւ կիզիչ նիւթերով շինած է իր նետերը:

15 Ահա՛, այն որ անիրաւութիւնն երկնեց, ցաւեր յղացաւ եւ անօրէնութիւն ծնաւ:

16 Այն գուբին մէջ զոր ի՛նքը փորած ու պեղած է, պիտի իյնայ նոյն խորխորատին մէջ զոր շինած էր:

17 Անոր գլխուն վրայ պիտի գան ցաւերը, եւ անոր գագաթին վրայ պիտի իջնեն անոր անօրէնութիւնները:

18 Ես պիտի փառաւորեմ Տէրը իր արդարութեան համար, եւ սաղմոսներ պիտի երգեմ բարձրեալ Տիրոջ անունին:

ՍԱՂՄՈՍ 8

Ստեղծողին մեծութիւնը

1 Աւարտին: Հնձանը ընելու ատեն: Սաղմոս Դաւիթի:

2 Տէ՛ր, մեր Տէ՛րը, որքա՛ն սքանչելի է անունդ՝ բովանդա՛կ երկրի վրայ: Գու վայելչութիւնդ երկինքէն վեր բարձրացաւ:

18–Խոստումը գոհարանութեան ցոյց կու տայ թե՛ սաղմոսերգուն ունի վատաւորին անպարտ արձակելու: Ակն ընդ ակն սկզբունքին անդին, կը յարուցանէ հատուցման վարդապետութիւնը: Փրկութիւնը տրուած է մարդուն Աստուծոյ շնորհքով եւ իրեն միայն անկ է տալ վերջին վնիւր: Մարդուն դատաստանը ենթակայ է իր տկարութեան պատրանքներուն, ասոր համար Գրիստոս կը զգուշացնէ. «Մի՛ դատէ՛ք որպէս զի չդատուիք»:

2–Քնարական մեկնաբանութիւնն է արարչագործութեան: Երկու թեմաներն են Աստուծոյ մեծվայելչութիւնը եւ մարդուն մեծութիւնը:

3 Երեխաներու եւ նորածին մանուկներու բերնով՝ պիտի հիւսուի քու օրհնութիւնդ, ո՛վ Տէր, քու թշնամիներուդ պատճառով, որպէսզի խորտակուի թշնամին եւ հակառակորդը:

4 Ես կը դիտեմ երկինքը, քու մատներուդ գործը, լուսինն ու աստղերը, զորս դո՛ւն հաստատեցիր:

5 ո՞վ է մարդը որ յիշես զայն, կամ մարդու որդին՝ որ մտահոգուիս անով:

6 Մի քիչ աւելի ցած ստեղծեցիր զայն քան հրեշտակներդ, փառքով եւ պատիւով պսակեցիր զայն:

7 Եւ բոլոր ձեռակերտներուդ վրայ կարգեցիր զինքը. անոր ոտքերուն տակ հպատակ դարձուցիր ամէն բան:

8 Ոչխար, արջառ, եւ ամէ՛ն ինչ, նոյնիսկ վայրի երէն:

3– Յիսուս կը յառաջբերէ այս համարը (Մտք 21,16. Դկ 10,21) եւ զայն կը պատշանեցնէ իր մուտքին՝ Երուսաղէմ:

5– Ոչ միայն ամէն դրական բարիք համարուած էր նշան Աստուծոյ այցելութեան, այլ նաեւ դժբախտութիւնը, որովհետեւ Տէրը կ'այցելէ օրհնելու, միտքարելու, փրկելու եւ պատժելու համար:

6– Այն փոքր «ինչը» որ կը գոյացնէ մարդուն մեծութիւնը, անոր մամուլութիւնն է Աստուծոյ: Նմանութիւնը մարդուն՝ Աստուծոյ, կը մղէ խորհրդածելու Աստուծոյ սիրոյ խորհուրդը մարդուն հանդէպ: Կը գրէ Լամբրոնացին. «Հրեշտակները թողուցիր պատիժի տակ, բայց բռնեցիր մարդը եւ ուժգին վերականգնեցիր զինք»: Լամբրոնացիէն առաջ նոյն-նանման խորհրդածութիւնն ունի Նարեկացին. «Դուն չկոչուեցար հրեշտակաւեր, թեպէտ հիմնեցիր անոնց գորութիւններն ամէն»:

9 Երկնքի թռչունները եւ ծովերու ձուկերը,
որոնք ծովու հոսանքներուն համեմատ կը շրջին:

10 Տէ՛ր, մե՛ր Տէրը,
որքա՛ն սքանչելի է անունդ ամբողջ երկրի վրայ:

ՍԱՂՄՈՍ 9

Աստուած՝ անայթափ ապաւենը

1 Աւարտին, որդիին գաղտնիքներուն համար: Սաղմոս
Դաւիթի:

2 Բոլոր սրտովս շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի,
բոլոր սքանչելիքներդ պիտի դրուատեմ ես, Տէ՛ր:

3 Պիտի ուրախանամ եւ պիտի ցնծամ քեզմով,
սաղմոս պիտի երգեմ քու անունիդ, ո՛վ Բարձրեալ:

4 Թշնամիներս, նահանջելով,
պիտի տկարանան եւ կորչին քու առջեւէդ:

5 Դուն տեսար իմ դատս եւ ճանչցար իրաւունքս,
դուն իբրեւ արդար դատաւոր նստած ես գահի վրայ:

6 Դուն սաստեցիր հեթանոսները եւ կորաւ ամբարիշտը.
դուն ջնջեցիր անոնց անունը յաւիտեանս յաւիտենից:

5-Սաղմոսերգուին համար, աստուածային դատաստանը արդէն իսկ կատարուած իրողութիւնն է: Աստուծոյ դատաստանը անվրէպ պիտի կատարուի Տիրոջ օրը:

6-Ազգերը կամ հեթանոսները, սաղմոսերգուին մտքին մէջ պարսիկ

7 Թշնամիին ձեռքէն ընդմի՛շտ խլուեցաւ գէնքը.
դուն աւերեցիր քաղաքները,
եւ անոնց յիշատակն անգամ աղմուկով կորսուեցաւ:

8 Աստուած կա՛յ եւ կը մնա՛յ յաւիտեան.
ան իր աթոռը պատրաստեց՝ դատելու համար:

9 Ան կը դատէ աշխարհը արդարութեամբ,
եւ իր ժողովուրդները՝ անաչառութեամբ:

10 Տէրը թշուառին ապաւեն եղաւ,
եւ անոր օգնականը՝ իր ժամանակին, նեղութեան մէջ:

11 Բոլոր անոնք որ քու անունդ կը ճանչնան,
քու վրագ կրնան դնել իրենց յոյսը, Տէ՛ր,
որովհետեւ դուն չես լքեր անոնք որ քեզ կը փնտռեն:

12 Սաղմո՛ս երգեցէք Տիրոջ՝ որ Սիոնի վրայ կը բնակի,
հեթանոսներուն պատմեցէք անոր գործերը:

13 Տէրը, նկատի առնելով անոնց արիւնը,
յիշեց եւ չանտեսեց թշուառներուն աղօթքը:

14 Ողորմէ՛ ինծի Տէր, եւ տե՛ս թէ ես՝
ի՛նչ խոնարհեցումներ կը կրեմ իմ թշնամիներէս,
դուն որ մահուան դռնէն վեր բարձրացուցիր զիս

15 Սիոնի դատեր առջեւ
ես պիտի հռչակեմ բոլոր օրհնութիւններդ,
եւ քու փրկութեամբդ պիտի ցնծամ:

տիրապետողներն են եւ ամբարիշտները՝ անոնց գործակից եւ Տիրոջ անհաւատարիմ Հրեաները:

16 Հեթանոսները ընկղմեցան՝
 իրենց իսկ գործած ապականութեան մէջ՝
 անոնց ոտքը պիտի բռնուի այն որոգայթին մէջ
 զոր իրենք իսկ գաղտնօրէն լարած էին:

17 Տէրը կը յայտնուի իր կատարած դատաստանին մէջ,
 եւ մեղաւորները պիտի կապուին՝
 իրենց իսկ ձեռքերուն ըրած գործով:

18 Մեղաւորները դէպի դժոխք պիտի ուղարկուին,
 ինչպէս բոլոր հեթանոսները որ զԱստուած մոռցան:

19 Տէրը երբեք չի մոռնար աղքատը,
 եւ թշուառներուն համբերութիւնը երբեք չի կորսուիր:

20 Կանգնէ՛, Տէ՛ր, եւ մի՛ թողուր որ մարդը հպարտանայ.
 Թող հեթանոսները քու առջեւ դատուին:

21 Օրէնսդիր մը կարգէ անոնց վրայ,
 որ հեթանոսները հասկնան թէ իրենք ալ մարդ են:

ՍԱՂՄՈՍ 9/10¹

Օգնութեան խնդրանք առ Աստուած

1 Ինչո՞ւ, Տէր, հեռուէն կը դիտես,
 եւ պահուրտած կը մնաս նեղութեան օրերուն:

Ծան. Ասկէ անդին երկու գլխահամար ունին սաղմոսներուն մեծա-
 մասնութիւնը: Առաջին գլխահամարը կը համապատասխանէ յոյն եւ հայ
 բնագրին, երկրորդ գլխահամարը ցոյց կու տայ եբրայական եւ
 եւրոպական նորագոյն թարգմանութիւններուն գլխահամարները:

1- Յաւերժական հարցականն է արդարին, աղբատին որ կը տրոր-

2 Մինչ ամբարիշտը կը հպարտանայ,
 աղքատը կը հիւծի.
 Թող անոնք խափանուին
 իրենց ծրագրած խորհուրդներուն մէջ:

3 Ինչո՞ւ կը գոփուի անձնասէր մեղաւորը.
 այն որ կը զրկէ ուրիշը՝ ա՛ն կը գոփուի:

4 Իսկ ինչո՞ւ մեղաւորը զԱստուած կը բարկացնէ.
 որովհետեւ կը կարծէ թէ հաշիւ պիտի չպահանջուի՝
 իր բազմաթիւ վատ գործերուն համար:
 Աստուած չկա՛յ անոր աչքերուն առջեւ:

5 Անոր ճամբաները պիղծ են միշտ,
 օրէնքները ջնջուած են անոր աչքերուն առջեւէն,
 ի՛նք պիտի տիրապետէ իր բոլոր թշնամիներուն վրայ:

6 Ան կը կրկնէ իր սրտին մէջ. ես պիտի չսասանի՛մ,
 եւ զե՛րծ պիտի մնամ փորձանքէ՝ սերունդէ սերունդ:

7 Անոր բերանը լի՛ է անէծքով,
 դառնութեամբ եւ նենգութեամբ.
 անոր լեզուին տակ՝ ցաւ կայ միայն եւ չարամտութիւն:

Կին ամբարիշտին եւ անիրաւին ֆնշումներուն տակ: Թաղուած տառա-
 պանքին մէջ, չի հասկնար երեսութապէս բացակայութիւնը «արդար դա-
 տաւոր» Աստուծոյ:

4- Ամբարիշտը չի ժխտեր գոյութիւնն Աստուծոյ, այլ անոր միջամը-
 տութիւնը ի նպաստ ֆնշուածներուն:

8 Ան դարանի կը նստի մեծամեծներու հետ, գաղտնորէն սպաննելու համար անմեղը- անոր աչքերը թշուառներուն ուղղուած են:

9 Ան դարանի մտած է գաղտնորէն՝ ինչպէս առիւծը իր որջին մէջ, դարան լարած է՝ աղքատը յափշտակելու համար, աղքատը յափշտակելու եւ զայն՝ իր որոգայթին մէջ ձգելու համար:

10 Տէրը պիտի խոնարհեցնէ զայն, եւ ան պիտի խոնարհի, եւ պիտի իյնայ՝ մինչ կը փորձէր տիրանալ չքաւորներուն վրայ:

11 Որովհետեւ ան ըսաւ իր մտքին մէջ. Աստուած մոռցա՛ւ եւ երեսը դարձո՛ւց, որ չտեսնէ որեւէ բան:

12 Արդ, ցո՛յց տուր ինքզինքդ, Տէ՛ր իմ եւ Աստուած, բարձրացո՛ւր ձեռքդ, եւ մի՛ մոռնար թշուառները:

13 Իսկ ինչո՞ւ ամբարիշտը կը բարկացնէ զԱստուած. որովհետեւ իր սրտէն կ'ըսէ, թէ պիտի չքննուի երբեք:

14 Դուն կը տեսնե՛ս սակայն ամէն բան, երբ ցաւերու եւ տխրութեան մէջ է մէկը,

12- «Բարձրացուր ձեռքդ»... Աստուծոյ պատժող ձեռքն է ի պաշտ- պանութիւն ցնշուած անմեղին (Միբ 5,8):

14- Հակառակ դատն փորձառութիւններուն, սաղմոսբարձուին ինչ- պէս նաեւ վաւերական հաւատացեալին համոզումը եւ վստահութիւնը

եւ հոգ կը տանիս անոր. քեզի՛ կը վստահի աղքատը, եւ դո՛ւն ես որբին օգնականը:

15 Թող խորտակուի՛ն մեղաւորին եւ չարին բազուկները, հաշիւ թող պահանջուի անոր մեղքերուն համար, բայց թող չնեղուի անոր:

16 Տէ՛րն է թագաւորը յաւիտեա՛նս յաւիտեանից. թող կորչի՛ն հեթանոսները անոր երկրէն:

17 Թշուառներուն աղաչանքները լսեցիր դուն, Տէ՛ր, եւ նկատի առիր անոնց սրտին տրամադրութիւնը,

18 տեսնելու համար դատը աղքատին ու թշուառին, որպէսզի մարդը չչարունակէ յոխորտալ երկրի երեսին:

Աստուծոյ միջամտութեան՝ ի նպաստ աղբատին, որբին, կը մնան ան- խախտ: Հակառակ ամբարիշտին համոզումին, Աստուած կը տեսնէ անոր արարքները եւ չի կրնար մնալ անտարբեր դժբախտին կակիծին:

15- Նոյնն է խնդրանքը Շնորհալիին. «Չար մշակողին՝ չար սերմե- րուն պտուղը չորցուր»: Աստուած չի հետապնդեր կորուստը մարդուն, այլ անհետացումը մարդուն չարութեան:

17- Դուն լսեցիր, Տէր... Հին Կտակարանը չի տար վերջնական պա- տասխանը Տիրոջ բացակայութեան երբ արդարը կը հիւժուի: Յոր կ'ըմ- քերանէ իր բարեկամները, կը հերքէ անոնց մակերեսային տեսութիւնը, սակայն կը խոստովանի մարդուն անկարողութիւնը հասկնալու բարի- ին եւ չարին խորհրդաւոր պայքարը: Միայն Նոր Կտակարանով պիտի հասկնամք թէ՛ արդարներուն տրտմութիւնը պիտի ըլլայ փրկարար եւ պիտի փոխուի ուրախութեան (Յովն 16,20):

ՍԱՂՄՈՍ 10/11

Արդար մարդուն վստահութիւնը

1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

2 Ես Տիրոջ վրայ դրած եմ իմ յոյսս,
բնօրէնս կրնաք ըսել ինձի:
Լեռները փոխադրուէ, ճնճողուկի նման:

3 Ահա՛, իրենց աղեղները լարած են մեղաւորները,
կապարճներու մէջ պատրաստած են իրենց նետերը՝
խաւարի մէջ հարուածելու համար
անոնք որ ուղիղ են սրտով:

4 Անոնք ակերեցին ինչ որ դո՛ւն չինեցիր-
իսկ ի՞նչ ըրաւ արդարը:

5 Տէրը իր սուրբ տաճարին մէջ է:
Տէրը երկինքի մէջ է, իր գահին վրայ:
Անոր աչքերը թշուառներուն վրայ ուղղուած են,
եւ արտեւանունքները կը քննեն մարդ արարածը:

6 Տէրը կը քննէ արդարն ու ամբարիշտը-
այն որ մեղքը կը սիրէ՝ կ'ատէ՛ իր հոգին:

7- Ակնարկութիւնն է Սողոմի եւ Գոմորի կործանումին (Ծնդ 19,24. Ամս 4, 11. Եզկ 38,22. Յայտն 20,9): Պատկերը՝ բաժինը բաժակին կը նշանակէ բաժինը հատուցումին բարիքով կամ պատիժով (Աղմ 15,5. Մտք 20,22. Յայտն 14,10): Բաժակը Աստուծոյ բարկութեան, մարգարէական թեման է (Եր 25,15. Ամբ 2,16. Եզկ 23,31. Ես 51,17):

7 Կրակ եւ ծծումբ պիտի տեղացնէ իբր պատիժ՝
մեղաւորներուն վրայ,
այդ մրրի՛կը պիտի ըլլայ բաժինը անոնց բաժակին:

8 Արդա՛ր է Տէրը, ան կը սիրէ արդարութիւնը,
եւ անոր երեսը ուղիղ գործերը միայն կը տեսնէ:

ՍԱՂՄՈՍ 11/12

Մարդոց նեմգամտութիւնը

1 Աւարտին: Ութաղեղ նուագարանի վրայ:
Սաղմոս Դաւիթի:

2 Փրկէ՛ զիս, Տէ՛ր, որովհետեւ նուագեցաւ սուրբերուն թիւը,
եւ պակսեցաւ ճշմարտութիւնը մարդոց զաւակներուն մէջ:

3 Մարդը կեղծիքով խօսեցաւ իր ընկերոջ հետ,
սրտէ սիրտ՝ նենգաւոր շրթունքներով խօսեցաւ:

8- Հաւատացեալը «ծնած է Աստուծմէ, կը յաղթէ աշխարհի»: Երջանութիւնը գոր չունեցաւ աշխարհի վրայ, պիտի գտնէ Աստուծոյ դէմքին տեսութեամբ: Յագուրդը երանութեան պիտի ունենայ «Տննչալի տեսաւ» (Շնորհալի):

1- Ողբի շնչով աղօթք մըն է սաղմոսը. ներնչումը կը փաղէ երկու իրողութենէ. նուագումը Աստուծոյ հաւատարիմներուն եւ պարկեշտութեան նսեմացումը մարդոց մէջ, նեմգաւոր եւ երկդիմի սրտերու մոայլ ազդեցութեամբ (հ. 2-3): Սաղմոսերգուին աղօթքին կը պատասխանէ Աստուծոյ պատգամը, ի նպաստ աղբատին եւ դժբախտին եւ խոստումը փութով բերելու փրկութիւնը (հ. 6):

4 Տէրը կ'ոչնչացնէ բոլոր նենգաւոր շրթունքները եւ մեծախօս լեզուները, որոնք կ'ըսեն:

5 Երկարենք մեր լեզուները, մե՛րն են մեր շրթունքները, արդ, ո՞վ է մեր տէրը:

6 Հիմա պիտի ելլեմ, կ'ըսէ Տէրը, որ կը տեսնէ աղքատին տառապանքը, եւ թշուառին հեծեծանքը. փրկուածիւնս պիտի բերեմ, եւ քաջութիւն պիտի ներշնչեմ անոնց:

7 Տիրոջ խօսքերը սուրբ խօսքեր են, ինչպէս ընտիր արծաթը որ զտուած կ'ելլէ երկրէն, եօթն անգամ սրբուելէ եւ մաքրուելէ ետք հողէն:

8 Դո՛ւն, Տէ՛ր, պահեցիր մեզ, եւ յաւիտեան ազատեցիր մեզ այս տեսակ մարդոցմէ:

9 Ամբարիշտներ կը շրջին ամէն կողմ, սակայն դուն, քու վեհութեամբդ՝ պիտի մեծցնես մարդ արարածը:

ՍԱՂՄՈՍ 12/13

Աղօթք՝ փորձութեան ժամանակ

Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

1 Մինչեւ ե՞րբ բոլորովին պիտի մոռնաս զիս, Տէ՛ր, մինչեւ ե՞րբ երեսդ պիտի դարձնես ինծմէ:

2 Մինչեւ ե՞րբ մտահոգ պիտի մնայ հոգիս, եւ օրերով ցաւերու մէջ պիտի տառապի սիրտս:

3 Դեռ մինչեւ ե՞րբ վրաս պիտի յոխորտայ թշնամիս:

4 Նայէ, եւ լսէ զիս, ո՞վ Տէր Աստուածս: Լոյս տուր աչքերուս, Տէ՛ր, որ երբեք մահով չննջեմ:

5 Թող չըսէ թշնամիս. ես յաղթեցի՛ անոր: Եւ ինծի նեղութիւն տուողները՝ թող չցնծան թէ ես սասանեցայ:

6 Տէ՛ր, քու ողորմութեանդ վրայ դրած եմ իմ յոյսս. քու փրկութեամբդ ցնծաց իմ սիրտս. պիտի օրհնե՛մ Տէրը, իմ Բարերարս:

2–Սաղմոսերգուն Աստուծոյ կը յայտնէ իր տագնապը, կը հայցէ որ Տէրը խնայէ իրեն մահուան բունը եւ հակառակորդներուն յաղթանակը: Հ. 2–3 ողբն է որուն կը յաջորդէ աղօթքը (հ. 4–6բ): Հ. 6 խոստումն է օրհնարանութեան:

3– Խորհուրդները, տխրութեան մտածումներն են, որոնք կը ծնին սաղմոսերգունին ներաշխարհին մէջ երբ կ'որոնէ իր լճումին եւ Աստուծոյ հեռանալուն պատճառները:

4– Նայուածքը, աստուածային փրկչական նայուածքն է՝ հաւատացեալին տխրութեան եւ ցաւերուն. անոր պիտի յաջորդէ պատասխանը պաղատական աղօթքին: Լոյսը գոր կը խնդրէ աչքերուն համար, այսինքն վերակենդանացումը նուաղկոտ աչքերուն, պիտի ըլլայ գրաւական կատարեալ առողջութեան:

5– Փրկութիւնը համապարփակ իմաստով է: Մարդուն գոյութեան միայն անդեմականի մէջ շարունակութիւնը չէ որ կը մտնէ փրկութեան ծրագրին մէջ, այլ նաեւ անցաւոր տեսողութիւնը: Հաւատացեալը կրնայ միշտ պաղատիլ. արարածդ եմ, պարտիս պահպանել զիս: «Եթէ բու ծառաղ եմ, պարտիս փրկել զիս» (Լամբրոնացի):

ՍԱՂՄՈՍ 13/14

Աստուծով հեռացած մարդը

Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

- 1 Անզգամը իր սրտին մէջ ըսաւ. Աստուած չկա՛յ: Ապականեցան եւ պղծուեցան իրենց անօրէնութեան մէջ, մէ՛կը չմնաց որ արդարութիւն գործէ:
- 2 Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց բոլո՛ր որդիներուն, տեսնելու համար՝ թէ կա՞յ իմաստուն մէկը որ գԱստուած փնտռէ:
- 3 Ամէնքը միասին շեղեցան ճամբէն եւ իրարու միացան: Չկա՛յ մէկը որ բարին գործէ, չկայ նոյն իսկ մէ՛կ հոգի:
- 4 Որովհետեւ անոնցմէ մէ՛կն ալ չհասկեցաւ՝ թէ անօրէնութիւն կը գործէր: Անոնք իմ ժողովուրդս կ'ուտէին իբր հացի կերակուր, եւ Տիրոջ չէին աղօթէր:
- 5 Օր մը վախը պիտի պատէ գիրենք, հոն ուր վախնալու պատճառ չկայ, որովհետեւ Տէրը արդարներուն կողքին է:

1–Անզգամը յիմարն է, որ ինկած է գործնական անաստուածութեան մէջ:

5–Սարսափը անզգամին, հերժումն է անոր գործնական համոզումին՝ թէ Աստուած չկայ: Սարսափը եւ անպահովութիւնը ժամանակակից մարդկութեան, հերժումն են անոր արմատական ժխտումներուն

6 Անոնք ծաղրանքի են/թարկեցին աղքատին միտքը՝ որու ամբողջ յոյսը Տէրն է:

7 Ո՞վ, Սիոնէն, փրկութիւն պիտի տայ Իսրայէլի-երբ Տէրը գերութենէ վերադարձնէ իր ժողովուրդը, Յակոբը պիտի ցնծայ եւ Իսրայէլը պիտի ուրախանայ:

ՍԱՂՄՈՍ 14/15

Տիրոջ սրբարանը մտնելու համար

Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

- 1 Տէ՛ր, ո՞վ պիտի ապրի քու վրանիդ տակ, կամ ո՞վ պիտի բնակի քու սուրբ լեռանդ վրայ:
- 2 Այն՝ որ անբասիր է իր կեանքով. որ արդարութիւնը կը գործադրէ եւ ճշմարտութիւնը կը խօսի բոլոր սրտով.
- 3 այն՝ որ նենգութիւն չի գործեր իր լեզուով, որ չարիք չի հասցներ իր ընկերոջ, եւ իր մերձաւորը չի նախատեր.

նուիրական արժեքներուն: Անզգամին՝ սաղմոսներուն կը հակադրել իմաստունը, ան որ կը տեսնէ երեւոյթներէն եւ դէպքերէն աւելի հեռու՝ կը հասնի կեանքի վաւերական անաչումին, գոր կու տայ միայն Աստուած:

2–Արդարութիւնը կը պահանջէ սրտի անբասիրութիւն, խորհուրդի եւ մտածումի ճշմարտութիւն: Եթէ խորհուրդը ճշմարիտ է, գործը եւ խօսքը կը մնան ճշմարիտ, «իսկ նենգութիւնը կը քանդուի սէրը» (Լամբրոնացի):

4 *այն որ կ'արհամարհէ չարագործը, եւ կը փառաւորէ Տիրոջ երկիւղածները. որ չի ստեր երբ երդում կու տայ ընկերոջ:*

5 *Ան իր դրամը վարձու չի տար, եւ կաշառք չ'առներ իրաւունքը ճանչնալու համար. այն որ այսպէս կը գործէ՝ չի սասանիր յաւիտեան:*

ՍԱՂՄՈՍ 15/16

Աստուած իր հաւատարիմներուն բաժինն է

1 *Դաւիթի կողմէ արձանագրուած սաղմոս:*

Պահէ՛ զիս Աստուած, որովհետեւ քու վրադ դրած եմ իմ յոյսս:

2 *Դո՛ւն ես Տէրը, ըսի Տիրոջ, եւ իմ ունեցած բարիքներս քեզմէ՛ են:*

3 *Սուրբերուդ միջոցով որ երկրիդ վրայ են, սքանչելի կերպով կատարեցիր իմ կամքս:*

4 *Շատ մը հիւանդութիւններ պիտի գան անոնց վրայ, եւ անկէ վերջ՝ պիտի շտապեն անոնք:*

5- Օրեմբի գորութեամբ եւ ըստ մարգարեներու ուսուցումին, սո- կոսով փոխատուութիւնը արգիւտած էր Հրեաներու միջեւ (Ղւ 25,36-37. Ելբ 22, 25. Եզկ 18,17):

եւ պիտի չմասնակցիմ անոնց արիւնալի հաւաքոյթներուն, եւ անոնց անունը պիտի չառնեմ շրթունքներուս վրայ:

5 *Տէ՛րն է բաժինը իմ ժառանգութեանս եւ բաժակիս. դո՛ւն ես որ ժառանգութիւնս կը վերադարձնես ինծի:*

6 *Ես ընտիր մասը ստացայ վիճակով, եւ ժառանգած բաժինս հաճելի է ինծի:*

7 *Ես պիտի օրհնեմ Տէրը, որ իմաստուն ըրաւ զիս. երիկամնե՛րս անգամ գիշերը այդպէ՛ս խրատեցին զիս:*

8 *Տէրը միշտ ներկայ կը տեսնէի իմ առջեւս. աջիս կեցած է ան, որպէսզի չսասանիմ:*

9 *Ա՛յդ պատճառով, սիրտս ուրախացաւ, լեզուս ցնծաց, եւ մարմինս յոյսով պիտի հանգչի:*

10 *Որովհետեւ դուն իմ հոգիս պիտի չթողուս դժոխքի մէջ, եւ թոյլ պիտի չտաս որ քու սուրբդ ապականութիւն տեսնէ:*

11 *Յո՛յց տուիր ինծի քու կեանքիդ ճամբան, քու տեսքիդ ուրախութեամբ լիացուցիր զիս,*

5- «Տէրն է իմ բաժինը...» ակնարկութիւնն է դեւտացիներու վիճակին: Անոնք իբրեւ պաշտօնեաներ Աստուծոյ պաշտամունքին, չունէին կալուածի սեփականութիւն: Անոնց բաժինը Տէրն էր եւ կ'ապրէին ժողո- վուրդին նուէրներով:

11- «Կեանքի մամբան»... մամբան է գոր Տէրը կ'ուսուցանէ Օրեմբով եւ յայտնութեամբ: Ամէն հաւատացեալի համար, հիմնական բաժինը կը մնայ նոյնը. Տէրը: Միայն ինք կարող է ցոյց տալ կեանքի վաւերական

որպէսզի յաւիտենապէս վայելեմ
քու աջիդ փառաւորութեան քաղցրութիւնը:

ՍԱՂՄՈՍ 16/17

Աղօթք հալածանքի ատեն

Դաւիթին աղօթքը:

1 Լսէ, Տէ՛ր, արդարութեան,
ուշադրութիւն դարձուր ինդրանքիս,
եւ ահանջ դիր աղօթքներուս,
որովհետեւ նենգաւոր շրթունքներէ չեն ելած անոնք:

2 Իմ իրաւունքս քեզմէ՛ պիտի ստանամ,
եւ աչքերս պիտի տեսնեն ինչ որ ուղիղ է:

3 Դուն իմ սիրտս փորձի ենթարկեցիր եւ քննեցիր գիշերով,
բայց անիրաւութիւն չգտնուեցաւ իմ մէջս:

4 Բերանս պիտի չխօսի մարդոց գործերուն մասին,
քու շրթունքներուդ խօսքերուն համեմատ՝
խիստ ճամբաներէ պիտի քալեմ ես:

Բամբասնակ: Հարկ է սակայն խնդրել այս շնորհքը, օրուան հացին նման.
«Ճանապարհ ցոյց տուր ինձի՝ նեմխու դէպի երկինք» (Շնորհալի):

1-Սաղմոսը, աղօթքն է արդարին որ ստօրէն ամբաստանուած է: Աստուծոյ կը յանձնէ իր դատը եւ կը սպասէ անոր արդար միջամտութեան: Արդիւնքը միջամտութեան պիտի ըլլայ կրկնակի ֆօզագերծումը արդարին հակառակորդներուն, եւ արդարին՝ պարգեւը վայելելու աստուածային ներկայութեան երջանկութիւնը տաճարին մէջ:

5 Քու ճամբուդ մէջ հաստատէ շաւիղներս,
որ չսայթաքիմ գնացքիս մէջ:

6 Քեզի՛ ուղղեցի, Տէ՛ր, իմ ձայնս,
որովհետեւ մտիկ ըրիր ինձի, Աստուա՛ծ.
Խոնարհեցուր ահանջներդ եւ լսէ՛ խօսքերս:

7 Աքանջելիօրէն յայտնեցիր ողորմութիւնդ,
դուն՝ որ կը փրկես անոնք որ քու վրադ դրած են իրենց յոյսը,
անոնցմէ՝ որ հակառակ կը կենան քու աջիդ:

8 Պահէ՛ զիս, ինչպէս աչքի բի՛բը,
թեւերուդ հովանիին տակ ծածկէ՛ զիս,

9 հեռու ամբարիշտներէն որ տառապեցուցին զիս.
Թշնամիներ պաշարեցին զիս.

10 անոնք բանտարկուած են իրենց ճարպերուն մէջ,
եւ անոնց բերանը ամբարտաւանութիւն կը խօսի:

11 Մերժեցին զիս, եւ հիմա դարձեալ շուրջս պատած են,
իրենց միտքը դրած են զիս մինչեւ գետին խոնարհեցնել:

12 Անոնք կը նային ինձի՝
ինչպէս առիւծը որ որսի կը պատրաստուի,
ինչպէս առիւծի կորիւնը որ դարանի նստած է:

13 Ոտքի՛ ել, Տէ՛ր, հասի՛ր անոնց վրայ, խափանէ՛ զանոնք.
Փրկէ՛ հոգիս ամբարիշտներէն,
սուրէն եւ թշնամիին ձեռքէն:
Տէ՛ր, անհետացո՛ւր զանոնք երկրէն,
ցրուէ՛ զանոնք եւ զրկէ՛ իրենց ինչքերէն:

**14 Անոնք իրենց որովայնը լեցուցին՝
քեզմէ գաղտնի պահուած բաներով,
յագեցան կերակուրէն
եւ մնացածը թողուցին իրենց զաւակներուն:**

**15 Ես արդարութեամբ պիտի ելլեմ քու դիմացդ,
եւ պիտի յագենամ երբ յայտնուի քու փառքդ:**

ՍԱՂՄՈՍ 17/18

Շնորհակալութեան աղօթք

1 Աւարտին. պատերազմող նահատակին վրայ, գոր Տիրոջ ծառան՝ Դաւիթ, Տիրոջ ուղղեց, իբր օրհնութեան խօսք, այն օրը ուր Տէրը փրկեց զինքը իր բոլոր թշնամիներուն եւ Սաւուղին ձեռքէն. եւ ըսաւ.

**2 Պիտի սիրեմ քեզ, Տէ՛ր, իմ զօրութիւնս,
Տէ՛ր, իմ ստեղծիչս, ապաւէնս եւ փրկիչս:**

**3 Աստուած է օգնականս եւ ես անոր վրայ դրած եմ իմ յոյսս,
ան ապաւէնս է, փրկութեանս զօրութիւնը եւ զօրավիգս:**

15- Սաղմոսերգուն կը յայտնէ իր փափաքը, նախատեսելով արդարացումը իբրեւ կատարուած իրողութիւն: «Պիտի ելլեմ քու դիմացդ», այսինքն պիտի ընդունուի տանար, Աստուծոյ ներկայութեան՝ անոր դէմքին երանացուցիչ տեսութեամբ, դէմ յանդիման խօսելով անոր հետ ինչպէս Մովսէս (Ելք 33, 9-11):

1- Սաղմոսը գոհաբանութեան երգն է որով կը հռչակուի Տիրոջ միջամտութիւնը ի նպաստ իր օծելիին:

**4 Օրհնելով պիտի դիմեմ Տիրոջ,
եւ ան պիտի ազատէ զիս իմ թշնամիներէս:**

**5 Մահուան երկիւղը պատած է զիս,
եւ անօրէնութեան հեղեղները կը խռովեն զիս:**

**6 Դժոխքին վիշտերը կը պաշարեն զիս.
եւ մահուան որոգայթները հասած են իմ վրաս:**

**7 Տիրոջ կը գոչեմ նեղութեանս մէջ,
աղաղակս կը բարձրացնեմ իմ Աստուծոյս,
եւ ան, իր սուրբ տաճարէն, կը լսէ իմ աղօթքս.
եւ իմ աղաղակս անոր ականջներուն կը հասնի:**

**8 Երկիրը խռովեցաւ եւ դողաց,
լեռները սասանեցան եւ իրենց հիմերէն շարժեցան,
որովհետեւ Աստուած բարկացաւ անոնց վրայ:**

**9 Ծուխը բարձրացաւ անոր բարկութենէն,
անոր հայեացքէն կրակ բորբոքեցաւ,
եւ փայլատակումներ ցայտեցին իրմէ:**

**10 Ան խոնարհեցուց երկինքը եւ իջաւ,
մէգը՝ իր ոտքերուն ներքեւ առաւ:**

**11 Ան Քերովբէներուն վրայ ելաւ եւ թռաւ,
եւ հովերու թեւերով սլացաւ:**

**12 Խաւարը իր վրայ առաւ իբր ծածկոյթ,
իր շուրջն առաւ ամպերը իբր բնակարան.
խաւարային ջուրեր բարձրացան մինչեւ օդերու ամպերը:**

- 13 Երբ փայլատակեց անոնց առջեւ՝
ամպերը կարկուտ տեղացին եւ կայծակները՝ կրակ:
- 14 Տէրը որոտաց երկիրնքէն,
եւ Բարձրեալը լսելի ըրաւ իր ձայնը կարկուտի մէջ
եւ հրեղէն կայծակներով:
- 15 Արձակեց իր նետերը եւ ցրուեց զանոնք,
սաստկացուց իր փայլատակումները,
եւ խռովքի մատնեց զանոնք:
- 16 Քու սաստէ՞ղ՝ ջուրերու աղբիւրներ երեւցան, Տէ՛ր,
եւ աշխարհի հիմերը յայտնուեցան,
երբ քու բարկութեանդ հոգին շնչեց:
- 17 Ան օգնութիւն ղրկեց բարձունքներէն եւ բռնեց զիս,
եւ դուրս քաշեց զիս յորդահոս ջուրերու մէջէն:
- 18 Տէրը պիտի փրկէ զիս իմ հզօր թշնամիներէս
եւ անոնցմէ որ զիս կ'ատեն,
որովհետեւ անոնք ինծմէ շա՛տ աւելի հզօր դարձան:
- 19 Անոնք վրաս եկան չարչարանքիս օրերուն,
բայց Տէրը զօրացուց զիս:
- 20 Տէրը տարաւ զիս դէպի անդորր վայր մը,
ան փրկեց զիս, որովհետեւ սիրով ընդունեցաւ զիս:
- 21 Տէրը կը հատուցանէ ինծի՝ արդարութեանս համեմատ,
եւ անմեղութեանս համեմատ կը վարձատրէ զիս:
- 22 Ես պիտի ընթանամ Տիրոջ ուղիներէն,
եւ ամբարիշտ պիտի չդառնամ Աստուծոյ դէմ:

- 23 Անոր բոլո՛ր օրէնքները իմ առջեւ են,
ուստի ան իր արդարութիւնը ինծմէ հեռու չպահեց:
- 24 Ես անբասիր պիտի ըլլամ անոր հանդէպ,
եւ պիտի զգուշանամ անօրէնութիւն գործելէ:
- 25 Տէրը պիտի հատուցանէ ինծի արդարութեանս համեմատ,
ըստ ձեռքերուս մաքրութեան՝ անոր աչքերուն առջեւ:
- 26 Դուն սուրբ պիտի ըլլաս սուրբին հետ,
անբասիր պիտի ըլլաս անբասիր մարդուն հետ:
- 27 Ընտիրին հետ ընտիր պիտի ըլլաս,
եւ ծուռ ճամբէ գացողները պիտի տապալես:
- 28 Դուն կը փրկես խոնարհ ժողովուրդները,
եւ ամբարտաւաններուն աչքերը կը խոնարհեցնես:
- 29 Դուն իմ ճրագս լուսաւոր կը դարձնես, Տէ՛ր, խաւարին
մէջ լոյս տուր ինծի, Աստուած՝ իմ:
- 30 Քեզմով պիտի փրկուիմ փորձութենէ,
իմ Աստուծմովս պիտի անցնիմ պարիսպներէն:
- 31 Աստուած՝ իմ, քու ճամբաներդ անբիծ են,
եւ Տիրոջ խօսքերը յարգի են, ան ապաւէն է ամէն անոնց՝
որ անոր վրայ դրած են իրենց յոյսը:
- 32 Որովհետեւ ո՞վ Աստուած է՝ բացի Տիրոջմէն,
կամ ո՞վ է Աստուած՝ բացի մեր Աստուծմէն:

- 33 Աստուած՝ որ զօրութեամբ զգեցուցիր զիս, եւ անբծութեան մէջ դրիր ճամբաներս:
- 34 Ամրացուցիր իմ ոտքերս, ինչպէս եղջերուի ոտքերը, եւ բարձունքներու վրայ կանգնեցիր զիս:
- 35 Դուն վարժեցուցիր ձեռքերս՝ պատերազմի համար, եւ կազմեցիր բազուկներս՝ հաստ աղեղի նման:
- 36 Դուն տուիր ինծի փրկութեանդ պաշտպանութիւնը, քու աջդ ընդունեցաւ զիս.
քու խրատդ կանգնեց զիս ցմիշտ, եւ քու խրատդ պիտի դաստիարակէ զիս:
- 37 Դուն քալուածքս ընդարձակեցիր ոտքերուս տակ, եւ սրունքներս չտկարացան:
- 38 Պիտի հալածեմ թշնամիներս եւ պիտի հասնիմ անոնց, եւ պիտի չվերադառնամ անոնց քովէն՝ մինչեւ որ բնաջնջեմ զանոնք:
- 39 Պիտի նեղեմ զանոնք, որ չկարենան ոտքի կենալ այլեւս, եւ անոնք ոտքերուս տակ պիտի իյնան:
- 40 Դուն որ պատերազմելու ոյժ գգեցուցիր ինծի, իմ առջեւ ծունկի բերիր ինծի դէմ ելլողները:
- 41 Դուն հալածական դարձուցիր թշնամիներս, եւ ոչնչացուցիր անոնք որ զիս կ'ատեն:
- 42 Աղաղակեցին անոնք, բայց զիրենք փրկող մը չկար, Տիրո՛ջ գոչեցին, բայց ան մտիկ չըրաւ անոնց:

- 43 Պիտի մանրեմ զանոնք, ինչպէս փոշին՝ հովին դիմաց, փողոցներու ցեխին պէս ոտնակոխ պիտի ընեմ զանոնք:
- 44 Տէրը պիտի փրկէ զիս թշնամի ժողովուրդներէն, եւ հեթանոսներու գլուխը պիտի կարգէ զիս:
- 45 Ժողովուրդ մը ծառայեց ինծի՝ զոր չէի ճանչնար, եւ զիս լսելով միայն՝ մտիկ ըրաւ ինծի:
- 46 Օտարներուն զաւակները սուտ խօսեցան ինծի, մաշեցան եւ կաղ դարձան իրենց ճամբուն մէջ:
- 47 Կենդանի՛ է Տէրը եւ օրհնեալ է Աստուած, թող փառաբանուի՛ Աստուած, իմ Փրկի՛չս:
- 48 Աստուած է որ կը լուծէ իմ վրէժս, ա՛ն է որ ժողովուրդները կը հպատակեցնէ ինծի:
- 49 Դուն փրկեցիր զիս կատղած թշնամիներէս, վրաս յարձակողներէն վեր բարձրացուցիր զիս, եւ անիրաւ մարդէն փրկեցիր զիս:
- 50 Ուստի հեթանոսներուն քով պիտի գովաբանեմ քեզ, եւ սաղմոսներ պիտի երգեմ քու անունիդ:

47– «Կենդանի է Տէրը»․ յատկանշական բանաձեւն է երդումի՝ Հին Կտակարանի մէջ (Դատ 8,19): Հաւատքի ներգործութիւնն է Աստուծոյ՝ որ ունի կեանքը իրրեւ առանձնաշնորհում:

50– Այս համարով կը սկսի գովաբանութիւնը Տիրոջ անունին: Կը յիշէ նաեւ սէրը գոր Աստուած ցոյց կու տայ իր օծեալին: Օծեալն է նախ Դաւիթ՝ ընտրուած եւ օծուած (1 Թագ 16,13) եւ ապա անոր սերունդը: Այս համարը հաւանաբար յետամուտ կցուող մըն է: Սաղմոսերգուն աչ–

51 Մե՛ծ փրկուածիւն պարգեւեցիր անոր թագաւորին, ողորմուածիւն ցոյց տալով անոր Օծեալին՝ Դաւիթին եւ անոր զաւակին հանդէպ, սերունդէ սերունդ:

ՍԱՂՄՈՍ 18/19

Փառաբանութիւն ստեղծագործութեան

- 1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:
- 2 Երկինքը կը հռչակէ Աստուծոյ փառքը, եւ երկնակամարը՝ անոր ձեռքին գործերը:
- 3 Օրը օրուան կը փոխանցէ իր խօսքը, եւ գիշերը գիշերուան կը հաղորդէ իր գիտութիւնը:
- 4 Չկա՛ն խօսքեր, չկա՛ն բառեր, ոչ ալ անոնց ձայնը կը լսուի:
- 5 Անոնց բարբառը կը լսուի ամբողջ երկրին վրայ, եւ մինչեւ աշխարհի ծագերը հասած են անոնց խօսքերը:
- 6 Ան իր վրանը հաստատեց արեւին տակ, եւ ինքը, փեսային նման որ դուրս կ'ելլէ հարսնարանէն, կը ցնծայ, ինչպէս հսկան որ կ'ընթանայ իր ճամբէն:

Բին առջեւ չունի ոչ միայն իր կամ աւելի ուշ ժամանակի թագաւորը, այլ ան խորհրդաւոր եւ գերազանցապէս Օծեալը՝ Քրիստոս (Միք 5,4. Երմ 33,15. Ովս 3,5. Ամս 9,11):

7 Երկինքի մէկ ծայրէն կ'ելլէ եւ միւս ծայրը կը հանգչի՝ եւ չկայ մէկը որ կարենայ փախուստ տալ անոր կիզիչ ջերմութենէն:

Փառաբանութիւն Տիրոջ օրէնքներուն

- 8 Տիրոջ օրէնքները անբիծ են եւ հոգին կը կազդուրեն: Տիրոջ վկայութիւնը վստահելի է, եւ մանուկները իմաստուն կը դարձնէ:
- 9 Տիրոջ պատուէրները ուղիղ են, եւ սիրտերը կ'ուրախացնեն. Տիրոջ պատուիրանները լոյս են, եւ աչքերուն լոյս կու տան:
- 10 Տիրոջ երկիւղը սուրբ է, եւ յաւիտեան կը մնայ. Տիրոջ դատաստանը ճշմարիտ է եւ արդար միանգամայն:
- 11 Ան ցանկալի է՝ ոսկիէ՛ն ալ աւելի, շա՛տ աւելի քան շատ մը թանկագին քարեր: Քա՛ղցր է ան, մեղրի խորիսխէ՛ն ալ աւելի:
- 12 Քանի որ քու ծառա՛ղ պիտի պահէ զայն՝ զայն պահելով մեծ վարձատրութիւն պիտի ստանայ:

9– Սաղմոսին երկրորդ մասը (հ. 8–14) գովասանքն է Օրէնքին, ինչպէս 118 սաղմոսը Օրէնքը աստուածային ուսուցումն է որ տրուած է գրաւոր կերպով Մովսէսի, եւ մարգարէներու ձեռքով՝ Աստուծոյ անուր փրկչական ծրագիրը: Ընդհանուր առումով կը նոյնանայ Հին Կտակարանի հետ: Օրէնքը կեանք կու տայ հոգիին, որովհետեւ իբրեւ Աստուծո՛ւմ տրուած, ունի իր մէջ զօրութիւնը վերակենդանացնելու մարդուն քարոյական եւ հոգեւոր կեանքը:

13 Ո՞վ կրնայ մտաբերել իր յանցանքները․
մաքրէ՛ գիւս, Տէ՛ր, իմ ծածուկ յանցանքներէս,

14 եւ հեռու պահէ ծառադ՝ օտարներէն,
որպէսզի անոնք չտիրեն իմ վրաս եւ ես անբիծ մնամ,
ու մաքուր՝ ծանր մեղքերէ:

15 Թող հաճոյ ըլլան քեզի իմ բերնիս խօսքերը․
եւ սրտիս մտածումները՝ միշտ ներկայ քու առջեւդ,
Տէ՛ր իմ, օգնականս եւ փրկի՛չս:

ՍԱՂՄՈՍ 19/20

Խնդրանք՝ Քագաւորին համար

1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

2 Թող Տէրը լսէ քեզ՝ անձկութեանդ օրերուն,
Յակոբի Աստուծոյն անունը օգնական ըլլայ քեզի:

3 Տէրը օգնութիւն թող զրկէ քեզի՝ իր սրբարանէն,
եւ Սիոնէն թող ըլլայ քու ապաւէնդ:

4 Թող յիշէ Տէրը՝ քու բոլոր զոհերդ,
եւ ընդունելի ընէ քու ուխտերդ:

5 Տէրը քու սրտիդ համաձայն թող տայ քեզի,
եւ կատարէ քու բոլոր ծրագիրներդ:

6 Քու փրկութեամբդ ցնծանք մենք․
եւ մեր Աստուծոյն անունով փառաւորուինք․
Թող Տէրը լի՛ովի կատարէ քու խնդրանքներդ:

7 Այժմ գիտցայ՝ թէ Տէրը կեանք տուաւ իր օծեալին՝
իր փրկագործ աջին զօրութեամբ,
եւ իր երկնաւոր սրբարանէն լսեց զայն:

8 Ոմանք կառքերով են, ուրիշներ՝ երիվարներով,
իսկ մենք՝ մեր Տէ՛ր Աստուծոյ անունը կը կանչենք:

9 Անոնք ձախողեցան եւ ինկան,
մենք կանգնեցանք եւ ուղիղ ոտքի կեցանք:

10 Տէ՛ր, պահէ՛ թագաւորը, եւ լսէ՛ մեզ՝
այն օրը ուր քեզ կանչենք:

ՍԱՂՄՈՍ 20/21

Թագաւորին յաղթանակները

1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

2 Տէ՛ր, թագաւորը, քեզմով զօրացած, կ'ուրախանայ,
քու փրկութեամբդ՝ ան մեծապէս կը խայտայ:

3 Անոր տուիր ինչ որ իր սիրտը կը ցանկար,
եւ անոր շրթունքներուն կամքին հակառակ չկեցար:

4 Քու օրհնութեանդ քաղցրութեամբ օժտեցիր զայն,
եւ պսակեցիր անոր գլուխը՝
թանկագին քարերով զարդարուած թագով մը:

4–Գլխարկ պատճառը արքային ուրախութեան թագադրութիւնը չէ, այլ օրհնութիւնները, երկար կեանքը եւ երջանկութիւնը գորս կը պարգեւէ Տէրը (հ. 4 եւ 7):

5 Ան կեա՛նք խնդրեց քեզմէ՛,
եւ դուն տուիր զայն՝ երկար օրերու համար ցյաւիտեան:

6 Քու պարգեւած փրկութեանդ շնորհիւ՝
ան մեծ փառքերու հասաւ,
եւ դուն՝ փառքով ու մեծ վայելչութեամբ օժտեցիր զայն:

7 Յաւիտենական օրհնութիւններով պիտի ճոխացնես զայն
եւ պիտի ուրախացնես քու տեսքիդ ուրախութեամբ:

8 Թագաւորը Տիրոջ վրայ դրած է իր յոյսը,
յուսախաբ պիտի չըլլայ Բարձրեալին ողորմութենէն:

9 Քու ձեռքդ պիտի ծանրանայ թշնամիներուդ վրայ,
եւ աջդ՝ բոլո՛ր քեզ ատողներուն վրայ:

10 Երբ դէմքդ երեւնայ,
հնոցի կրակին պիտի մատնես զանոնք՝
Տէրը, իր բարկութեամբ՝
խռովութեան պիտի մատնէ զանոնք,
եւ կրակը պիտի ճարակէ զանոնք:

11 Անոնց սերունդը պիտի անհետանայ երկրէն,
եւ անոնց գաւակները՝ մարդկութենէն:

12 Անոնք չարութեամբ խոտորեցան քեզմէ՛,
ծրագիրներ յղացան՝ զորս չկրցան իրականացնել:

6- Փառքը եւ մեծվայելչութիւնը յատուկ են աստուածութեան: Խոստումին շնորհիւ, դաւթեան թագաւորները կերպով մը հաղորդակից են Տիրոջ փառքին եւ մեծվայելչութեան:

13 Դուն հալածական պիտի դարձնես զանոնք,
եւ այլ պատիժներ պիտի վերապահես անոնց դէմ:

14 Կանգնէ՛, Տէ՛ր, քու զօրութեամբդ՝
մենք պիտի օրհնենք քեզ,
եւ սաղմոսներ պիտի երգենք քու զօրութեանդ:

ՍԱՂՄՈՍ 21/22

Անմեղին տառապանքներն ու յոյսերը

1 Աւարտին: Առաւօտին՝ օգնութիւն խնդրելու համար,
Սաղմոս Դաւիթի:

2 Աստուած, Աստուած իմ, նայուածքդ դարձուր ինծի՝
ինչո՞ւ կը թողուս զիս եւ հեռու կը մնաս փրկութենէս՝
յանցաւոր խօսքերուս պատճառով:

3 Աստուած իմ, ես առաւօտը կանչեցի քեզ,
բայց դուն չլսեցիր զիս,
զիչեր՛ը եւս, բայց դուն մտիկ չըրիր ինծի:

4 Դուն սուրբերուն միջեւ կը բնակիս,
եւ իսրայէլի մէջ կը փառաբանուիս:

5 Մեր հայրերը քու վրադ դրած էին իրենց յոյսը,
անոնք քեզի յուսացին եւ դուն փրկեցիր զանոնք:

6 Անոնք քեզի աղաղակեցին, եւ ողջ մնացին,
քեզի յուսացին, եւ յուսախաբ չեղան:

7 Բայց ես որդ մըն եմ եւ ո՛չ մարդ,
մարդոց նախատինք եւ ժողովուրդներու արհամարհանք:

8 Ամէն անոնք որ կը տեսնէին զիս՝
արհամարհանքով կը վարուէին ինծի հետ,
իրենց գլուխը կը շարժէին եւ շրթունքներով կ'ըսէին.

9 ասիկա Տիրո՛ջ վստահեցաւ, թող ան փրկէ զինք,
թող ազատէ՛, քանի որ կը սիրէ զինքը:

10 Դո՛ւն ես որ մօրս արգանդէն հանեցիր զիս,
դո՛ւն ես իմ յոյսս՝ մօրս կաթը խմելէս ի վեր:

11 Քու բաժինդ դարձած եմ ես,
դո՛ւն ես իմ Աստուածս՝ մօրս արգանդէն սկսեալ:

12 Մի՛ հեռանար ինծմէ,
որովհետեւ նեղութիւնները մօտեցան ինծի,
եւ չկա՛յ մէկը որ օգնէ ինծի:

13 Զուարակներու բազմութիւնը շրջապատած է զիս,
եւ գէր ցուլեր պաշարած են իմ շուրջս:

7-Ֆիզիքական չարչարանքի, հակառակորդները կ'աւելցնեն հոգե-
կանը. կը ծաղրեն զինք եւ կը հեգնեն նոյնիսկ անոր վստահութիւնը Տի-
րոջ վրայ: Լեւուի այս մտայլ կացութեան մէջ կը ժայթփէ տառապանքի
աղաղակը. Աստուած իմ, ինչո՞ւ թողուցիր զիս:

10- Զուակը, հագիւ ծնած, կը յանձնուէր հօր: Կը դնէր զինք իր
ծունկերուն վրայ իբրեւ նշանակ նանչուի կամ որդեգրութեան (Մննդ
30,3 . Յր 3,12):

13-Նրեմբ պատկերներով սաղմոսներուն կը նկարագրէ զանազան տե-

14 Անոնք իմ վրաս բացած են իրենց բերանները,
մունչող եւ յափշտակող առիւծներու նման:

15 Ես, ջուրի նման, գետին թափուեցայ.
բոլոր ոսկորներս ցրուեցան,
եւ սիրտս, կուրծքիս տակ՝ հալած մոմի նման դարձաւ:

16 Զօրութիւնս ցամքեցաւ խեցիի նման,
լեզուս քիմքիս փակաւ. մահուան հողը իջեցուցին զիս:

17 Շուներու բազմութիւն մը հաւաքուեցաւ շուրջս,
եւ չարերու խուժան մը պաշարեց զիս:

18 Ծակեցին ձեռքերս ու ոտքերս, համրեցին բոլոր ոսկրներս.
Իսկ անոնք՝ նայեցան եւ տեսան զիս:

19 Իրարու մէջ բաժնեցին իմ հագուստներս,
եւ իմ պատմութեանիս վրայ վիճակ նետեցին:

20 Տէ՛ր, մի՛ հեռացներ օգնութիւնդ ինծմէ,
Տէ՛ր, օգնութեան հասիր ինծի:

21 Փրկէ՛ զիս սուրէն,
եւ խեղճ անձս՝ շուներու ձեռքէն:

22 Փրկէ՛ զիս առիւծի բերանէն,
եւ մի խեղճութիւնս՝ միեղջերուին ժանիքէն:

ասկի հակառակորդները. Գեր ցուլերը խորհրդանիշ են բիրտ թշնամի-
ին: Առիւծը՝ հակառակորդն է թագաւորին, իսկ շուկը կը խորհրդանշէ
բախտախնդիր, փոփոխամիտ եւ աննկարագիր թշնամին:

23 Քու անունդ պիտի հռչակեմ եղբայրներուս առջեւ, եւ հասարակութեան մէջ պիտի գովաբանեմ քեզ:

24 Ո՛վ դուք, Տիրոջ երկիւղածնե՛ր, օրհնեցէ՛ք Տէրը, թող փառաւորեն՝ զինքը Յակոբի սերունդները:

25 Թող երկնչի՛ն Տիրոջմէ՛ Իսրայէլի բոլոր սերունդները, որովհետեւ չարհամարհեց եւ չանարգեց աղքատիս աղօթքը, եւ իր երեսը չդարձուց ինծմէ, այլ լսեց զիս երբ իրեն աղաչեցի:

26 Քեզմով կը սկսի գովաբանութիւնս, մեծ հասարակութիւններու մէջ պիտի օրհնեմ քեզ. ուխտս պիտի կատարեմ անոր երկիւղածներուն առջեւ:

27 Թշուառները կերակուր պիտի ուտեն եւ պիտի յագենան. պիտի օրհնեն Տէրը, անոնք որ կը փնտռեն զինքը, եւ անոնց սիրտերը յաւիտենապէս պիտի ապրին:

28 Երկրի բոլո՛ր ծագերը պիտի յիշեն եւ Տիրոջ պիտի դառնան, եւ պիտ երկրպագեն անոր՝ ազգերու բոլոր տոհմերը:

29 Որովհետեւ Տիրո՛ջ կը պատկանի թագաւորութիւնը, եւ ան կը տիրէ բոլո՛ր հեթանոսներուն վրայ:

27- Համարը ակնարկութիւնն է ծիսական նաշին որոշ տօներու առիթով, ինչպէս Տաղաւարահարաց, եւ որուն կը հրաւիրուէին աղքատները եւ երկիւղածները Տիրոջ (Ղեւ 7,15. ԵՕ 14,29): Ակնարկութիւն մըն է նաեւ մեսիական ինքոյփին, որուն նախապատկերն է երկնային մանանան (Ես 25,6. Առակ 9,1):

30 Բոլոր անոնք որ պարարտացան երկրի վրայ, կերան եւ յագեցան, եւ երկրպագութիւն ըրին անոր. անոր առջեւ պիտի իյնան բոլոր անոնք որ հող կ'իջնեն:

31 Հոգիս իրմո՛վ կ'ապրի, անո՛ր պիտի ծառայէ իմ զաւակս:

32 Տիրոջ մասին պիտի պատմուի գալիք սերունդին, անոր արդարութիւնը պիտի հռչակեն այն ժողովուրդին՝ որ պիտ ծնի, ինչպէս նաեւ այն ինչ որ ըրած է Տէրը:

ՍԱՂՄՈՍ 22/23

Բարի հովիւը

1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

30- Նոր Կտակարանի հեղինակները այս սաղմոսին մէջ տեսած են նկարագրութիւնը Յիսուսի չարչարաններուն: Մտք. եւ Մրկ. կը յիշեն Յիսուսի աղաղակը խաչին վրայ (Կ. 2) կը յառաջերեքն գայն նախ արամայերէն եւ ապա կը թարգմանեն յունարէնի (Մտք. 27,46. Մրկ. 15,34): Սաղմոսերգուին հակառակորդներուն կեցուածքը կը կրկնուի Յիսուսի հակառակորդներուն կողմէ. (Հ. 3) (Մտք. 27,39 Մրկ. 15,29. Ղկ. 23,25): Հ.9-ի խօսքերը կը յիշէ (Մտք. 27,43): Սաղմոսին տառապեալին ծարար կ'արտայայտէ Յիսուս, «Ծարաւի եմ» աղաղակով (Յովի 19,28): Դատապարտեալին հագուստներու բաժանումը կ'իրականանայ Յիսուսի հագուստներուն բաժանումով գոր կը յիշեն չորս Աւետարանիչները. (Մտք 27,35. Մրկ 15,24. Ղկ 23,34. Յովի 19,24): Յիսուսի չարչարանները պատմելու համար, Նոր Կտակարանի հեղինակները մասնաւոր նախընտրանք ունին այս սաղմոսին հանդէպ (Մտք 26,24. Մրկ 9,12. Ղկ 23,27.1 Պետ 1,11):

1- Այլարանական գողորիկ սաղմոս մըն է: Կը նկարագրէ Աստուծոյ

2 Տէ՛րը պիտի ըլլայ իմ հովիւս,
 եւ ո՛չ մէկ բան պիտի պակսի ինծի:
 Դալար վայրերու մէջ ան բնակեցուց զիս,
 եւ հանգիստի ջուրերու եզերքը անոյց զիս:

3 Հոգիս վերադարձուց ինծի,
 եւ իր անունին պատճառով՝
 արդարութեան ճամբէն առաջնորդեց ինծի:

4 Եթէ մահուան ստուերներէն իսկ անցնիմ՝
 պիտի չվախնամ փորձանքներէն,
 որովհետեւ դուն իմ հէ՛տս ես, Տէ՛ր.
 ցուպդ եւ գաւազանդ՝ անոնք պիտի մխիթարեն զիս:

5 Սեղան պատրաստեցիր իմ առջեւս,
 իմ թշնամիներուս դէմ դիմաց:

հոգածութիւնը արդար հոգիներուն հանդէպ: Աստուած հովիւն է ար-
 դարներուն, իսկ ամբարիշտները կը հովուէ Մահը (Սղմ 48,15): Արդար-
 ները՝ հիւրեր Աստուծոյ սեղանին (Ես 65,13) կը բնակին Աստուծոյ տան
 մէջ, ուր կը վայելեն ապահովութիւն (Ես 25,3. 55,1. Առակ 9,2. Ղկ
 14,16):

2- «Հանգիստի ջուրերը...» Զուրերու պատկերով Նարեկացին կը
 հասկնայ լիութիւնը շնորհքի: Շնորհակալին, ջուրերու եւ դալար խոտերու
 պատկերները կը մեկնաբանէ Եկեղեցւոյ հովիւներուն խնամքով եւ ու-
 սուցումով՝ հաւատացեալներուն:

4- «Ցուպդ եւ գաւազանդ...» մին հովուելու, իսկ միւսը՝ պաշտպա-
 նելու համար վտանգներուն դէմ (Ելք 21,19. 4 Թագ 4,29):

5- Գլուխի օծումը մաս կը կազմէր հիւրընկալութեան սովորութեան
 (Ամս. 6,6): Արդարներուն տրուած մաշը նախապատկերն է մեխական
 խնջոյքին, որ վերապահուած է արդարներուն՝ դէմ յանդիման ամբա-
 րիշտներուն, որոնք մերժուած են (Ես 65,13):

իւղով օծեցիր գլուխս,
 անապակ բաժակդ գինովցուց զիս:

6 Քու ողորմութիւնդ, Տէ՛ր,
 պիտի ընկերանայ ինծի կեանքիս բոլո՛ր օրերուն,
 որպէսզի երկա՛ր օրեր բնակիմ Տիրոջ տան մէջ:

ՍԱՂՄՈՍ 23/24

Ադոթ՝ սրբարան մտնելու համար

1 Սաղմոս Դաւիթի, շաբթուայ առաջին օրուան համար:

Տիրո՛ջ կը պատկանի երկիրը իր ամբողջութեամբ,
 աշխարհը եւ անոր բոլոր բնակիչները:

2 Ի՛նքն է որ դբաւ անոր հիմերը ծովուն վրայ,
 եւ տեղաւորեց զայն գետերուն վրայ:

3 Ո՞վ պիտի ելլէ Տիրոջ լեռան վրայ,
 կամ ո՞վ պիտի կենայ անոր սրբավայրին մօտ:

4 Այն՝ որու ձեռքերը մաքուր են եւ սիրտը անբիծ,
 այն՝ որ անօրէն գործերու յանձնառու չ'ըլլար,
 եւ իր ընկերը խաբելու համար սուտ երդում չ'ըներ:

1- Սաղմոսը յօրինուած կը թուի ծիսական պաշտամունքի յատուկ
 արարողութեան մը համար, որ կը խորհրդանշէ կամ կը պատկերացնէ
 Տիրոջ՝ Թագաւոր փառքի, մուտքը տաճար (Ես 30,29. Եզկ 43,2. Զաբ
 8,3):

5 Ան Տիրոջ օգնութիւնը կը ստանայ,
եւ ողորմութիւնը՝ իր փրկիչ Աստուծմէն:

6 Ասո՛նք են այն մարդիկը որ կը փնտռեն Տէ՛րը,
որ կ'ուզեն տեսնել Յակոբի Աստուծոյն երեսը:

7 Իշխաններ, բարձրացուցէ՛ք ձեր դռները,
թող բարձրանան՝ յաւիտենական դռները,
եւ թող նե՛րս մտնէ փառքի թագաւորը:

8 Ո՞վ է այս փառքի թագաւորը.
Տէ՛րը, Հոօ՛րն իր զօրութեամբ.
Տէ՛րը, Հոօ՛րը պատերազմի մէջ:

9 Իշխաններ, բարձրացուցէ՛ք ձեր դռները,
թող բարձրանան՝ յաւիտենական դռները,
եւ թող նե՛րս մտնէ փառքի թագաւորը:

10 Ո՞վ է այս փառքի թագաւորը.
Զօրութիւններո՛ւ Տէ՛րը,
սա ի՛նքն է փառքի թագաւորը:

10- Քրիստոս կատարեց դերը փառքի թագաւորին, գալստեան օրը Երուսաղէմ: Մտաւ քաղաք, բազմութեան բարեբանութեամբ բարձրացաւ մինչեւ տաճար: Արքայական էր մուտքը, մեսիական՝ իբրեւ Դաւիթի որդիի: Յիսուս Պիղատոսի առջեւ կ'ընդունի հանգամանքը թագաւորի, բայց իբրեւ թագաւորի՝ որ աշխարհ եկած է վկայելու եշմարտութեան (Յովի 18,33): Անոր արքայական գահը եղաւ խաչը: Սակայն ան թագաւորն է փառքի (1 Կոր 2,8) որովհետեւ յաղթեց աշխարհի, մահուան եւ մեղքին եւ եղաւ մեզի համար օրհնութիւնը եւ արդարութիւնը Աստուծոյ:

ՍԱՂՄՈՍ 24/25

Աղօթք՝ վտանգի մէջ

- 1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:
- 2 Քեզի՛ բարձրացուցի իմ հոգիս, Տէ՛ր:
- 3 Աստուած՝ իմ, քու վրադ դրած եմ ես իմ յոյսս.
Ես ամօթով պիտի չմնամ,
եւ թշնամիներս պիտի չծիծաղին իմ վրաս:
- 4 Ամօթով պիտի չմնան անոնք որ քեզի վստահած են,
այլ պիտի ամչնան անօրէնները իրենց խեղճութեան մէջ:
- 5 Յո՛յց տուր ինծի ճամբաներդ, Տէ՛ր,
քու շաւիղներդ սորվեցուր ինծի:
Քու ճշմարտութեանդ մէջ առաջնորդէ ինծի,
եւ սորվեցուր զայն ինծի,
որովհետեւ դո՛ւն ես իմ փրկիչ Աստուածս,
եւ ես քեզի վստահած եմ միշտ:
- 6 Յիշէ՛, Տէր, գթութիւնդ եւ ողորմութիւնդ,
որ յաւիտենական են:

2-Սաղմոսը վերացումն է հոգւոյն որ աստուածային ներումին հետ կը սպասէ նաեւ աստուածային փրկարար միջամտութեան:
5-Տիրոջ ցամաքները անոր պատուիրաններն են, որ միանգամայն լոյս են եւ արիութիւն վաստակարեկ մարդուն համար. «Անոր ցամաքները, ցամաքներն են բարիքներու եւ անոր շաւիղները խաղաղութիւն են» (Առակ 3,17):

7 Մի՛ յիշեր մանկութեանս մեղքերը
եւ ինչ որ գործած եմ անգիտութեամբ,
այլ քու ողորմութեա՛մբդ յիշէ՛ գիւս, Տէ՛ր
քու քաղցրութեանդ համեմատ:

8 Որովհետեւ քաղցր եւ ուղիղ ես, Տէ՛ր, եւ անոր համար՝
օրէնքի ճամբան ցոյց կու տաս մեղաւորներուն:

9 Դուն առաջնորդն ես հեզերուն՝ դէպի արդարութիւն,
եւ քու ճամբաներդ կը սորվեցնես անոնց:

10 Տիրոջ բոլոր ճամբաները
չնորհք են եւ ճշմարտութիւն անոնց համար՝
որ կը փնտռեն անոր ուխտն ու վկայութիւնը:

11 Տէ՛ր, քու անունիդ համար քաւէ՛ մեղքերս,
որովհետեւ բազմացան անոնք:

12 Ո՞վ է այն մարդը որ Տիրոջ երկիւղն ունի.
Տէրը օրէնքի գիտակից կը դարձնէ զայն
եւ կը դնէ ա՛յն ճամբուն վրայ որ իրեն հաճոյ է:

13 Անոր հոգին բարիքներով պիտի բախտաւորուի,
եւ անոր գաւակը երկիրը պիտի ժառանգէ:

14 Տէրը՝ զօրութիւն է իր երկիւղածներուն համար,
եւ իր կտակարանները կը սորվեցնէ անոնց:

10- «Շնորհիք եւ նշմարտութիւն» կամ «ողորմութիւն եւ նշմարտու-
թիւն», սաղմոսներուն մէջ ստեպ կը յիշուին միասին (39,11-12 . 56,4 .
60,8) ինչպէս նաեւ այլ մատենաներու մէջ (Ելք 34,6. Առակ 3,13. Ովս
4,1) եւ ցոյց կու տան Աստուծոյ բարեացակամ հանութիւնը:

15 Իմ աչքերս Տիրոջ ուղղուած են անվերջ,
եւ ան կ'ազատէ ոտքերս որոգայթէ:

16 Նայէ՛ ինծի, եւ ողորմէ՛ ինծի,
որովհետեւ ես աղքատ եմ եւ մօրս միակ գաւակը:

17 Սրտիս նեղութիւնները չափէն աւելի բազմացան.
գիս վիշտերէս դո՛ւրս հանէ:

18 Տէ՛ս կրած խոնարհեցումներս եւ տառապանքս,
ներէ՛ ինծի բոլո՛ր մեղքերս:

19 Տէ՛ս թշնամիներս, որ ա՛յնքան բազմացած են,
եւ ատելութեամբ լեցուած ինծի դէմ, սակայն ի զուր:

20 Պահպանէ՛ հոգիս եւ փրկէ՛ գիւս, որ ամօթով չմնամ,
որովհետեւ քո՛ւ վրադ դրած եմ իմ յոյսս:

21 Անբիծները եւ ուղղամիտները կարեկից եղան ինծի,
եւ ես քեզի վստահեցայ:

22 Փրկէ՛, Տէր, Իսրայէլը,
անոր կրած բոլոր նեղութիւններէն:

ՍԱՂՄՈՍ 25/26

Ադօք՝ հալածանքի առեմ

Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

1 Դա՛տս տես, Տէ՛ր, որովհետեւ ես անմեղութեամբ ընթացայ,
Տիրոջ վրայ դրի յոյսս, ուստի պիտի չտկարանամ:

1- Հաւատացեալը գիտակից է ընդունած շնորհներուն: Առանց ինք-

- 2 Փորձէ՛ զիս Տէ՛ր, քննէ՛ զիս,
խուզարկէ՛ երիկամներս եւ սիրտս:
- 3 Թու ողորմութիւնդ աչքիս առջեւ է,
եւ ուրախ եմ ճշմարտութեանդ հետեւելով:
- 4 Անզգամներու աթոռը պիտի չնստիմ,
եւ անօրէններու հետ պիտի չյարաբերիմ:
- 5 Ես կ'ատեմ չարերուն ընկերութիւնը,
եւ ամբարիչտներու հետ չեմ նստիր:
- 6 Անմեղութեամբ պիտի լուամ ձեռքերս,
եւ քու սեղանիդ շուրջ պիտի դառնամ, Տէ՛ր,
- 7 լսելու համար քու օրհնութիւններուդ ձայնը,
եւ պատմելու համար քու սքանչելիքներդ:
- 8 Ես սիրեցի, Տէ՛ր, քու տանդ վայելչութիւնը,
եւ քու փառքի բնակարանիդ վայրը:
- 9 Հոգիս մի՛ մատներ կորուստի ամբարիչտներու հետ,
եւ կեանքս՝ արիւնահեղ մարդոց հետ,

նահաճութեան կու տայ հաւաստիքը իր անմեղութեան: Սաղմոսը թերեւս աղօթքն էր ուխտաւորներուն, տաճար մտնելէ առաջ, եւ կամ ինքնարդարացումի բանաձեւն էր՝ ատեանի առջեւ:

6- Ձեռքերու լուացումը, նշանն էր անմեղութեան (Մննդ 20,5 . ԵՕ 21,6 . Սիր 38,10) եւ կը ջնջէր օրինական անմաքութիւնը: Սաղմոսերգուն կը լուայ իր ձեռքերը՝ իբր նշան անմեղութեան (հ. 6) եւ եւ յայտնէ իր սերը Աստուծոյ տան վայելչութեան եւ չի համակերպիր մահուան, Աստուծոյ տան մէջ իսկ:

10 որոնց ձեռքերը անօրէնութեան մէջ թաղուած են,
եւ անոնց աջը լի է կաշառքով:

11 Ես անմեղ կեանք մը ապրեցայ, Տէ՛ր.
փրկէ՛ զիս եւ ողորմէ՛ ինծի:

12 Ոտքս ուղիղ կերպով թող ընթանայ,
եւ ես՝ մեծ բազմութիւններու առջեւ պիտի օրհնեմ քեզ:

ՍԱՂՄՈՍ 26/27

Վաստահուօթիւն՝ Աստուծոյ վրայ

Սաղմոս Դաւիթի, երբ օծուած չէր տակաւին:

1 Տէ՛րն է իմ լոյսս եւ կեանքս, ես որմէ՞ պիտի վախնամ:
Տէ՛րն է կեանքիս ապաւէնը, ես որո՞ւ առջեւ պիտի դողամ:

2 Երբ չարեր վրաս եկան, մարմինս յօշոտելու համար,
ինծի նեղութիւն տուողներն ու թշնամիներս
տկարացան եւ ինկան:

3 Եթէ նոյնիսկ պատերազմ դաւեն ինծի դէմ՝
սիրտս պիտի չվախնայ,
եթէ ճակատամարտ ալ մղուի ինծի հակառակ՝
դարձեալ քու վրադ կը դնեմ յոյսս, Տէ՛ր:

1- Սաղմոսը կազմուած է մեկտեղումով երկու հատուածներու. առաջինը (հ. 1-6) վաստահուօթեան աղօթքն է: Երկրորդը՝ (հ. 7-12) ողբ մըն է:

4 Մէ՛կ բան խնդրեցի Տիրոջմէ, եւ ա՛յդ է աղաչանքս․
որ Տիրոջ տան մէջ բնակիմ՝ կեանքիս բոլոր օրերուն,
տեսնեմ Տիրոջ փառաւորութիւնը,
եւ խնամք տանիմ անոր տաճարին:

5 Ան իր վրանին տակ ծածկեց զիս դժնդակ օրերուս,
եւ իր վրանին յարկին ծածկոյթով պատսպարեց զիս․
ժայռէ մը աւելի բարձր տեղ դրաւ զիս:

6 Եւ հիմա, գլուխս բարձրացուց թշնամիներուս վրայ․
անոր սեղանին շուրջը պիտի դառնամ,
եւ օրհնութեան զոհեր պիտի մատուցանեմ իր վրանին մէջ․
պիտի օրհնեմ եւ սաղմոսներ պիտի երգեմ ես Տիրոջ:

7 Լսէ՛, Տէր, իմ ձայնս, մինչ քեզի՛ կը դիմեմ,
ողորմէ՛ ինձի եւ լսէ՛ զիս:

8 Որովհետեւ սիրտս քեզի՛ խօսեցաւ․
իմ աչքերս քե՛զ փնտռեցին,
քո՛ւ տեսքդ փնտռեցին, ո՛վ Տէր:

9 Երեսդ մի՛ դարձներ ինձմէ,
եւ բարկանալով՝ մի՛ հեռանար քու ծառայէդ:
Օգնակա՛ն եղիր ինձի, Տէ՛ր, մի՛ անտեսեր զիս,
եւ մի՛ թողուր զիս, Աստուած՝ իմ եւ Փրկի՛չ իմ:

5- Վրան կամ խորան, տանարին փոխարէն գործածուած նախնա-
կան եզրն է (2 Թագ 7,2):

8- Փնտռել Տիրոջ դէմքը կամ տեսքը, սկզբնական ծիսական լեզուով
կը նշանակէ Տանար երթալ ուխտի կամ խորհրդակցելու Տիրոջ հետ (Ովս
5,15․ 2 Թագ 21,1):

10 Հայրս եւ մայրս լքեցին զիս,
եւ Տէրը ընդունեցաւ զիս:

11 Օրհնքներդ սորվեցուր ինձի քու ճամբաներուդ մէջ,
Տէ՛ր, քու ուղիդ շաւիղներէդ առաջնորդէ զիս:

12 Թշնամիներուս պատճառով՝
զիս մի՛ մատներ անոնց ձեռքը որ կը նեղեն զիս: Սուտ
վկաներ ելան ինձի դէմ,
եւ սուտ խօսեցան իրենց անօրէնութեամբ:

13 Բայց ես կը հաւատամ,
որ Տիրոջ բարիքները պիտի տեսնեմ ողջերու երկրին մէջ:

14 Տիրոջ վրայ դիր յոյսդ, քաջութեամբ լեցուէ,
թող արիանա՛յ սիրտդ, եւ դուն՝ վստահէ՛ Տիրոջ:

ՍԱՂՄՈՍ 27/28

Ադաչանք եւ շնորհակալութիւն

Սաղմոս Դաւիթի:

1 Քեզի՛ գոչեցի, Տէ՛ր, լուր մի՛ մնար ինձի հանդէպ:
Աստուած իմ, դուն պիտի չլռես երբեք ինձի հանդէպ,
որ չնմանիմ անոնց որ գերեզման կ'իջնեն:

2 Լսէ՛ խնդրանքիս ձայնը, ո՛վ Տէր, երբ քեզի կ'աղաչեմ․
երբ ձեռքերս կը բարձրացնեմ սուրբ տաճարիդ մէջ:

1- Սաղմոսերգուն, հաւանաբար հիւանդութեան ծանր տագնապի

3 Մի՛ դասեր զիս ամբարիշտներու շարքին՝
կորուստի մի՛ մատներ զիս անոնց հետ՝
որ անօրէնութիւն կը գործեն,
որ խաղաղութեան մասին կը խօսին
իրենց ընկերներուն հետ,
բայց անոնց սիրտը լի է չարութեամբ:

4 Իրենց գործերուն համեմատ տուր անոնց,
եւ հատուցանէ՛ իրենց վարուելակերպին համաձայն:
Անոնց ձեռքերուն գործին համեմատ փոխարինէ՛ զիրենք,
հատուցանելով զիրենք՝ ըստ իրենց արժանիքին:

5 Անոնք չիմացան Տիրոջ գործերը,
չնայեցան անոր ձեռքի գործերուն:
Կործանէ՛ զանոնք որ չկարենան վերականգնիլ երբեք.

6 Օրհնեա՛լ է Տէրը,
որովհետեւ ան լսեց աղօթքիս ձայնը:

7 Տէրը իմ օգնականս է եւ պաշտպանս.
սիրտս անոր վրայ դրած է իր յոյսը:
Մարմինս օգտուեցաւ եւ ուրախութեամբ լեցուեցաւ,
ուստի յօժարակամ պիտի փառաբանեմ զինքը:

մէջ, (հ. 1) կ'ապաստանի տանար, կը խնդրէ Աստուծմէ՛ չհամարուիլ իր-
րես ամբարիշտներէն մէկը, որոնք վաղահաս մահով կ'անհետանան:
Առաջին մասի ողբին եւ պաղատանքին (հ. 1-5) կը յաջորդէ գոհաբանու-
թիւնը (6-7):

8 Տէրը զօրութիւնն է իր ժողովուրդին,
եւ փրկութեան ապաւէն՝ իր Օծեալին համար:

9 Փրկէ՛ քու ժողովուրդդ, օրհնէ՛ քու ժառանգութիւնդ,
հովուէ՛ եւ բարձրացուր զանոնք մինչեւ յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ 28/29

Աստուծոյ փառքը բնութեան մէջ

Սաղմոս Դաւիթի:

1 Զոհեր մատուցէք Տիրոջ, Աստուծո՛յ որդիներ,
մատղաչ խոյեր մատուցէք Տիրոջ.
փառք եւ պատիւ մատուցէք Տիրոջ:

2 Փառք մատուցէք Տիրոջ անունին,
եւ իր սրբարանի սրահին մէջ երկրպագեցէք Տիրոջ:

3 Տիրոջ ձայնը ջուրերու վրայ կը հնչէ,
եւ փառքի Աստուածը կ'որոտայ.
եւ ի՛նքը, Տէ՛րը, ամեհի ջուրերուն վերեւ է:

8- «Օծեալը»... կրնայ ըլլալ թագաւորը կամ քահանայապետը կամ
ամբողջ ժողովուրդը որ նուիրուած է Աստուծոյ ծառայութեան:

9- «Բարձրացուր...» տանելով թեւերուդ վրայ: Աստուած թեւերուն
վրայ կը կրէ իրենները իբր մայր (Ես 46,3) կամ իբր հովիւ (Ղկ 15,5) կամ
իբր արծիւ (Ելբ 19,4):

3- Փոթորիկի թեմայով սաղմոսը կը յիշատակէ Աստուծոյ փառքն ու
զօրութիւնը որոնք կը խորտակեն իր ժողովուրդին թշնամիները:

4 Տիրող ձայնն է այս՝ զօրուլթեամբ,
Տիրող ձայնը՝ մեծվայելչութեամբ:

5 Տիրող ձայնը մայրինները կը փշրէ,
Տէրը կը մանրէ՝ Լիբանանի մայրինները:

6 Պիտի մանրէ զանոնք՝ Լիբանանի մատաղ տունկին նման,
որ այնքան սիրելի է անոր՝ ինչպէս միեղջերուի ձագը:

7 Տիրող ձայնը՝ կրակէն բոց կը հանէ:

8 Տիրող ձայնը՝ կը շարժէ անապատը,
եւ Տէրը կը փոթորկէ Կաղէսի անապատը:

9 Տիրող ձայնը եղջերուները կը հաստատէ,
եւ անտառները յայտնի կը դարձնէ.
անոր տաճարին մէջ ամէնքը անոր փառքը պիտի երգեն:

10 Տէ՛րն է որ կը մեղմացնէ եւ կը զսպէ ջուրի հեղեղները,
Տէրը պիտի թագաւորէ յաւիտեան:

11 Տէրը զօրուլթիւն պիտի տայ իր ժողովուրդին,
եւ խաղաղութեամբ պիտի օրհնէ իր ժողովուրդը:

9-Անտառին բարձրաբերձ ծառերը, ինչպէս յորդառատ ջուրերը, կը խորհրդանշեն քչնամիները (Ամս 2,9. Ես 2,13. 32,19. Եր 21,14. Եզկ 21,2):

ՍԱՂՄՈՍ 29/30

Շնորհակալութեան աղօթք

Օրհներգութեան սաղմոս, տամարի նաւակատիփին առիթով,
Դաւիթէն:

1 Կը փառաբանեմ քեզ, Տէ՛ր, որ ընդունեցար զիս,
եւ չթողուցիր որ թշնամիներս
ուրախանան իմ պատճառովս:

2 Տէ՛ր, իմ Աստուածս,
քեզի դիմեցի եւ բժշկեցիր զիս:

3 Տէ՛ր, դժոխքէն հանեցիր իմ հոգիս,

4 եւ փրկեցիր զիս անոնցմէ որ գերեզման կ'իջնեն:

5 Սաղմո՛ս երգեցէք Տիրոջ, դուք՝ անոր սուրբերը,
հռչակեցէ՛ք անոր սրբութեան յիշատակը:

6 Զայրոյթ կայ անոր բարկութեան մէջ,
սակայն անոր կամքը լի է կեանքով.
Երեկոյին պիտի դադրին լացերը,
եւ ուրախութիւն պիտի ըլլայ առաւօտուն:

5-Դուք, Աստուծոյ սուրբերը, հաւատարիմները: Ամէնքը գովարա-
նութիւն պարտական են Աստուծոյ, որովհետեւ ամէնքն ալ կրնան իյնալ
անոր բարկութեան տակ: Կարեւոր է սակայն անոր բարկութիւնը: Ար-
դարին ցան ու տառապանքը կու գան իրիկունը, իսկ առաւօտը կը հնչեն
միջերն ուրախութեան: Վերջին խօսքը կը մնայ Տիրոջ սիրոյն, որովհե-
տեւ Տէրը կը սիրէ յաւիտեանական սիրով (Երմ 31,3):

7 Ես կ'ըսէի բարօրութեանս օրերուն՝
թէ յաւիտեան պիտի չսասանիմ:

8 Տէ՛ր, դուն ուզեցիր զօրացնել վայելչութիւնս,
բայց երբ ինծմէ դարձուցիր երեսդ՝ ես խռովեցայ՝:

9 Քեզի՛ բարձրացուցի ձայնս, Տէ՛ր, եւ Աստուծոյս աղաչեցի:

10 Ի՞նչ օգուտ քեզի՛ իմ արիւնէս,
եթէ ես ապականութեան մէջ իյնամ:
Միթէ՛ հո՞ղը պիտի հռչակէ քեզ,
կամ պիտի պատմէ քու ճշմարտութիւններդ:

11 Տէրը լսե՛ց զիս եւ ողորմեցաւ,
Տէրը օգնական եղաւ ինծի:

12 Ան իմ սուգս ուրախութեան վերածեց,
քուրձը հանեց վրայէս եւ ուրախութիւն զգեցուց ինծի:

13 ուստի սաղմոսով քու փա՛ւքդ պիտի երգեմ,
եւ պիտի չզղջամ երբեք:
Տէ՛ր Աստուած իմ, ես յաւիտեան՝ պիտի փառաւորեմ քեզ:

10– Տէրը ոչ մէկ օգուտ ունի արդարին անհետացումէն, որովհետեւ դժոխքին մէջ կը մատուռի լոռութեան եւ կը դադրի գովաբանութիւնը (Սս 38,18): «Աստուծոյ փառքը՝ մարդն է կենդանի»: Կենդանի՝ այս աշխարհի վրայ շնորհքի կեանքով, կենդանի մանաւանդ անդեմականի մէջ՝ յաւերժական երջանկութեամբ:

ՍԱՂՄՈՍ 30/31

Աղօթք՝ փորձութեան մէջ

1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի, երբ ան յուզումի մատնուած էր:

2 Քո՛ւ վրադ դրած եմ իմ յոյսս, Տէ՛ր,
եւ ամօթով պիտի չմնամ երբեք.
քու արդարութեամբդ՝ փրկէ՛ եւ ազատէ՛ զիս:

3 Դէպի ինծի՛ խոնարհեցուր ականջդ, շտապէ՛ որ փրկես զիս.
Իմ պաշտպանս եւ պատսպարող տո՛ւնս եղիր, Աստուած իմ,
եւ փրկութիւն տուր ինծի:

4 որովհետեւ դո՛ւն ես իմ զօրավիզս եւ ապաւէնս.
քու անունիդ համար առաջնորդեցիր եւ սնուցիր զիս:

5 Դո՛ւն պիտի հանես զիս՝ իմ դէմս լարուած որդայթէն.
դո՛ւն ես իմ պաշտպանս, Տէ՛ր:

6 Քու ձեռքիդ մէջ կը յանձնեմ իմ հոգիս. Տէ՛ր Աստուած,
քու ճշմարտութեամբդ դուն փրկեցիր զիս:

7 Դուն կ'ատես անոնք՝
որ երկիւղ ունին սնտոի բաներու հանդէպ:
Ես Տիրո՛ջ վրայ դրած եմ իմ յոյսս:

6– Վերջին խօսքերն են Յիսուսի՝ խաչին վրայ (Դկ 23,46) եւ սուրբ Ստեփանոսի երբ հոգին կ'աւանդէ (Գ Առ 7,59):

7– Աստուծոյ հաւատարմութիւնը իր խոստումներուն, Հին Կտակաւրանի փրկութեան պատմութեան հիմնական կէտերէն մէկն է:

8 Պիտի ցնծամ եւ ուրախանամ քու փրկութեամբդ․
դուն խեղճութեանս նայեցար եւ վիշտերէ ազատեցիր զիս:

9 Դուն չմատնեցիր զիս անոնց ձեռքը որ կը նեղեն զիս,
եւ հանգիստ տուիր իմ ոտքերուս:

10 Ողորմէ՛ ինծի, Տէ՛ր, որովհետեւ ես կը տառապիմ,
աչքս տկարացաւ սրտիս նեղութենէն,
նաեւ հոգիս եւ փորս:

11 Կեանքս սպառեցաւ ցաւերէ, եւ տարիներս՝ հեծածանքէ:
Ոյժէ ինկաւ զօրութիւնս, տարտղնեցան ոսկորներս:

12 Նախատանքի նշաւակ դարձայ դրացիներուս՝
աւելի քան բոլոր թշնամիներուս․
սարսափ եղայ եւ զարհուրանք՝ ծանօթներուս համար,
եւ բոլոր զիս տեսողները հեռո՛ւ կը փախչէին քովէս:

13 Ես մոռցուեցայ ամէնէն, ինչպէս մեռեալը՝ սրտերէն․
եղայ ա՛յնպէս՝ ինչպէս կորսուած անօթ մը:

14 Որովհետեւ լսեցի բամբասանքները
չուրջս հաւաքուած խուժանին,
որոնք քովէ քով եկած՝ կը խորհէին կեանքս իլել ինծմէ:

15 Բայց ես քու վրադ դրած եմ իմ յոյսս, Տէ՛ր,
եւ ըսի թէ դո՛ւն ես իմ Աստուածս,

16 եւ քո՛ւ ձեռքդ է իմ ժառանգութիւնս․
փրկէ՛ զիս թշնամիներուս ձեռքէն եւ հալածիչներէս:

17 Յո՛ւյց տուր երեսդ քու ծառայիդ,
եւ ողորմութեամբդ փրկէ՛ զիս, Տէ՛ր:

18 Տէ՛ր, մի՛ թողուր որ ես ամօթով մնամ,
քանի որ ես քեզի՛ կը դիմեմ․
թող ամբարիչտները ամօթով մնան եւ դժոխք իջնեն:

19 Թող համր դառնան այն նենգաւոր շրթունքները,
որ իրենց ամբարտաւանութեան եւ արհամարհանքին մէջ՝
անիրաւ վերագրումներ կ'ընէին արդարին հասցէին:

20 Որքա՛ն մեծ է ողորմութիւնդ ու քաղցրութիւնդ,
զոր քու երկիւղածներուդ վերապահած ես, Տէ՛ր,
եւ կը գործադրես զայն, բոլոր մարդոց առջեւ,
անոնց հանդէպ՝ որ քու վրադ դրած են իրենց յոյսը:

21 Քու երեսիդ հովանիին տակ ամրացուցիր զանոնք,
հեռո՛ւ մարդոց դաւերէն․
քու վրանիդ տակ պատսպարեցիր զանոնք՝
լեզուներու յարձակումներէն:

22 Օրհնեա՛լ է Տէրը, որ սքանչելի կերպով
ցոյց տուաւ իր ողորմութիւնը ամուր քաղաքին դիմաց:

23 Երբ զարմացած ըսի, թէ ես ինկած եմ այլեւս քու աչքէդ,
ա՛յն ատեն է որ լսեցիր աղօթքս, երբ աղաղակեցի քեզի:

20–Տիրոջ երկիւղը կը մղէ հաւատացեալը ստանձնելու հաւատքը եւ
սնոր գործնական ապրումը:

- 24 Սիրեցէ՛ք Տէրը, դուք, անոր բոլո՛ր սուրբերը, որովհետեւ Տէրը անկեղծութիւն կը փնտռէ, եւ կը պատօժէ անոնք որ ամբարտաւանութիւն կ'ընեն:
- 25 Քաջալերուեցէ՛ք, եւ թող զօրանան՝ ձեր սիրտերը, դուք բոլորդ որ Տիրո՛ջ վրայ դրած էք ձեր յոյսը:

ՍԱՂՄՈՍ 31/32

Շնորհակալութիւն մեքումիմ համար

Դաւիթի իմաստութեան սաղմոսը:

- 1 Երանի՛ այն մարդուն, որուն մեղքերը ներուեցան, եւ անոր բոլոր յանցանքները ծածկուեցան:
- 2 Երանի՛ այն մարդուն, որուն ըրածները Տէրը մեղք չի համարիր, եւ կեղծիք չկայ անոր բերնին մէջ:
- 3 Ես լուեցի, որովհետեւ բոլոր ոսկորներս մաշեցան, օրն ի բուն Տիրոջ աղաղակելէն:
- 4 Քու ձեռքդ գիշեր ցերեկ ծանրացաւ իմ վրաս, եւ ես թշուառութեան մէջ ինկայ, որովհետեւ փուշերը խոցոտեցին զիս:
- 5 Յոյց պիտի տամ քեզի իմ մեղքերս, եւ պիտի չծածկեմ անօրէնութիւններս քեզմէ:

1- Կրկնակի երանութիւնները կը պարփակեն անցեալի կեանքին նկարագրութիւնը եւ կը բանաւ հեռանկարը վերանորոգուած խաղաղ եւ երջանիկ կեանքին՝ Տիրոջ մտերմութեան մէջ:

- եւ ըսի՝ թէ ես ինծմէ պիտի խոստովանիմ մեղքերս, եւ դուն պիտի ներես մեղքերուս չարութիւնը:
- 6 Ասոր համար բոլոր սուրբերը աղօթք պիտի ընեն քեզի, յարմար ժամանակին: Եթէ ջուրերու հեղեղներն անգամ բարձրանան, անոնց պիտի չհասնին:
- 7 Դո՛ւն ես ապաւէնս նեղութիւններուն մէջ որ կը շրջապատեն զիս: Դո՛ւն ես ցնծութիւնս, փրկէ՛ զիս անոնցմէ որ պաշարած են զիս:
- 8 Ես իմաստուն պիտի ընեմ քեզ եւ խելամուտ՝ այն ճամբէն ուր կը քայլես, եւ աչքերս պիտի սեւեռեմ քու վրայդ:
- 9 Մի՛ ըլլաք նման ձիերուն ու ջորիներուն, որովհետեւ անոնց մօտ չկայ իմաստութիւն, ստիպուած ես պրկել անոնց կզակը սանձով ու բերնի կապով՝ որպէսզի քու դէմդ չելլեն:
- 10 Բազմաթիւ տանջանքներ կը սպասեն մեղաւորներուն, բայց Տիրոջ ողորմութիւնը պիտի պատէ բոլոր անոնք՝ որ Տիրոջ վրայ դրած են իրենց յոյսը:
- 11 Տիրոջմո՛վ ուրախացէ՛ք եւ ցնծացէ՛ք, դուք բոլո՛րդ, արդարնե՛ր, արդար հպարտութեամբ լեցուեցէ՛ք, դուք բոլորդ որ ուղիղ էք սրտով:

ՍԱՂՄՈՍ 32/33

Ներքող Աստուծոյ նախախնամութեան

Սաղմոս Դաւիթի:

- 1 *Յնծացէ՛ք, արդարնե՛ր, օրհնութիւնը ուղղամիտներուն կը վայելէ:*
- 2 *Օրհնութեան երգերով փառաբանեցէք Տէրը, տասնադի տաւիղով սաղմոսներ երգեցէք անոր:*
- 3 *Նոր օրհնութեամբ օրհնեցէք Տէրը, որովհետեւ բարի է ան, օրհնութեան սաղմոսներ ուղղեցէք անոր:*
- 4 *Ուղի՛ղ են Տիրոջ պատգամները, եւ արժանահաւատ են անոր բոլոր ճամբաները:*
- 5 *Տէրը կը սիրէ ողորմութիւնն ու արդարութիւնը: Տիրոջ արդարութեամբ լեցուեցաւ երկիրը,*
- 6 *Տիրոջ խօսքով հաստատուեցաւ երկինքը, եւ անոր բերնին շունչով ստացաւ իր բոլոր զօրութիւնները:*

1- Սկիզբի յորդորէն ետք՝ փառաբանութեան եւ գոհութեան, դրուած է բարեբանութիւնը Աստուծոյ խօսքին որ կը ստեղծէ, կը նախախնամէ, աղբիւր է լոյսի եւ վստահութեան:

3- Քրիստոսով տրուած փրկութիւնը, լրումն է փրկութեան, սաոր համար մեր շարականները կը հրաւիրեն երգել նոր երգեր: Շնորհալին «Նորաստեղծեալ»ին մէջ կը հրաւիրէ Եկեղեցին ընդառայ ելլելու յարուցեալ Փեսային եւ կը յորդորէ նոր երգը երգել:

6- Ստեղծեց երկինքն իր խօսքով. ակնարկութիւնն է ստեղծագործու-

- 7 *Ինչպէս տիկին մէջ, այնպէս հաւաքեց ան ծովու ջուրերը, եւ խորութիւններուն մէջ դրաւ իր գանձերը:*
- 8 *Համայն երկիրը թող երկնչի՛ Տիրոջմէ, թող իրմէ դողան աշխարհի բոլոր բնակիչները:*
- 9 *Ան խօսք մը ըսաւ, եւ անոնք գոյութիւն առին, ան հրամայեց եւ անոնք հաստատուեցան:*
- 10 *Տէրը կը ձախողեցնէ հեթանոսներուն ծրագիրները, ի դերեւ կը հանէ ժողովուրդներու նպատակները, եւ կ'արհամարհէ իշխաններուն տեսութիւնները:*
- 11 *Տիրոջ խորհուրդը յաւիտեան կը մնայ, անոր սրտին խորհուրդը սերունդէ սերունդ է:*
- 12 *Երանի՛ այն ազգին՝ որուն օգնականն է Տէրն Աստուած, երանի՛ այն ժողովուրդին զոր Տէրը ընտրած է՝ որպէսզի ի՛ր ժառանգութիւնն ըլլայ:*
- 13 *Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց բոլո՛ր որդիներուն վրայ:*

թեան (Մննդ 1-2) ուր շեշտը դրուած է Տիրոջ ստեղծագործող խօսքին գօրութեան վրայ: Տիեզերքը (հ. 6բ.) բառացիօրէն գօրութիւնները, սուրբգրային ասուածքն է նշանակելու համար էակները որ կը գտնուին երկինքի մէջ, ինչպէս արեւը լուսինը եւ աստղերը:

11- Տիրոջ խորհուրդը կամ ծրագիրը անոր փրկարար կամքն է որ հակառակ մարդուն տկարութիւններուն եւ շեղումներուն կը շարունակէ իր իրագործումը մարդկութեան պատմութեան մէջ (Յս 14,24. 46,10. 1 Կոր 2,7):

14 Ան՝ իր պատրաստած բնակութենէն նայեցաւ
երկրի բոլոր բնակիչներուն վրայ:

15 Ան՝ որ իւրաքանչիւրին յատուկ սիրտ ստեղծած է,
կը հասկնայ անոնց բոլոր գործերը:

16 Թագաւորը իր զօրքերուն բազմութեամբ չի փրկուիր,
ոչ ալ հսկան՝ իր բացառիկ ոյժին շնորհիւ:

17 Միտլ է կարծել թէ ձին կրնայ փրկել,
որովհետեւ հակառակ իր մեծ ոյժին,
ան չի կրնար ազատել իր հեծեալը:

18 Տիրոջ աչքը իր երկիւղածներուն վրայ է, եւ անոնց վրայ՝
որ իր ողորմութեան վրայ դրած են իրենց յոյսը՝

19 որպէսզի մահէն փրկէ անոնց հոգին,
եւ սովի ժամանակ կերակրէ զանոնք:

20 Մենք Տիրոջ վրայ դրած ենք մեր վստահութիւնը,
որովհետեւ ան է մեր օգնականն ու պաշտպանը:

21 Մեր սրտերը իրմով ուրախ պիտի ըլլան,
եւ մենք անոր սուրբ անունով պիտի յուսանք:

16-Սաղմոսերգուն կը շեշտէ մարդկային միջոցներու անգորութիւնը
իրականացնելու համար փրկութիւնը:

19- Հին Կտակարանի մէջ, փրկութիւնը նախ դիտուած է դրական
գետնի վրայ. փրկութիւն մահէն, որովհետեւ մահը համարուած էր իր-
րեւ գերագոյն չարիք: Վերապրումը սովի օրերուն, տեսանելի ապացոյցն
էր Տիրոջ հոգածութեան՝ իր երկիւղածներուն հանդէպ:

22 Մեր վրայ թող ըլլայ քու ողորմութիւնդ, Տէ՛ր,
ինչպէս որ քո՛ւ վրայ է մեր յոյսը:

ՍԱՂՄՈՍ 33/34

Ներքող Աստուծոյ արդարութեան

1 Սաղմոս Դաւիթի, երբ անոր երեսը այլագունեցաւ
Արիմելէֆին առջեւ, եւ ապա արձակեց գայլն եւ գնաց:

2 Տէրը պիտի օրհնեմ ամէ՛ն ժամ,
անոր օրհնութիւնը ամէ՛ն ժամ բերնիս մէջ պիտի ըլլայ:

3 Իմ հոգիս Տիրոջմով պիտի պարծենայ,
թող լսէ՛ն հեզերը եւ ուրախանան:

4 Ինծի հետ փառաբանեցէ՛ք Տէրը,
միասին՝ փառաւորենք անոր անունը:

5 Խնդրեցի Տիրոջմէ, եւ ան լսեց զիս,
եւ փրկեց զիս իմ բոլոր նեղութիւններէս:

6 Տիրոջ մօտեցէք, լոյս առէք իրմէ,
եւ ձեր երեսները թող ամչնան:

2- Սաղմոսերգուն նպաստաւորուած է Աստուծոյ պաշտպանու-
թեամբ, եւ ոչ միայն հրապարակաւ կը յայտնէ իր գոհութիւնը, այլ նա-
եւ կը հրաւիրէ աղփատները, բոլոր անոնք որ խոցուած են սրտով,
մօտեմալու Տիրոջ եւ անկէ առնելու լոյս եւ նաշակելու անոր փաղցրու-
թիւնը:

- 7 Այս աղքատը Տիրոջ դիմեց, եւ Տէրը լսեց զինք, եւ փրկեց զինք իր բոլոր նեղութիւններէն:
- 8 Տիրոջ հրեշտակներուն բանակը անոր երկիւղածներուն շուրջը պատած է, եւ Տէրը կը պահէ զանոնք:
- 9 Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք թէ քաղցր է Տէրը: Երանի՛ր այն մարդուն որ անոր վրայ դրած է իր յոյսը:
- 10 Տիրոջ երկիւղն ունեցէ՛ք, դուք՝ անոր սուրբերը, որովհետեւ այն որ անոր երկիւղն ունի՝ ո՛չ մէկ բանի կարօտ պիտի ըլլայ:
- 11 Մեծահարուստները աղքատացան եւ անօթի մնացին, բայց անոնք որ Տէրը կը փնտռեն՝ ո՛չ մէկ բանի կարօտ պիտի մնան:
- 12 Եկէ՛ք, զաւակներս, եւ մտի՛կ ըրէ՛ք ինծի, ես Տիրոջ երկիւղը պիտի սորվեցնեմ ձեզի:
- 13 Ո՞վ է այն մարդը որ կը սիրէ կեանքը, եւ կ'ուզէ բարիքներով լի տեսնել իր օրերը:

10- «Սուրբերը», այսինքն անոնք որ նուիրուած են Աստուծոյ եւ կը հաղորդակցին անոր սրբութեան (Ելի 19,6. Ես 4,3. Դան 8,24. Գ Առ 9,13):

12- Սաղմոսներուն կը սկսի ուսուցումի յորդորն ուղղել ունկնդիրներուն: Կը հաղորդէ անոնց երջանկութեան գաղտնիքը՝ երկիւղը Տիրոջ, յարգանքը մերձաւորին (հ. 14) եւ որոնումը խաղաղութեան:

- 14 Լուեցո՛ւր լեզուդ չարութենէն, եւ շրթունքներդ թող չխօսին նենգութեամբ:
- 15 Խուսափէ՛ չարէն, բարի՛ն գործէ, խաղաղութի՛ւն փնտռէ եւ անոր հետ քալէ:
- 16 Տիրոջ աչքը արդարներուն վրան է, եւ իր ականջը անոնց աղօթքին ուղղած է:
- 17 Տիրոջ երեսը չարագործներուն վրան է՝ անոնց յիշատակը ջնջելու համար երկրի երեսէն:
- 18 Արդարները Տիրոջ դիմեցին եւ Տէրը լսեց զանոնք, եւ փրկեց զիրենք՝ իրենց բոլոր նեղութիւններէն:
- 19 Տէրը մերձ է անոնց՝ որոնց սիրտը կտրած է, եւ կեանք կու տայ անոնց՝ որ հոգեպէս ընկճուած են:
- 20 Արդարներուն նեղութիւնները բազմաթիւ են, սակայն Տէրը այդ բոլորէն կը փրկէ զանոնք:
- 21 Ան առողջ կը պահէ անոնց բոլոր ոսկորները, եւ անոնցմէ մէ՛կն իսկ պիտ չփշրուի:
- 22 Զա՛ր է մեղաւորին մահը, եւ պիտի զղջայ այդպիսի մէկը որ արդարը կ'ատէ:

19- Վշտակցութիւնն ու խոնարհութիւնը հոգեկան պայմաններն են մասնակցելու համար փրկութեան շնորհիքին (Ես 61,1. Մտք 11, 20-30):

23 Տէրը կը փրկէ իր ծառաներուն հոգին,
եւ պիտի չզղջայ անոնցմէ ո՛չ մէկը
որ անոր վրայ դրած է իր յոյսը:

ՍԱՂՄՈՍ 34/35

Հալածուած անմեղին աղօթքը

Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

1 Դատէ՛, Տէ՛ր, բոլո՛ր անոնք որ կ'ուզեն դատել զիս․
պայքարէ՛ անոնց դէմ որ կը պայքարին ինծի դէմ:

2 Ա՛ռ զէնքդ եւ ասպարդ,
եւ եկուր օգնէ՛ ինծի:

3 Քաշէ՛ սուրդ՝ իմ հալածիչներուս դէմ,
կասեցո՛ւր զանոնք, եւ ըսէ՛ իմ հոգիիս․
Յ՛ս եմ քու փրկութիւնդ:

22– Չարութիւնը մահն է ամբարիշտին, որովհետեւ կը սպաննէ անոր մէջ ամէն միտում եւ տրամադրութիւն դէպի գերբնականը եւ կը պարտաստէ անոր երկրորդ մահը:

1– Սաղմոսը չարամաղթողական ողբ մըն է, եղբրեքական շեշտով: Սաղմոսերգուն գոհն է անիրաւ ամբաստանութեան: Կ'ապաւինի տաճար, կը դիմէ Տիրոջ եւ կը վստահի անոր պաշտպանութեան եւ կը հայցէ որ Տէրը՝ ինք մերկացնէ նենգ գրպարտութիւնները եւ անոնց հեղինակներուն վերապահէ նոյն պատիժը՝ գոր անոնք կ'ուզէին իրենց անմեղ գոհին:

4 Թող ամչնան եւ խայտառակուին
բոլոր անոնք որ զիս կը հետապնդէին:
Թող դարձի գան եւ ամչնան,
անոնք որ կը մտածէին չարիք հասցնել ինծի:

5 Թող անոնք ըլլան նման փոշիին՝ հովին ղիմաց,
եւ Տիրոջ հրեշտակը թող նեղը մատնէ զանոնք:

6 Անոնց ճամբաները խաւարով թող մթազնին,
սայլթաքումի պատճառ թող դառնան
եւ Աստուծոյ հրեշտակը թող հալածէ զանոնք:

7 Անոնք, առանց պատճառի, իրենց չարամտութեամբ՝
թակարդ լարեցին ինծի դէմ,
եւ առանց պատճառի՝ զիս նախատեցին:

8 Իրենց մտքէն չանցած փորձանքը թող գայ անոնց գլխուն,
եւ անոնց ոտքը թող բռնուի նոյն այդ թակարդին մէջ՝
զոր անոնք լարած էին ինծի դէմ:

9 Սակայն իմ հոգիս պիտի ցնծայ Տիրոջմով,
եւ պիտի ուրախանայ անոր փրկութեամբ:

10 Բոլո՛ր ոսկորներս պիտի գոչեն․ ո՞վ նման է քեզի, Տէ՛ր,
որովհետեւ ան փրկեց աղքատը հզօրին ձեռքէն,
եւ չքաւորն ու տնանկը՝ զանոնք հարստահարողներէն:

11 Չարախօս վկաներ ելան ինծի դէմ,
որոնք այնպիսի՛ բաներով կ'ամբաստանէին զիս՝
որոնց համար ես յանցաւոր չէի:

- 12 Անոնք՝ իմ բարիքներս չարիքով փոխարինեցին, եւ խորհեցան մարդոց ընկերութեան մէջէն ժառանգութենէ զրկել զիս:
- 13 Ես քուրճ հագայ՝ երբ անոնք նեղութեան մէջ էին, ինքզինքս նեղեցի ծոմապահութեամբ, եւ սրտանց աղօթք ըրի անոնց համար:
- 14 Իբրեւ եղբայր եւ ընկեր՝ հաճոյք կը պատճառէի անոնց, իբրեւ սգաւոր եւ վշտահար՝ կարեկից կ'ըլլայի:
- 15 Սակայն անոնք իմ վրաս խնդացին, հաւաքուեցան, տանջանքներ դիզեցին իմ վրաս, եւ ես չհասկցայ՝ ապա ցրուեցան, առանց չզղջալու:
- 16 Փորձի ենթարկեցին զիս եւ արհամարհելով նախատեցին, եւ իրենց ակռաները վրաս կրճտեցին:
- 17 Մինչեւ ե՞րբ, Տէ՛ր, պիտի դիտես այս բոլորը՝ ազատէ՛ իմ հոգիս անոնց խորամանկութենէն, եւ իմ այս անտէր վիճակս՝ առիւծներէն:
- 18 Պիտի փառաբանեմ քեզ, մեծ հաւաքոյթներու մէջ, եւ հո՞ծ բազմութիւններու դիմաց պիտի օրհնեմ քեզ:
- 19 Թշնամիներս թող չուրախանան իմ վրաս, իրենք որ առանց պատճառի կ'ատէին զիս, եւ իրենց աչքի ակնարկներով կը հեզնէին զիս:

13- Գործ եւ պահք աւանդական նշաններն են սուգի եւ փառաբանական պաշտարարութեան (Ղեւ 16,29. Ես 58,3-5):
 19- Ատելութիւնն առանց պատճառի, մարգարէութիւնն է որ կ'իրա-

- 20 Անոնք խաղաղութեան մասին կը բանակցէին ինծի հետ, բայց, իրենց բարկութեան մէջ, նենգութիւն կը ծրագրէին:
- 21 Իրենց բերանը բացին ինծի դէմ, եւ ըսին՝ Այո՛, այո՛, մեր աչքերովն իսկ տեսանք զայն:
- 22 Դուն ամէն բան տեսար, Տէ՛ր՝ լուռ մի՛ մնար, Տէ՛ր, եւ ինծմէ՛ հեռու մի՛ կենար:
- 23 Զարթի՛ր, Տէր, եւ իրաւունքիս նայէ, Աստուածս եւ Տէրս, միջամտէ՛ իմ դատիս մէջ,
- 24 եւ, արդարութեանդ համաձայն, իրաւունքս պաշտպանէ, Տէ՛ր Աստուած, որ չուրախանան թշնամիներս իմ պատճառաւս,

կանանայ Յիսուսի կեանքին մէջ: Եկած էր վկայելու նշմարտութեան: Հշմարտութիւնը մերժողը, անոր վկայողին ոչ միայն կը մերժէ տարրական գնահատանքը, այլ կը սնուցանէ ատելութիւնը առանց պատճառի: Նման ատելութիւնը ծնունդ կ'առնէ մարդուն սրտին մէջ արմատացած չարութեան կամ թիւր եւ փայտոտ դատողութիւններէ: Մեղսակիցները իրենց համամտութիւնը կը յայտնեն եւ ուրախութիւնը կը դրսեւորեն իրարու աչք ընելով (Առակ 6,13):

20- Սաղմոսերգուիին հակառակորդները կը սնուցանեն մարտնչող ցանկութիւններ եւ ասոր համար չեն կրնար խաղաղութիւն խօսիլ խաղաղաւոր մարդոց հետ:

22- Հակառակորդներու սուտ վկայութեան դիմաց, սաղմոսերգուն կոչ կ'ընէ Աստուծոյ նշմարիտ եւ անսխալական վկայութեան: Զկայ թափուն գաղտնիք որ չյայտնուի: Ամէնէն նեղ եւ թափուն բամբասանքն իսկ երեսն կու գայ երբ Աստուծոյ միջամտութեան լոյսը կը փարատէ չարամտութեան մթութիւնը:

25 Եւ չըսեն իրենց սրտին մէջ՝
ի՛նչ լաւ եղաւ, մենք խեղդեցինք զինքը:

26 Թող ամէնան եւ ամօթով լեցուին բոլոր անոնք՝
որ ինծի եկած չարիքին համար կը խնդային՝
թող ամօթով եւ անարգանքով լեցուին՝
անոնք որ վրաս կը յոխորտային:

27 Թող ցնծան եւ քեզմով ուրախանան բոլոր անոնք՝
որ արդարութիւն կը մաղթեն ինծի համար՝
Մե՛ծ է Աստուած, թող գոչեն միշտ անոնք՝
որ քու ծառայիդ խաղաղութիւնը կ'ուզեն:

28 Իմ լեզուս քու արդարութիւնդ պիտի հռչակէ,
եւ քու գովաբանութիւնդ պիտի ընէ ամէն օր:

ՍԱՂՄՈՍ 35/36

Աստուծոյ բարեգթութիւնը մեղաւորին հանդէպ

1 Աւարտին: Սաղմոս Տիրոջ ծառային՝ Դաւիթին:

27-«Արդարութիւն կը մաղթեն...» Տկարներուն միջմատութիւնը կը վերածուի մաղթանքի: Բայց անոնց մաղթանքը, աղօթքն է անբասիր սրտերու, որոնց իդոնքը կը բարձրանան առ Աստուած: Աստուծոյ միջմատութիւնը ի նպաստ իրեններուն եւ իբր գրաւական իր արդարութեան, միայն ուրախութիւն եւ ցնծութիւն է անոնց որ անշուստ եւ ամբարտաւանութեան լուծին տակ:

2 Երբ անօրէնը կը մեղանչէ՝ իր մտքին մէջ կ'ըսէ՝
պէտք չկայ վախնալու Աստուծմէ, անոր աչքին առջեւ:

3 որովհետեւ ան կը խաբէ ինքզինքը, մտածելով թէ՝
ոչ ոք կրնայ գտնել իր անօրէնութիւնը եւ պատժել զինքը:

4 Անոր բերնին խօսքերը անօրէնութիւն են եւ նենգութիւն՝
ան չուզեց ճանչնալ բարին:

5 Խորհեցաւ անօրէնութիւն գործել իր անկողնին մէջ՝
ան մտաւ բոլոր՝ ճամբաներուն մէջ որ բարի չէին,
եւ չձանձրացաւ չարը գործելէ:

6 Տէր, ողորմութիւնդ երկինքի մէջ է,
եւ ճշմարտութիւնդ մինչեւ ամպերը կը հասնի:

7 Լեռներուն պէս է քու արդարութիւնդ, Աստուած՝ իմ,
քու դատաստաններդ՝ անդունդներու պէս խոր:
Դուն կեանք կու տաս մարդոց եւ անասուններուն, Տէ՛ր:

8 Դուն որքա՛ն բազմացուցիր ողորմութիւնդ, Աստուած,
որ մարդոց որդիները իրենց յոյսը դրած են
քու թեւերուդ հովանիին տակ:

2- Մեղքը անճանաւորուած է իբրեւ խորհրդականը ամբարիշտին (հ. 2): Չարին հարցը մեքն կը յարուցանենք «Աստուած ինչպէ՞ս կ'արտօնէ գայն» հարցականով: Սաղմոսերգուն կը բացատրէ ամբարիշտին համարակութիւնը եւ ամբարտաւանութիւնն ինքնահաւան, կորուստովն Աստուծոյ վախին: Մարդուն համար, դիւրաւ խոցելի չարի դիմաց, սկիզբն իմաստութեան երկիւղն է Տիրոջ (Առակ 1,7):

- 9 Քու տանդ առատութենէն պիտի արբենան անոնք, եւ դուն՝ վայելքներուդ հեղեղները խմել պիտի տաս անոնց:
- 10 Քեզմէ՝ կը բխի, Տէ՛ր, կեանքի աղբիւրը, եւ քու երեսիդ լոյսով՝ մենք կը տեսնենք լոյսը:
- 11 Ծագէ՛ որդորմութիւնդ անոնց վրայ որ կը ճանչնան քեզ, եւ արդարութիւնդ՝ անոնց վրայ որ ուղիղ են սրտով:
- 12 Ամբարտաւաններուն ոտքը թող չհասնի՛ մեր վրայ, եւ մեղաւորներուն ձեռքերը թող չզողացնեն՝ մեզ:
- 13 Հո՛ն թող իյնան բոլոր անօրէնութիւն գործողները, եւ մերժուելէ ետք՝ թող չկարենան դարձեալ վերականգնիլ:

ՍԱՂՄՈՍ 36/37

Աստուած քարիներու պաշտպանն է

Սաղմոս Դաւիթի:

- 1 Մի՛ նախանձիր չարերուն, ո՛չ ալ այնպիսիներուն որ անօրէնութիւն կը գործեն:
- 2 Որովհետեւ անոնք՝ խոտի նման շուտով պիտի չորնան եւ շուտով պիտի անցնին, ինչպէս կանանչ բոյսը:
- 3 Տիրոջ վրայ դէր յոյսդ եւ բարիք գործէ, բնակէ երկիրը, եւ պիտի վայելես անոր հոգածութիւնը:

3-«Բնակէ երկիրը...» Աւետեաց երկիրը: Նոյն խոստումները պիտի տրուին Նոր Կտակարանի Երանութիւններով, սակայն Աստուծոյ տիե-

- 4 Խնդրէ՛ Տիրոջմէ, եւ ան պիտի տայ քեզի՝ քու սրտիդ խնդրանքները:
- 5 Տիրոջ առջեւ պարզէ քու ճամբաներդ, վստահէ՛ անոր, եւ ան պիտի յաջողցնէ զանոնք:
- 6 Ան՝ լոյսի նման ի յայտ պիտի բերէ քու արդարութիւդ, եւ ցերեկ օրուայ պէս՝ քու իրաւունքներդ:
- 7 Հնազանդէ՛ Տիրոջ ու ծառայէ՛ անոր, եւ մի՛ նախանձիր անոնց՝ որոնց ուղիները կասկածելի են, այն մարդուն՝ որ անօրէնութիւն կը գործէ:
- 8 Զսպէ՛ բարկութիւնդ, վա՛ր առ սրտնեղութիւնդ, մի՛ նախանձիր չարերուն:
- 9 Որովհետեւ չարերը շուտով պիտի ոչնչանան, իսկ անոնք որ Տիրոջ կը վստահին՝ երկիրը պիտի ժառանգեն:
- 10 Կարճ ժամանակ մը՝ եւ ամբարիշտ պիտի չըլլայ այլեւս, դուն պիտի փնտռես անոր տեղը եւ պիտի չգտնես զայն:
- 11 Բայց անոնք որ հեզ են՝ պիտի ժառանգեն երկիրը, եւ խաղաղութիւն պիտի վայելեն:

գերական թագաւորութեան, տիեզերական եւ հոգեւոր համեմատութեամբ:

7- Խոսովութիւնը չարին դիմաց նշան է հաւատքի պակասի: Յարատեւ վերադարձը դէպի վստահութիւն եւ խաղաղութիւնը Տիրոջ, կը հարթէ արդարին համար ցամաք, որ կը տանի փրկութեան (Ես 30,15):

- 12 Մեղաւորը արդարը կը հետապնդէ,
եւ իր ակռաները կը կրճատէ անոր դէմ:
- 13 Բայց Տէրը պիտի ծիծաղի անոր վրայ,
որովհետեւ նախապէս կը տեսնէ թէ հասած է անոր օրը:
- 14 Մեղաւորները իրենց սուրերը հանեցին
եւ իրենց աղեղները լարեցին՝
հարուածելու համար աղքատն ու չքաւորը,
սպաննելու համար այն որ խոնարհ է սրտով:
- 15 Բայց անոնց սուրերը իրենց սրտերուն մէջ պիտի մտնեն,
եւ անոնց աղեղները պիտի փշրուին:
- 16 Աւելի արժէք ունի արդարը իր քիչ ունեցածով,
քան մեղաւորները իրենց անբաւ հարստութեամբ:
- 17 Պիտի խորտակուին ամբարիչտներուն բազուկները.
մինչ Տէրը պիտի ամրապնդէ արդարները:
- 18 Ան կը ճանչնայ մաքուր հոգիներուն առօրեան,
եւ յաւիտենական պիտի ըլլայ անոնց ժառանգութիւնը:
- 19 Անոնք պիտի չամչնան գէշ ժամանակներուն,
եւ սովի օրերուն՝ անոնք պիտի յագեանան:
- 20 Ահա, պիտի կորսուին մեղաւորները,
եւ ինչպէս ծուխը կը սպառի՝
այնպէս պիտի չքանան Տիրոջ թշնամիները,
երբ կը փառաւորէին ու կը բարձրացնէին իրենք գիրենք:

- 21 Երբ մեղաւորը փոխ կ'առնէ՝ չի հատուցաներ,
մինչ արդարը կը գլխայ եւ ետ կու տայ:
- 22 Անոնք որ կ'օրհնեն Տէրը, երկիրը պիտի ժառանգեն,
անոնք որ կ'անիծեն՝ մահուամբ պիտի պատժուին անկէ:
- 23 Մարդուն քայլերը Տիրոջ կողմէ կ'ուղղուին,
եւ ան կը հաճի անոր ճամբաներուն:
- 24 Եթէ նոյնիսկ սահի ան, գետին պիտի չիյնայ,
որովհետեւ Տէրը կը բռնէ անոր ձեռքէն:
- 25 Մանուկ էի, եւ ծերացայ, բայց չտեսայ դեռ արդար մը,
որ երեսի վրայ մնացած ըլլայ,
եւ ոչ ալ անոր զաւակը՝ որ հաց մուրայ:
- 26 Ան կ'ողորմի ամէն օր եւ սիրով փոխ կու տայ,
անոր զաւակը յաւիտենապէս պիտի օրհնուի:
- 27 Խոստափէ՛ չարէն եւ բարի՛ն գործէ,
եւ անոր մէջ պիտի բնակիս անվերջ ժամանակով:
- 28 Տէրը կը սիրէ իրաւունքը, եւ գետին չի զարներ սուրբերը,
այլ յաւիտեան կը պահպանէ զանոնք:

21- Նոյնիսկ նեղութեան օրերուն, արդարը իր կարելիութեան չափով, սակայն մաքուր եւ գթառատ սրտով կը հասնի օգնութեան կարօտեալ եղբայրներուն ըստ աստուածային պատուէրին (ԵՕ 15,7-8):

22- Սկզբունքն է գոր կը բանաձեւէ Առակաց գիրքը (3,22) «Տիրոջ անէծքը կ'իջնէ ամբարիչտներուն տան վրայ, սակայն Տէրը կ'օրհնէ բնակարաններն արդարներուն»:

*Անօրէնները՝ խմբովին պիտի հալածուին,
եւ ամբարիչտներուն զաւակը մահով պիտի պատժուի:*

29 *Բայց արդարները պիտի ժառանգեն երկիրը,
եւ յաւիտենապէս պիտի բնակին անոր վրայ:*

30 *Արդարին բերանը խմաստուլթիւնը կը պատմէ,
եւ անոր լեզուն արդարուլթիւնը կը ճառէ:*

31 *Ան՝ իր սրտին մէջ ունի իր Աստուծոյն օրէնքները,
եւ անոր քայլերը պիտի չսայթաքին:*

32 *Մեղաւորին աչքը արդարին վրայ է,
եւ կ'ուզէ սպաննել զայն:*

33 *Բայց Տէրը չի թողուր զայն որ անոր ձեռքն իյնայ,
եւ չի դատապարտեր զայն, եթէ դատէ զայն:*

34 *Վստահէ՛ Տիրոջ, հետեւէ՛ անոր ճանապարհին,
եւ ան պիտի բարձրացնէ քեզ՝ որ ժառանգես երկիրը,
եւ տեսնես մեղաւորներուն մահը:*

35 *Ես տեսայ ամբարիչտը՝ երած, բարձրացած,
Լիբանանի մայրիներու նման:*

36 *Անցայ այն տեղէն, եւ չկար ահա,
փնտռեցի, եւ անոր հետքն անգամ չգտայ:*

37 *Մաքու՛ր պահէ սիրտդ, հետապնդէ՛ ուղղամտութիւնը,
որովհետեւ խաղաղարար մարդուն սերունդը կը մնայ:*

38 *Անօրէնները խմբովին պիտի հալածուին,
եւ ամբարիչտներուն սերունդը պիտի ջնջուի:*

39 *Արդարներուն փրկութիւնը Տիրոջմէ կու գայ,
եւ անոնց խնամակալն է ան՝ անոնց նեղութեան օրերուն:*

40 *Տէրը պիտի օգնէ անոնց եւ պիտի փրկէ զանոնք,
պիտի ազատէ մեղաւորներէն եւ պիտի վերակենդանացնէ,
որովհետեւ անոնք իրենց յոյսը անոր վրայ դրած էին:*

ՍԱՂՄՈՍ 37/38

Աղօթք մեղութեան ատեն

- 1** Սաղմոս Դաւիթի, Շաբաթ օրուան յիշատակին համար:
- 2** *Տէ՛ր, մի՛ յանդիմաներ զիս սրտնեղութեանդ մէջ,
եւ մի՛ պատժեր զիս քու բարկութեանդ մէջ:*
- 3** *Որովհետեւ ես քու նետերուդ հարուածները ստացայ,
եւ ձեռքդ ծանրացաւ իմ վրաս:*
- 4** *Բուժում չկա՛յ մարմնիս համար՝ բարկութեան մէջ,
խաղաղութիւն չկա՛յ ոսկորներուս՝ մեղքերուս երեսէն:*

1- Սաղմոսը ողբն է հիւանդին: Անոր հիւանդութիւնը, թերեւ բորտութիւն, համարուած է պատիժ եւ հետեւանք մեղքերուն, գորս կը խոստովանի (հ. 4,6,19): Ապաշխարութեան կարգի երրորդ սաղմոսն է:

3- Նետերը՝ հիւանդութիւններն են եւ պատիժները որոնք կու գան ի վերուստ (Ամբ 3,11. Եզկ 5,16. Ողբ 3,12. Յոբ 6,4. Զաբ 8,14): Հիւանդը կը համակերպի պատիժին, սակայն կը մերժէ բարկութիւնը եւ տարածում մտնի:

- 5 Անօրէնութիւններս գլխէս վեր բարձրացան,
ծանրակիր բեռի մը նման վրաս ծանրացան:
- 6 Անզգամութեանս պատճառով՝
վէրքերս նեխեցան եւ փտեցան:
- 7 Ծայր աստիճան տառապեցայ եւ ընկճուեցայ,
տրտմութեամբ կը քալէի օրն ի բուն:
- 8 որովհետեւ հոգիս չարչարանքներով լեցուեցաւ,
եւ բուժում չկայ իմ մարմինիս:
- 9 Չափէն աւելի չարչարուեցայ եւ ընկճուեցայ,
եւ սրտիս հեծեծանքէն սկսայ գոռալ:
- 10 Տէ՛ր, քու առջեւ եւ բոլոր ցանկութիւններս,
եւ տառապանքս ծածուկ չմնաց քեզմէ:
- 11 Սիրտս խռովեցաւ կուրծքիս տակ,
զօրութիւնս խոյս տուաւ ինծմէ,
եւ աչքիս լոյսը նոյնիսկ անհետացաւ:
- 12 Բարեկամներս եւ ընկերներս մօտեցան ինծի եւ մնացին,
մինչ մերձաւորներս հեռացան ինծմէ:
- 13 Անոնք կը բռնադատէին զիս եւ հոգիս կը հանէին,
անոնք որ չարիք կը մտածէին ինծի համար՝
անիրաւ բաներ կ'ըսէին իմ մասիս,
եւ նենգամիտ ծրագիրներ կը խորհէին օրն ի բուն:
- 14 Բայց ես ինքզինքս ձեւացուցի՝ խուլ որ չի լսեր,
եւ համր՝ որ բերանը չի բանար:

- 15 Մարդու մը նման եղայ որ չի լսեր,
եւ խօսք չելլէր անոր բերնէն:
- 16 Քու վրադ դրած եմ, Տէ՛ր, իմ յոյսս,
եւ դո՛ւն պիտի լսես զիս, Տէ՛րս եւ Աստուածս:
- 17 Ըսի թէ՛ թշնամիներս պիտի չուրախանան իմ պատճառովս,
բայց երբ ոտքերս սկսան սասանիլ՝
ահաւոր բաներ խօսեցան իմ մասիս:
- 18 Ես պատրաստ եմ տանջուելու,
եւ իմ ցաւերս առջեւս են ամէ՛ն ժամանակ:
- 19 Ես կը խոստովանիմ իմ անօրէնութիւններս,
եւ մտահոգութիւնս կը յայտնեմ մեղքերուս պատճառով:
- 20 Իսկ հիմա, թշնամիներս ողջ են եւ ինծմէ՛ զօրաւոր-
բազմաթիւ էին անոնք՝ որ առանց պատճառի կ'ատէին զիս:
- 21 անոնք՝ բարիքի փոխարէն չարիք հատուցին ինծի,
եւ չար բաներ կը խօսէին իմ մասիս,
որովհետեւ ես արդարութիւնը կը հետապնդէի:

16– Հակառակորդներուն կողմէ նիւթուած ամբաստանութեան դիմաց, սաղմոսագրուն կ'ապաւինի Աստուծոյ արդար միջամտութեան, դատաստանին եւ պատասխանին: Քանի որ խոնարհութեամբ կը խոստովանի իր յանցանքը, Աստուծոյ պատասխանն ալ պիտի ըլլայ իրեն նպաստաւոր ի մեծ յուսախաբութիւն նոյն հակառակորդներուն:

21–Մարդուն չարութեան ամէնէն յատկանշական կեցուածքն է բարիքին փոխադարձ չարութեամբ, որովհետեւ դիմացինէն եկած բարիքը կը նկատեն նուաստացնող:

22 Մի՛ թողուր զիս, Տէ՛ր Աստուած իմ, եւ մի՛ հեռանար ինծմէ՝
Փուլթա՛, օգնութեա՛ն հասիր ինծի, Տէ՛րս եւ փրկութիւնս:

ՍԱՂՄՈՍ 38/39

Աղօթք՝ անձկութեան ժամանակ

1 Աւարտին: Իդիթումի օրհնեքգութիւնը: Սաղմոս Դաւիթի:

2 Ես ըսի թէ պիտի չչեղիմ ճամբէս, որ չմեղանչեմ լեզուովս·
պահապան դրի իմ բերնիս՝ երբ դէմս ելաւ մեղաւորը:

3 Խուլ մնացի եւ տեղի տուի, բարութեամբ լուռ կեցայ,
բայց ցաւերս նորոգուեցան իմ ներսս:

4 Միրտս բորբոքեցաւ կուրծքիս տակ,
եւ միտքս կրակով լեցուեցաւ:

5 Լեզուովս խօսեցայ եւ ըսի· Վախճանս ցոյց տուր ինծի, Տէ՛ր,
եւ թէ որքա՞ն է օրերուս թիւը,
որ հասկնամ անոնցմէ որքա՞նը անցեալին կը պատկանի:

6 Ահա, սահման դրիր իմ օրերուս,
եւ անոնց տեւողութիւնը ոչինչի հաւասար է քու առջեւդ·
արդարեւ ոչնչութիւն են բոլոր մսեղէն մարդիկը:

1– Սաղմոսեքգուն կը գայրանայ ի տես ամբարիշտին յաջողութեան: Կը խոռովի, տարուած ոչ թէ նախանձէ, այլ տեսնելով հակասութիւնը՝ մէկ կողմէն Աստուծոյ խոստումներուն եւ միւս կողմէն, իրականութեան միջեւ:

7 Եւ յիրաւի, պատկերի նման կը շրջի մարդը,
ի գուր կը խռովի, կը հաւաքէ,
եւ չի գիտեր թէ որու համար կը դիզէ:

8 Արդ, ո՞վ դիմանալու կարողութիւն կու տայ ինծի՝
եթէ ոչ՝ դուն, Տէ՛ր·
եւ որմէ՞ ստացած եմ կեանքիս ոյժը, եթէ ոչ՝ քեզմէ:

9 Բոլոր անօրէնութիւններէս փրկեցիր զիս,
բայց ես անզգամ մարդոց նախատանքին ենթարկուեցայ:

10 Խուլ մնացի եւ բերանս չբացի,
որովհետեւ դուն այդպէս ուզեցիր:

11 Վերցուր տանջանքներն իմ վրայէս,
որովհետեւ ձեռքիդ զօրութեան տակ ուժասպառ եղայ:

12 Խստութեամբ սաստեցիր մարդը՝
իր մեղքերուն համար,
սարդոստայնի նման սպառեցիր անոր հոգին· արդարեւ
ոչնչութիւն է մարդը:

13 Տէ՛ր, լսէ՛ աղօթքս, ակա՛նջ դիր ինդրանքներուս,
եւ լուռ մի՛ մնար արցունքներուս դիմաց·
ես պանդուխտ եմ քու առջեւդ, նժդեհ եւ անցաւոր,
ինչպէս իմ բոլոր հայրերս:

8– Դժնդակ կացութեան մէջ սաղմոսեքգուն կը տեսնէ որ միակ սպաւեւը իր յոյսին կը մնայ Տէրը որմէ կը հայցէ բարձումը պատիժին, ունկնդրութիւնը իր աղօթքին, որովհետեւ գիտէ թէ՛ երկրի վրայ չունի մնայուն կայք, քանի որ պանդուխտ է եւ ցոյցի:

14 Թոյլ տուր ինծի որ հանգչիմ,
երթալէն առաջ այն վայրը՝
ուսկից ո՛չ մէկը պիտի կարենայ գտնել զիս:

ՍԱՂՄՈՍ 39/40

Շնորհակալութեան եւ խնդրանքի աղօթք

1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

2 Ես երկար սպասեցի Տիրոջ,
եւ ան նայեցաւ ինծի եւ լսեց աղօթքներս:

3 Ան դուրս հանեց զիս տառապանքի գուբէն,
եւ ցեխէն ու տիղմէն:
Ժայռի վրայ հաստատեց ոտքերս, եւ ուղղեց քայլերս:

4 Օրհնութեան նոր երգեր դրաւ իմ բերանս,
օրհնութիւնը մեր Տէ՛ր Աստուծոյն:

5 Շատեր պիտի տեսնեն եւ երկիւղով պիտի լեցուին,
եւ Տիրոջ վրայ պիտի դնեն իրենց յոյսը.
Երանի՛ այն մարդուն՝ որ ու յոյսը Տիրոջ անունն է.
ան ո՛չ անոտի բաներու կը նայի,
ոչ ալ սուտ մոլութիւններու:

6 Դուն բազմաթիւ ձեւերով
կատարած ես սքանչելիքներդ, Տէ՛ր,
մէկը չկայ որ կարենայ նմանիլ քեզի՝ խորհուրդներուդ մէջ:
Ես պատմեցի եւ հռչակեցի զանոնք,
սակայն որքա՛ն շատ են անոնք թիւով:

7 Դուն չուզեցիր զոհեր եւ պատարագներ,
ինքզինքդ լսելի ըրիր ինծի՝
թէ չես ուզեր ողջակէզներ,
ոչ ալ մեղքերու քաւութեան նուէրներ:

8 Այն ատեն ես ըսի. Ահա, ես կու գա՛մ.
Գիրքերուն սկիզբը գրուած է ինծի համար.

9 Քու կամքդ ուզեցի կատարել, Աստուած իմ,
քու Օրէնքներդ սրտիս խորը ներկայ են:

10 Արդարութիւնդ պիտի աւետարանեմ՝
մեծ հաւաքովքներու առջեւ,
եւ պիտի չդադրիմ շրթունքներովս՝
քու մասիդ խօսելէ. դուն լա՛ւ գիտես, Տէ՛ր.

11 ես սրտիս մէջ չծածկեցի արդարութիւնդ,
եւ ճշմարտութիւնդ ու փրկութիւնդ,
այլ յայտնեցի զանոնք, եւ ծածուկ չպահեցի
ողորմութիւնդ ու ճշմարտութիւնդ՝
մեծ բազմութիւններու առջեւ:

7- Մարգարէները, ինչպէս հոս սաղմոսերգուն, չեն մերժեր գոհը, սակայն կը դատապարտեն չափազանցութիւնը եւ գոհերուն չափազանց-եալ մատուցումին կը նախընտրեն Աստուծոյ յայտնութեան խորունկ սպրումը:

8- «Ահա ես կու գամ» (Եբր 10, 5-7) անցիկ մեկնաբանութեան մէջ, այս գալուստով տեսնուած է Քրիստոսի մուտքը աշխարհ եւ սաղմոսին անցքը պատշաճեցուած է Յիսուսի:

12 Բայց դուռն, Տէ՛ր, հեռու մի՛ պահեր ինձմէ՛ գլխով թիւնդ, որպէսզի քու ողորմութիւնդ եւ ճշմարտութիւնդ միշտ հետս ըլլան:

13 Այնքան՝ չարիքներ պաշարեցին զիս՝ որ թիւ չունէին. անօրէնութիւններս վրաս հասան, եւ չանդրադարձայ իսկ. աւելի՛ եղան քան գլխուս մագերը, եւ սիրտս լքեց զիս:

14 Տէ՛ր, հաճէ՛ փրկել զիս, Տէ՛ր, փութաօգնելու ինձի:

15 Թող պատկառին եւ ամչնան անոնք որ կ'ուզէին ձեռք անցընել հոգիս՝ զայն մէջտեղէն վերցնելու համար: Թող նահանջեն եւ ամչնան անոնք որ չարիք կ'ուզէին հասցնել ինձի:

16 Թող անմիջապէս խայտառակուին եւ ամօթապարտ մնան բոլոր անոնք, որ կ'ըսէին ինձի. Վա՛յ, վա՛յ:

14– Սաղմոսերգուն նախ կը խոստովանի իր կամփին անկարողութիւնը առանձին յաղթահարելու չարին (հ. 13): Մարդուն, նոյնիսկ հաւատացեալ մարդուն ներաշխարհին ողբերգութիւնն է գոր պիտի նկարագրէ սուրբ Պօղոս (Հո 7): Խոստովանելով հանդերձ այս անկարողութիւնը, սաղմոսերգուն կը հասնի համոզումին թէ՛ իբրեւ յետին եւ ամենագոր պապէն կը մնայ իրեն Աստուած, որուն գորութիւնը կը գործէ մարդուն տկարութեամբ, եւ սրտի խորէն կը բարձրացնէ աղօթքը. «Տէր հանէ փրկել զիս...» Գրիստոս պիտի գգուշացնէ մեզ նոյն ողբերգութեան հետեւանքներէն. «Առանց ինձի կարող է՞ ոչինչ ընել» Այս ոչինչն է գոր կը գոյացնեն մեղքը եւ մոռացումը հաւատքին յանձնառութեան:

17 Թող քեզմո՛վ ցնծան եւ ուրախանան, բոլո՛ր անոնք որ քեզ կը փնտռեն, Տէ՛ր: Թող գոչեն տեւապէս. Մե՛ծ է Աստուած, անոնք որ կը սիրեն քու փրկութիւնդ:

18 Ես աղքատ եւ չքաւոր եմ, Աստուած, հոգա՛ զիս, դո՛ւն ես իմ օգնականս եւ պաշտպանս, մի՛ յամենար, Աստուած իմ:

ՍԱՂՄՈՍ 40/41

Հիւանդի եւ հալածականի աղօթքը

- 1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:
- 2 Երանի՛ անոր որ կը խորհի աղքատին ու չքաւորին, Տէրը պիտի փրկէ զինք՝ իր գէշ օրերուն:
- 3 Տէրը պիտի փրկէ զայն եւ կեանք պիտի տայ անոր, պիտի երջանկացնէ երկրիս վրայ եւ պիտի չմատնէ զայն իր թշնամիներուն ձեռքը:

1– Սաղմոսը կու տայ մեզի նկարագրութիւնը հիւանդի մը կացութեան: Պաշտամունքի պաշտօնեան կ'ընդունի զինք եւ կը յորդորէ վստահութեան: Հիւանդը կը խոստովանի իր յանցանքը որ եղած է պատճառ հիւանդութեան (հ. 5–7): Կը վերաբաղէ անցեալի կացութիւնը ուր շրջապատուած էր թշնամիներէ, որոնք կը սպասէին անոր նակատագրական ելքին (հ. 8–13):

2– «Կը խորհի աղքատին եւ չքաւորին», կը մօտենայ անոնց հոգածու կեցուածքով եւ արարքով եւ կը հոգայ անոր կարիքը նիւթական եւ միսիթարութիւնը՝ հոգիին:

4 Տէ՛րն է իր օգնականը՝ իր ցաւերու անկողինին մէջ, եւ պիտի հեռացնէ հիւանդութիւնը՝ անոր անկողինէն:

5 Ես ըսի. Ողորմէ՛ ինծի, Տէ՛ր, բժշկէ՛ իմ հոգիս, ես քեզի դէ՛մ մեղանշեցի:

6 Թշնամիներս չար խօսքեր ըսին ինծի դէմ. Ե՞րբ պիտի մեռնի այս մարդը եւ պիտի կորսուի ասոր անունը:

7 Ներս կը մտնէր, աւելորդ բաներ տեսնելու համար, սին բաներ կը խօսէր իր սրտէն, եւ անօրէնութիւն կը դիզէր իր խղճին վրայ. դուրս կ'ելլէր, եւ նոյն բաները կը կրկնէր:

8 Բոլոր թշնամիներս ետեւէս կը փսփսային. կը խորհէին չարիք հասցնել ինծի:

9 Անօրէն մտածումներ ունեցան իմ մասին, եւ ըսին. Անգամ մը որ պառկած է ան՝ պէտք չէ՛ ոտքի ելլէ դարձեալ:

10 Որովհետեւ այն մարդը՝ որուն հետ խաղաղութեամբ կ'ապրէի, որուն վրայ ես վստահութիւնս դրած էի, եւ որ իմ հացս կ'ուտէր, անիկա խաբէութիւն գործեց ինծի դէմ:

11 Բայց դուն, Տէ՛ր, ողորմէ՛ ինծի, կանգնէ՛ զիս, որպէսզի ես պէտք եղած հատուցումը ընեմ անոնց:

12 Անկի՛ց պիտի հասկնամ թէ՛ վրաս է քու հաճութիւնը՝ երբ թոյլ չտաս որ վրաս խնդան թշնամիներս:

13 Բայց դուն՝ իմ անբժութեանս մէջ ընդունեցար զիս, եւ քու դիմացդ հաստատեցիր զիս յաւիտեան:

14 Օրհնեա՛լ է Իսրայէլի Տէր Աստուածը՝ յաւիտեանս յաւիտենից: Այնպէ՛ս թող ըլլայ. ամէ՛ն:

ՍԱՂՄՈՍ 41/42

Աստուծոյ մօտ ըլլալու փափաք

1 Աւարտին: Կորնի որդիներուն իմաստութիւնը: Սաղմոս Դաւիթի:

2 Ինչպէս եղջերուն ջուրի աղբւրին կը տենչայ՝ այնպէ՛ս քեզի կը տենչայ իմ հոգիս, ո՛վ Աստուած:

3 Հոգիս քեզի՛ ծարաւի է, Աստուած՝ հօր եւ կենդանի. ե՞րբ պիտի գամ եւ աստուածային տեսքիդ առջեւ ելլեմ:

4 Արցունքներս եղան իմ կերակուրս՝ գիշեր եւ ցերեկ, մանաւանդ ա՛յն ատեն՝ երբ շարունակ կ'ըսէին ինծի. Ո՛ր է քու Տէր Աստուածդ:

5 Երբ այս կը յիշէի՝ հոգիս կը տառապէր. կը մխիթարուէի՛ որ պիտի մտնեմ Աստուծոյ սքանչելիքներու յարկին մէջ, ցնծութեան տաղերով եւ բերկրալի երգերով:

6 Արդ, ինչո՞ւ տրտում ես, հոգի՛ս, կամ ինչո՞ւ կը խռովես զիս,

6- Հոգիին վիատութեան, տառապանքին եւ լիովին կը յաջորդէ գարբնու՛մը անյաղքահարելի վստահութեան եւ հաւատքին: Այս վստա-

դի՛ր յոյսդ Աստուծոյ վրայ, եւ փառաբանէ՛ զայն.
Աստուած է՛ փրկիչը իմ երեսիս:

7 Հոգիս մեծապէս խռովեցաւ, եւ ասոր համար՝
յիշեցի քեզ Յորդանանի երկրէն եւ Հերմոնի փոքր լեռնէն:

8 Անդունդները, իրարու արձագանգելով՝ քե՛զ կը կանչէին,
քու ջուրերուդ յորձանքներուն ձայնով,
եւ բոլոր կոհակներդ ու ալիքներդ՝ վրայէս կ'անցնէին:

9 Տէրը պատուիրեց որ իր ողորմութիւնը
մեր վրայ գայ ցերեկը եւ նոր օրհնութիւնը՝ գիշերը,
եւ աղօթքս Աստուծոյ ուղղուած ըլլայ՝ իմ կեանքիս համար:

10 Աստուծոյ ըսի. Դո՛ւն ես իմ ապաւէնս, ինչո՞ւ լքեցիր զիս,
ինչո՞ւ տրտում պիտի քալեմ՝ երբ թշնամին կը նեղէ զիս:

հուօթեան շուրջ հիւսուած է երգը եւ կ'արտայայտէ գայն սաղմոսին կրկնբարը (հ. 6 եւ 12 եւ Սղմ 42,5): Այս համարներուն մէջ հաւատացեալը կը զգայ եւ կ'ապրի անտեսանելի հոն ուր միայն ցաւ է, կսկիծ եւ լճում, հաւատքի մարդը յոյսով կը վերանայ եւ կը մտնանայ Աստուծոյ որ փրկիչ է: Գեղեցիկ է եւ խորունկ երկխօսութիւնը հոգիին հետ: Երբ կ'անցնին հեղեղները եւ ալիքները անձկութեան, մարդուն հոգին եւ սիրտը կը խռովին եւ կը տրտմին, ինչպէս տրտմեցաւ Քրիստոս երբ ապրեցաւ լճումին եւ առանձնութեան անդունդին մէջ: Մթութեան անդին սակայն, կը շարունակեն պլպլալ նրագները հաւատքի եւ յոյսի:

7-«Փոքր լեռը» Սիոնն է, որուն վրայ կառուցուած է տաճարը՝ վայր Աստուծոյ բնակութեան եւ ներկայութեան:

10-Հոս կը սկսի աղօթքը տագնապին: Աղօթքին մէջ ներկայ է հակասութիւնը. եթէ կարելի է ըսել, հակասութիւնը հաւատքին: Մէկ կողմէն կը կոչէ Տէրը՝ իմ Աստուծոս կենդանի եւ Վեմ (հ. 3 եւ 10), միւս կողմէն

11 Թշնամիներս կը նախատէին զիս՝
ոսկորներուս փշրուելուն աստիճան,
օրն ի բուն ըսելով ինծի. Ո՞ւր է քու Աստուածդ:

12 Արդ, ինչո՞ւ տրտում ես, հո՞գիս,
կամ ինչո՞ւ կը խռովես զիս,
դի՛ր յոյսդ Աստուծոյ վրայ եւ փառաբանէ՛ զայն.
Աստուած է՛ իմ երեսիս փրկիչը:

ՍԱՂՄՈՍ 42/43

Տե՛նչ առ Աստուած

Սաղմոս Դաւիթի:

1 Դա՛տս տես, Աստուած, եւ դատիս ընթացքին՝
արդարութիւն ըրէ՛ ինծի:

կը հառաչէ խռովիչ հարցականը. ինչո՞ւ կը մոռնաս զիս: Սաղմոսերգուն ստոյգ տեղեակ էր մարգարէներուն ազդարարութեան թէ՛ ժողովուրդը պիտի ճաշակէ տարագրութեան դառնութիւնը, անհնազանդութիւններու հետեւանքով: Սակայն ան կը խորհրդածէ կացութիւնը դիտուած տարբեր տեսանկիւնէ. գերազանցել չարիքը եւ հասնիլ հաւատքի համոզումին թէ՛ Աստուծոյ գթութիւնը անհուն է եւ կը յաղթահարէ մեղքին: Հաւատացեալ մարդը երբ ցաւի մէջ է՝ պարտի, եւ ամենայն վստահութեամբ կարող է կոչ ընել Աստուծոյ գթութեան, ինչպէս Անաուկը՝ իրեն սպասող հոր բարութեան:

1- Սաղմոսերգուն իր դժնդակ կացութիւնը պարզել է ետք, կը հայցէ Աստուծոյ արդարութեան միջամտութիւնը: Մարդոց կամ սերունդին ոչ-արբութիւնը օրինականը չէ, այլ բարոյականը, ինչպէս ցոյց կու տայ նախադասութեան շարունակութիւնը:

*Փրկէ՛ զիս անմաքուր սերունդէն,
մեղաւոր եւ նենգաւոր մարդերէն:*

*2 Դո՛ւն ես ապաւէնս, Աստուած՝, ինչո՞ւ մոռցար զիս,
ինչո՞ւ տրտում պիտի քայլեմ ես՝
երբ թշնամին նեղէ զիս:*

*3 Քո՛ւ լոյսդ եւ ճշմարտութիւնդ առաքէ, Տէ՛ր,
որ առաջնորդեն զիս եւ սուրբ լեռդ ու յարկերդ հանեն զիս:*

*4 Աստուծոյ սեղանին առջեւ պիտի ելլեմ,
Աստուծոյ՝ որ կ'ուրախացնէ երիտասարդութիւնս:
Քեզ օրհնելով՝ պիտի փառաւորեմ քեզ,
Աստուած, Աստուած իմ:*

*5 Արդ, ինչո՞ւ տրտում ես հո՛գիս,
կամ ինչո՞ւ կը խռովես զիս,
դի՛ր յոյսդ Աստուծոյ վրայ եւ փառաբանէ՛ զայն.
Աստուած իմ երեսիս փրկիչը:*

3-«Առաքէ լոյսդ եւ ճշմարտութիւնդ»... աստուածային յատկանիշներն են՝ անձնաւորուած, պահպանելու եւ առաջնորդելու համար հաւատքի մարդը: Ոչ մտքի բնական կարողութիւնները եւ ոչ ալ գործի նարպիկութիւնները կրնան փոխարինել ի վերուստ եկած լոյսը եւ ճշմարտութիւնը, բարձրանալու համար մինչեւ բնակարաններն Աստուծոյ: Հաւատքի եւ Եկեղեցւոյ մարդը, կը դիտէ եւ կը տեսնէ ամէն իրականութիւն իբրեւ Անտեսանելիին տեսանող:

ՍԱՂՄՈՍ 43/44

Ադօք-Ֆ՝ նեղութեան ատեն

1 Սւարտին: Կորիսի որդիներուն իմաստութիւնը: Սաղմոս Դաւիթի:

2 *Աստուած, մէ՛ր իսկ ականջներով լսեցինք
ինչ որ մեզի պատմեցին մեր հայրերը.
ա՛յն դործը՝ զոր անոնց օրերուն կատարեցիր դուն,
անցեա՛լ ժամանակներուն:*

3 *Քո՛ւ ձեռքդ հեթանոսները դուրս խլեց,
եւ զանոնք հաստատեցիր հոն:
Չարչարեցիր ժողովուրդները եւ դուրս հանեցիր զանոնք:*

4 *Իրենց սուրով չէ՛ որ անոնք ժառանգեցին երկիրը,
եւ անոնց բազո՛ւկն ալ չէր որ փրկեց զիրենք.
այլ քո՛ւ ա՛ջդ, քո՛ւ բազո՛ւկդ եւ քո՛ւ երեսիդ լո՛յսն էր,
որովհետեւ քո՛ւ հաճութիւնդ յայտնած էիր անոնց:*

5 *Դուն ի՛նքդ ես իմ թագաւորս եւ Աստուածս,
որ վճռեցիր Յակոբի յաղթութիւնները:*

6 *Մենք քեզմո՛վ պիտի հարուածենք մեր թշնամիները,
եւ քո՛ւ անունովդ պիտի նուաճենք մեզի դէմ ելլողները:*

7 *Իմ աղեղիս վրայ չէ՛ որ ես դրած եմ իմ յոյսս,
եւ ոչ ալ սո՛ւրս է որ կը փրկէ զիս:*

8 *Այլ դո՛ւն ես որ փրկեցիր մեզ մեր թշնամիներէն,
եւ դո՛ւն խայտառակեցիր անոնք որ մեզ կ'ատէին:*

- 9 Մենք Աստուծո՛վ պիտի պարծենանք ընդմիշտ,
եւ անոր անունը պիտի փառաբանենք յաւիտեան:
- 10 Հիմա սակայն՝ դուն մերժեցիր եւ արհամարհեցիր մեզ,
եւ մեր զօրքերուն կողքին չկեցար:
- 11 Դուն թողուցիր որ փախչինք մեր թշնամիներուն առջեւէն,
եւ անոնք որ մեզ կ'ատէին՝ կողոպտեցին մեզ:
- 12 Դուն անոնց ձե՛ռքը տուիր մեզ՝
մորթուելիք ոչխարներու նման,
եւ հեթանոսներուն մէջ ցրուեցիր մեզ:
- 13 Դուն քու ժողովուրդդ վաճառեցիր չնչին գինով.
մեր ազաղակը վերջ պիտի չունենայ:
- 14 Մեր դրացիներուն առջեւ նախատելի դարձուցիր մեզ.
Ծաղր ու ծանակի առարկայ՝ մեր շուրջը բնակողներուն:
- 15 Դուն առակի նիւթ ըրիր մեզ՝ հեթանոսներուն,
որ ժողովուրդները իրենց գլուխը շարժեն:
- 16 Իմ առջեւ ես օրն ի բուն՝ իմ կրած նախատինքներս,
եւ երեսիս ամօթը ծածկեց զիս,

10- «Մերժեցիր մեզ»... մերժումը կը հակադրուի հաճութեան որ հիմն էր ժողովուրդին ընտրութեան: Ընտրութիւն-մերժում հակադրութիւնը կը կրկնուի թէ՛ անհատական եւ թէ՛ հասարակական ողբերուն մէջ: Մերժումին հետեւանձնով, Աստուծո՛՛ Տէրը Զօրութիւններու, ինչպէս անցեալի օրերուն, այլեւ չնչիւր իր ժողովուրդին բանակներուն հետ (Թիւ 10, 35. 1 Թագ 11, 11):

- 17 լսելով նախատողին եւ չարախօսին ձայնը,
եւ տեսնելով թշնամիին ու զիս հալածողին դէմքը:
- 18 Մէ՛ր վրայ եկան բոլոր այս բաները՝
թէպէտ մենք չէի՛նք մոռցած քեզ, չէի՛նք դրժած քու Ուխտդ,
19 եւ ետ չէինք դարձած մեր սրտերով. դուն սակայն՝
չեղեցուցիր մեր ուղղութիւնը քու ճամբաներէդ:
- 20 Դուն խոնարհեցուցիր մեզ չարչարանքի տեղւոյն վրայ,
եւ մահուան ստուերները ծածկեցին մեզ:
- 21 Արդեօք մենք մոռցա՞ծ էինք մեր Աստուծոյն անունը,
կամ օտար աստուածներո՞ւ երկարած էինք մեր ձեռքերը:
- 22 Արդարեւ, ա՛յս կը պահանջէ Աստուած,
քանի որ ա՛ն կը քննէ մեր սրտին գաղտնիքները:
- 23 Քեզի՛ համար կը մեռնինք մենք ամէն օր,
մորթուելիք ոչխարի տե՛ղ դրուած ենք մենք:
- 24 Զարթի՛ր, ինչո՞ւ կը ննջես, Տէ՛ր,
է՛լ, եւ մի՛ մերժեր մեզ վերջնականապէս:
- 25 Ի՞նչ պատճառով դուն կը դարձնես երեսդ մեզմէ,
եւ կը մոռնաս մեր խեղճութիւնն ու նեղութիւնները:

20-«Ստուերները մահուան». պատկերն է որ կ'արտայայտէ իրակա-
նութիւնը համատարած աւերումներուն:

21- Յայտարարութիւնը անմեղութեան աւելի արժէք ունի, քան որ
կատարուած է ծածկագէտ Աստուծոյ առջեւ:

26 Մեր հոգին մինչեւ գետին խոնարհած է, եւ մեր մէջքը երկրին կը դպնայ:

27 Կանգնէ՛, Տէր, օգնութեան հասիր մեզի, եւ փրկէ՛ մեզ՝ քու անունի՛դ համար:

ՍԱՂՄՈՍ 44/45

Թագաւորական հարսանիքի երգ

1 Աւարտին: Հին ժամանակներէն: Կորնի որդիներուն իմաստութիւնը: Սիրելիին գովարանութեան սաղմոս:

2 Սրտէս պիտի բխին քու բարի պատգամներդ, որպէսզի թագաւորիս գործերը պատմեմ. եւ լեզուս թող շարժի արագազիր դպիրի նման:

3 Գեղեցիկ է տեսքդ, աւելի քան մարդոց բոլոր որդիներէն. շնորհք կը հոսի շրթունքներէդ, եւ ա՛յդ է պատճառը՝ որ յաւիտեան օրհնեց քեզ Աստուած:

26–«Մեր մէջքը երկրին կը դպնայ», կրնայ նշանակել ծիսական խոնարհութիւնը՝ անհատական կամ հաւաքական ողբի ժամանակ եւ կամ պարտուածներու կեցուածքը յաղթականներու առջեւ:

1– Քրիստոնեայ աւանդութիւնը այս սաղմոսին, իբրեւ սիրոյ երգի այլաբանութեան մէջ, տեսած է միստիկ հարսանիքը՝ Քրիստոսի եւ Եկեղեցւոյ: Նոր կտակարանը Դշխոյին մէջ կը տեսնէ Եկեղեցին (Մտք 9,15. Յովի 3,29. Եփս 5,32. Յայտ 21,9): Ծիսական մատենաները կ'ընդարձակեն այլաբանութեան տարողութիւնը եւ զայն կը պատշանեցնեն Մարիամի եւ նուիրեալ կոյսերուն:

3– «Գեղեցիկ ..տեսէր»... Թագաւորին գեղեցկութիւնը նշանակ է

4 Ո՛վ դուն, Հզօ՛ր, իբրեւ սուրճ՝ մէջքիդ կապէ վայելչուլթիւնը քու գեղեցկութեանդ:

5 Լարէ՛, ուղղէ՛ եւ թագաւորէ՛, ճշմարտութեան, հեզութեան եւ արդարութեան համար, եւ սքանչելի կերպով քու աջդ թող առաջնորդէ քեզ:

6 Քու նետերդ սրածայր են, ո՛վ Հզօր. ժողովուրդներ պիտի իյնան քու ներքեւդ, խոցելով սրտերը թագաւորին թշնամիներուն:

7 Աթոռդ յաւիտեանս յաւիտենից կայ, Աստուած՛ծ, եւ թագաւորական գաւազանդ ուղղիչ գաւազան է:

8 Դուն սիրեցի՛ր արդարութիւնը եւ ասեցի՛ր անօրէնութիւնը, ասոր համար ուրախութեան իւղով օծեց քեզ Աստուած, քո՛ւ Աստուածդ՝ աւելի՛ քան ընկերներդ:

9 Զմուռս, խունկ եւ կինամոն կը բուրդէ հագուստդ, փղոսկրէ տաճարներէ՛ եկած են՝ քեզ ուրախացնելու համար:

10 Թագաւորներու դուստրերը պատիւ կը վայելեն: Թագուհին քու աջիդ պիտի կենայ, ոսկեհէլու հագուստներով զարդարուած ու պճնուած:

աստուածային ընտրութեան: Ակնարկութիւնն է նաեւ Մեսիա քագաւորին (Ես 33,17): Գեղեցկութեան վրայ կ'աւելնայ շնորհքը՝ շրթունքներուն վրայ սփռուած, իբրեւ արտայայտութիւն անոր հոգեկան աշխարհի գեղեցկութեան:

10– Պատիւ վայելողները կը խորհրդանշեն հեթանոս ազգերը որոնք պիտի դառնան նշմարիտ Աստուծոյ (Ես 60,3. 61,5. Ես 1,3):

- 11 *Լսէ՛ դուստր, եւ տե՛ս, խոնարհեցո՛ւր ականջդ, մոռցի՛ր քու ժողովուրդդ եւ հօրդ տունը,*
- 12 *որովհետեւ թագաւորը քու գեղեցկութեանդ ցանկացաւ. ի՛նքն է քու Տէրդ, անո՛ր երկրպագութիւն պիտի ընես:*
- 13 *Ծուրի դո՛ւստրն ալ պիտի երկրպագէ անոր, եւ ժողովուրդներու մեծամեծները՝ ընծաներով պիտի մեծարեն զայն:*
- 14 *Թագաւորին դստեր ամբողջ փառքը՝ անոր ներսն է:*
- 15 *Ան ոսկեհիւս պատմուճանով զարդարուած եւ պճնուած է: Անոր նաժիշտները թագաւորին քով պիտի տանին զինքը եւ անոր քով պիտի բերեն անոր ընկերները:*
- 16 *Ցնծութեամբ եւ ուրախութեա՛մբ պիտի բերեն, եւ թագաւորին պալատը պիտի տանին զինքը:*
- 17 *Եւ քու հայրերուդ տեղ՝ քու որդիներդ պիտի անցնին. զանոնք իշխան պիտի կարգես ամբո՛ղջ երկրի վրայ:*
- 18 *Քո՛ւ անունդ պիտ յիշուի՝ սերունդէ սերունդ, ասոր համար՝ ժողովուրդները պիտի օրհնեն քեզ յաւիտեա՛նս յաւիտենից:*

11-«Մոռցիր ժողովուրդդ... հօրդ տունը». սաղմոսագուրդի յորդորն է իշխանուհիին՝ հրաժարելու հեթանոսութենէն եւ դառնալու նշմարիտ Աստուծոյ:

16- Հարսանիքին եւ գահակալութեան յաջորդող ուրախութիւնները կը յատկանշեն մեսիական ժամանակներու ուրախութիւնը:

18- Սաղմոսը փակող մաղթանքը կը յիշեցնէ նահապետներուն օրհ-

ՍԱՂՄՈՍ 45/46

Աստուած է մարդու յոյսը

- 1 Աւարտին: Կորիսի որդիներուն՝ գաղտնիքի մասին:
- 2 *Մեր ապաւէնն ու զօրութիւնն է մեր Աստուածը, եւ մեր օգնականը՝ նեղութիւններուն ատեն՝ որ բուռն կերպով կը խուժեն մեր վրայ:*
- 3 *Ասոր համար՝ պիտի չվախնանք եթէ խռովի երկիրը, եթէ լեռները սուզուին ծովու խորը:*
- 4 *Շահեցին եւ ալեկոծեցան անոնց ջուրերը, լեռները խռովեցան անոր զօրութենէն:*
- 5 *Գետերու հոսանքները Աստուծոյ քաղաքը կ'ուրախացնեն, եւ Բարձրեալը իր յարկերը սրբացուց:*
- 6 *Աստուած անոնց մէջ պիտի ըլլայ եւ անոնք պիտի չսասանին: Աստուած պիտի օգնէ անոնց՝ առաւօտէ՛ առաւօտ:*
- 7 *Խռովեցան հեթանոսները, թագաւորութիւնները ինկան. Բարձրեալը ձայն տուաւ, եւ երկիրը խռովեցաւ:*

նութիւնը, հիմ մեսիական ակնկալութիւններուն: Այս համարին մէջ, ուր թագաւորութիւնը զարդարուած է աստուածային թագաւորութեան յատկանիշներով, սաղմոսին մեսիական բովանդակութիւնը աւելի թափանցիկ է:

8 Մեզի հե՛տ է գօրու[թիւններու Տէրը,
մեր ապաւէ՛նն է Յակոբի Աստուածը:

9 Եկէ՛ք եւ տեսէք Աստուծոյ գործերը,
որ հրաշքներ եւ սքանչելիքներ գործեց երկրի վրայ:

10 Վերջ դրաւ պատերազմներուն՝ երկրին մէկ ծայրէն միւսը-
փշրեց աղեղները, խորտակեց գէնքերը,
եւ կրակով այրեց վահանները:

11 Փռ[թացէ՛ք եւ պիտի գիտնաք՝ թէ է՛ս եմ Աստուածը,
որ պիտի փառաւորուիմ հեթանոսներէն
եւ պիտի փառաւորուիմ երկրի վրայ:

12 Մեզի հե՛տ է գօրու[թիւններու Տէրը,
մեր ապաւէ՛նն է Յակոբի Աստուածը:

ՍԱՂՄՈՍ 46/47

Աստուած՝ թագաւոր ազգերու

1 Աւարտին: Կորնի որդիներուն համար: Սաղմոս Դաւիթի:

2 Ծա՛փ զարկէք, բոլո՛ր հեթանոսներ,
ցնծու[թեան ձայներո՛վ աղաղակեցէք Աստուծոյ:

3 Բարձրեա՛լ է Տէրը եւ ահարկու,
ան մե՛ծ թագաւորն է ամբողջ երկրիս վրայ:

4 Ան ժողովուրդներ հնազանդեցուց մեզի,
եւ մեր ոտքերուն տակ դրաւ հեթանոսները:

5 Ա՛ն ընտրեց մեզ, որ իր ժառանգու[թիւնն ըլլանք,
պարծանքը Յակոբին, իր սիրելիին:

6 Օրհնութեան երգերով համբարձաւ մեր Աստուածը,
փողերու ձայնով բարձրացաւ մեր Տէրը:

7 Սաղմո՛ս ըսէք մեր Աստուծոյն,
սաղմո՛ս ըսէք մեր թագաւորին, սաղմո՛ս ըսէք անոր:

8 Աստուա՛ծ է մեծ թագաւորը ամբողջ երկրի վրայ,
գովաբանական երգերով սաղմո՛ս ըսէք անոր:

9 Աստուած հեթանոսներուն վրայ՝ թագաւորեց,
իր սուրբ աթոռին վրայ՝ նստաւ Աստուած:

10 Ժողովուրդներու իշխաններ հաւաքուեցան
Աբրահամի Աստուծոյն քով,
որովհետեւ Աստուծոյ գօրու[թիւնները՝
երկրի վրայէն շատ բարձրացան:

6- Սաղմոսին ծիսական բարեբանութիւնը ունի իր աստուածաբանական բովանդակութիւնը: Ուխտի Տապանակին մուտքով Երուսաղէմ, Աստուած կը մտնէ իր սեփականութեան մէջ (2 Թագ 6,15) եւ կը հաստատէ տեսանելի կեդրոնը իր թագաւորութեան: Քրիստոս համբարձաւ երկինք, բազմեցաւ Աստուծոյ աջ կողմը եւ առաւ թագաւորութիւնը (Փիլ 2,5-11. 1 Կոր 15,24): Քրիստոսեայ ծեսերը, ինչպէս նաեւ հայ ծեսը, այս սաղմոսը կ'երգեն Համբարձման Տօնին, գովաբանելու համար Քրիստոսի թագաւորութիւնը որ կ'իրականացնէ սաղմոսին խորհրդական բովանդակութիւնը:

10- Ուխտը գոր Աստուած կնքած էր Աբրահամի հետ պիտի ըլլայ բոլոր ժողովուրդներուն որ պիտի կազմեն Աստուծոյ մէկ ժողովուրդը (Ես 2,2. 19,25. Զաբ. 2,15):

ՍԱՂՄՈՍ 47/48

Աստուծոյ լեռը՝ Սիոն

1 Կորթի որդիներուն օրհնութեան սաղմոսը: Երկրորդ շաբթուն:

2 *Մեծ է Տէրը՝ մեր Աստուծոյն քաղաքին մէջ, ան մեծամեծ օրհնութիւններու արժանի է իր սուրբ լեռան վրայ:*

3 *Համայն երկիրը, հաստատ հիմերու դրուած՝ Սիոնի լեռները, հիւսիսային կողմերը, մեծ թագաւորին քաղաքը ցնծալից ուրախութեամբ պիտի խայտան:*

4 *Աստուած իր տաճարին մէջ պիտի յայտնուի ա՛յն ժամանակ՝ երբ ան օգնական պիտի ըլլայ անոնց:*

5 *Ահա, հաւաքուեցան երկրի թագաւորութիւնները, բայց միասին խորտակուեցան:*

6 *Անոնք տեսան թէ այսպէ՛ս է Աստուած, եւ զարմացան, խռովեցան, սասանեցան,*

7 *դողէ բռնուեցան, երկունքի մատնուեցան՝ ծննդաբերի նման:*

8 *Սաստիկ հովով մը պիտի խորտակես զանոնք թարսիսի մէջ:*

9 *Ինչպէս լեցինք՝ այնպէս ալ տեսանք, զօրութիւններու Տիրոջ քաղաքին՝ մեր Աստուծո՛յն քաղաքին մէջ, ուր յաւիտենական հիմեր դրած է Աստուած:*

10 *Քու ժողովուրդիդ մէջ, Աստուած, մենք քո՛ւ ողորմութիւնդ ստացանք:*

11 *Անունիդ համեմատ՝ այնպէ՛ս նաեւ օրհնութիւնդ բովանդակ տիեզերքի վրայ է, եւ արդարութեամբ լի է քու աջդ:*

12 *Պիտի ուրախանա՛յ Սիոն լեռը, պիտի ցնծա՛ն Յուդայի դուստրները՝ քու արդարութեանդ համեմատ, Տէ՛ր:*

13 *Շրջապատեցէ՛ք Սիոնը, պաշարեցէ՛ք զայն, եւ պատեցէ՛ք անոր աշտարակները:*

14 *Ձեր սիրտերը անոնց զօրութեան վստահեցէ՛ք, ձեր մէջ բաժնուեցէ՛ք անոր ամրոցները, որպէսզի կարենաք ըսել յաջորդ սերունդներուն՝*

15 *Ա՛յս է Աստուած, մեր Աստուածը՝ յաւիտեանս յաւիտենից, եւ ա՛ն պիտի հովուէ մեզ յաւիտեան:*

ՍԱՂՄՈՍ 48/49

Հարստութեան ոչնչութիւնը

1 Սւարտին: Կորիսի որդիներէն: Դաւիթի օրհնութեան սաղմոս:

2 *Հսեցէ՛ք այս, համա՛յն ազգերը: Մտի՛կ ըրէ՛ք, դուք ամէ՛նքդ որ աշխարհի երեսը կը բնակիք:*

3 *Երկրի ծնունդնե՛ր եւ համա՛յն մարդկուլթիւն, հարուստնե՛ր ու աղքատնե՛ր միատեղ:*

4 *Բերանս իմաստուլթիւն պիտի խօսի, իսկ սրտիս խորհուրդները՝ հանճար:*

5 *Ականջս պիտի խոնարհեցնեմ՝ առակով խօսելով, եւ օրհնուլթեան առակներ պիտի բանամ անցեալէն:*

6 *Ինչո՞ւ կը վախնամ արդեօք դժբախտուլթեան օրերուն. որովհետեւ կեանքիս անօրէնուլթիւնները շրջապատած են զիս:*

7 *Անոնք իրենց ոյժին վրայ դրած են իրենց յոյսը, եւ իրենց մեծ հարստուլթեամբ կ'ուզեն պարծենալ:*

2- Սաղմոսը իմաստութեան գիրքերու ռեով եւ շեշտով ուսուցումն է տրուած բոլոր մարդոց: Հարուստներուն համար որ կը վայելն աշխարհի պերճամբները եւ հօր են, սաղմոսը խիստ ազդարարութիւն է: Արդարներուն համար, քաջալերանք է գգուշանալու հարստութեան փորձութեանն, եւ ապաւինելու Աստուծոյ որ միայն կը փրկէ (հ. 16):

8 *Եղբայրը չի՛ կրնար փրկել ոչ ալ ո՛րեւէ մարդ, եւ չի՛ կրնար փրկագին տալ Աստուծոյ,*

9 *եւ նոյնիսկ իր անձին փրկագինը չի կրնար տալ ան:*

10 *Յաւիտեան՝ վաստակէ, եւ անվերջ պիտի ապրիս, եւ ապականուլթիւն պիտի չտեսնես:*

11 *Երբ տեսնես թէ իմաստունները կը մեռնին՝ անզգամներն ու անմիտներն ալ միասին պիտի կորսուին, եւ իրենց հարստուլթիւնը օտարներու պիտի թողուն:*

12 *Գերեզմանները պիտի ըլլան իրենց տուները յաւիտեան. եւ իրենց բնակարանը՝ սերունդէ՛ սերունդ, եւ իրենց անունը պիտի տրուի իրենց կալուածներուն*

13 *Մարդը պատիւ ունէր, բայց չգիտցաւ, անբան անասուններու հաւասարեցաւ եւ անոնց նմանեցաւ:*

8- Սաղմոսներգուն կ'ակնարկէ օրէնքի տրամադրութեան, որուն գործեամբ, դատապարտեալը կրնար խուսափիլ վնիդին գործադրութեանէն՝ փրկագին վնարելով (Ելք 21,30. Առակ 6,35): Մարդը սահմանուած է մահուան: Խուսափելու համար վնիդէն եւ ապրելու համար յաւիտեան, պարտական է փրկագին վնարել Աստուծոյ, որ միակ տնօրինողն է անմահութեան: Իմաստունն ու յիմարը կը մեռնին, որովհետեւ ոչ ոք կարող է ի գին անվերջ աշխատանքի, անմահութեան փրկագին վնարել: Միակը որ կարող է մեզ փրկել իր արեան փրկագինով, եղաւ Քրիստոս:

13- Միայն պերճամբով եւ վայելիքով գոհունակ մարդը կը հաւասարի անբաններու, որովհետեւ «Չարէն բռնուած հոգին կը կորսնցնէ իմացական կարողութիւնը» (Շնորհալի):

14 Անոնց ճամբան գայթակղութեան տարաւ զիրենք, ասկէ ետք իրենց բերանով պիտի գովեն զիրար:

15 Ոչխարներու պէս՝ դժոխք պիտի նետուին. եւ մա՛հը պիտի հովուէ զանոնք, եւ առաւօտուն՝ ուղղամիտները պիտի տիրեն անոնց. դժոխքի մէ՛ջ պիտի չքանայ անոնց տրուած օգնութիւնը, եւ անոնք իրենց փառքերէն պիտի դատարկուին:

16 Սակայն Աստուած պիտի փրկէ զիս դժոխքին ձեռքէն, երբ զիս իր մօտ ընդունի:

17 Մի՛ վախնար երբ մարդը հարստանայ, կամ երբ անոր տան շքեղութիւնը մեծնայ.

18 որովհետեւ իր մեռած ատեն՝ բա՛ն մը պիտի չկարենայ իր հետը առնել, եւ անոր փառքը գերեզման պիտի չիջնէ իրեն հետ:

19 Անոր անձը՝ իր ողջութեան, օրհնութի՛ւն պիտի ստանայ, եւ շնորհակալ պիտի ըլլայ քեզի՝ երբ բարիք ընես անոր:

16– Մահը կը սպասէ ամէն մարդու: Խուսափելու համար դժոխքի ցանկերէն, սաղմոսներգուն կ'ապաւինի Աստուծոյ որ միայն կարող է զինք փրկել: Պիտի ընդունի զիս խօսքերով, թերեւ կ'ակնարկէ Ենովքի եւ Եղիայի եւ տարտամ կերպով կ'արտայայտէ իր փրկութիւնը, այսինքն խորհրդաւոր վերացումով՝ ինչպէս Ենովք եւ Եղիա: Տարտամ նշոյլներն են յետ մահու հատուցման: Բարեկամութիւնն Աստուծոյ գերագոյն բարիքն է մարդուն, չի կրնար անհետանալ մահով (Սուրբ 8,17) որովհետեւ անհաշտ պիտի ըլլար Աստուծոյ յաւիտեանական սիրոյն:

20 Ան գերեզման պիտի մտնէ, իր հայրերուն սերունդին քով, եւ լոյս պիտի չտեսնէ յաւիտեան:

21 Մարդը պատիւ կը վայելէր, բայց չհասկցաւ, անբան անասուններու հաւասարեցաւ եւ անոնց նմանեցաւ:

ՍԱՂՄՈՍ 49/50

Ճշմարիտ աստուածապաշտութիւնը

Սաղմոս Ասափի:

1 Աստուածներու Աստուածը՝ Տէ՛րը խօսեցաւ. երկրի՛ն ուղղեց իր կողը՝ արեւելքէն մինչեւ արեւմուտք:

2 Սիռնէ՛ն կու գայ անոր մեծ վայելչութիւնը եւ գեղեցկութիւնը անոր փրկութեան:

3 Մեր Աստուածը պիտի գայ յայտնապէս եւ պիտի չլուէ. կրակ պիտի բորբոքի անոր առջեւէն, եւ սաստիկ մրրիկ պիտի բարձրանայ անոր շուրջ:

4 Պիտի կանչէ երկինքը՝ վերէն, եւ երկիրը՝ դատելու համար իր ժողովուրդը:

1– Պաշտամունքի պատասխանատուները կազմակերպած էին յատուկ արարողութիւններ՝ հաւաքական ապաշխարութեան, ուխտի նորոգութեան համար: Ժողովուրդը հրաւիրուած է համախմբուելու տանար, ուր պատգամով Աստուած կը յիշեցնէ պայմանները, որոնց շնորհիւ ուխտը լուրջ է եւ գոհը՝ ընդունելի: Անօգուտ է բազմացնել գոհերը, բազմապատկել արարողութիւնները, եթէ անոնց չընկերանար հաւատացեալին աստուածահանոյ կեանքը:

- 5 Իր քով պիտի հաւաքէ իր սուրբերը,
եւ անոնք որ իր սեղանին վրայ կը դնեն
իրենց ուխտերուն պատարագները:
- 6 Երկինքը պիտի պատմէ անոր արդարութիւնը,
որովհետեւ Աստուած է դատաւորը:
- 7 Լսէ՛, ժողովուրդս, քեզի՛ պիտի ուղղեմ իմ խօսքս,
եւ քեզի՛ վկայութիւն պիտի տամ, ո՛վ Իսրայէլ,
որովհետեւ ե՛ս եմ Աստուածը, ես եմ քո՛ւ Աստուածը:
- 8 Քու պատարագներուդ համար չէ՛ որ կը մեղադրեմ քեզ,
որովհետեւ քու ողջակէզներդ տեւապէ՛ս առջեւս են:
- 9 Ես կարիքը չունի՛մ քու տանդ գուարակներուն,
եւ ոչ ալ քու հօտիդ նոխազներուն:
- 10 Ինծի՛ կը պատկանին արդէն անտառի բոլո՛ր գազանները,
լեռներու երէն եւ բոլո՛ր անասունները:
- 11 Յայտնի են ինծի՛ երկնքի բոլո՛ր թռչունները,
եւ իմ հրամանիս տակն է դաշտերու գեղեցկութիւնը:
- 12 Եթէ անօթենամ՝ բան մը չե՛մ ըսեր քեզի,
որովհետեւ աշխարհը իր ամբողջ լիութեամբ՝
ինծի կը պատկանի:

9- Մերժումը պաշտամունքի գոհերուն բացարձակ չէ, այլ յարաբերական, երբ գոհին չեն ընկերամար ընծայողին եւ մատուցանողին սուրբ տրամադրութիւնները:

- 13 Ես չե՛մ ուտեր քու գուարակներուդ միսը,
ոչ ալ արի՛ւնը կը խմեմ քու նոխազներուդ:
- 14 Օրհնութեան պատարագ ըրէ Աստուծոյ,
եւ քու ուխտերդ կատարէ Բարձրեալին հանդէպ:
- 15 Դուն ինծի՛ պէտք է դիմես նեղութեանդ օրերուն.
ես պիտի փրկեմ քեզ, եւ դուն պիտի փառաւորես զիս:
- 16 Սակայն ա՛յսպէս կ'ըսէ Աստուած մեղաւորին.
Դուն ինչպէ՛ս կը հռչակես իմ արդարութիւնս,
կամ բերանդ կ'առնես իմ ուխտերս:
- 17 Որովհետեւ դուն ատեցիր իմ խրատներս,
մերժեցիր ու նետեցիր իմ բերնիս բոլոր խօսքերը:
- 18 Եթէ գողեր տեսնէիր՝ անոնց հետ պիտի քայլէիր,
եւ շնացողներուն գործակից պիտի դառնայիր:
- 19 Քու բերանէդ չարութիւն կը յորդէր,
եւ քու լեզուդ նենգութիւն կը ձեռնարկէր:
- 20 Նստած տեղդ՝ դուն եղբայրդ կը չարախօսէիր,
եւ գայթակղալի բաներ կը վերագրէիր մօրդ որդւոյն:
- 21 Մինչ դուն այսպիսի բաներ կ'ընէիր, ես կը լռէի.
եւ դուն, անօրէ՛ն, կը խորհէիր թէ ե՛ս ալ նման եմ քեզի:

14- Սաղմոսերգուն կը շնտէ անհրաժեշտութիւնը գոհը չարատարելու՝ ժամանակաւոր եւ շահագրգռուած նպատակներով: Մատուցումը հոգեւոր եւ սուրբ գոհին, կ'իրականանայ Քրիստոսի միակ եւ գերազանց Գոհութեան Զոհով:

*սակայն հիմա յայտնի՝ պիտի ընեմ այդ բաները,
եւ քու առջեւդ պիտի հանեմ քու բոլոր այդ գործերդ:*

22 *Իմացէ՛ք բոլորդ, դուք որ մոռցած էք զԱստուած,
որովհետեւ կընայ պատահիլ որ յափշտակեն ձեզ յանկարծ,
եւ մէ՛կը չգտնուի որ փրկէ ձեզ:*

23 *Օրհնութեան գոհը կը փառաւորէ զիս.
ա՛յդ է ճամբան ուր ես ցոյց պիտ տամ անոր՝
Աստուծոյ փրկութիւնը:*

ՍԱՂՄՈՍ 50/51

Զոդումի աղօթք

1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

2 Այն ժամանակ՝ երբ անոր քով եկաւ Նաթան մարգարէն,
երբ ինքը Բեքսաբէին քով մտած էր:

22– Մարդը կը ձգտի պատկերացնելու Աստուծոյ դատաստանը իր-
րեւ գալիք ժամկետ: Օր մը պիտի գայ: Սակայն մարդն է որ օր ըստ օրէ,
իր կեանքով եւ գործով կը պատրաստ վերջին վճիռը: Իսկ անոր համար
որ կ'ապրի գոհութեան գոհը, եւ գայն ըրած է անապարհ կեանքի, Աստ-
ւած այս քանապարհի լրայ պիտի յայտնէ անոր փրկութիւնը որ
տրուած է սիրով: Քրիստոս, տալու համար սիրով ծրագրուած փրկու-
թիւնը, վճուակամօրէն ընտրեց ըլլալ մարդուն հետ, որ տկար է եւ մե-
ղանչական:

1– Այս սաղմոսը ամենէն ծանօթն է թէ՛ ծիսական աւանդութիւննե-
րուն եւ թէ՛ անհատական ջերմեռանդութեան: Խորքով եւ շեշտով գերա-
զանցապէս մարդկայնական ընդլայնում մըն է որովհետեւ կը հայի
մարդուն վիրաւոր էութեան եւ միաժամանակ ցոյց կու տայ քամբան՝

3 *Ողորմէ՛ ինծի Աստուած, քու մեծ ողորմութեամբդ,
քու անհուն զթութեամբդ ջնջէ՛ անօրէնութիւններս:*

4 *Ամբո՛ղջովին լուա զիս անօրէնութիւնէս,
եւ սրբէ՛ զիս մեղքերէս:*

5 *Ես լա՛ւ կը ճանչնամ իմ անօրէնութիւններս,
եւ մեղքերս առջե՛լս են շարունակ:*

6 *Քեզի՛ դէմ միայն մեղանչեցի
եւ քու առջեւդ չարը գործեցի.
Ուստի արդար պիտի ըլլաս քու խօսքերուդ մէջ,
եւ պիտի յաղթես երբ դատես:*

7 *Անօրէնութեան մէջ յղացաւ
եւ մեղքերով ծնաւ զիս մայրս:*

վերանալու դէպի հոգեւորը եւ մաքուր ըմբռնումն ու ապրումը կրօնա-
կան եւ բարոյական իրականութիւններուն: Խոնարհ եւ անկեղծ քանա-
չումը մեղքին եւ յանցանքին, ոչ միայն չի մղեր սաղմոսերգուն
յուսահատութեան կամ վիատութեան այլ կու տայ անոր առիթ, անցնե-
լով սպաշխարութենէն եւ խոստովանանքէն՝ ապրելու համար վերագրու-
նուած արդարութիւնը եւ վերանորոգուած սրբութիւնը:

Սաղմոսին իբրեւ ներշնչարանի խորք, դրուած է Դաւիթի կեանքին
ծանօթ դրուագը. սպանութիւնը Ուրիայի եւ իր մեղքը՝ անոր կնոջ հետ
(2 թագ 9,13):

5– Կը քանչնայ կամ գիտէ մեղքը ոչ թէ իմացական քանաչումով այլ
վիրաւորող փորձառութեամբ եւ ասոր համար տարուած է վիրաւոր
սիրտը եւ խիղճը յանձնելու Աստուծոյ գթութեան:

7– Սաղմոսերգուն մեղքին արմատները կը տեսնէ խորունկութեան
մէջ մարդուն բնութեան, առանց մերժելու անհատական պատասխանա-
տուութիւնը:

- 8 Դուռն, Տէր, ճշմարտութիւնը սիրեցիր, եւ քու իմաստութեամբդ՝ անյայտ եւ ծածուկ բաները յայտնեցիր ինծի:
- 9 Յօ՛ղէ՛ զիս մշտիկով, եւ պիտի մաքրուիմ, լուա՛ զիս, եւ ձիւնէն աւելի սպիտակ պիտի դառնամ:
- 10 Ըրէ՛ որ լսե՛մ ցնծութեան եւ ուրախութեան ձայները, որպէսզի ցնծան տառապած ոսկորներս:
- 11 Դարձո՛ւր երեսդ իմ մեղքերէս, եւ քաւէ՛ բոլոր անօրէնութիւններս:
- 12 Մաքուր սիրտ մը հաստատէ ներսս, Աստուած, եւ ուղղամիտ հոգի մը ստեղծէ կուրծքիս տակ:
- 13 Զիս մի՛ թողուր, Տէ՛ր, քու երեսդ, եւ քու սուրբ Հոգիդ մի՛ առներ ինծմէ:
- 14 Փրկութեան ցնծութիւնը պարգեւէ ինծի, եւ տէրութեանդ հոգին հաստատէ իմ մէջս:

8- Իմաստութիւնը պիտի տայ մեղաւորին կարելիութիւնը գտնելու եւ Քօղագերծելու թաքնուած մեղքերը (Յք 11,6): Կը հայի մարդուն խղմնտանքին որ յաճախ այնքան մթին է:

12- Մեղքին ամբողջ գարհուրանքը իրականացնել ետք, սաղմոսերգուն կը հայցէ Աստուծմէ կրկնութիւնը արարչագործութեան հրաշքին, որպէս զի ներումով եւ սրտին եւ հոգիին վերանորոգումով, երեսն գայ նոր մարդը իբրեւ նոր արարած: Սրտի մաքրութեան հետ կը խնդրէ հոգին հաստատ, այսինքն գերբնական ոյժը աստուծային փրկութեան, որպէս զի խուսափի մեղքէն (Յզկ 36,25-27):

14- Հոգին վեհանձն կամ բարի, Աստուծոյ բարի հոգին է որ իբրեւ

- 15 Ես ճամբաներդ պիտի սորվեցնեմ անօրէններուն, եւ ամբարիշտները քեզի՛ պիտի դառնան:
- 16 Փրկէ՛ զիս արիւնէն, Աստուած, իմ փրկի՛չս Աստուած, եւ լեզուս պիտի ցնծայ քու արդարութեամբդ:
- 17 Տէ՛ր, եթէ չըջունքներս բանաս, բերանս քու օրհնութիւններդ պիտի երգէ:
- 18 Եթէ ուզէիր՝ պատարագներ կը մատուցանէինք քեզի-բայց դուն ողջակէզները չբաղձացիր:
- 19 Աստուծոյ հաճոյ պատարագը՝ խոնարհ հոգին է, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին՝ Աստուած չ'արհամարհեր:

պահպան հրեշտակ պիտի ընկերանայ մարդուն եւ պիտի պահպանէ նոր անկումէ:

16- Սաղմոսերգուն կը խնդրէ խուսափիլ յանկարծական կամ վաղա-հաս մահէն, որ համարուած էր պատիժ մեղքին: Անցքը կրնայ համար-ւիլ ակնարկութիւնը Ուրիայի սպանութեան:

18- Մեղքերուն ներումը եւ հոգիին մաքրութիւնը սաղմոսերգունին ըմբռնումով կը տանին հոգեւոր եւ գերբնական կեանքի գագաթները: Սրտաքին ձեւակերպութիւնները չեն որ կ'ապահովեն ներումը, եթէ չկայ սրտին արմատական յեղաշրջումը եւ անոր ողջակիգումը գերդ ողջա-կէզ, աստուծային սիրոյ խորանին վրայ:

19- Աստուծաշունչին ամէնէն յուզիչ եւ խորունկ ուսուցումն է որ կը հայի աստուծային սիրոյն եւ գթութեան, վաստակարեկ եւ խոնարհ հոգիին հանդէպ: Քրիստոսի կոչը «Ինծի եկէ՛ք» կը հոչակէ աստուծա-յին նախասիրութիւնը խոնջ եւ խոնարհ հոգիներուն նկատմամբ (Յս 57-15):

20 Քու կամքովդ՝ բարիք շնորհէ, Տէ՛ր, Սիրոնի, եւ Երուսաղէմի պարիսպները թող շինուին:

21 Այն ատեն դուն սիրով պիտի ընդունիս արդարութեան պատարագները, եւ իբրեւ ուխտի պատարագ՝ զուարակներ պիտի հանուին քու սեղաններուդ վրայ:

ՍԱՂՄՈՍ 51/52

Զարին դատաստանը եւ բարիին վարձատրութիւնը

- 1 Իմաստութեան աւարտին: Սաղմոս Դաւիթի:
- 2 Այն ժամանակ, երբ Դովեկ պատմեց Սաւուղին թէ՛ Դաւիթ Աֆիմեյեֆի տունը կը գտնուի:
- 3 Ինչո՞ւ հզօրը իր չարութեամբ կը պարծենայ՝ երբ անօրէնութիւն կը գործէ:
- 4 Ամբողջ օրը անիրաւութիւն խորհեցաւ իր լեզուով, եւ ինչպէս ածելին՝ այնպէ՛ս սրեց իր նենգութիւնը:

1- Պաղատանք բարձրացնող սաղմոսերգուն համոզուած է աստուծային արդարութեան միջամտութեան: Կը հակադրէ ամբարիշտին բախտին, որ սահմանուած է կործանումի, արմատախլուժի կենդանիներու երկրէն (հ.7), արդարին բախտը: Արդարը՝ գերդ պտղատու ձիթենի, պիտի պտղաբերէ Աստուծոյ տան մէջ:

5 Չարութիւնը սիրեց աւելի քան բարութիւնը, եւ անօրէնութիւնը՝ արդար խօսքէն աւելի:

6 Ան սիրեց ամէ՛ն կործանարար խօսք եւ նենգաւոր լեզուներ:

7 Ասոր համար՝ Աստուած պիտի կործանէ զայն ի սպառ. պիտի խլէ եւ իր բնակութենէն դուրս պիտի հանէ զայն եւ անոր արմատները՝ ողջերու աշխարհէն:

8 Արդարները պիտի տեսնեն եւ երկիւղով պիտի լեցուին, պիտի ծիծաղին անոր վրայ ու պիտի ըսեն.

9 Ա՛յս է այն մարդը, որ իրեն օգնական չըրաւ զԱստուած, այլ իր մեծ հարստութեան վրայ վստահեցաւ, եւ իր դատարկութեան մէջ կարծրացաւ:

10 Բայց ես, պտղալից ճիթենիի մը նման, Աստուծոյ տան մէջ, Աստուծոյ ողորմութեան վրայ դրի իմ յոյսս, յաւիտեանս յաւիտենից:

5-«Սիրեց չարութիւնը» Սաղմոսին յանդիմանութիւնը կը յիշեցնէ մարգարէինը. (Ես 5,20) «Վա՛յ անոնց որ բարի կը կոչեն չարը, եւ չար՝ բարին, կը փոխեն խաւարը լոյսի եւ լոյսը՝ խաւարի»:
10-Մշտադալար եւ պտղատու ծառին պատկերով (Սղմ 1,3) կը պատկերացնէ արդարին բախտը եւ կը հակադրէ գայն ամբարիշտին վախճանին: Արդարին երջանկութեան առնչութիւնը Աստուծոյ տան եւ Աստուծոյ հետ կը շեշտուի մտեւ (Սղմ 91,13-14) անցքին մէջ:

11 Ես յաւիտեան՝ պիտի փառաւորեմ՝ քեզ,
 որովհետեւ դո՛ւն ըրիր ամէն բան.
 քու անունի՛դ կը վստահիմ,
 որովհետեւ քա՛ղցր է ան քու սուրբերուդ առջեւ:

ՍԱՂՄՈՍ 52/53

Անգգամ մարդուն վիճակը

Աւարտին: Մալախիի համար. Դաւիթի իմաստութիւնը:

- 1** Անգգամը ըսաւ իր սրտին մէջ՝ Աստուած չկա՛յ.
- 2** ապականեցան ու պղծուեցան իրենց անօրէնութեան մէջ,
 չկա՛յ մէկը որ արդար գործեր ընէ:
- 3** Աստուած երկնքէն նայեցաւ մարդոց զաւակներուն,
 տեսնելու համար թէ կա՞յ արդեօք իմաստուն մէկը
 որ զԱստուած փնտռէ:
- 4** Բոլո՛րն ալ խոտորեցան եւ միասին անպիտան դարձան:
 Չկայ մէկը որ բարին գործէ, չկայ ոչ իսկ մէ՛կ հոգի:
- 5** Ինչպէ՞ս չհասկցան անոնք բոլորը՝
 թէ անօրէնութիւն կը գործեն.
 անոնք իմ ժողովուրդս կ'ոտտէին իբր կերակուրի հաց,
 եւ Աստուծոյ չեն դիմէր:
- 6** Երկիւղը պիտի պատէ զանոնք՝ երբ երկիւղի պատճառ չկայ:
 Աստուած պիտի ցրուէ ոսկորները անոնց՝
 որ կ'ուզեն մարդահաճոյ ըլլալ:

Անոնք պիտի ամչնան ու պիտի խայտառակուին,
 որովհետեւ Աստուած արհամարհած է զանոնք:

7 Ո՞վ փրկութիւն պիտի տայ Սիոնէն՝ Իսրայէլի.
 երբ Տէրը գերութենէ վերադարձնէ իր ժողովուրդը՝
 պիտի ցնծա՛յ Յակոբ եւ պիտի ուրախանա՛յ Իսրայէլը:

ՍԱՂՄՈՍ 53/54

Աղօթք՝ թշնամիներէն պաշտպանուելու համար

- 1** Աւարտին: Օրհնութիւններուն հետ: Դաւիթի իմաստու-
 թիւնը:
- 2** Այն ժամանակ՝ երբ Զիրացիները եկան եւ Սաւուղին ըսին
 թէ՛ Ահա Դաւիթը մեր քով պահուըտած նստած է:
- 3** Ո՞վ Աստուած, ազատէ՛ զիս քու անունովդ,
 եւ քու զօրութեամբդ իրաւունք տուր ինձի:
- 4** Լսէ՛ աղօթքնե՛րս, Աստուած՝,
 եւ ակա՛նջ դիր բերանիս խօսքերուն:

3–Պարզ եւ վնիտ ռեով այս սաղմոսը գոհար մըն է իր տեսակին մէջ:
 Նմոյշ մըն է ողբի որ նուագագոյն ընդլայնումով կը բովանդակէ այս տե-
 սակի սաղմոսներուն բոլոր միաւորները: Ներմուծող պաղատանքը (հ.
 3–4) հալածանքը՝ որուն ենթարկուած է սաղմոսերգուն (հ. 5) վստահու-
 թիւնը աստուածային օգնութեան վրայ (հ. 6) չարամաղթութիւնը թշնա-
 միներուն դէմ (հ. 7) խոստումը գովաբանութեան (հ. 8) եւ սպահովու-
 թիւն ընդունելու խնդրանքը (հ. 9):

5 Օտարները իմ դէմս ելան, հզօրները ուզեցին խլել հոգիս, եւ քեզ Աստուած չհամարեցան իրենց առջեւ:

6 Ահա Աստուած իմ օգնականս է, եւ Տէ՛րն է իմ հոգւոյս ապաւէնը:

7 Չարիքները թշնամիներուս վրայ դարձնելով՝ քու ճշմարտութեամբը ոչնչացո՛ւր զանոնք:

8 Ես յօժար կամքով պատարագ պիտի մատուցանեմ քեզի, եւ քու անունդ պիտի փառաբանեմ, Տէ՛ր, որովհետեւ լաւ բան է այդ:

9 Իմ բոլո՛ր նեղութիւններէս փրկեցիր զիս, եւ աչքովս տեսայ իմ թշնամիներուս վիճակը:

ՍԱՂՄՈՍ 54/55

Աղօթք հալածանքի առեմ

1 Աւարտին: Իմաստութեան օրհնութիւններուն հետ:

Սաղմոս Դաւիթի:

2 Լսէ՛ աղօթքս, ո՛վ Աստուած, եւ անտես մի՛ ըներ խնդրանքս:

1- Սաղմոսը անհատական ողբ մըն է: Ողբը կը բաժնուի հետեւեալ մասերուն. պաղատանքը (հ. 2-4). ողբը (5-16). վստահութեան յայտարարութիւնը, (17-23) եւ եզրակացութիւնը (հ. 24):

3 Նայէ՛ ինծի եւ լսէ՛ զիս, որովհետեւ յուսալքուեցայ, ընկճուեցայ եւ խռովեցայ:

4 Թշնամիին դրդումով եւ մեղաւորին պնդումին վրայ՝ անոնք վրա՛ս ինկան անիրաւութեամբ, բարկութեամբ լեցուած՝ ոխ պահած էին ինծի դէմ:

5 Սիրտս խռովեցաւ կուրծքիս տակ, եւ մահուան երկիւղը պատեց զիս:

6 Ահ ու դող եկաւ վրաս, եւ խաւարը ծածկեց զիս:

7 Եւ կ'ըսէի, երանի՛ մէկը աղաւնիի թեւեր տար ինծի, որ թռչէի, բարձրանայի,

8 եւ հեռանալով՝ անապատի մէջ հանգիստ գտնէի:

9 Ես Աստուծոյ վրայ դրած եմ իմ յոյսս, որ փրկէ զիս վհատութենէ, եւ չբորբոքիմ պոռթկացող նեղսրտութենէս:

10 Խեղդէ՛, Տէր, եւ պառակտէ՛ անոնց լեզուն, որովհետեւ անօրէնութիւն եւ հակառակութիւն տեսայ քաղաքին մէջ:

11 Անօրէնութիւններ կը գործուին անոր պարիսպներուն շուրջ՝ գիշեր ցերեկ, չարիքն ու մեղքը կը տիրեն անոնց մէջ:

12 վաշխառութիւնն ու գեղծարարութիւնը չանհետացան անոր հրապարակներէն:

13 Եթէ թշնամին նախատէր զիս՝ գուցէ համբերէի՝ կամ՝ եթէ զիս ատողն ըլլար վրաս յոխորտացողը, թերեւս կրնայի խուսափիլ անկէ։

14 Իսկ դուն՝ մա՛րդ ես ինծի հաւասար, իմ առաջնորդս ու ծանօթս։

15 Արդարեւ, երկուքս ալ կը մասնակցէինք նո՛յն կերակուրի վայելքին եւ միասին կը գործակցէինք Աստուծոյ տան մէջ։

16 Թող մահը հասնի անոնց վրայ, եւ ողջ ողջ դժոխք թող իջնեն անոնք, որովհետեւ չարութիւնը կը տիրէ անոնց վարմունքին մէջ եւ անոնց ներսը։

17 Ես Աստուծո՛յ աղաղակեցի, եւ Տէրը լսեց զիս։

18 Իրիկունը թէ առաւօտը եւ կէսօրին, ես պատմեցի անոր եւ ամէն բան ըսի, եւ ան լսեց ձայնս։

19 Ան խաղաղութեամբ պիտի փրկէ իմ հոգիս՝ անոնցմէ որ ինծի կը մօտենան, եւ բազմութեամբ կը հասնին իմ վրաս։

20 Աստուած պիտի լսէ զիս եւ պիտի խոնարհեցնէ զանոնք, ան՝ որ յաւիտեանականութենէն առաջ կայ. որովհետեւ անոնք պիտի չփոխուին, քանի որ Աստուծո՛մէ չեն վախնար։

21 Ան երկարեց իր ձեռքը՝ պէտք եղած հատուցումը ընելու համար անոնց. իսկ անոնք՝ պղծեցին անոր Օրէնքները։

22 Անոնք նկատի չառին անոր երեսին բարկութիւնը, եւ ան հարուածեց զանոնք իրենց սրտէն. անոնց խօսքերը ձէթէն աւելի կակուղ էին, բայց իրաւամբ սլաքի կը նմանէին անոնք։

23 Տիրոջ վրայ ձգէ հոգերդ, եւ ան կը կերակրէ քեզ, որովհետեւ յաւիտեան՝ պիտի չթողու որ արդարը սասանի։

24 Ո՛վ Աստուած, դուն զանոնք պիտի իջեցնես ապականութեան գուբը. արինահեղ եւ նենգաւոր մարդիկ, իրենց կեանքին կէսին անգամ պիտի չհասնին. իսկ ես, Տէ՛ր, քո՛ւ վրադ դրած եմ իմ յոյսս։

ՍԱՂՄՈՍ 55/56

Արդարը երբեք յուսախաբ պիտի չըլլայ

1 Աւարտին։ Ժողովուրդին համար, որ հեռացած էր սուրբերէն, երբ այլագգիները Դաւիթը բռնած էին Գէթի մէջ արձանագրուելու համար. սաղմոս Դաւիթի։

23–Աղօթ–ողբին աւարտին, սաղմոսերգուին սրտին մէջ կ'իջնէ խաղաղութիւնը որ կը բխի անվերապահ վստահութենէն Աստուծոյ բարութեան եւ արդարութեան վրայ։ Կը յորդորէ ինքզինք հոգերը պարպելու Աստուծոյ սրտին մէջ որովհետեւ Տերը չի լքեր արդարը։

- 2 Ողորմէ՛ ինծի, Աստուած,
որովհետեւ մէկը ոտնակոխ կ'ընէ գիս․
անվերջ պատերազմներ կը նեղեն գիս:
- 3 Թշնամիներս կոխկուտեցին գիս ամբողջ օրը,
բարձունքներու վրայ բազմացան ինծի դէմ կռուողները:
- 4 Ես չեմ վախնար ցերեկը,
որովհետեւ Տիրոջ վստահած եմ:
- 5 Իմ խօսքերս Աստուծոյ գովքը կը հիւսեն․
ես Աստուծոյ վրայ դրած եմ իմ յոյս եւ չեմ վախնար․
ի՞նչ կրնայ ընել ինծի մարդը:
- 6 Անոնք խօսքերս արհամարհեցին շարունակ,
եւ կը խորհէին թէ ինչպէս չարիք ընեն ինծի:
- 7 Թափառական պիտի դառնան եւ գաղտնաբար պիտի շրջին,
անոնք գարշապարիս դարան պիտի լարեն,
ինչպէս որ կը լարէին իմ կեանքիս դէմ:
- 8 Ինչպէս չնչին պատճառով կը մերժես զանոնք, Աստուած,
այնպէս ալ բարկութեամբդ նուաճէ՛ ժողովուրդները:

2-Սաղմոսը ողբ մըն է երկու հանգրուաններով․ խնդրանքին կատարումէն առաջ եւ ետքը: Սաղմոսներուն կը ներկայանայ տանաբար՝ կատարելու համար իր ուխտը եւ մատուցանելու գոհութեան գոհը: Կը վերապրի կեանքին այն օրերը, երբ մնչուած էր քշնամիներէն (հ․ 3,6-7), բայց հաստատ յոյսով պապիւնած էր Աստուծոյ:

- 9 Ես կեանքս պիտի պատմեմ քեզ
եւ արցունքներս պիտի դնեմ քու առջեւդ,
ինչպէս որ դո՛ւն պատուիրած էիր ինծի:
- 10 Այն օրը ուր քեզի ուղղեմ աղաչանքս,
իրենց ետին պիտի դառնան թշնամիները․
ահա ես ճանչցայ՝ թէ դո՛ւն ես իմ Աստուածս,
իմ բառերո՛վս պիտի օրհնեմ զԱստուած,
եւ Տէրը պիտի գովաբանեմ խօսքերովս:
- 11 Աստուծոյ վստահեցայ, եւ պիտի չվախնամ․
ի՞նչ կրնայ ընել ինծի մարդը:
- 12 Ասո՛նք են իմ ուխտերս, Աստուած,
զորս օրհնութեամբ կը մատուցանեմ քեզի:
- 13 Դուն իմ կեանքս փրկեցիր մահէն,
աքչերս արցունքներէն եւ ոտքերս՝ սայթաքումէ․
ուստի հաճելի՛ պիտի ըլլամ Տիրոջ՝ ողջերու երկրին մէջ:

9-Արդար մարդուն տառապանքները չեն կորսուիր, մասնակցութիւն են Քրիստոսի չարչարանքներուն, ինչպէս չեն կորսուիր, առանձնութեան մէջ եւ թափուն կերպով ցօղուած շիթերն արցունքին: Անոնք արդարին լուռ եւ յարատեւ աղօթքն են որ կը հայցեն Տիրոջ միջամտութիւնը:

10-Աստուած մեզի հետ, Աստուածն է որ յարատեւօրէն կը փրկէ վտանգէ, վիշտերէ եւ կը պահէ մեզ հաւատքի յոյսերուն մէջ: Մահուան թագաւորութիւնը եթէ խաւարինն է (Յբ 33,28-30), հաւատքի աշխարհին թագաւորութիւնը, յոյսի թագաւորութիւնն է: Կեանքին մթութիւնները կը հալին Աստուծոյ յոյսին առջեւ:

ՍԱՂՄՈՍ 56/57

Խնդրանք Աստուծոյ գթութեան

1 Աւարտին: Մի՛ ապականեր: Դաւիթի արձանագիր: Այն ժամանակէն, երբ Դաւիթ, Սաւուղէն փախչելով, քարայրի մէջ պահուրտած էր:

2 Ողորմէ՛ ինծի, Աստուած, ողորմէ՛ ինծի, որովհետեւ հոգիս քու վրադ դրած է իր յոյսը. քու թեւերովդ հովանիին վրայ դրած եմ իմ յոյսս, մինչեւ որ անցնի՝ անօրէնութիւնը:

3 Բարձրեալ Աստուծոյն աղաղակեցի, ա՛յն Աստուծոյն որ բարերարս է:

4 Ան երկինքէն օգնութիւն զրկեց ինծի եւ ազատեց զիս, եւ խայտառակեց անոնք որ զիս ոտնակոխ կ'ընէին. իր ողորմութիւնն ու ճշմարտութիւնը զրկեց Աստուած,

5 եւ փրկեց իմ հոգիս զազաններու մէջէն, որովհետեւ ես խռոված վիճակով կը ննջէի. մարդոց ակռաները իրենց զէնքերն ու նետերն են, եւ սուրի նման հատու են անոնց լեզուները:

6 Դուն բարձրեալ ես երկնքի մէջ, Աստուած, եւ քու փառքդ ամբողջ երկրիս վրայ է:

6-«Դուն բարձրեալ ես երկինքի մէջ», Աստուծոյ բարձրացումն է իբրև տիեզերական թագաւորի եւ դատաւորի, որ կը գործէ ի նպաստ արդարին: Անոր փառքը կամ տէրութիւնը երկրի վրայ, յայտնութիւնն է

7 Իմ ոտքերուս որոգայթներ պատրաստեցին, խոնարհեցուցին հոգիս, խորխորատ փորեցին առջեւս, բայց իրենք ինկան անոնց մէջ:

8 Պատրաստ է սիրտս, Աստուած, պատրաստ է սիրտս՝ քեզ օրհնելու եւ սաղմոս հիւսելու քեզի, փառաւոր կերպով:

9 Արթնցի՛ր, փառքս, արթնցի՛ր սաղմոսներով եւ օրհնութեան երգերով, որպէսզի ես ալ արթննամ առաւօտները:

10 Պիտի օրհնաբանեմ քեզ, Տէ՛ր, ժողովուրդներու առջեւ, ազգերուն մէջ սաղմոսներ պիտի երգեմ քեզի:

11 Մինչեւ երկինք բարձրացաւ քու ողորմութիւնդ, մինչեւ ամպերը հասաւ ճշմարտութիւնդ:

12 Դուն բարձրեալ ես երկինքի մէջ, ամբողջ երկրիս վրայ է քու փառքդ:

ՍԱՂՄՈՍ 57/58

Դատաւորներու դատաւորը

1 Աւարտին: Մի՛ ապականեր: Արձանագիր սաղմոս, Դաւիթէն:

Աստուծոյ գործօն ներկայութեան, որ տաճարէն կը ցատկալքէ ամբողջ երկրի վրայ (Յս 6,3):

- 2 Եթէ դուք իրապէս արդարութիւնը խօսէիք, ուղիղ դատաստան պիտի ընէիք, մարդո՛ւ ուղիներ:
- 3 Որովհետեւ երկրիս վրայ, նոյնիսկ հիմա, դուք անօրէնութիւն կը գործէք ձեր սրտին մէջ, եւ ձեր ձեռքերը անիրաւութիւն կը նիւթեն:
- 4 Մեղաւորները ի ծնէ այլասերած են, եւ արգանդէ՛ն իսկ խաբէութեամբ տարուած են եւ սկսած են սուտ խօսիլ:
- 5 Անոնց դաւնութիւնը օձի կը նմանի, եւ ինչպէս ի՞ժն ու քարբը՝ անոնք կը խցեն իրենց ականջները,
- 6 որպէսզի չլսեն վարպետ թովիչին ձայնը, եւ չկարենայ իմաստուն դեղագէտէն դեղ առնել:
- 7 Սակայն Աստուած պիտի փշրէ անոնց ակռաները իրենց բերնին մէջ՝ Տէրը առիւծներու ժանիքներն անգամ կը խորտակէ:
- 8 Անոնք անպէտ պիտի դառնան թափուած ջուրի նման՝ լարուած աղեղին նման ուժաթափ պիտի ըլլան,

2- Սաղմոսը բուն հարցադրութիւնն է յոռի կռուարիչներուն եւ արդարութիւնը անիրաւութեամբ մատակարարողներուն: Երկու երեւոյթներն են ընկերային եւ հաւաքականութեան կեանքին, որոնք կը փաշտեան ստահակութիւնը, ոնիրը, աշտութիւնը եւ գեղծարար կողմակալութիւնը: Սաղմոսերգուն կը հայցէ անհետացումն այս երեւոյթներուն, որպէս զի արդար եւ պարկեշտ մարդիկը ապրին խաղաղ:

- 9 եւ պիտի սպառնին՝ ինչպէս մոմը որ կը հալի:
- 10 Կրակը ինկաւ անոնց մէջ, եւ անոնք արեւը չտեսան, մինչեւ որ անդրադառնան թէ փուշերը պատած են զիրենք, եւ եղջերափուշը իր բարկութեամբ ողջ ողջ կ'այրէ զանոնք:
- 11 Արդարը պիտի ուրախանայ ի տես այսպիսի հատուցման, եւ մեղաւորի արիւնին մէջ պիտի լուայ իր ձեռքերը:
- 12 Եւ ամէն մարդ պիտի ըսէ թէ արդարին պտուղն է այս, եւ Աստուած մը կայ որ կը դատէ զանոնք երկրի վրայ:

ՍԱՂՄՈՍ 58/59

Աստուած է մեր զօրութիւնը

- 1 Աւարտին: Մի՛ ապականեր, արձանագիր Դաւիթի. այն ժամանակ, երբ Սաւուղ մարդ դրկեց եւ անոր տունը պաշարեց, զայն սպաննելու համար:
- 2 Փրկէ՛ զիս, ո՛վ Աստուած, իմ թշնամիներէս, ազատէ՛ զիս անոնցմէ որ ինձի դէմ ելած են:
- 3 Փրկէ՛ զիս անոնցմէ որ անօրէնութիւն կը գործեն, ազատէ՛ զիս արիւն թափող մարդոցմէ:

12- «Կայ Աստուած մը», որ կը դիտէ եւ կը տեսնէ մարդը անհատական կամ ընդհանրական դատաստանէն առաջ: Արդարին համար, կայ վարձատրութիւնը որ դրուած է պահեստի, որուն նախաճաշակը Աստուած կրնայ պարգեւել անոր կենդանութեան:

- 4 Ուզեցին որսալ իմ հոգիս,
եւ հզօրները հասան իմ վրաս:
- 5 Ո՛չ մեղք ունիմ, ո՛չ ալ յանցանք,
առանց մեղքի ապրեցայ եւ ամբասիր եղայ միշտ·
զարթի՛ր, կանգնէ՛ իմ առջե՛ւս եւ տե՛ս:
- 6 Դո՛ւն, զօրութիւններո՛ւ Տէր, Աստուածդ Իսրայէլի,
նայէ՛, եւ հետապնդէ՛ բոլոր հեթանոսները,
մի՛ ողորմիր ո՛չ մէկու որ անօրէնութիւն կը գործէ:
- 7 Թող վերադառնան երեկոյին,
թող սոված մնան շուներու նման,
եւ քաղաքին շուրջ թող դեգերին:
- 8 Թող հաջեն անոնք իրենց բերաններով,
թող սո՛ւր ըլլայ անոնց շրթունքներուն վրայ·
բայց ո՞վ պիտի լսէ զիրենք:
- 9 Որովհետեւ դուն, Տէ՛ր, պիտի ծիծաղիս անոնց վրայ,
եւ պիտի արհամարհես բոլոր հեթանոսները:
- 10 Ես ամբողջ ոյժս քեզմէ՛ կը սպասեմ·
որովհետեւ Աստուած է իմ օգնականս:

6–Սաղմոսերգուն կ'ապրի հեթանոս աշխարհի մէջ որ կը հեզմէ անոր հաւատքը: Տիրոջ այցելութիւնը համարուած է իբրեւ միջամտութիւնը պաշտպանութեան՝ արդարներուն եւ պատիժի՝ Տիրոջ քշմամբներուն (Նվ 3,16· Սմս 3,2· Ովս 9,7· Ես 10,5· Երմ 9,24· Ղկ 7,16):

- 11 Ան իմ Աստուածս է եւ անոր ողորմութիւնը կը հասնի ինծի,
եւ իմ Աստուածս ցոյց պիտի տայ զիս իմ թշնամիներուս:
- 12 Մի՛ սպաններ զանոնք, որ չմոռնան քու ժողովուրդդ·
ցրուէ՛ զանոնք քու զօրութեամբդ եւ ընկճէ՛ զանոնք,
որովհետեւ դո՛ւն ես իմ պաշտպանս, Տէ՛ր:
- 13 Մեղքը՝ իրենց բերնին եւ խօսքը՝ իրենց շրթունքներուն,
թող ընկղմին իրենց ամբարտաւանութեան մէջ,
եւ անէծքի ու ստույթեան թող մատնուին:
- 14 Երբ բարկութիւնը դադրի, պիտի ջնջուին եւ անհետանան·
անոնք թող գիտնան թէ Աստուած կը տիրէ Յակօբին,
եւ երկրի բոլո՛ր ծագերուն վրայ:
- 15 Պիտի վերադառնան երեկոյին,
սոված պիտի մնան շուներու նման,
եւ քաղաքին շուրջը պիտի թափառին:
- 16 Անոնք ամէն կողմ պիտի դեգերին՝ ուտելիք փնտռելով,
եւ եթէ չյագենան՝ պիտի հայհոյեն:
- 17 Ես օրհնութեան երգերով պիտի օրհնաբանեմ Տէրը,
եւ առաւօտէն պիտի ցնծամ քու ողորմութեամբդ,
- 18 որովհետեւ դուն եղար իմ պաշտպանս
եւ ապաստանի տունս՝ նեղութեանս օրերուն:
- 19 Դո՛ւն ես իմ օգնականս, սաղմոս պիտի երգեմ քեզի,
Աստուած, իմ ապաւէ՛նս, իմ ողորմած Աստուածս:

ՍԱՂՄՈՍ 59/60

Աղօթք՝ ձախողութեան մէջ

- 1 Աւարտին: Անցեալ ժամանակներէն, ուսանելու համար:
- 2 Այն ժամանակէն՝ երբ ան հրդեհի տուաւ Միջագետքը եւ Սոբոլի Ասորեստանը՝ եւ վերադարձին՝ Յովար, Աղտից Ջորին մէջ, տասներկու հազար հոգի հարուածեց. արձանագիր-սաղմոս Դաւիթի:
- 3 Աստուած, դուն մերժեցիր եւ աւերեցիր մեզ, բարկացար, բայց պիտի գլխաս մեր վրայ:
- 4 Երկիրը շարժեցիր եւ խռովութեան մատնեցիր գայն, բժշկէ՛ անոր հարուածները, որովհետեւ սասանեցաւ ան:
- 5 Դուն խստութեամբ վարուեցար քու ժողովուրդիդ հետ, եւ մեզի գինի մը խմել տուիր որ կ'արբեցնէ:
- 6 Նշան մը տուիր անոնց որ երկիւղ ունին քեզի հանդէպ, որպէսզի ազատ մնան աղեղի հարուածէն:
- 7 Ինչպէս որ փրկուեցան քու սիրելիներդ, այնպէս ազատէ՛ մեզ քու աջովդ եւ լսէ՛ մեզ:
- 8 Աստուած խօսեցաւ իր սրբարանէն, է՛ս ալ պիտի բարձրանամ, պիտի բաժնեմ Սիւքեմը, եւ Յարկաց Հովիտները պիտի չափեմ:

5- Արբեցնող գինին, պատկերն է աստուածային բարկութեան (Սղմ 74,10. Եւ 51,17):

- 9 Ի՛մս է Գաղաադը, ի՛մս է Մանասէն, գլխուս զօրավիզն է Եփրեմ, թագաւորս է Յուդան, եւ Մովաբն է իմ յոյսիս աւագանը:
- 10 Եղովմէն պիտի ուղղեմ քայլերս, եւ այլազգիները հնազանդեցան ինծի:
- 11 Ո՞վ պիտի տանի զիս դէպի ամրացած քաղաքը, կամ ո՞վ մինչեւ Եղովմ պիտի առաջնորդէ ինծի,
- 12 եթէ ոչ՝ դո՛ւն, Աստուած, որ մերժեցիր մեզ, եւ պատերազմի չեյար մեր զօրքերուն հետ, Աստուած՝:
- 13 Օգնէ՛ մեզի մեր նեղութեան մէջ, որովհետեւ աւերող է փրկութիւն յուսալ մարդոցմէ:
- 14 Մեծ գործեր պիտի կատարենք Աստուծով, եւ ան պիտի խոնարհեցնէ անոնք որ մեզ կը նեղեն:

ՍԱՂՄՈՍ 60/61

Ափսոսանքի աղօթք

- 1 Աւարտին: Օրհնութեան հետ: Սաղմոս Դաւիթի:
- 2 Լսէ՛ աղօթքներս, Աստուած, եւ նայէ՛ աղօթքերուս, Տէ՛ր:

2- Սաղմոսը ողբն է դեւտագիի մը որ տարագիր՝ կը գտնուի տաճարէն եւ Աւետեաց երկրէն հեռու: Ողբին կը միացնէ մաղթանք-աղօթքը քագաւորին համար (հ. 7-8): Ունի սերտ առնչութիւն մեսիական սաղ-

3 Ես աշխարհիս ծայրէն գոչեցի քեզի,
սիրտս հատնելո՛ւ աստիճան,
դուն զիս ժայռէն աւելի՛ բարձրացուցիր
եւ առաջնորդեցիր ինձի:

4 Դո՛ւն եղար իմ յոյսս, եւ իբրեւ հօօր աշտարակ՝
դուն կանգնեցար թշնամիին դէմ:

5 Ես քու յարկերուդ մէջ պիտի բնակիմ յաւիտեան,
եւ քու թեւերուդ հովանիին տակ պիտի ծածկուիմ:

6 Դուն, ո՛վ Աստուած, լսեցիր իմ աղօթքս,
եւ ժառանգութիւն տուիր անոնց՝ որ կ'երկնչին անունէդ:

7 Օրե՛ր աւելցուցիր թագաւորին կեանքին օրերուն վրայ-
օրեր՝ որոնք անոր ազգէն մինչեւ ազգերը պիտի հասնին:

8 Աստուծոյ առջեւ՝ ողորմութիւնն ու ճշմարտութիւնը
յաւիտեան կան եւ կը մնան,
անոնց համար որ այդ կը ինդրեն իրմէ:

9 Այսպէ՛ս սաղմոս պիտի երգեմ քեզի,
յաւիտեանս յաւիտենից,
եւ քեզի պիտի նուիրեմ օրը օրին աղօթքս:

մոսներուն հետ (71 եւ 88): Քրիստոնեայ աւանդութիւնը այս սաղմոսը կը պատշանեցնէ Քրիստոս թագաւորին:

ՍԱՂՄՈՍ 61/62

Աստուած է մեր միակ յոյսը

1 Աւարտին: Իդիթովմի վրայ: Սաղմոս Դաւիթի:

2 Աստուծո՛յ միայն հպատակէ, հոգի՛ս,
որովհետեւ իրմէ՛ է միայն փրկութիւնս:

3 Ա՛ն է իմ Աստուածս, ա՛ն է իմ Փրկիչս ու ապաւէնս,
որ չսասանիմ երբեք:

4 Մինչեւ ե՞րբ ամէնքդ պիտի յարձակիք մարդուն վրայ՝
զայն սպաննելու համար, ինչպէս կքած պատին վրայ,
կամ դուրս քաշուած ցանկապատին վրայ:

5 Անոնց միակ նպատակն էր՝ պատիւս խլել ինձմէ,
ուստի իրենց ծարաւին համեմատ քալեցին-
մինչ իրենց բերնով կ'օրհնէին՝
իրենց սրտին մէջ անէծք կը կարդային:

2– Ուսուցումի շեշտով ընդլայնում մըն է սաղմոսը: Անոր հեղինակը նախ կ'անդրադառնայ մարդուն չարութեան, կը խորհրդածէ անոր վրայ, կը փաղէ եզրակացութիւնը եւ կը հաղորդէ գայն ժողովուրդին: Ընդունայն եւ աշխարհի արժէքները եւ խոստումները երբ կը ծառայեն մարդուն չարութեան: Այս իրողութեան դիմաց, հոգին կը խաղաղի երբ կը վերանայ մարդուն գոնգոթիւններէն վեր, ինքզինք կը ձերբազատ անոր նեցուկներէն եւ հոգիին հանգիստը, խաղաղութիւնը կը գտնէ Աստուծոյ մէջ:

5– Մարդուն սրտին ստութիւնը կը պղծէ բերանին օրհնութիւնը, որովհետեւ անոր վրայ ինկած է շահագրգոռութեան արատը:

6 Սակայն դուն, հոգի՛ս, Աստուծոյ միայն հպատակէ, որովհետեւ ինքը միայն կու տայ ինծի ոյժ՝ համբերելու համար:

7 Ա՛ն է իմ Աստուածս, ա՛ն է իմ Փրկիչս ու ապաւէնս, որ չսասանիմ երբեք:

8 Աստուծո՛մէ կու գայ զօրութիւնս եւ պատիւս, ա՛ն է գիս փրկող Աստուածս, եւ Աստուծո՛յ վրայ դրած եմ իմ յոյսս:

9 Անո՛ր վրայ դրէք ձեր յոյսը, ժողովուրդներու ժողովներ, անո՛ր առջեւ բացէք ձեր սիրտը, որովհետեւ մեր օգնակա՛նն է Աստուած՝ յաւիտենական ժամանակներու համար:

10 Սակայն ոչի՛նչ է մարդ արարածը, սո՛ւտ են մարդէիկը. կը մեղանչեն իրենց դատողութեան մէջ, եւ միասին ունայնութեան տուած են իրենք զիրենք:

11 Անիրաւութեան վրայ մի՛ դնէք ձեր յոյսը, յափշտակութիւն մի՛ ցանկաք. եւ եթէ նոյնիսկ գետի պէս հոսի հարստութիւնը՝ ձեր սիրտը թող չկապուի անոր:

9–«Բացէ՛ք ձեր սիրտը»... Միայն Աստուած կարող է կարեկցիլ եւ ցօղել միտքարութիւնը: Մարդուն կարեկցութիւնը երբեմն կսկիծ է կսկիծին վրայ: Սրտին բացուածքը Աստուծոյ առջեւ կրնայ նաեւ նշանակել խղճմտանքին բացուածքը ամենատեսն աչքերուն առջեւ Աստուծոյ, որ միայն ունի իշխանութիւնը վարձատրելու:

12 Մէ՛կ անգամ խօսեցաւ Աստուած, եւ այս երկու բաները լսեցի ես. Աստուծո՛մէ՛ կու գայ ամէ՛ն զօրութիւն.

13 Քո՛ւկդ է ողորմութիւնը, Տէ՛ր, կը հատուցանես իւրաքանչիւրին՝ իր գործին համեմատ:

ՍԱՂՄՈՍ 62/63

Աստուծոյ ցանկութիւնը

1 Սաղմոս Դաւիթի: Մինչ ան Հրէաստանի անապատը կը մնար:

2 Աստուած, Աստուած իմ, քեզմո՛վ կը զարթնում առաւօտը. հոգիս ծարաւի է քեզի, որչա՛փ աւելի՛ մարմինս, ինչպէս անապատ ու անջուր հողը, ուր ճամբայ չկայ,

3 ա՛յսպէս պիտի ելլեմ քու դիմացդ, սուրբերուն մէջ, որ տեսնեմ քու զօրութիւնդ եւ փառքդ:

1–Սաղմոսն ամբողջ եռանդնոտ աղօթք մըն է: Սաղմոսներգուն, տարած իր իղձերէն եւ ներշնչումէն, չի դնէր տրամաբան գօղը աղօթքին զանազան մասերու միջեւ: Կը ներկայանայ իբրեւ հալածուած թշնամիներէն (հ. 10,12): Անոր հոգին կը փնտտէ Աստուծոյ ներկայութիւնը եւ օգնութիւնը (հ. 2): Հոգին ծարաւի է Աստուծոյ, ինչպէս չորութենէն ցամփած հողը՝ անձրեւին: Կ'ապաստանի տաճար, վայրը Աստուծոյ ներկայութեան եւ պաշտպանութեան (հ. 8): Գոտած է ելքը փրկութեան եւ կը մնայ Տաճար: Աստուծային վեհոք թշնամիներուն դէմ տակաւին չէ տրուած. սպասումի եւ վստահութեան մէջ, սաղմոսներգուն կը բարձրացնէ իր աղօթքը առ Աստուած:

4 Որովհետեւ ողորմութիւնդ աւելի՛ լաւ է ինծի համար՝ քան կեանքս, ուստի շրթունքներս քե՛զ պիտի գովաբանեն:

5 Այսպէ՛ս պիտի օրհնեմ քեզ կեանքիս ընթացքին, եւ քո՛ւ անունովդ պիտի բարձրացնեմ ձեռքերս:

6 Իմ հոգիս՝ այնպէս պիտի յագենայ՝ ինչպէս պարարտ ճարպէ, եւ բերանս՝ ցնծալի շրթունքով պիտի երգէ օրհնութիւնդ:

7 Ամէն անգամ որ կը յիշէի քեզ իմ անկողինիս մէջ, կ'ելլէի առտուն եւ քեզի հետ կը խօսէի:

8 Քանի որ դուն օգնականս եղար ինծի, ես քու թեւերովդ հովանիին տակ պիտի ցնծամ:

9 Իմ հոգիս քո՛ւ ետեւէդ եկաւ, եւ քու աջդ ընդունեցաւ զիս,

10 Ի զո՛ւր փնտռեցին իմ հոգիս անոնք, եւ երկրի անդունդներուն տակ պիտի մտնեն.

11 սուրի պիտի մատնուին անոնք, եւ աղուէսներու բաժին պիտի դառնան:

7- Հալածեալը որ տաճար կ'ապաստանէր, պարտական էր միջեւ առաւօտ հսկել աղօթքով եւ արշալոյսին՝ ընդունիլ տէրունական վճիռը:
10- «Երկրի անդունդները...» Աստուածաշունչի յատուկ ասացւածքն է՝ նշանակելու համար դժոխքին վայրը: Սաղմոսերգուին մաղթանքը՝ զինք հալածողներուն հասցէին, կը ներդաշնակուի Հիմ Կտակարանի վարձատրութեան ըմբռնումին որ պիտի մաքրագտուի միայն Նոր Կտակարանի ներումի եւ ներողամտութեան հոգիով:

12 Թագաւորը Տիրոջ վրայ դրած է իր յոյսը՝ իրենք իրենց երանի՛ պիտի տան բոլո՛ր անոնք՝ որ անոր անունով կ'ընեն իրենց երդումը: պիտի պապանձին բերանները բոլո՛ր անոնց՝ որ անիրաւ խօսքեր կ'ըսէին:

ՍԱՂՄՈՍ 63/64

Աղօթք՝ չարախօս լեզուներուն դէմ

- 1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:
- 2 Լսէ՛ աղօթքս, Աստուա՛ծ, երբ քեզի կ'ուղղեմ աղաչանքս՝ թշնամիին երկիւղէն ազատէ՛ իմ հոգիս:
- 3 Հովանիիդ տա՛կ առ զիս չարերու խուժանին դիմաց, այն բազմութենէն որ անօրէնութիւն կը գործէ:
- 4 Անոնք սուրբի՛ նման սրած են իրենց լեզուն, եւ դառնաղէտ նպատակներով լարած են իրենց աղեղները,
- 5 գաղտնօրէն արձակելու համար զանոնք անոնց վրայ՝ որ ուղղամիտ են սրտով, յանկարծակիօրէն պիտի արձակեն՝ առա՛նց վախնալու:

1- Սաղմոսը անհատական ողբ-աղօթք մըն է: Անհատ մը, ենթարկւած հալածանքի՝ մարդոց կողմէ ահարկու եւ անխիղճ, հօգօր՝ միայն իրենց նեղութիւններով, կը դիմէ: Տիրոջ եւ կը հայցէ պաշտպանութիւն: Մի՛նչ կը նկարագրէ թշնամիներուն ահարկու եւ չարաշուք պատրաստութիւնները, եւ կը հասնի անոնց աստուածային նետը, կը զգետնէ գանոնք եւ կու տայ ծաղրանքի առարկայ՝ անցորդներուն:

6 Անոնք չարամիտ խօսքերով լեցուցած են իրենց հոգիները, խորհելով ծածկել ինծմէ իրենց լարած որոգայթը, եւ ըսելով՝ Տէրը չի՛ տեսներ այս բաները:

7 Անօրէն գործեր փնտռեցին, եւ աւելորդ տեղ յոգնեցան իրենց որոնումին մէջ:

8 Մարդ՝ իր սրտին խորը պէտք է մտնէ, եւ այն ատեն աւելի պիտի բարձրանայ Աստուած:

9 Մանուկներու նետերն անգամ վիրաւորեցին զանոնք. անոնց լեզուները անգոր դարձան իրենց բերնին մէջ, եւ պիտի խռովին բոլոր անոնք որ զիրենք պիտի տեսնեն:

10 Ամէն մարդ վախցաւ, եւ սկսան Աստուծոյ գործերը պատմել, եւ յիշեցին անոր կատարած գործերը:

11 Արդարը պիտի ուրախանայ Տիրոջմով, եւ անոր վրայ պիտի դնէ իր յոյսը. անով պիտի գովուին բոլոր անոնք որ ուղիղ են սրտով:

ՍԱՂՄՈՍ 64/65

Շնորհակալութեան աղօթք

1 Աւարտին: Դաւիթի սաղմոս: Երեմիայի, Եգեկիէլի եւ Ժողովուրդի օրհնութիւնը՝ երբ կ'ուզէին պանդխտութենէ վերադառնալ:

10- «Ամէն մարդ վախցաւ»... յարգալիր երկիւղն է այդ որ ծնունդ կ'առնէ պարկեշտ եւ լաւ տրամադրուած մարդոց մէջ, ի տես աստուածային արդարութեան յանկարծակաւ միջամտութեան:

2 Քեզի՛ կը վայելէ օրհնութիւնը, Աստուած, Սիրնի մէջ, եւ քեզի՛ պիտի ուղղուին աղօթքները՝ Երուսաղէմի՛ մէջ:

3 Լսէ՛ աղօթքներս, որպէսզի քեզի՛ դառնայ ամէն մարմնաւոր էակ:

4 Անօրէններուն խօսքերը մեզի դէմ զօրացան, բայց դուն պիտի քաւես մեր ամբարիշտ գործերը:

5 Երանի՛ անոր՝ զոր ընտրեցիր եւ ընդունեցար, ան պիտի բնակի քու գաւիթներուդ մէջ. եւ մենք պիտի լիանանք քու տանդ բարիքներով. սո՛ւրբ է քու տաճարդ:

6 Քու սքանչելի արդարութեամբդ լսէ՛ մեզի, Աստուած, որ մեր Փրկի՛չն ես եւ յոյսը երկրին բոլոր՝ ծագերուն, մինչեւ ծովէրը հեռաւոր:

7 Այն որ իր զօրութեամբ լեռները կը կանգնէ, նաեւ զօրութիւն զգեցած է:

8 Ան կը փոթորկէ ընդարձակ ծովերը, եւ կը լռեցնէ անոնց ալիքներուն շառաչը:

9 Թող խռովի՛ն հեթանոսները, թող քու նշաններէդ սարսափին երկրի բնակիչները, թող ուրախանան՝ արեւուն ծագելէն մինչեւ իրիկուն:

10 Դէպի երկիր նայեցար եւ ոռոգեցիր զայն, եւ բազմացուցիր անոր հարստութիւնը: Աստուծոյ գետը ջուրով լեցուեցաւ, եւ դո՛ւն հոգացիր ամէնուն կերակուրը. որովհետեւ ան յապէս եղաւ պատրաստութիւնը:

- 11** Դունն ուռգեցիր անոր ակօսները,
եւ առատացուցիր անոր արմտիքը:
երբ ան ցօղուի՝ անոր բոյսը դարձեալ պիտի կենդանանայ:
- 12** Պիտի օրհնուի՝ տարուայ բարիքներուդ պսակումը-
քու դաշտերդ առատութեամբ պիտի յորդին:
- 13** Անապատները պիտի գեղեցկանան պարարտութեամբ-
բլուրները ցնծութեամբ պիտի համակուին:
- 14** Խոյերու եւ մաքիներու հօտերով պիտի լեցուին-
հովիտները առատ ցորեն պիտի արտադրեն,
եւ ամէն կողմ՝ պիտի աղաղակեն եւ օրհնեն:

ՍԱՂՄՈՍ 65/66

Շնորհակալութեան աղօթք

- 1** Աւարտին: Սաղմոս Դաւիթի: Յարութեան համար:
- 2** Աստուծո՛յ աղաղակեցէք, համա՛յն երկիր,
սաղմո՛ս երգեցէք անոր անունին,
եւ փառաւորեցէք զինքը օրհնութեան երգով:

1–Սաղմոսը կը պատկերացնէ ծիսական գոհաբանութիւնը տաճարին մէջ: Կը յիշուին Աստուծոյ փրկարար միջամտութեան զանազան հանգրվանները: Հ. 13էն անդին հանդիսութիւնը նախագահողը կու տայ իր յորդորը:

- 3** Ըսէ՛ք Աստուծոյ. Որքա՛ն ահեղ են քու գործերդ,
ի տես անչափ զօրութեանդ՝ թշնամիներդ սուտի կը դիմեն:
- 4** Թող համա՛յն երկիրը երկրպագէ եւ սաղմոս երգէ քեզի,
թող սաղմո՛ս հնչեցնեն անոնք քու անունիդ:
- 5** Եկէ՛ք եւ տեսէ՛ք Աստուծոյ գործերը,
որքա՛ն ահեղ են անոնք իրենց խորհուրդներով՝
քան մարդոց զաւակներուն բոլո՛ր գործերը:
- 6** Ան ցամաք դարձուց ծովը,
եւ ձգեց որ քալելով անցնին գետերու մէջջէն-
ասոր համար մենք կ'ուրախանանք այդ տեսնելով:
- 7** Այն որ ի յաւիտենից կը տիրէ իր զօրութեամբ,
իր աչքերը ուղղած է զինքը դառնացնող հեթանոսներուն՝
որպէսզի չկարենան հպարտանալ իրենք իրենցմով:
- 8** Օրհնեցէ՛ք մեր Աստուածը, հեթանոսներ-
լսելի՛ ըրէք անոր ձեր օրհնութեան ձայները:
- 9** Անոր՝ որ կեանք տուած է իմ հոգիիս,
եւ չէ ձգած որ դողդղան ոտքերս:
- 10** Ո՛վ Աստուած, փորձեցիր մեզ,
եւ քննեցիր՝ ինչպէս կը քննուի արծաթը:

5– «Եկե՛ք եւ տեսե՛ք» ասացուածքը կը կանխէ երկրորդը՝ եկե՛ք եւ ունկնդրեցե՛ք (հ. 16):

11 Որոգայթի մէջ իջեցուցիր,
եւ նեղութիւններ բեռցուցիր մեր կռնակին:

12 Մարդիկ անցուցիր մեր գլխուն վրայէն.
մենք հուրի ու ջուրի մէջէն անցանք,
եւ հանգիստի վայր մը բերիր մեզ:

13 Ես քու տունդ գոհերով պիտի մտնեմ,
եւ պիտի յանձնեմ քեզի ուխտի նուէրներս,

14 գորս շրթունքներովս խոստացած էի քեզի,
եւ բերանս խօսած էր՝ երբ նեղութեան մէջ էի:

15 Ես պիտի մատուցանեմ քեզի պարարտ ողջակէզներ՝
խոյերով եւ խունկերով.
Ես գուարակներ ու նոխազներ պիտի գոհեմ քեզի:

16 Եկէ՛ք, դուք բոլո՛րդ որ Տիրոջ երկիւղն ունիք ձեր մէջ,
լսեցէ՛ք, եւ պիտի պատմեմ ձեզի՝
թէ ի՛նչ ըրաւ ան իմ հոգիիս:

17 Ես իրե՛ն գոչեցի իմ բերանովս,
եւ միշտ բարձր պահեցի զինքը իմ լեզուովս:

12-«Մենք անցանք հուրէն եւ ջուրէն», կը պատկերացնէ բազմազան արհաւիրքները գորս կրեց ժողովուրդը: Ինչպէս հաւաքակազմութեան, այնպէս ալ հաւատացեալ անհատին կեանքը յաճախ անցնէ է հուրէն եւ ջուրէն՝ հասնելու համար հանգիստին: Լամբրոնացիին, այլաբանական մեկնաբանութեամբ, հուրով՝ կը հասկնայ Սուրբ Հոգւոյն շնորհքները իսկ ջուրով՝ Մկրտութիւնը. «Անոնք որ կ'անցնին Հոգւոյն հուրէն եւ աւազանին ջուրէն, կը բարձրանան երկինքի խաղաղութեան»:

18 Եթէ մեղք ունենայի խղճիս վրայ,
կարելի՞ բան է որ Տէրը լսէր զիս:

19 Անոր համար է որ լսեց զիս Աստուած,
եւ նկատի առաւ խնդրանքներուս ձայնը:

20 Օրհնեա՛լ ըլլայ Աստուած, որ չմերժեց աղօթքս,
եւ իր ողորմութիւնը չհեռացուց վրայէս:

ՍԱՂՄՈՍ 66/67

Գոհութեան աղօթք՝ հունձքի ժամանակ

1 Աւարտին՝ օրհնաբանութեան հետ: Երգով սաղմոս:

2 Ողորմէ՛ մեզի, Աստուած՝ եւ օրհնէ՛ մեզ,
ցո՛յց տուր մեզի երեսդ եւ ողորմէ՛ մեզի,

3 որպէսզի ճանչնանք քու ճամբաներդ երկրիս վրայ,
եւ քու փրկութիւնդ՝ բոլո՛ր ազգերուն մէջ:

4 Թող քեզ դաւանին բոլո՛ր ժողովուրդները, Աստուած,
եւ քեզ պաշտեն բոլո՛ր ցեղերը:

1-Սաղմոսը պարզ եւ հնարոյր օրհներգութիւն մըն է, որուն կը միա-խառնուի գոհութիւնը: Առիթը հաւանաբար հունձքի եղանակը փա-կոց տօնակատարութիւնն է (Նի՛ք. 23,16): Օրհներգութեան եւ գոհաբանու-թեան կը միանան նոր խնդրանքներ, որպէսզի ազգերն ու ժողովուրդ-ները տեսնեն եւ ճանչնան Աստուծոյ ճամբաները՝ բարեհաճութիւնն ու արդարութիւնը, միանալ ժողովուրդին օրհներգութեան որ պիտի ըլլայ օրհներգութիւնը տիեզերքի:

5 Թող ուրախանան՝ եւ ցնծան ազգերը,
որովհետեւ դուռն ուղիղ կերպով կը դատես ժողովուրդները,
եւ կ'առաջնորդես երկրին ազգերը:

6 Թող քեզ պաշտեն բոլոր ազգութիւնները,
եւ քեզի՛ միայն գոհութիւն յայտնեն բոլոր ժողովուրդները:

7 Երկիրը իր պտուղը տուաւ,
եւ Աստուած, մե՛ր Աստուածը, օրհնեց մեզ:

8 Թող օրհնէ՛ մեզ մեր Աստուածը,
եւ թող երկնչի՛ն իրմէ՛ երկրի բոլո՛ր ծագերը:

ՍԱՂՄՈՍ 67/68

Յաղթանակի երգ

1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

2 Պիտի կանգնի՛ Աստուած,
եւ պիտի ցրուին անոր բոլոր թշնամիները,
անոր տեսքէն պիտի փախչին բոլո՛ր զինքը ատողները:

3 Ինչպէս ծուխը կը սպառի տակաւ՝
այնպէ՛ս պիտի սպառին անոնք,

2-Սաղմոսը գովարանական օրհներգութիւնն է Աստուծոյ Զօրութեան որ կը գործէ ի նպաստ իր ժողովուրդին, ասոր պատմութեան զանազան հանգրուաններուն: Իբրեւ ներմուծում տրուած է սաղմոսին Մովսէսի խօսքը՝ յորդորը Ուխտի Տապանակին. Աստուած կը կանգնի կամ Աստուած թող կանգնի (Թւ. 10,35):

ինչպէս մո՛մը կը հալի կրակի դիմաց՝
այնպէ՛ս պիտի կորչին մեղաւորները Աստուծոյ առջեւէն:

4 Պիտի ուրախանան՝ արդարները, պիտի ցնծան անոր առջեւ,
եւ իրենց ուրախութեան մէջ պիտի խայտան:

5 Օրհնեցէ՛ք զԱստուած եւ սաղմոս երգեցէք անոր անունին,
ճամբայ պատրաստեցէք անոր՝
որ արեւմուտք կը բնակի եւ Տէ՛ր է անոր անունը.
անոր առջեւ թող ցնծան, եւ թող խուովին անոր տեսքէն.

6 անոր՝ որ հայրն է որբերու եւ դատաւորը այրիներու,
եւ Աստուած է իր սրբավայրին մէջ:

7 Աստուած տան մէջ կը բնակեցնէ համերաշխ մարդիկը,
իր քաջութեամբ՝ բանտէն կը հանէ կալանաւորները,
նաեւ դառնացածները որ ամայի տեղեր կը բնակին:

8 Աստուած, երբ քու ժողովուրդիդ առջեւ ելար,
եւ մինչ անապատի մէջէն կ'անցնէիր,

9 երկիրը շարժեցաւ, որովհետեւ Աստուծոյ տեսքէն՝
երկինքը սկսաւ ցօղել Սինա լեռան վրայ,
Իսրայէլի Աստուծոյն առջեւ:

10 Քու կամքովդ անձրեւ տուիր դուռն, Աստուած՝
քու ժառանգութեանդ, որ հիւանդացած էր,
բայց դուռն ո՛ր թ տուիր անոր:

11 Գազաններն անգամ կըցան բնակութիւն գտնել,
եւ քու քաղցրութեամբդ, Աստուած,
ամէն բան կարգադրեցիր աղքատին համար:

12 Տէրը խօսք պիտի դնէ անոնց բերանը՝
որոնք մեծ քաջութեամբ անոր բարի լուրը կ'աւետեն:

13 Զօրութիւններու թագաւորն է,
որ տուած է իր սիրելիին քու տանդ բարիքները,
որոնք աւարէն առնուելով բաժնուած են:

14 Որքան ալ դուք ննջէք ձեր կալուածներուն մէջ,
արծաթապատ են աղանիին թեւերը,
եւ ոսկեգոյն է անոր թիկնամէջը:

15 Երբ Երկնաւորը մէկտեղ հաւաքէ թագաւորները՝
ձիւնն պիտի տեղայ Սաղմոնի վրայ:

16 Աստուծոյ լերը բերիլի լեռ մըն է,
խիտ եւ պարարտ լեռ մը:

17 Եւ ի՞նչ կը կարծէք դուք, յոխորտացո՞ղ լեռներ-
անիկա ա՛յն լեռն է՝ ուր Աստուած հաճեցաւ բնակիլ,
որովհետեւ Տէրը ի՞նքը պիտի բնակի հոն վերջնականապէս:

18 Բազմապատիկ են Աստուծոյ կառքերը,
հազարաւորներ են անոնց վարորդները,
անոնց մէ՛ջ է Տէրը, որ իր Սինայի սրբարանէն եկած է:

19 Բարձունքներ ելաւ, գերիները դարձուց գերութենէն,
աւար առաւ, պարգեւներ բաշխեց

19- Սուրբ Պօղոս այս համարը կը պատշանեցնէ Քրիստոսի յաղթա-
կան վերադարձին երկիմբ՝ Համբարձումով եւ փրկութեան պարգեւնե-
րու բաշխումին՝ հաւատացեալներուն (Եփս 4,8):

եւ մարդոց զաւակներուն տուաւ,
որովհետեւ թերահաւատներ անգամ պիտի բնակին հոն-
օրհնեա՛լ է Տէր Աստուած:

20 Ամէ՛ն օր օրհնեալ է Տէրը-
մեր Աստուած՝ը, մե՛ր Փրկիչը թող առաջնորդէ մեզի:

21 Կենդանարա՛ր Աստուած է մեր Աստուածը,
եւ Տիրո՛ջ ձեռքն է մեզ մահէն ազատելը:

22 Բայց Աստուած պիտի փշրէ իր թշնամիներուն գլուխները,
արմատախիլ ընելով անոնց մագերն անգամ,
եթէ անոնք շարունակեն ապրիլ անօրէնութեամբ:

23 Տէրը ըսաւ. Անդունդներու խորերէն՝ պիտի վերադարձնեմ
եւ ժանիքներէն պիտի ազատեմ այն որ ինծի կը պատկանի:

24 ա՛յն աստիճան՝ որ քու ոտքդ արիւնի մէջ պիտի թաթխուի,
եւ շուններու լեզուները՝ քու թշնամիներուդ արեան մէջ:

25 Գնացքդ տեսնուեցաւ, Աստուած,
գնացքը մեր Աստուծո՛յն, սուրբ թագաւորին:

26 Իշխանները փութացին քու օրհնութիւնդ հիւսել՝
գուսաններու եւ գովասացներու մէջ:

27 Համախմբումներո՛ւ մէջ օրհնեցէք զԱստուած
եւ Տէրը՝ Իսրայէլի աղբիւրներէն սկսեալ:

27- Աստուածային անբնեւի անունին յայտնութիւնը կապուած է
Իսրայէլացիներուն ծագումին կամ կազմաւորումին, իբրեւ ցեղային
հաւաքականութիւն:

28 Հոն է Բենիամինը, զարմանալի՝ իր մանկուլթենէն-
անոնց առաջնորդները՝ Յուդայի իշխանները,
եւ Զաբուղոնի ու Նեփթաղիմի իշխանները:

29 Հրամայէ՛, Աստուած՝ քու իշխանութեամբը,
եւ զօրացուր անիկա՝ զոր դո՛ւն հաստատեցիր մեր մէջ՝

30 Քու Երուսաղէմի տաճարիդ մէջ՝
թագաւորները ընծաներ պիտի մատուցանեն քեզի:

31 Սաստէ՛ այդ եղէգներու գազանը,
զուարակներու խումբը եւ երինջներու դասը-
թող անարգ համարուին անոնք որ դրամով են ընտրուած-
ցրուէ՛ այն հեթանոսները որ պատերազմ կ'ուզեն:

32 Պատգամաւորներ պիտի գան Եգիպտոսէն,
եւ Հնդիկները պիտի ըլլան առաջինները,
որ Աստուծոյ պիտի երկարեն իրենց ձեռքերը:

33 Երկրի թագաւորութիւններ,
զԱստուած օրհնեցէք, սաղմո՛ս երգեցէք Տիրոջ՝

34 ճամբայ բացէք անոր՝
որ կը բնակի երկինքներու երկի՛նքը, արեւելեան կողմը-
ահա իր զօրաւոր ձայնով պիտի գոչէ ան:

35 Եւ փա՛ռք տուէք Աստուծոյ-
անոր մեծվայելչութիւնը Իսրայէլի վրան է,
եւ անոր զօրութիւնը մինչեւ երկնքի ամպերը կը հասնի:

36 Սքանչելի՛ է Աստուած իր սուրբերուն հանդէպ,
Իսրայէլի Աստուածը՝ որ ոյժ կու տայ իր ժողովուրդին,
որ հաստատ մնայ- օրհնեալ է Աստուած:

ՍԱՂՄՈՍ 68/69

Աղօթք՝ նեղութեան օրերուն

1 Աւարտին: Անցեալ ժամանակներու վերաբերեալ: Սաղմոս
Դաւիթի:

2 Փրկէ՛ զիս, Աստուած, որովհետեւ ջուրերը վրաս հասան,
ընկղմեցայ անդունդներու խորերը,
ուր հանգիստ չկայ ինծի համար:

3 Ծովուն խորը սուզուեցայ,
եւ յորձանքները կլլեցին զիս:

4 Ուժասպառ եղայ աղաղակելէն, կոկորդոս ցամքեցաւ,
եւ աչքերս նուաղեցան՝ յոյս Տէր Աստուծոյ վրայ դնելէն:

5 Անոնք որ կ'ատէին զիս անիրաւաբար՝
զլիսուս մագերէն աւելի՛ շատցան-
թշնամիներս եւ անոնք որ առանց պատճառի կ'ատեն զիս՝
ոյժ առին իմ վրաս-
պարտաւոր եղայ վերադարձնելու՝ ինչ որ չէի յափշտակած:

1–Սաղմոսը վառ եւ անձկագին աղօթքն է անհատի մը որ կը գտնուի օրհասական վտանգներու դիմաց: Հակառակորդները կը հետապնդեն զինք, կ'ամբաստանեն իբր գող (հ. 5) եւ նոյնիսկ անոր եռանդը Աստուծոյ տան հանդէպ, առիթ է մեղադրամբի եւ չարախօսութեան: Յաղթանակը նման հակառակորդներու, պիտի ըլլար նուաստացումը ոչ միայն հալածեալին այլ նաեւ անոնց՝ որոնց միակ յոյսն է Տէրը (հ. 7):

6 Աստուած, դուն ճանչցա՛ր իմ անզգամ արարքներս,
եւ յանցանքներս ծածուկ չեն պահուած քեզմէ՛:

7 Թող չամչնան իմ պատճառովս՝
անոնք որ քու վրադ դրած են իրենց յոյսը, Տէ՛ր,
գօրուծիւններո՛ւ Տէ՛ր.
Թող ամօթահար չըլլան իմ պատճառովս՝
անոնք որ քե՛զ կը փնտռեն, ո՛վ Աստուած Իսրայէլի՛:

8 Ես քեզի՛ համար համբերեցի նախատինքներու,
եւ երեսս ամօթով ծածկուեցաւ:

9 Ես օտարական դարձայ եղբայրներուս համար,
եւ հիւր՝ իմ մօրս որդիներուն առջեւ:

10 Քո տանդ նախանձախնդրութիւնը կերաւ զիս,
քեզ նախատողներուն նախատինքները իմ վրաս թափեցան:

11 Ես ինքզի՛նքս ճնշեցի ծոմապահութեամբ,
եւ այդ՝ նախատինք դարձաւ ինծի համար:

12 Զգեստի փոխարէն՝ քուրճ հագայ,
եւ ծաղրանքի առարկայ դարձայ անոնց:

8- Սաղմոսերգուին աղօթքը կ'ընդարձակուի եւ անոր հետ կ'անի հոգիին անձկութիւնը երկու ուղղութեամբ. դէպի դուրս (հ. 7), այսինքն իր շրջանակին համար եւ ապա դէպի վեր (հ. 8), այսինքն Աստուծոյ անունին համար:

10- Համարը իր իմաստին լրումը կը գտնէ Քրիստոսով եւ կացութիւնը կը փոխադրէ նոր մթնոլորտի մը մէջ: Քրիստոսէ առդին, «Աստուծոյ տկարութիւնը» (1 Կոր 1,25) աւելի հասկնալի է որովհետեւ փրկչական է, եւ նախատինքը կրել Անունի համար (Գ Առ 5, 41)՝ մասակցութիւնն է Քրիստոսի փրկչական չարչարանքին:

13 Մարդիկ՝ որ դրան քով նստած էին,
իմ մասիս կը խորհրդածէին,
եւ գինի խմողները կը ծաղրէին զիս:

14 Ես աղօթք կ'ընէի քեզի, Տէ՛ր, յարմար ժամանակին.
Լսէ՛ զիս, Աստուած, քու անչափ ողորմութեամբդ,
որ քու փրկութիւնդ իրականութիւն դառնայ:

15 Փրկէ՛ զիս տիղմին մէջէն, որ չսուզուիմ անոր մէջ,
եւ ազատիմ զիս ատողներէն,
եւ կատաղի ջուրերու յորձանքէն:

16 Թող չկլլեն զիս ջուրերու հոսանքները,
եւ չընկղմեն անդունդներուն խորերը,
որ ջրհորը իր բերանը չփակէ իմ վրաս:

17 Լսէ՛ զիս, Տէ՛ր, որովհետեւ քաղցր է քու ողորմութիւնդ,
եւ նայէ՛ ինծի քու մեծ գթութեամբդ:

18 Երեսդ մի՛ դարձներ քու ծառայէդ,
որովհետեւ ես նեղութեան մէջ էմ,
եւ օր առաջ լսէ՛ զիս:

19 Նայուածքդ դարձուր հոգիիս վրայ եւ փրկէ՛ զիս,
թշնամիներուս պատճառով՝ ազատէ՛ զիս:

19- Սաղմոսերգուին աղօթքը կը շարունակուի եւ երթալով կը բիւրեղանայ եւ կը հասնի նոր հորիզոններու: Վտանգները տակաւին սպառնական են, սակայն սաղմոսերգուն ձեռքագտնուած է սարսափէն քանի որ վերացած է Աստուծոյ գրութեան եւ միջամտութեան բարձր ըմբռնումին (հ. 14) եւ քաղցր բարութեան (հ. 17):

- 20 Որովհետեւ դուն գիտես կրած նախատինքներս, ամօթս եւ խոնարհեցումներս.
քու առջեւ ես բոլոր ինծի նեղութիւն տուողները:
- 21 Սիրտս համբերեց նախատինքներու եւ թշուառութեան.
կը սպասէի թէ ո՞վ պիտի բաժնէ ցաւս, բայց մէ՛կ կը չեղաւ, եւ չգտնուեցաւ մէ՛կը որ մխիթարէր զիս:
- 22 Լեղի տուին ինծի իբրեւ կերակուր, եւ քացախ խմցուցին՝ երբ ծարաւի էի:
- 23 Թող անոնց սեղանները իրենց որոգայթը դառնան՝ իբրեւ հատուցում եւ սայթաքումի առիթ:
- 24 Թող խաւարի՛ն անոնց աչքերը, որ չտեսնեն, եւ կորաքամա՛կ մնան տեւապէս:
- 25 Անոնց վրա՛յ թափէ քու բարկութիւնդ, եւ անոնց վրա՛յ թող հասնի սրտնեղութեանդ զայրոյթը:
- 26 Թող աւերա՛կ դառնան անոնց բնակարանները, եւ բնակող չգտնուի այլեւս անոնց յարկին տակ:

22– Յիսուսի չարչարանքի նկարագրութեան մէջ, Մատթեոս եւ Մարկոս կ'ակնարկեն սաղմոսին այս անցքին (27,34. 15,23) ըստ Եօթանասնից թարգմանութեան, սակայն չեն յիշատակեր սաղմոսին կատարումը: Յովհաննէս աւելի յստակ է (19,28) երբ կը յիշէ Յիսուսի ծարաւը խաչին վրայ:

26– Սուրբ Պետրոս այս համարը կը յիշէ եւ գայն կը պատշանեցնէ Յուդայի (Գ Առ 1,20):

- 27 Որովհետեւ անոնք հալածեցին այն՝ զոր դուն հարուածեցիր, եւ ունեցած ցաւերուս վրայ՝ նո՛ր վէրքեր աւելցուցին:
- 28 Անոնց մեղքերը կրկնապատի՛կ հաշուէ, որ քու արդարութենէ՞դ բաժին չունենան:
- 29 Թող ջնջուի՛ն անոնք քու կեանքի Գիրքէ՞դ, եւ թող չանցնին արդարներու ցանկին վրայ:
- 30 Ես աղքատ եմ եւ ցաւերու տակ կ'քած.
Աստուած՝ ըրէ որ փրկութեանդ արժանանամ:
- 31 Օրհնութեան երգերո՞վ պիտի օրհնեմ Աստուծոյս անունը, եւ գովաբանութեա՞մբ պիտի փառաւորեմ զինքը:
- 32 Ասիկա շա՛տ աւելի հաճելի պիտի ըլլայ Աստուծոյ՝ քան եղջերաւոր եւ կճղակաւոր մատաղ հորթերու զոհը:
- 33 Աղքատները պիտի տեսնեն եւ ուրախանան.
փնտռեցէ՛ք զԱստուած եւ ձեր հոգիները պիտի ապրին:
- 34 Որովհետեւ Տէրը լսե՛ց տնանկներուն ձայնը, եւ չանտեսեց իրեն համար կապանքներու մէջ եղողները:

28– «Կրկնապատիկ հաշուէ» որպէսզի բաժին չունենան Աստուծոյ արդարութեանէն:

29– «Անոնք թող ջնջուին կեանքի գիրքէն»․ Հին Կտակարանը ունի մամօրինակ արտայայտութիւններ միայն կոնպաշտութեամբ անհաւատարիմներուն մասին, անապատին մէջ (Ելք 32, 32-33): Ջնջումը կեանքի գիրքէն կը համապատասխանէ գրկումին՝ մտնելու Աւետեաց երկիրը: Նոր Կտակարանին մէջ, կեանքի գիրքը կը հայի նաեւ յաւիտեան կան կեանքին (Ղկ 10,20․ Փիլ 4,3․ Յայտ 3,5․ 13,8):

35 Թող օրհնեն՝ զինքը երկինքն ու երկիրը,
ծովերն ու անոնց մէջ գեռացող բոլո՛ր կենդանիները:

36 Աստուած պիտի փրկէ Սիոնը,
պիտի վերաշինուին Հրէաստանի քաղաքները,
անոնք պիտի շինեն, հո՛ն պիտի բնակին,
եւ անոնց մէ՛ջ պիտի ժառանգեն:

37 Հո՛ն պիտի հաստատուի քու ծառաներուդ զաւակը,
անոնք որ կը սիրեն քու անունդ՝ անոր մէջ պիտի բնակին:

ՍԱՂՄՈՍ 69/70

Աղօթք՝ օգնութիւն խնդրելու համար

1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի, իբրեւ յիշատակ՝ իր փրկութեան Տիրոջ կողմէ:

2 Աստուած, եկուր օգնելու ինձի,
Տէ՛ր, փութա՛ գիս պաշտպանելու:

3 Թող ամչնան եւ ամօթով մնան
անոնք որ կը հետապնդէին իմ հոգիս.
Թող ե՛տ դառնան ամօթահար,
անոնք որ կը մտածէին չարիք հասցնել ինձի:

4 Թող ե՛տ դառնան անմիջապէս իրենց ամօթով,
անոնք որ կ'ըսէին. Լա՛ւ եղաւ իրեն:

2- Ներկայ սաղմոսը քիչ տարբերակներով կրկնութիւնն է սղմ 39, 10-18 հատուածին:

5 Թող քեզմով ցնծան եւ ուրախանան
բոլոր անոնք որ քեզ կը փնտռեն.
անոնք որ կը սիրեն քու փրկութիւնդ՝
Թող գոչեն շարունակ. Մե՛ծ է Աստուած:

6 Ես աղքատ եւ տնանկ եմ, Աստուած, օգնէ՛ ինձի:
Դո՛ւն ես իմ օգնականս ու փրկիչս, Տէ՛ր, մի՛ յամենար:

ՍԱՂՄՈՍ 70/71

Աղօթք՝ յարատեւութեան համար

1 Աւարտին: Առաջին գերութեանն ետք, Յովնադաբի որդիներուն համար: Սաղմոս Դաւիթի:

2 Քո՛ւ վրադ դրի յոյսս, Տէ՛ր,
ես ամօթով պիտի չմնամ յաւիտեան.
քու արդարութեամբդ փրկէ՛ եւ ազատէ՛ գիս:
Ինձի՛ խոնարհեցուր ականջդ եւ ո՛ղջ պահէ՛ գիս:

3 Ապաւէ՛ն եղիր ինձի, Աստուած,
ամրութեան ժայռս՝ գիս փրկելու համար,
որովհետեւ դո՛ւն ես իմ վստահութիւնս ու ապաւէնս:

4 Աստուած իմ, փրկէ՛ գիս մեղաւորին ձեռքէն,
անօրէնին եւ անիրաւին բռնութենէն:

1- Սաղմոսերգուն հաւանաբար տարիճով յառաջացած դեւտացի մըն է, մօր արգանդէն իսկ սահմանուած Տիրոջ ծառայութեան, սակայն ենթակայ է հակառակորդներու մնշումին եւ հալածանքին: Անխախտ վստահութեամբ կ'ապաւինի Տիրոջ եւ կը հայցէ անկէ փրկութիւնը:

5 Դո՛ւն ես իմ համբերութիւնս, Տէ՛ր,
ո՛վ Տէր, միակ յոյսս՝ մանկութենէս ի վեր:

6 Քո՛ւն վրադ դրած եմ իմ ամբողջ վստահութիւնս՝
յղութեանս օրէն ի վեր-
մօրս ծոցէն սկսեալ՝ դո՛ւն ես իմ ապաւէնս-
եւ քեզմէ՛ ստացած եմ որեւէ օգնութիւն ամէն ժամանակ:

7 Նոյն իսկ երբ նշաւակ դարձայ շատերու՝
դո՛ւն օգնեցիր ինծի եւ քաջալերեցիր զիս:

8 Բերանս գովաբանութեամբ թող լեցուի,
որ քու փառքդ օրհնեմ,
եւ մեծվայելչութիւնդ փառաւորեմ ամէն օր:

9 Մի՛ մերժեր զիս, Տէ՛ր, ծերութեանս օրերուն-
մի՛ թողուր զիս, երբ ոյժերս պակսին:

10 Թշնամիներս խօսեցան ինծի,
անոնք որ պաշարեցին զիս՝ իրարու հետ խորհրդակցեցան-

11 եւ ըսին. Աստուած լքած է զինք,
հալածե՛նք զինք եւ ետեւէ՛ն հասնինք,
որովհետեւ չկա՛յ մէկը որ փրկէ զինք:

12 Աստուած՝ իմ, մի՛ հեռանար ինծմէ,
եւ փութա օգնելու ինծի, Աստուած՝:

13 Պիտի ամչնան եւ կործանին
անոնք որ կը չարախօսէին իմ մասիս,

ամօթահա՛ր պիտի ըլլան ու խայտառակուին
անոնք որ չարիք կ'ուզէին հասցնել ինծի:

14 Սակայն ես մի՛ շտ պիտի պահեմ իմ յոյսս,
եւ քու օրհնութեանդ մէջ պիտի մեծնամ միշտ:

15 Բերանս քու արդարութիւնդ պիտի հռչակէ,
եւ քու գովաբանութիւնդ պիտի ընէ ամէն օր՝
քանի որ ես խարդախութիւն չեմ ճանչցած երբեք-

16 այլ կ'ապաւինիմ Տիրոջ գօրութեան,
եւ քու արդարութիւնդ միայն կը յիշեմ, Տէ՛ր:

17 Աստուած՝ իմ, մանկութենէս ի վեր դո՛ւն կը թեցիր զիս,
այս օրուանէ անդին քու արդար գործերդ պիտի հռչակեմ:

18 Մինչեւ արեւոր ու ծեր դառնամ՝
մի՛ թողուր զիս, Աստուած՝ իմ.
մինչեւ որ բազուկիդ գործերը
գայիք բոլո՛ր սերունդներուն պատմուին:

16-«Այլ կ'ապաւինիմ Տիրոջ գօրութեան» գործերուն մէջ, որպէս զի գանոնի վերջիշեմ եւ հռչակեմ:

17- Սաղմոսերգուն ունի համոզումը թէ՛ երիտասարդութենէ ի վեր Աստուած եղած է իր դաստիարակը եւ մօր արգանդէն առկին, վայելած է Տիրոջ օգնութիւնը:

18- Աստուծոյ բազուկին գօրութիւնը, փրկութիւնն է տրուած մարդուն: Այս փրկութիւնն է գոր պարտի հռչակել եւ աւետիլ եկեղեցւոյ պաշտամունքը:

- 19** Մինչեւ բարձունքները հասան մեծամեծ գործերը զորս դուն կատարեցիր՝ քու զօրութեամբդ եւ արդարութեամբդ: Աստուած, ո՞վ նման է քեզի:
- 20** Ո՛րչափ ալ դուն ինձի ցոյց տաս բազմաթիւ նեղութիւններ եւ չարչարանքներ, սակայն դա՛րձեալ կը մխիթարես զիս. եւ երկրի ամենախոր վիհերէն դուրս կը հանես զիս:
- 21** Դուն կրկին ու կրկին ցոյց տուիր քու զօրութիւնդ, դարձար եւ մխիթարեցիր զիս, երկրի անդունդներէն՝ կրկին դուրս հանեցիր զիս:
- 22** Ուստի ես քե՛զ պիտի գովաբանեմ հիմա, սաղմոսներ հիւսելով, ճշմարիտդ Աստուած. սաղմոսներ պիտի ուղղեմ քեզի՝ օրհնելո՛ւ համար քեզ, Սո՛ւրբդ Իսրայէլի:
- 23** Թող ցնծան շրթունքներս, երբ սաղմոս երգեմ քեզի, նաեւ հոգիս, որուն փրկիչը եղար դուն:
- 24** Թող լեզուս քու արդարութի՛ւնդ հռչակէ ամէն օր, եւ ամէն ժամանակ ամօթապարտ թող մնան եւ խայտառակուին՝ անոնք որ չարիք կը բաղձային ինձի:

ՍԱՂՄՈՍ 71/72

Խաղաղութեան թագաւորը

- 1** Սողոմոնի սաղմոս:
- 2** Աստուած, դատաստանդ տուր թագաւորին, եւ արդարութիւնդ՝ թագաւորին որդւոյն, որպէսզի դատեն ժողովուրդդ արդարութեամբ, եւ աղքատներուդ տան իրենց իրաւունքը:
- 3** Լեռները խաղաղութիւն պիտի բերեն ժողովուրդին, եւ բլուրները՝ արդարութիւն:
- 4** Ան իրաւունք պիտի տայ ժողովուրդին աղքատներուն, կեանք պիտի շնորհէ տնանկներուն, եւ պիտի խոնարհեցնէ ամբարտաւանները:
- 5** Ան արեւուն հէ՛տ պիտի մնայ եւ տեւէ, եւ լուսինէն առաջ՝ սերունդէ սերունդ:

2–Սրբայական սաղմոս մըն է, ձօնուած Սողոմոնի՝ իրրեւ արդարաւիտ, խաղաղասէր թագաւորի որ իր ժողովուրդին ապահովեց խաղաղութիւն եւ բարօրութիւն: Նկարագրութեամբ, սաղմոսերգուն կը ներկայացնէ գալի՛ֆ տիպար թագաւորը:

3–Լեռներ, «խաղաղութիւն պիտի բերեն...» Բանաստեղծական նոյն պատկերը կը գործածեն Նսայի 52,7 եւ Նզեկիէլ 36,8: Սուրբ Հայրերու մեկնաբանութեամբ, լեռները՝ Առաքեալներն են, իսկ բլուրները՝ աշակերտները եւ անոնցմէ ետք եկող վարդապետները: Խաղաղութիւնն է նոյնիմէն Քրիստոս:

- 6 Ան պիտի իջնէ՝ ինչպէս անձրեւը կ'իջնէ գեղմին վրայ, ինչպէս ցօղը որ կը հոսի երկրին վրայ:
- 7 Արդարութիւնը պիտի ծագի անոր օրով,
եւ մեծ խաղաղութիւն պիտի տիրէ, մինչեւ լրումը լուսնին:
- 8 Ան պիտի տիրէ մէկ ծովէն մինչեւ միւսը,
եւ գետերէն՝ մինչեւ աշխարհի ծայրերը:
- 9 Անոր առջեւ՝ նախ Հնդիկները պիտի խոնարհին,
եւ անոր թշնամիները հող պիտի ուտեն:
- 10 Թարսիսի եւ կղզիներուն թագաւորները
զոհ պիտի մատուցանեն անոր,
Արաբիոյ եւ Սաբայի թագաւորները
նուէրներ պիտի բերեն անոր:
- 11 Երկրիս բոլոր թագաւորները պիտի երկրպագեն անոր,
եւ բոլոր ազգերը պիտի ծառայեն անոր:
- 12 Որովհետեւ ան փրկեց աղքատը հզօրին ձեռքէն,
աղքատն ու տնանկը՝ որ չունին օգնական:
- 13 Ան պիտի գթայ աղքատին ու տնանկին վրայ,
եւ պիտի փրկէ տնանկներուն հոգին:

6– Հայրերը այս պատկերով կը հասկնան Յիսուսի ծնունդը որ տեղի ունեցաւ անձայն՝ երկինքէն իջնող ցօղի նման: Նարեկացի ցօղի պատկերը կը մեկնաբանէ Յիսուսի փրկչական պարգեւներուն տուչութեամբ մարդոց՝ խաչին վրայէն:

- 14 Չար վաշխառուներէ պիտի փրկէ անոնց հոգին.
անոր անունը յարգելի է անոնց առջեւ:
- 15 Ան մի՛շտ պիտի ապրի,
եւ Արաբացիներու ոսկիէն պիտի տրուի անոր.
անդադար անո՛ր պիտի ուղղեն իրենց աղօթքները,
եւ ամէ՛ն օր պիտի օրհնաբանեն զինք:
- 16 Ապահովութիւն պիտի տիրէ ամբողջ երկրի երեսին
եւ լեռներու գագաթներուն վրայ.
անոր պտուղը պիտի գերազանցէ՝ Լիբանանի պտուղը,
եւ Տիրոջ քաղաքին մէջ պիտի ծաղկի՝ երկրի խոտին նման:
- 17 Տիրոջ անունը պիտի օրհնուի յաւիտեան,
որովհետեւ արեւէն առա՛ջ է անոր անունը.
երկրի բոլոր ազգերը պիտի օրհնուին անոր մէջ,
եւ բոլոր ազգերը երանի՛ պիտի կարդան անոր:
- 18 Օրհնեա՛լ է Իսրայէլի Տէր Աստուածը,
որ մինակը սքանչելիքներ կը գործէ:
- 19 Եւ օրհնեա՛լ է անոր փառքին սուրբ անունը յաւիտեան.
Թող ամբողջ երկիրը լեցուի անոր փառքով.
Թող ա՛յնպէ՛ս ըլլայ, ա՛յնպէ՛ս ըլլայ:

16– Սաղմոսերգուն կը մաղթէ Աւետեաց երկրին եւ կամ աւելի ընդհանուր առումով՝ ամբողջ աշխարհի, պարարտութիւնը Լիբանանի: Առատ պտղաբերութիւնը երկրին համարուած էր մէկը մեսիական օրհնութիւններուն (Սմն 9,13. Երմ 31,12. Եզկ 24,27 եւ 30,23. Են 7,3):

ՍԱՂՄՈՍ 72/73

Արդարութեան վերջնական յաղթանակը

Սաղմոս Ասափի:

- 1** Որքան բարի է Աստուած Իսրայէլի հանդէպ,
եւ անոնց՝ որ ուղիղ են սրտով:
- 2** Սակայն քիչ մնացած էր ինծի՝ որ սասանէին ոտքերս.
քիչ մը եւս՝ եւ պիտի սայթաքէին քայլերս:
- 3** Ես կը նախանձէի անօրէններուն,
երբ կը տեսնէի մեղաւորներուն վայելած խաղաղութիւնը:
- 4** անոնց քով չկայ մահուան վախը,
բայց ապահով են անոնց տանջանքները:
- 5** Մարդոց հոգերը չեն բաժներ անոնք,
եւ չեն տառապիր ուրիշ մարդոց նման:
- 6** Ասոր համար ամբարտաւանութիւնը կը տիրէ անոնց վրայ,
համակուած են ամբարշտութեամբ եւ անիրաւութեամբ:
- 7** Անոնց անիրաւութիւնը դուրս պիտի գայ,
ինչպէս իւղը ճարպի մէջէն,
որովհետեւ անոնք կը հետեւին իրենց սրտին կիրքերուն:

3–Սուրբ Գիրքի իմաստութեան մատեանները յաճախ կը գգուչացընեն այս նախանձէն եւ անոր հետեւանքներէն (Առակ. 3,31): Ամբարիշտներուն բարօրութիւնը չարչարած է նաեւ Յոբի սիրտը. «Անոնց տուններուն խաղաղութիւնը անվրդով է եւ Աստուծոյ խստութիւնը կը խնայէ անոնց» (21,9):

- 8** Անոնք չարութեամբ խորհեցան եւ խօսեցան,
եւ իրենց անզգամութիւնը բազմապատկեցին:
- 9** Իրենց բերանը մինչեւ երկինք բացին,
եւ իրենց լեզուն երկրի երեսին վրայ շրջեցուցին:
- 10** Անոր համար է որ իմ ժողովուրդս ետ պիտի դառնայ.
եւ իմ օրերս լի եւ կատարեալ կերպով պիտի հասնին անոնց:
- 11** Անոնք ըսին. Ինչպէ՞ս Աստուած գիտէ այս բաները,
կամ ալ գիտութիւն կա՞յ Բարձրեային մօտ:
- 12** Ահա՛, ասոնք մեղաւոր են եւ կը յաջողին.
գրաւած են եւ կը պահեն աշխարհի հարստութիւնը:
- 13** Ես ըսի. ուրեմն զուր տեղ արդար պահեցի իմ հոգիս,
եւ ձեռքերս լուալով՝ մաքուր մնացի:
- 14** Ես չարաչար տանջուեցայ ամէն օր,
եւ մինչեւ առաւօտ ինքզինքս մեղադրեցի:
- 15** Եթէ ես ըսէի՝ թէ ե՛ս ալ անոնց նման պիտի խօսիմ,
ուրացած պիտի ըլլայի որդիներուդ սերունդը,
որոնց ուխտով կապուած եմ:
- 16** Ուստի միտքս դրի մտածել,
եւ այնպէս ջանք մը ընեմ:
- 17** մինչեւ որ Աստուծոյ սրբավայրը մտնեմ,
եւ հասկնամ թէ ի՛նչ պիտի ըլլայ անոնց վախճանը:

17–«Սրբավայրն Աստուծոյ» կը նշանակէ տաճարը, ուր սաղմոսներգուն կ'ընդունի ներքին լուսաւորութիւնը եւ կը գտնէ լուծումը միտքը

18 Սակայն, անոնց նենդութեան պատճառով՝ դուն տարագիր պիտի ընես եւ կործանես զանոնք՝ իրենց ամբարտաւանութեան մէջ:

19 Եւ ինչպէ՞ս յանկարծակի կերպով աւեր դարձան անոնք, մեռան, չբացան եւ կորսուեցան՝ իրենց անօրէնութիւններուն պատճառով:

20 Եւ դարձան նման անոնց որ երազէ կ'արթննան. Տէ՛ր, դո՛ւն ալ, քու քաղաքիդ մէջ, այդպէս պիտի ոչնչացնես անոնց պատկերները:

21 Որովհետեւ կրակ բորբոքեցաւ սրտիս մէջ, եւ երիկամներս այլագունեցան:

22 Ես արհամարհանքի առարկայ դարձայ, եւ չգիտցայ թէ անասունի տեղ դրուեցայ քու առջեւդ:

23 Սակայն ես միշտ քեզի հետ մնացի, եւ դուն իմ աջ ձեռքէս բռնեցիր զիս:

24 Քու խորհուրդներովդ առաջնորդեցիր ինձի, եւ ընդունեցար զիս փառքով:

չարչրկող հարցին: Լայն իմաստով կրնայ նշանակել նաեւ Յայտնութիւնը, ուր բովանդակուած է Աստուծոյ ուսուցումը, որուն մէջ հաւատացեալ հոգին կը գտնէ իմաստութիւնը:

24- «Ընդունեցար զիս փառքով»... Համարին մէջ, եթէ փառք բարդ առնենք իբր լոկ մարդկային յատկանիշ, իմաստն է հետեւեալը. Աստուած կ'առաջնորդէ արդար մարդուն, գերծ կը պահէ զինք յանկարծակաւ եւ վաղահաս մահէն եւ կը վերահաստատէ անոր յիշատակը:

25 Արդարեւ, ի՞նչ ունիմ ես երկիրքի մէջ, կամ ի՞նչ կրնամ խնդրել քեզմէ երկրիս վրայ:

26 Սիրտս ու մարմինս նուաղեցան, ո՛վ Աստուածն իմ սրտիս, որ յաւիտենական բաժի՛նս ես, ո՛վ Աստուած:

27 Ահա՛, պիտի կորսուին բոլոր անոնք որ հեռացան քեզմէ, եւ դուն պիտ բնաջնջես անոնք որ ապստամբեցան քեզի դէմ:

28 Ես երջանիկ եմ մօտիկ ըլլալով Աստուծոյ, յոյս Տիրոջ վրայ դնելով, եւ Սիրնի դատեր դռներուն առջեւ հռչակելով քու բոլո՛ր օրհնութիւններդ:

ՍԱՂՄՈՍ 73/74

Ողբ տաճարին համար

Իմաստութիւն Ասափի:

1 Ինչո՞ւ մերժեցիր մեզ վերջնական կերպով, Աստուած՝ բարկութիւնդ բորբոքած է հօտիդ ոչխարներուն դէմ:

1- Առիթը սաղմոսին, ազգային մեծ աղէտն է. անկումը Երուսաղէմի եւ կործանումը տաճարին: Սաղմոսագրուն կը շեշտէ թշնամիներուն անվերջ ամբարտաւանութիւնը, որ այնքան կսկծալի է տաճարի պաշտամունքին նուիրուած դեւտացիին համար: Կը հայցէ Տիրոջմէ որ վերջ դնէ իր անտարբերութեան, հանէ ձեռքը ծոցէն եւ վերանորոգէ անցեալի փրկարար միջամտութիւնները:

- 2 Յիշէ՛ ժողովուրդդ զոր սկիզբէն սեպհականացուցիր·
փրկեցիր ժառանգութեանդ վիճակը,
եւ Սիրոն այս լեռը ուր բնակեցար դուն:
- 3 Ձեռքդ բարձրացուր անոնց ամբարտաւանութեան դէմ·
թշնամին անիրաւ բաներ ըրաւ քու սրբավայրիդ մէջ:
- 4 Քեզ ատողները սկսան պարծենալ հանդիսավայրիդ մէջ,
եւ քու նշաններուդ վրայ իրենց նշանները դրին:
- 5 Եւ իրենք չգիտցան թէ ի՞նչ պիտի դար վերէն:
- 6 Անոր դռները կացիններով ջարդեցին,
կարծես թէ անտառ ըլլար ան·
կացիններով եւ մուրճերով միասին կործանեցին զայն:
- 7 Կրակով այրեցին քու երկրաւոր սրբավայրդ,
եւ պղծեցին քու անունիդ վրանը:
- 8 Անոնց ազգը, ամէնքը միասին ըսին իրենց սրտին մէջ·
Եկէ՛ք, լռեցնենք Աստուծոյ բոլոր՝ տօները երկրիս երեսէն:
- 9 Մենք ո՛չ մէկ նշան տեսանք, եւ մարգարէ ալ չունինք,
մէկը չկա՛յ որ հասկնայ մեզ:
- 10 Աստուած, դեռ մինչեւ ե՞րբ թշնամին պիտի նախատէ մեզ,
եւ հակառակորդը բարկութեան պիտի մղէ սուրբ անունդ:

9–Նշանները՝ Աստուծոյ նպաստաւոր միջամտութիւնները աւետող արարքներն են: Ասոնց չգոյութիւնը ցոյց կու տայ թե՛ տակաւին հեռու է փրկութեան արշալոյսը (Ես 7,11–14):

- 11 Ինչո՞ւ ետ կը քաշես ձեռքդ,
եւ աջդ կը պահես ցմիշտ ծոցիդ մէջ:
- 12 Դո՛ւն, մեր Աստուածն ու թագաւորը՝
անսկիզբ ժամանակներէ առաջ,
փրկութիւն իրագործեցիր երկրի վրայ:
- 13 Դուն հաստատեցիր ծովը քու զօրութեամբդ·
խորտակեցիր վիշապներուն գլուխները ջուրերուն վրայ:
- 14 Դո՛ւն փշրեցիր վիշապին գլուխը,
եւ իբրեւ կերակուր տուիր զայն՝ Հնդիկներու զօրքերուն:
- 15 Դուն բխել տուիր աղբիւրներն ու վտակները·
եւ ցամքեցուցիր ամեհի գետերը:
- 16 Քո՛ւկդ է ցերեկը, քո՛ւկդ է գիշերը·
դո՛ւն հաստատեցիր լոյսն ու արեւը:
- 17 Դո՛ւն գծեցիր երկրի բոլոր սահմանները,
դո՛ւն ստեղծեցիր զարուսնն ու ամառը:
- 18 Ա՛յս բանը պահէ մտքիդ մէջ· թշնամին նախատեց Տէ՛րը,
անզգամ ժողովուրդը մը բարկացուց քու սուրբ անունդ:
- 19 Գազաններու մի՛ մատներ այն հողին որ կը դաւանի քեզ,
եւ ի սպառ մի՛ մոռնար քու տնանկներդ:
- 20 Նայէ՛ քու ուխտիդ, որովհետեւ երկրիս վրայ՝
անմիտ մարդոց տունները անիրաւութեամբ լեցուած են:
- 21 Թող տնանկը ամօթով ետ չդառնայ,
աղքատն ու տնանկը թող օրհնեն քու սուրբ անունդ:

22 Կանգնէ՛, Աստուած՝, եւ քու դատաստանո՛վդ դատէ, յիշէ՛ նախատինքները որ ամէն օր կու գան անզգամէն:

23 Մի՛ մոռնար քու պաշտօնեաներուդ ճայնը, եւ ցմիշտ՝ թող վերնայ քեզ ատողներուն ամբարտաւանութիւնը:

ՍԱՂՄՈՍ 74/75

Աստուածային դատաւորը

1 Աւարտին: Մի՛ ապականեր: Սաղմոս Ասափի:

2 Պիտի բարեբանէ՛նք քեզ, Աստուած՝, պիտի բարեբանենք եւ քու անունդ պիտի կանչենք: Ես քու բոլո՛ր սքանչելի գործերդ պիտի հռչակեմ:

3 Երբ ժամանակը գայ, ուղիղ կերպով պիտի դատեմ:

4 Երկիրը հիւժաւ եւ բոլոր բնակիչները անոր հետ, իսկ ես՝ հաստատեցի անոր սիւները:

5 Անօրէններուն ըսի՝ Անօրէն գործեր մի՛ ընէք, եւ մեղաւորներուն՝ Ձեր եղջիւրները մի՛ բարձրացնէք:

6 Ձեր եղջիւրները մի՛ բարձրացնէք՝ մինչեւ բարձունքները, եւ անիրաւութիւն մի՛ վերագրէք Աստուծոյ:

4- Աստուած տերն է երկրի բնական եւ բարոյական ներդաշնակութեան: Անոր ուղիղ դատաստանը չէ սահմանուած, ինչպէս կը թելադրէ տիտղոսը, արտաքին թշնամիներու, այլ կը հայի բարոյականութեան աշխարհին, ուր չարութիւնը կը մաքառի արդարներուն եւ անոնց կեանքը առաջնորդող սկզբունքներուն դէմ:

7 Որովհետեւ ո՛չ արեւելքէն եւ ո՛չ արեւմուտքէն, ո՛չ անապատէն եւ ո՛չ ալ լեռներէն կու գայ փրկութիւնը,

8 որովհետեւ Աստուած է դատաւորը, որ մէկը կը խոնարհեցնէ եւ միւսը կը բարձրացնէ:

9 Բաժակ մը կայ Տիրոջ ձեռքը՝ անապակ գինիով լեցուն, ան կը հրամցնէ անկէ՝ ասոր ու անոր, սակայն անոր մրուրը չի սպառիր երբեք, եւ գայն պիտի խմեն երկրի բոլոր մեղաւորները:

10 Ես պիտի ցնծա՛մ յաւիտեան, եւ սաղմոս պիտի երգեմ Յակոբի Աստուծոյն:

11 Դուն պիտի փշրես մեղաւորներու բոլո՛ր եղջիւրները, եւ արդարին եղջիւրը պիտի բարձրանայ:

ՍԱՂՄՈՍ 75/76

Գոհութիւն՝ Աստուծոյ օգնութեան համար

1 Աւարտին՝ օրհնութիւններուն հետ. սաղմոս Ասափի: Ասորեստանցիներու ուղղուած երգ:

8- Միայն Աստուած դատաւոր է եւ ինք կը սահմանէ ժամը դատաստանին (Ամբ 2,3):
9- Հին Կտակարանին մէջ, գինին առ հասարակ նկատուած էր խորհրդանիշ ուրախութեան եւ երջանկութեան: Կատարածնային գրականութեան մէջ, գինին բաժակը խորհրդանիշ է Աստուծոյ բարկութեան եւ դատաստանին (Եր 25,15. 48,26. Ես 51,17. Եզկ 23,31): Նոյն իմաստով է նաեւ Յայտնութեան գիրքին մէջ (14,10):

2 Աստուած յայտնի է Հրէաստանի մէջ,
եւ մեծ է անոր անունը Իսրայէլի մէջ:

3 Սաղէմի մէջ է անոր տեղը,
եւ Սիոնն է անոր բնակավայրը:

4 Տէրը խորտակեց աղեղին զօրութիւնը,
զէնքը, սուրը եւ ճակատամարտը:

5 Դուն, սքանչելի՛ կերպով՝
կը լուսաւորես լեռները յաւիտենապէս:

6 Թող խռովին բոլո՛ր անոնք որ անմիտ են սրտով.
քունի մէջ մտան անոնք
եւ ոչինչ գտան իրենց ձեռքերուն մեծ գործերուն մէջ:

7 Քու սաստէ՛ դ ննջեցին անոնք, Աստուած՝ Յակոբայ,
նոյնիսկ անոնք որ ձիերու վրայ հեծած էին:

8 Դուն ահաւո՛ր ես,
ո՞վ կրնայ կանգնիլ քու դիմացդ:

9 Հագի՛ւ երեւցար երկինքէն՝ յայտնի եղաւ բարկութիւնդ:
Երկիրը զարհուրեցաւ եւ սարսուաց,

10 երբ ոտքի ելաւ Աստուած՝ դատելու համար,
եւ երբ ազատեց երկրի բոլոր խոնարհները:

3- Այլ տեղ, «Խաղաղութիւն» բառը դրուած է փոխանակ Սաղէմի,
կրնատուած ձեւը Երուսաղէմի:
10- Խոնարհներուն փրկութիւնը դրական արդիւնքն է Աստուծոյ մի-

11 Մարդոց խորհուրդները քեզ հուշակելու ելան,
եւ անոնք որ իմաստութեամբ լեցուած էին՝
պիտի օրհնեն քեզ:

12 Ուխտե՛ր ըրէք մեր Տէր Աստուծոյն
եւ գործադրեցէ՛ք զանոնք,
դուք ամէ՛նքդ որ անոր շուրջը հաւաքուած էք,
ընծանե՛ր մատուցէք Ահաւորին.

13 ան իշխաններուն հոգին կ'առնէ,
եւ ահէ՛ղ է, երկրի բոլո՛ր թագաւորներէն աւելի:

ՍԱՂՄՈՍ 76/77

Աստուծոյ նախախնամութիւնը

1 Աւարտին: Իդիթունի համար: Սաղմոս Ասափի:

2 Իմ ձայնովս՝ Աստուծո՛յ աղաղակեցի.
եւ ան նայեցաւ ինծի:

ջամտութեան (Ես 33,22): Տկար՝ աշխարհի հօգրներուն դիմաց, խո-
նարհները իբրեւ գրաւական փրկութեան, ունին աստուածային արդար
միջամտութիւնը:

13- Հոգին կամ շունչը հոս կը նշանակէ փառութիւնը (Ես 37,20. Յբ
27,8. Յես 2,11): Աստուծոյ զօրութեան եւ միջամտութեան դիմաց, կը
նսեմանայ աշխարհի ամբարտաւաններուն փառութիւնը եւ իրենք ալ
կ'անհետանան նման վայրի խոտի եւ կը մնայ միայն մտայլ յիշատակը
իրենց գործերուն:

- 3 Ես զԱստուած փնտռեցի իմ նեղութեանս օրերուն,
 ձեռքերո՛վս փնտռեցի զինք, եւ չհաբուեցայ,
 մինչ հոգիս չէ՛ր ուզեր մխիթարուիլ:
- 4 Երբ հոգ կ'ընէի եւ հոգիս նուաղելու վրայ էր,
 զԱստուած յիշեցի եւ ուրախացայ:
- 5 Աչքերս յոգնեցան սպասելէն,
 խռովքի մատնուեցայ եւ դադրեցայ խօսելէ:
- 6 Անցեալի օրէ՛րը մտաբերեցի,
 եւ յաւիտենականութեան տարիները յիշեցի:
- 7 Գիշերները՝ ես ինծի հետ կը խօսէի,
 հոգեր կը համակէին զիս եւ հոգիս կը տառապէր մէջս:
- 8 արդեօք Տէրը պիտի մերժէ՞ զիս յաւիտեան,
 եւ պիտի չչարունակէ՞ իր հաճութիւնը ցոյց տալ ինծի:
- 9 ի սպա՞ռ պիտի դադրեցնէ իր ողորմութիւնը ինծմէ՛-
 կամ վե՞րջ պիտի դնէ սերունդէ սերունդ տուած
 իր խոստումներուն:
- 10 Կամ իմ Աստուածս պիտի մոռնա՞յ արդեօք զթալ ասկէ ետք՝
 կամ իր գթութեան վե՞րջ պիտի դնէ իր բարկութեան մէջ:

3– Մարդուն կեանքը յուզող կամ ծրագիրները խանգարող դէպքե-
 րէն անդին, տեսնել գործն Աստուծոյ որ կը բարձրացնէ, կ'առաջնորդէ
 դէպի երջանկութիւնն երկնային, կ'իրականացնէ հանդիպումը Աստու-
 ծոյ եւ մարդուն միջեւ:

- 11 Եւ ըսի՝ Հիմա՛ հասկցայ՝
 Բարձրեալին ձեռքը փոխուած է:
- 12 Եւ յիշեցի Տիրոջ կատարած գործերը անցեալի մէջ,
 յիշեցի անոր սքանչելիքնէ՛րը:
- 13 Խորհեցայ քու բոլո՛ր գործերուդ,
 եւ քու ձեռքիդ գործերը մտաբերեցի:
- 14 Աստուա՛ծ, սուրբ ես քու ճամբաներդ՝
 ո՞րն է աստուածը որ կրնայ հաւասարիլ մեր Աստուծոյն:
- 15 Դո՛ւն ես այն Աստուած որ սքանչելիքներ կը գործէ՛-
 դուն ցոյց տուիր զօրութիւնդ քու ժողովուրդիդ:
- 16 Քու բազուկովդ փրկեցիր քու ժողովուրդդ՝
 Յակոբի եւ Յովսէփի որդիները:
- 17 Զուրերը տեսան քեզ, ո՛վ Աստուած՝
 երբ ջուրերը տեսան քեզ՝ սարսափեցան,
 եւ անդունդները խռովեցան ահաւոր ջուրերու ձայնէն:
- 18 Ամպերը ձայն տուին,
 որովհետեւ քու նետերդ սկսան սլանալ
 քու կառքիդ անիւներուն որոտումի ձայնէն:

14– «Սուրբ եմ քու նախնիքդ»... սրբութիւնը իբրեւ յատկանիշը աստ-
 ւածութեան, համագոր է անոր գերակայութեան, ցոյց կու տայ անոր անհն-
 նելի էութիւնը: Ասոր համար, անոր նախնիքները, անոր ընթացքը մարդուն
 հանդէպ, ստէպ կը մնան անիմամալի:

19 քու փայլատակումներդ երեւցան տիեզերքի մէջ՝ եւ երկիրը խռովեցաւ եւ դողաց:

20 Քու ճամբաներդ ծովու մէջէ՛ն կ'անցնին, ամեհի ջուրերու մէջէ՛ն է քու շաւիղներուդ անցքը, սակայն անկէ ետք՝ հետքերդ անգամ չեն երեւիր:

21 Ինչպէս ոչխարներու՝ այնպէ՛ս առաջնորդ եղար դուն քու ժողովուրդիդ, Մովսէսի եւ Ահարոնի ձեռքով:

ՍԱՂՄՈՍ 77/78

Իսրայէլի գանազան ուղիները

Իմաստութիւն Ասափի:

1 Ուշադի՛ր եղէք օրէնքներուս, ժողովուրդնե՛ր, ձեր ականջները ուղղեցէք բերանիս խօսքերուն:

20-«Հետքերդ չեն երեւիր»... Աստուծոյ ցամաքները սուրբ են, այնպէս ալ փրկութեան ցամաք գոր կը բանայ Աստուած իր ժողովուրդին, չի թողուր տեսանելի հետքեր: Կեանքը իւրաքանչիւր հաւատացեալին, ցամաք մըն է փրկութեան, միայն ինք, իբրեւ անտեսանելի տեսնող (Եբր 11,27) կրնայ գտնել հետքերն Աստուծոյ անցքին՝ իր կեանքին:

1-Ներկայ սաղմոսը 118էն ետք ամէնէն ծաւալունն է: 80,94, 104-1058 սաղմոսներուն մասն, անոր գլխաւոր նիւթն է ծիսական պաշտամունքը հաւատարմութեան՝ Տիրոջ հանդէպ: Սաղմոսին ընդլայնումը կը ծաւալի երկու գլխաւոր գաղափարներու ուղղութեամբ. խոստովանութիւն եւ յիշատակութիւն: Խոստովանութիւնը դիտուած է լոյսին տակ Աստուծոյ ամենագորութեան, հակառակ գանազան շրջաններու մէջ ժողովուրդին անհաւատարմութեան:

2 Բերանս առականերով պիտի բանամ, անցեալի առականերով պիտի խօսիմ ձեզի:

3 Ինչպէս որ մենք լսեցինք եւ սորվեցանք այս բաները՝ եւ ինչպէս որ մեր հայրե՛րը պատմած են մեզի:

4 Ո՛չ մէկ բան ծածուկ պահեցինք անոնց որդիներէն, որպէսզի անոնք ալ յաջորդ սերունդին պատմեն Տիրոջ օրհնութիւնները, անոր գորութիւնը եւ անոր գործած սքանչելիքները:

5 Ան հաստատեց Յակոբին տուած իր վկայութիւնը, եւ օրէնք դրաւ Իսրայէլի վրայ. որպէսզի ինչ որ ան պատուիրած էր մեր հայրերուն՝ իրենց որդիներուն աւանդուի:

6 Եւ դալիք սերունդներն ալ զիտնան, եւ անոնցմէ ծնելիք որդիներն ալ ելլեն եւ իրենց որդիներուն պատմեն:

7 որպէսզի Աստուծոյ վրայ դնեն իրենց յոյսը, որ չմոռնան Աստուծոյ գործերը, եւ հաւատարմօրէն պահեն անոր պատուիրանները:

8 Եւ չըլլան իրենց հայրերուն նման՝ չար ու ապստամբ ազգ մը. ազգ մը՝ անուղղայ սրտով, որ Աստուծոյ մէջ հաստատած չէ իր հոգին:

9 Եփրեմի որդիները, ճարպիկ ու քաջ նետ արձակողներ, պատերազմի օրը իրենց կապարճները դարձուցին:

- 10 Անոնք հաւատարիմ չմնացին Տիրոջ ուխտին,
եւ չուզեցին քալել անոր Օրէնքներուն համեմատ:
- 11 Մոռցան անոր բարիքները,
եւ այն սքանչելիքները գորս ան ցոյց տուած էր անոնց,
- 12 եւ կատարած էր անոնց հայրերուն առջեւ,
Եզրկատացիներու երկրին մէջ,
եւ անոր գործած սքանչելիքները՝ Տայանի դաշտին վրայ:
- 13 Ան ծովը ճեղքեց եւ անցուց գիրենք,
եւ կեցուց ջուրերը, իբր թէ տիկերու մէջ ըլլային:
- 14 Ամպով առաջնորդեց զանոնք ցերեկը,
եւ կրակի լոյսով՝ ամբողջ գիշերը:
- 15 Ժայռը ճեղքեց անապատի մէջ,
եւ խմելիք ջուր տուաւ անոնց,
իբր թէ խոր ջրհորէ խմցնէր անոնց:
- 16 Զուր հանեց ժայռէն,
եւ գետի նման հոսեցուց ջուրերը:
- 17 Սակայն անոնք շարունակեցին մեղանչել,
եւ աւելի՛ եւս բարկացուցին Բարձրեալը անապատին մէջ:

14- Ելփի մէջ (13,21) կը խօսուի Աստուծոյ մասին որ ցերեկով կ'առաջնորդէր ժողովուրդին, թափնուած ամպի սիւնին մէջ, իսկ գիշերը՝ հրեղէն սիւնին մէջ:

15- Աստուծոյ հրաշագործ միջամտութիւնն է յիշատակուած Ծովէն անցքին եւ Սինայի հանգրուանին միջեւ, մամանայի հրաշքէն ետք (Ելք 17, 1-7):

- 18 ԶԱստուած՝ փորձեցին իրենց սրտերուն մէջ,
երբ կերակուր պահանջեցին իրենք իրենց համար:
- 19 Աստուծոյ դէ՛մ տրտնջեցին եւ ըսին.
Միթէ Աստուած կարո՞ղ է անապատի մէջ
սեղան պատրաստել մեզի:
- 20 Որովհետեւ ժայռին կը զարնէր ան եւ ջուրեր կը բխէին,
եւ վտակներ կը հոսէին անկէ.
բայց ան կրնա՞յ հաց ալ տալ մեզի
կամ սեղան սարքել իր ժողովուրդին:
- 21 Երբ Տէրը լսեց այս բաները՝ սպասեց,
ապա կրակի նման բորբոքեցաւ Յակոբի դէմ,
եւ անոր բարկութիւնը իջաւ Իսրայէլի վրայ:
- 22 քանի որ չէին հաւատացած Աստուծոյ,
եւ չէին վստահած անոր՝ թէ պիտի փրկէր գիրենք:
- 23 Հրամայեց վերէն ամպերուն,
եւ բացաւ երկինքի դռները.
- 24 եւ իբրեւ կերակուր՝ մանանայ տեղացուց անոնց վրայ.
երկինքի հա՛ցը տուաւ անոնց:
- 25 Մարդիկը հրեշտակներու հացը կերան.
եւ ինքը լիառատ կերակուր իջեցուց անոնց վրայ:
- 26 Հարաւի հովը հանեց,
եւ հիւսիսի հովը բերաւ իր զօրութեամբ.
- 27 եւ հող թափելու նման՝ վերէն միս տեղացուց անոնց վրայ,
եւ թեւաւոր թռչուններ՝ ծովու աւազին նման:

- 28 Թափեց զանոնք իրենց բանակտեղին վրայ,
եւ անոնց վրաններուն շուրջ:
- 29 Կերան եւ աւելիո՛վ յազեցան,
քանի որ ինչ որ ցանկացին՝ տուաւ զայն անոնց:
- 30 Եւ ո՛չ մէկ բան պակսեցաւ անոնց ցանկացածէն.
մինչ կերակուրը անոնց բերնին մէջ էր տակաւին.
- 31 Աստուծոյ բարկութիւնը իջաւ անոնց վրայ,
անոնցմէ շատերը սպաննեց,
եւ Իսրայէլի ընտիրներու ընտիրները մեռցուց:
- 32 Սակայն հակառակ այս բոլո՛ր բաներուն,
անոնք դարձեալ մեղանչեցին,
եւ չհաւատացին անոր սքանչելիքներուն:
- 33 Ունայն բաներով վատնեցին իրենց օրերը,
եւ շուտով անցան անոնց տարիները:
- 34 Երբ ան մահ կը դրկէր անոնց վրայ՝ զինքը կը փնտռէին,
դարձի կու գային եւ կը փութային Աստուծոյ մօտ:
- 35 Կը սկսէին վերյիշել՝ թէ Աստուած էր իրենց օգնականը,
թէ բարձրեալ Աստուածն էր իրենց փրկիչը:
- 36 Սակայն իրենց բերնով միայն սիրեցին զինքը,
եւ իրենց լեզուներով՝ ստեցին անոր:
- 37 Անոնց սիրտը ուղիղ չէր վարուէր անոր հետ,
եւ չէին վստահէր անոր Ուխտին:

- 38 Սակայն ինքը գթած էր, կը քաւէր անոնց մեղքերը,
ու չէր բնաջնջէր զանոնք.
յաճախ ետ կ'առնէր իր բարկութիւնը անոնցմէ,
եւ իր ամբողջ զայրոյթը չէր ցուցնէր անոնց դէմ:
- 39 Կը յիշէր թէ մարմնաւոր էակներ են անոնք,
եւ հոգին, եթէ ելլէ՝ չի՛ վերադառնար այլեւս:
- 40 Քանի՛ քանի անգամ դառնացուցին զինքը անապատին մէջ,
եւ Բարձրեալը բարկացուցին ամայի վայրերուն մէջ:
- 41 Կրկին դառնալով՝ զԱստուած փորձեցին,
եւ Իսրայէլի Սուրբը զայրացուցին:
- 42 Չյիշեցին այն օրը՝ ուր անոր ձեռքը փրկած էր զիրենք
իրենց նեղիչներուն ձեռքէն:
- 43 Ինչպէ՛ս նշաններ եւ հրաշքներ գործած էր ան
Եգիպտացիներու երկրին մէջ,
եւ Տայանի դաշտին վրայ:
- 44 Ինչպէ՛ս արիւնի վերածած էր գետերն ու անձրեւները՝
որ անոնք չկարենային ջուր խմել:

38- Պատկերն է Ելբի Աստուծոյ որ «ողորմած է եւ երկայնամիտ եւ բազմողորմ, կը ներէ յանցանքները եւ զանցառութիւնները...» (Ելբ 34,7):

39-Սաղմոսին մէջ, յիշատակութիւնը մարդուն բարոյական տկարութեան, կը տանի զԱստուած գթութեան եւ կարեկցութեան (Յս 40, 6-8):

- 45 Անոնց վրայ ղրկած էր շանաճանճեր՝
որ կերած էին զանոնք,
եւ գորտեր՝ որ ապականած էին ամէն կողմ:
- 46 Անոնց բերքերը ժանգոտել տուած էր,
եւ մարախներու կեր դարձուցեր էր անոնց վաստակը:
- 47 Անոնց այգիները կարկտաճար ըրած էր,
եւ անոնց թզեհները եղեամով փճացուցած էր:
- 48 Անոնց անասունները կարկուտի գոհ ըրած էր,
եւ անոնց ստացուածքները հրոյ ճարակ դարձուցած էր:
- 49 Անոնց վրայ ղրկած էր իր սրտնեղուլթիւնն ու բարկուլթիւնը,
իր գայրոյլթն ու ցասուամբ,
եւ անոր համար տանջանքներ ղրկած էր անոնց վրայ՝
չար հրեշտակի ձեռքով:
- 50 Իր սաստիկ բարկուլթիւնը հասցուցած էր անոնց վրայ-
մահէն չէր խնայած անոնց հոգին,
եւ անոնց անասունները սատակել տուած էր:
- 51 Հարուածած էր Եգիպտացի բոլոր անդրանիկները,
արգասիքը իրենց բոլոր վաստակներուն՝
Քամի ցեղին յարկերուն տակ:
- 52 Իր ժողովուրդը քշած էր ոչխարներու նման,
եւ անապատ վարած էր զանոնք՝ հօտի մը նման:
- 53 Առաջնորդած էր անոնց եւ յոյս տուած՝ որ չվախնան:
Մո՛վը ծածկած էր անոնց թշնամիները:

- 54 Իր սուրբ լեռը հանած էր զանոնք,
ա՛յն լեռը՝ զոր ի՛ր աջով ստացած էր:
- 55 Հեթանոսները վտարած էր անոնց առջեւէն,
անոնց ինչքերը վիճակով բաժնած էր
իր ժառանգութեան միջեւ-
եւ անոնց տուներուն մէջ բնակեցուցած էր Իսրայէլի ազգը:
- 56 Անոնք փորձեցին եւ դառնացուցին Բարձրեալ Աստուածը,
եւ անոր վկայութիւնը չպահեցին:
- 57 Դարձան եւ խոտորեցան, իրենց հայրերուն նման,
դարձան եւ եղան՝ ծուռ աղեղի նման:
- 58 Դարձեալ բարկացուցին զայն իրենց բազիններով,
եւ անոր նախանձը գրգռեցին իրենց կուռքերով:
- 59 Աստուած լսեց եւ արհամարհեց զանոնք,
եւ բոլորովին լքեց Իսրայէլը:
- 60 Հեռու պահեց իրմէ Սելովի վրանը,
ա՛յն վրանը զոր ի՛նք կանգնած էր,
մարդոց մէջ բնակելու համար:
- 61 Գերութեան մատնեց անոնց զօրքերը,
եւ թշնամիներուն ձեռքը յանձնեց անոնց գեղեցկութիւնը:
- 62 Թողուց որ սուրէ անցնի իր ժողովուրդը,
եւ անտես ըրաւ իր ժառանգութիւնը:
- 63 Կրակը լափեց անոնց երիտասարդները,
եւ ո՛չ ոք սզաց անոնց կոյսերը:

64 Անոնց քահանաները սուրբով ինկան,
եւ մէկը չմնաց որ լար անոնց այրիներուն վրայ:

65 Սակայն Տէրը քնացողի մը նման արթնցաւ,
նման դիւցազնի մը որ գինարբուքէն կը սթափի:

66 Ան կռնակէն զարկաւ իր թշնամիները,
եւ յաւիտենապէս նախատինքի մատնեց զանոնք:

67 Ան մերժց Յովսէփի վրանը,
եւ չընտրեց Յփրեմի ցեղը:

68 Այլ ընտրեց Յուդայի՝ ցեղը,
եւ Սիոն լեռը, զոր սիրած էր:

69 Ան, միեղջերուի նման՝
իւր սրբավայրը յաւիտենապէս հաստատեց երկրի վրայ:

70 Ան իր ծառան՝ Դաւիթը ընտրեց,
ոչխարներու հօտէն առնելով զայն:

69– Տանարին կառուցումը նախատեսած եւ ծրագրած էր Դաւիթ: Ծրագիրը իրականացուց անոր որդին եւ յաջորդը՝ Սողոմոն: Սողոմոն- սերգուն կը ներկայացնէ ձեռնարկը իբր գործը Աստուծոյ եւ կու տայ անոր ընդհանրական տարողութիւն:

70– Դաւիթ՝ իբրեւ թագաւոր եւ Տիրոջ օծեալ, տիպարն է Մեսիա Թագաւորին: Հովիւ ոչխարներու, աստուածային ընտրութեամբ եղաւ հովիւ Աստուծոյ ժողովուրդին: Աստուածային ընտրանքը մտան կերպարանափոխութիւնը կատարեց Պետրոսի եւ առաքելներուն մէջ: Խաղաղ ձկնորսներ Գալիլիոյ ծովակիին, եղան որսորդ մարդոց աշխարհի անծայրածիր ովկեանին վրայ (Մտք 4,19):

71 Ան ընտրեց այն որ վերջինն էր ծնունդով՝
հովուելու համար իր ծառան, Յակոբը,
եւ իր ժառանգութիւնը՝ Իսրայէլը:

72 Ան, իր սրտին իմաստութեամբը կ'արածէր զանոնք,
եւ անմեղ ձեռքով կ'առաջնորդէր անոնց:

ՍԱՂՄՈՍ 78/79

Ողբ երուսաղէմի կործանման համար

Սաղմոս Ասափի:

1 Աստուած, հեթանոսները մտան քու ժառանգութեանդ մէջ,
պղծեցին քու սուրբ տաճարդ,
միրգի պարտիզպանի խրճիթ դարձուցին Երուսաղէմը:

2 Քու ծառաներուդ դիակները նետեցին իբր թռչունի կեր,
եւ քու սուրբերուդ մարմինները՝ երկրի գազաններուն:

3 Անոնց արիւնը ջուրի պէս թափեցին Երուսաղէմի շուրջ,
եւ մէկը չեղաւ որ թաղէր զանոնք:

4 Մենք ենթարկուեցանք մեր դրացիներուն նախատինքին,
եւ ծաղր ու ծանակի առարկայ եղանք մեր շուրջը եղողներուն:

5 Տէ՛ր, դեռ մինչեւ ե՞րբ պիտի բարկանաս,
արդեօք պիտի բորբոքի՞ տակաւին նախանձիդ կրակը:

1– Սողոմոսերգուն կը պաղատի Աստուծոյ որ վերջ դնէ բարկութեան իր ժառանգութեան դէմ եւ փրկէ զայն դժնդակ կացութենէն:

6 Բարկուժիւնդ թափէ ա՛յն ազգերուն վրայ՝
որ չեն ճանչնար քեզ,
եւ ա՛յն թագաւորներուն վրայ՝ որ քու անունդ չեն կանչեր:

7 Որովհետեւ անոնք կերան Յակոբը,
եւ աւերեցին անոր վայրերը:

8 Մի՛ յիշեր մեր անցեալի մեղքերը,
փութացո՛ւր քու ողորմութիւնդ մեզի հանդէպ,
որովհետեւ չափազանց թշուառացած ենք:

9 Օգնէ՛ մեզի, Աստուած, մեր փրկի՛չը,
քու անունիդ փառքին համար.
փրկէ՛ մեզ, Տէ՛ր, քաւէ՛ մեր մեղքերը քու անունի՛դ համար:

10 Թող չըսուի՛ երբեք հեթանոսներուն միջեւ.
Ո՞ւր է ասոնց Աստուածը.
այլ յայտնի թող ըլլայ մեր աչքերուն առջեւ՝
թէ ի՛նչ պատահած է հեթանոսներուն,
եւ ինչպէ՛ս անոնցմէ կ՛առնուի վրէժը՝
քու ծառաներուդ թափուած արիւնին:

11 Թող առջեւդ բարձրանայ բանտարկեալներուն հեծեծանքը,
եւ բազուկիդ զօրութեամբը քու մօտդ առ՝
սպաննուածներուն գաւակները:

8- Ըստ հատուցման օրէնքին, որդին պատասխանատու է հօր յանցանքին. «Ես եմ բոլ Աստուածոյ, Աստուած նախանոտ, հայրերուն մեղքին հատուցումը կու տամ անոնց որդիներուն՝ մինչեւ երրորդ եւ չորրորդ սերունդը» (Ելք 20,5): Նախանոտ, միանգամայն բազումորում է Աստուած. «Հազարապատիկ գթութիւն ցոյց կու տամ անոնց որ կը սիրեն զիս» (Ելք 20,6):

12 Եօթնապատի՛կ հատուցանէ մեր դրացիներուն՝
այն նախատինքները որոնցմով քե՛զ նախատեցին, Տէ՛ր:

13 Մենք, քու ժողովուրդդ եւ քու արօտիդ ոչխարները՝
քե՛զ պիտի օրհնենք յաւիտեան,
եւ քու փառաբանութիւնդ պիտի ընենք սերունդէ՛ սերունդ:

ՍԱՂՄՈՍ 79/80

Խնդրամբ Աստուծոյ օգնութեան

1 Աւարտին: Անցեալ ժամանակներու վկայութիւններու մասին: Եթովպացիներուն վրայ ըսուած սաղմոս:

2 Նայէ՛ մեզի, դուն որ կը հովուես Իսրայէլը,
եւ կ՛առաջնորդես Յովսէփը իբր հօտ:

13- Հաւատով եւ գոջացեալ սրտով եղած աղօթքը չի մերժուիր: Վստահ Աստուծոյ գթութեան եւ բարութեան միջամտութեան, հասարակութիւնը կը խոստանայ տալ գոհութիւնը եւ հնչեցնել գովաբանութիւնը: Գրիստոսի անունը կրող հաւատացեալը կը պատկանի Աստուծոյ: Երբ ի խորոց արտի կը կանչէ Հայրը, անոր բարկութիւնը տեղի կու տայ սիրոյ կարեկցութեան: Սակայն հասնելու համար հոն, հարկ է որ մարդուն «սիրտը փրեղէն, ցմլուի սիրով»:

2- Հովիւի պատկերը որ տրուած է Աստուծոյ, կը վերաբերի յատկապէս ժողովուրդին ֆանապարհորդութեան շրջանին դէպի Աւետեաց երկիրը: Նոյն գաղափարին արտայայտութիւնը դրուած է Յակոբ նահապետին բերանը, մահուան անկողինին մէջ. «Մանկութենէս ի վեր, Աստուած եղաւ իմ հովիւս» (Մեկն. 48,15): Սաղմոսբազում, յիշեով հիւսիսի ցեղերը, աչքի առջեւ ունի ամբողջութիւնը Աստուծոյ ժողովուրդին, որ կ'ապրի բաժանումին ողբերգութիւնը:

3 Դու՛ն, որ Քերովբէներուն վրայ կը նստիս՝ յայտնուէ՛, Եփրեմի, Բենիամինի եւ Մանասէի առջեւ՝ ցո՛յց տու զօրու՛թիւնդ եւ եկո՛ւր, փրկէ՛ մեզ:

4 Դու՛ն, զօրու՛թիւններո՛ւ Աստուած, վերադարձո՛ւր մեզ, երե՛սդ դարձուր մեզի, եւ մենք պիտի փրկուինք:

5 Զօրու՛թիւններու Տէ՛ր Աստուած, մինչեւ ե՞րբ բարկութեամբ պիտի վերաբերիս քու ծառաներուդ աղօթքներուն նկատմամբ:

6 Արցունքներո՛վ հաց կերցուցիր մեզի, եւ անչափ արտասուք ըմպել տուիր մեզի:

7 Մեր դրացիներուն նախատինքին առարկան ըրիր մեզ, եւ ծաղրն ու հեզնանքը մեր թշնամիներուն:

8 Զօրու՛թիւններո՛ւ Աստուած, վերադարձո՛ւր մեզ, երե՛սդ դարձուր մեզի եւ պիտի փրկուինք:

9 Իբր այգի, Եգիպտոսէն փոխադրեցիր մեզ, հեթանոսները հանեցիր եւ զիրենք տնկեցիր հոն:

10 Դու՛ն առաջնորդ եղար անոր, հաստատեցիր անոր արմատները, եւ ան լեցուց երկիրը:

11 Անոր հովանին լեռնե՛րը ծածկեց, եւ անոր նոր ճիւղերը Աստուծոյ մայրիներուն պէս եղան:

12 Ան մինչեւ ծո՛վ երկարեց իր ճիւղերը, եւ մինչեւ զետե՛րը հասան անոր շառաւիղները:

13 Ինչո՞ւ քանդեցիր անոր ցանկապատը, ամէ՛ն ճամբէն անցնող կը կթէ՛ զայն:

14 Անտառի խոզերը ապականեցին զայն, եւ վայրի երէնք արածեցան անոր վրայ:

15 Զօրու՛թիւններո՛ւ Աստուած, դարձի՛ր, նայէ՛ երկինքէն, եւ տե՛ս, այցելէ՛ այս այգիին:

16 Խնամ՛ք տար ասոր, զոր քո՛ւ աջ տնկած էր, մարդու որդիին՝ զոր դո՛ւն իսկ զօրացուցիր:

17 Կրակով այրելէ եւ աւերելէ ետք, քու սաստիղ վրայ՝ պիտի ոչնչանան անոնք:

18 Թող ձեռքդ այդ մարդուն վրայ ըլլայ, աջդ ըլլայ մարդու որդիին վրայ զոր զօրացուցիր քեզմով:

19 Եւ այլեւս մենք պիտի չհեռանանք քեզմէ, դու՛ն պիտի փրկե՛ս մեզ, եւ մենք՝ քո՛ւ անունդ միայն պիտի կանչենք, Տէ՛ր:

20 Զօրու՛թիւններո՛ւ Աստուած, վերադարձո՛ւր մեզ, երե՛սդ դարձուր մեզի եւ մենք պիտի փրկուինք:

19–Մարդը, Աստուծմէ հեռու եւ գրկուած շնորհէն, չի կրնար եթէ ոչ կրել իր տկարութիւններուն բոլոր դառն հետեւանքները:

ՍԱՂՄՈՍ 80/81

Հաւատարիմ մնալ Աստուծոյ

- 1 Աւարտին: Հնձանի համար: Սաղմոս Ասափի: Հինգերորդ շաբթուան համար:
- 2 *Յնծացէ՛ք Աստուծոյ առջեւ, մեր օգնականն է ան, աղաղակեցէ՛ք Յակոբի Աստուծոյն:*
- 3 *Սաղմոսները առէք եւ օրհնութիւն տուէք, սաղմոս երգեցէք անոր՝ քաղցրաձայն եղանակներով:*
- 4 *Փո՛ղ հնչեցուցէք ամսագլուխներուն, եւ մեր տարեկան բոլո՛ր երեւելի տօներուն:*
- 5 *Իսրայէլին տրուած պատուէ՛ր է այս, եւ Յակոբի Աստուծոյն իրաւունքը:*
- 6 *Վկայութիւնն է այս՝ զոր ան Յովսէփին հետ ըրաւ՝ երբ Եգիպտացիներու երկրէն կ'ելլէր, եւ լսեց լեզու մը որ ծանօթ չէր իրեն:*

4- Փող եւ թմրուկ զարնել հրամայուած էր որոշ հանդիսութիւններու առիթով եւ առաօտեան ու երեկոյեան գոհերու մատուցման ժամուն: Տօնական հանդիսութիւնները կը սկսէին հունձներու առաջին օրը եւ կը փակուէին յիսուն օր ետ: Տաղաւարահարաց տօնն է, կոչուած էր նաեւ տօնը շաբթօններու: Տօնական օրերը կ'անցընէին ուստերով շինուած վրաններու տակ:

- 7 *Ես անոր թիկունքը ազատ կացուցի բեռներէն, եւ անոր ձեռքերը՝ որ թատունկին եւ բահին աշխատանքի ծառայական գործէն:*
- 8 *Դուն դիմեցիր ինծի նեղութեանդ մէջ, եւ ես փրկեցի քեզ, եւ լսեցի քեզ՝ մրրիկին մ'թուլթեան մէջէն, եւ փորձի ենթարկեցի՝ Հակառակութեան Ջուրերուն վրայ:*
- 9 *Լսէ՛, ժողովուրդս, քեզի՛ համար կը վկայեմ ես, ո՛վ Իսրայէլ, մտի՛կ ըրէ ինծի:*
- 10 *Անցաւոր աստուածներ պէտք չէ գտնուին այլեւս քու մօտդ, եւ դուն երկրպագութիւն պիտի չընէ՛ս օտար աստուածի:*
- 11 *Ե՛ս եմ քու Տէր Աստուածդ, որ Եգիպտացիներու երկրէն հանեցի քեզ, բա՛ց բերանդ, եւ ես պիտի լեցնեմ զայն:*
- 12 *Իմ ժողովուրդս չլսեց ձայնս, եւ Իսրայէլը ամենեւին չնայեցաւ ինծի:*
- 13 *Լքեցի զիրենք եւ թոյլ տուի՝ որ իրենց կամքին եւ սրտին հետեւին, որովհետեւ անոնք ուզեցին իրենց անձնական կամքին համեմատ քալել:*

11- «Բաց բերանդ...» հրաւերն է ընդունելու բարիքները աստուածային ուսուցումին: Աստուծոյ խօսքին բաց սիրտը, մաքուր տրամադրութիւններով, պիտի յագնայ «նառագայթներով Հոգիին պարգեւներուն» (Լամբրոնացի):

- 14 Սակայն, եթէ ժողովուրդս ինծի մտիկ ըրած ըլլար, կամ եթէ Իսրայէլը ի՛մ ճամբէս քալած ըլլար,
- 15 ես՝ ոչինչի նման կը խոնարհեցնէի անոր թշնամիները, եւ զիրենք նեղացնողներուն վրա՛յ կ'իջեցնէի ձեռքս:
- 16 Տիրոջ թշնամիները սուտ խօսեցան անոր, եւ ա՛յդպէս պիտի ըլլայ անոնց կեանքը աշխարհի վրայ:
- 17 Ան կերակրած էր զանոնք առատ ցորենով, եւ ժայռէն մեղր հանելով յագեցուցած էր զիրենք:

ՍԱՂՄՈՍ 81/82

Անիրաւ դատաւորներուն դէմ

Սաղմոս Ասափի:

- 1 Աստուած կեցաւ աստուածներու ժողովին մէջ, եւ անոնց մէջ սկսաւ դատել զանոնք:
- 2 Մինչեւ ե՞րբ անիրաւութեամբ պիտի դատէք դուք, եւ աչք պիտի գոցէք մեղաւորներուն վրայ:

1- Հետեւողութեամբ մարգարեական հարցադրութեան, սաղմոսերգուն կը պատկերացնէ Աստուծոյ միջամտութիւնը ատեանի մէջ, դատելու համար աստուածները դրացի ազգերուն: Քանի որ այս աստուածները անկարող են պաշտպանելու դատը տկարին եւ աղքատին, փրկարար աստուածութիւններ չեն: Թաղուած անգիտութեան եւ խաւարին մէջ, անկարող են երաշխաւորելու երկրին բարոյական եւ բնական ներդաշնակութիւնը:

- 3 Դա՛տը տեսէք որբին եւ այրիին, իրենց իրաւո՛ւնքը տուէք տնանկին ու աղքատին:
- 4 Ազատեցէ՛ք աղքատն ու տնանկը, փրկեցէ՛ք զանոնք մեղաւորի ձեռքերէն:
- 5 Անոնք չհասկցան, եւ չուզեցին մտիկ ընել անոր, խաւարի մէջ քալեցին, եւ երկրի բոլո՛ր հիմերը խախտեցան:
- 6 Ես ըսի՝ աստուածներ էք դուք բոլո՛րդ կամ Բարձրեալին որդիները:
- 7 Դուք իբրեւ մա՛րդ պիտի մեռնիք ահա, եւ ա՛յնպէս պիտի իյնաք՝ ինչպէս իշխաններէն մէ՛կը:
- 8 Ելի՛ր Աստուած, եւ դո՛ւն դատէ երկիրը, որպէսզի դո՛ւն տիրես բոլոր հեթանոսներուն վրայ:

ՍԱՂՄՈՍ 82/83

Աղօթք՝ քշմամիներէն ազատելու համար

- 1 Օրհնութեան սաղմոս Ասափի:
- 2 Ո՞վ կրնայ նմանիլ քեզի, Աստուած, մի՛ լռեր, անտարբեր մի՛ մնար, ո՛վ Աստուած:
- 3 Որովհետեւ քու թշնամիներդ գոչեցին ահա, եւ քեզ ատողները բարձրացողին իրենց գլուխը:
- 4 Չարամիտ դաւեր նիւթեցին անոնք ժողովուրդիդ դէմ՝ քու սուրբերուդ դէմ ժողով գումարեցին եւ ըսին:

- 5 Եկէք ջնջե՛նք ասոնք ազգերու մէջէն,
եւ Իսրայէլի անունը թող չիշուի՝ երբեք:
- 6 Անոնք, բոլո՛րը միացած, ժողով ըրին,
եւ դաշինք կնքեցին քեզի դէմ՝
- 7 Եզոմայեցիներու եւ Իսմայելացիներու բանակները,
Մովաբն ու Հագարացիները,
- 8 Գեբաղն ու Ամոնը, Ամաղեկն ու այլազգիները,
իրենց բոլո՛ր բնակիչներով, Մուրն ալ մէջը:
- 9 Նոյն իսկ Ասո՛ւրը եկած էր անոնց հետ,
եւ բոլոր ասոնք՝ զօրավիգ էին Ղովտի որդիներուն:
- 10 Նոյնը ըրէ ասո՛նց ալ, ինչ որ Կիսոնի հովտին մէջ՝
Մադիամին, Սիսարային, Յարբին եւ Կիսոնի ըրիր՝
- 11 անոնք ջարդուեցան Դեբովրի աղբիւրներուն քով,
եւ երկրին աղբը դարձան:
- 12 Նոյնը ըրէ անոնց իշխաններուն՝
ինչ որ ըրիր Որէբին, Չէբին, Չէբէին, Սալմանային,
եւ անոնց բոլո՛ր իշխաններուն,
- 13 որոնք ըսին՝ Մե՛նք ժառանգենք Աստուծոյ սրբավայրը:
- 14 Աստուած իմ, անիւի նման դարձուր զանոնք,
ինչպէս եղէզը քամիին դիմաց:
- 15 Ինչպէս կրակը որ անտառը կ'այրէ՝
ինչպէս բոցը որ լեռներ կը հրկիզէ՝

- 16 այնպէ՛ս հալածէ զանոնք քու մրրիկովդ,
եւ քու բարկութեամբդ խռովութեան մատնէ զանոնք:
- 17 Անարգանքով պատէ անոնց երեսները,
որպէսզի քու անունդ փնտռեն, Տէ՛ր:
- 18 Թող ամչնան ու յաւիտեանս յաւիտենից խռովին,
եւ թող ամօթալից կորսուին անոնք՝
- 19 որպէսզի ճանչնան թէ քու անունդ Տէ՛ր է,
եւ դո՛ւն ես միակ Բարձրեալը ամբողջ երկրի վրայ:

ՍԱՂՄՈՍ 83/84

Ուխտագնացներու երգ

- 1 Աւարտին: Հնձանի համար: Կորիսի որդիներուն. Սաղմոս:
- 2 Որքա՛ն սիրելի են բնակարաններդ,
գօրովթիւններո՛ւ Տէր:
- 3 Քու գաւիթներո՛ւդ կը ցանկայ եւ կը փափաքի իմ հոգիս՝
թող սիրտս ու մարմինս ցնծա՛ն կենդանի Աստուծոմով:

2-Սաղմոսը եղբրեքգական ոճով երգն է Սիոնի, գովքը բնակութեան տանարին մէջ՝ աղբիւր շնորհի եւ երջանկութեան: Բնակարանները, բառացիօրէն վրանները, ակնարկութիւնն է ժողովուրդին բնակութեան անապատին մէջ, վրաններու տակ եւ Աստուծոյ ներկայութեան Ուխտի տապանակով, յատուկ վրանի մը տակ:

4 Որովհետեւ ճնճղուկը տուն գտաւ իրեն համար, եւ տատարակն իր բոյնը՝ իր ձագերը դնելու համար. քու խորանի՛դ մօտ, զօրութիւններո՛ւ Տէր, թագաւո՛րս եւ Աստուա՛ծս:

5 Երանի՛ բոլոր անոնց որ Տիրոջ տան մէջ կը բնակին, յաւիտեանս յաւիտենից անոնք պիտի օրհնեն քեզ:

6 Երանի՛ այն մարդուն որու օգնութիւն կու գայ քեզմէ, եւ որ մտադրած է ճամբայ ելլել՝

7 այս տրտմութեան հովիտէն, այն տեղը ուր ուխտած է. օրհնութիւն պիտի գայ անոր անկէ՝ որ այս օրէնքը դրած է:

8 Ան հետզհետէ աւելի՛ պիտի զօրանայ, եւ Աստուած պիտի երեւի Սիրոնի վրայ:

9 Զօրութիւններո՛ւ Տէր Աստուած, լսէ՛ աղօթքս, Աստուա՛ծ Յակոբի, ահա՛նջ դիր ինծի:

10 Դո՛ւն ես մեր ապաւէնը. նայէ՛, Աստուա՛ծ, եւ տե՛ս քու Օծեալիդ երեսը:

11 Որովհետեւ աւելի հաճելի է ինծի համար մէկ օրը՝ քու գաւիթիդ մէջ, քան հազարաւորները՝ այլ տեղ: Կը նախընտրեմ կեղտի մէջ ապրիլ Աստուծոյ տան մօտ, քան մեղաւորներու յարկին տակ:

12 Տէրն Աստուած կը սիրէ ողորմութիւնն ու ճշմարտութիւնը. ա՛ն պիտի տայ շնորհքն ու փառքը. Տէրը պակաս չ՛ըներ իր ողորմութիւնը անոնց հանդէպ՝ որ մաքուր սրտով կ'ապրին:

13 Զօրութիւններո՛ւ Տէր Աստուած, երանի՛ այն մարդուն որ քո՛ւ վրադ դրած է իր յոյսը:

ՍԱՂՄՈՍ 84/85

Աղօթք՝ Խաղաղութեան Համար

1 Աւարտին. Կորնի որդիներուն. Սաղմոս:

2 Տէ՛ր, դուն հաճութիւնդ ցոյց տուիր երկրիդ հանդէպ, եւ գերութենէ վերադարձուցիր Յակոբը:

3 Ներում տուիր ժողովուրդիդ անիրաւութիւններուն, եւ ծածկեցիր անոնց բոլոր մեղքերը:

4 Դուն զսպեցիր քու բոլոր բարկութիւնդ, եւ ետ կեցար քու ահաւոր զայրոյթէդ:

5 Մեզի՛ դարձիր, Աստուա՛ծ, Փրկի՛չ մեր, եւ հեռացո՛ւր բարկութիւնդ մեզմէ:

6 Յաւիտեան մի՛ բարկանար մեզի դէմ, Տէ՛ր, եւ բարկութիւնդ մի՛ պահեր սերունդէ սերունդ:

7 Աստուա՛ծ, դուն դա՛րձեալ պիտի ապրեցնես մեզ, եւ ժողովուրդդ քու մէ՛ջը պիտի գտնէ իր ուրախութիւնը:

8 Յո՛յց տուր մեզի ողորմութիւնդ, Տէ՛ր, եւ փրկութի՛ւնդ տուր մեզի:

2– Սաղմոսին գլխաւոր թեման տարագրելու նպատակով վերադարձն է, պայմանաւորուած Աստուծոյ ներումով:

9 Պիտի լսեմ թէ ի՛նչ կը խօսի մեր Տէր Աստուածը․
ան խաղաղութիւն կը խոստանայ իր ժողովուրդին,
իր սուրբերուն, եւ անոնց որ բոլոր սրտով դարձած են իրեն:

10 Սակայն անոր փրկութիւնը մօտ է իր երկիւղածներուն,
որպէսզի իր փառքը բնակի մեր երկրին մէջ:

11 Ողորմութիւն եւ ճշմարտութիւն իրարու պիտի հանդիպին,
արդարութիւն ու խաղաղութիւն զիրար պիտի համբուրեն:

12 Ճշմարտութիւնը երկրէն բուսաւ,
եւ արդարութիւնը երկինքէն երեւցաւ:

13 Տէրը իր քաղցրութիւնը պիտի տայ,
իսկ մեր երկիրը՝ իր պտուղը:

14 Արդարութիւնը անոր առջեւէն պիտի քալէ,
եւ իր քայլերը պիտի դնէ անոր ճամբուն վրայ:

9- Պաշտամունքին պաշտօնեան կը ներկայանայ հասարակութեան իբրեւ պատգամաբեր Աստուծոյ եւ աւետող՝ անոր փրկութեան որուն կ'ընկերանան արդարութիւն եւ խաղաղութիւն:

10- Տիրոջ փառքը տեսանելի յայտնութիւնն է անոր աստուածութեան: Ժողովուրդին անհաւատարմութեան պատճառով Աստուծոյ փառքը հեռացած էր տաճարէն եւ Նրուսաղէմէն: Տաճարին վերակառուցումով, Աստուած պիտի վերադառնայ եւ անոր փառքը դարձնելու պիտի բնակի երկրին մէջ (Յգլ 11,23․ 43,2․ Անգ 2,9):

11-«Ճշմարտութիւնը որ մեզմէ է, եւ սերը որ Աստուծմէ է, երբ իրարու կը հանդիպին մենք կ'արդարանանք եւ խաղաղութիւնը կը ստանանք Աստուծմէ» (Լամբրոնացի):

ՍԱՂՄՈՍ 85/86

Խնդրանք՝ Աստուծոյ օգնութեան

Աղօթք Դաւիթիւն.

1 Խոնարհեցո՛ւր ականջդ, Տէ՛ր, եւ լսէ՛ զիս,
որովհետեւ ես աղքատ եմ եւ տնանկ:

2 Պահպանէ՛ հոգիս, որովհետեւ ես մաքուր եմ,
փրկէ՛ քու ծառադ, Աստուած իմ,
որովհետեւ յոյսս քո՛ւ վրադ դրած եմ:

3 Ողորմէ՛ ինձի, Տէ՛ր,
որովհետեւ քեզի՛ աղաղակեցի օրն ի բուն:

4 Ուրախացո՛ւր ծառայիդ հոգին,
որովհետեւ դէպի քեզ բարձրացուցի հոգիս, Տէ՛ր:

5 Որովհետեւ դուն քաղցր եւ ուղիղ ես, Տէ՛ր,
բազումողորմ՝ բոլո՛ր անոնց հանդէպ որ քեզի կ'աղաչեն:

6 Ակա՛նջ դիր աղօթքիս, Տէ՛ր,
եւ ուշադրութիւն դարձուր խնդրանքիս ձայնին:

1- Սաղմոսերգուն կրցած է դնել խմբագրութեան մէջ իւրայատուկ շեշտ կրօնասիրութեան եւ աստուածապաշտութեան: Հալածական, կ'ապաստանի տաճար, մօտիկ Աստուծոյ (հ․ 14) որ բազմողորմ է եւ բազմագութ, որուն նմանը չկայ (հ․ 8) եւ պիտի ընդունի յարգանքը բոլոր ժողովուրդներուն:

- 7 Նեղուլթեանս օրը քեզի աղաչեցի,
եւ դուն լսեցիր զիս:
- 8 Չկա՛յ քեզի նման մէկը աստուածներուն մէջ, Տէ՛ր,
եւ չկա՛յ մէկը որ կարենայ քու գործերուդ նմանը ընել:
- 9 Բոլո՛ր ազգերը զորս ստեղծեցիր,
պիտի գան եւ քու առջեւդ պիտի երկրպագեն,
եւ քու անունդ պիտի փառաւորեն յաւիտեան:
- 10 Մե՛ծ ես դուն, Տէ՛ր, եւ սքանչելիքներ կը գործես,
եւ դո՛ւն ես միակ Աստուածը:
- 11 Քու ճամբուդ մէջ առաջնորդէ զիս,
եւ ես քու ճշմարտութեանդ մէջ պիտի քալեմ:
եւ սիրտս պիտի ուրախանայ քու անունիդ երկիւղով:
- 12 Քեզ պիտի գովաբանեմ բոլո՛ր սրտովս, Տէր Աստուածս,
եւ քու անունդ պիտի փառաւորեմ յաւիտեան:
- 13 Մե՛ծ եղաւ քու ողորմութիւնդ ինծի հանդէպ,
որովհետեւ դժոխքի խորերէն փրկեցիր զիս:
- 14 Անօրէն մարդիկ ինծի դէմ ելան, Աստուած իմ,
եւ հօրներու բազմութիւնը հետապնդեց զիս.
եւ քեզ Աստուած չհամարեցան իրենց առջեւ:
- 15 Սակայն դուն, իմ Տէ՛ր Աստուածս, գիժած ես եւ ողորմած,
համբերատար, բազումօղորմ եւ ճշմարտասէր:
- 16 Նայէ՛ ինծի եւ ողորմէ՛ ինծի.
զօրութի՛ւն տուր քու ծառայիդ,
եւ ազատէ՛ քու աղախինիդ որդին:

- 17 ցո՛յց տուր ինծի քու բարութեանդ նշանը, որպէ՛սզի
անոնք որ կ'ատեն զիս տեսնեն եւ ամօնան՝ թէ՛ դո՛ւն
օգնեցիր ինծի, Տէ՛ր, եւ մխիթարեցիր զիս:

ՍԱՂՄՈՍ 86/87

Միռն՝ մայր բուր ժողովուրդներու

- 1 Կորիսի որդիներուն օրհնութեան սաղմոսը:
- 2 Անոր հիմերը իր սուրբ լեռան վրայ դրուած են.
Տէրը աւելի կը սիրէ Միռնի դռները՝
քան Յակոբի բոլոր յարկերը:
- 3 Փառաւորեալը խօսեցաւ քու մասիդ,
ահա՛ւհասիկ, քաղա՛քդ Աստուծոյ:
- 4 Յիշեցի Ռահաբն ու Բաբելոնը, որոնք կը ճանչնան զիս:
Ահա այլազգիները, Ծուրն ու Հնդիկ ժողովուրդը,
որ հոն ծնած են:
- 5 Միռնը մայր կը կոչուի, որովհետեւ մարդիկ ծնած են հոն,
եւ Բարձրեա՛լը դրած է անոր հիմերը:
- 6 Տէրը ի՛նքը իր մատեանին մէջ պիտի պատմէ ժողովուրդին,
այդ իշխաններուն մասին որ ծնած են հոն:

7 Որպէսզի քեզմո՛վ ուրախանան բոլոր անոնք,
որ քեզմէ ստացած են իրենց բնակուածիւնը:

ՍԱՂՄՈՍ 87/88

Ադօթ՝ յուսալուսի պահերուն

1 Աւարտին: Մալալեթի համար, իմաստութիւն.
որովհետեւ Եմման Եգրայելացիի պատասխան տուաւ:

2 Տէ՛ր Աստուած, դո՛ւն ես իմ փրկուածիւնս,
իմ աղաչանքս քու առջեւդ է գիշեր ցերեկ:

3 Թող քու առջեւդ բարձրանայ աղօթքս,
եւ ահանջներդ թող խոնարհին խնդրանքիս առջեւ:

4 Որովհետեւ հոգիս չարչարանքներով լեցուեցաւ,
մինչեւ դժոխք մօտեցաւ իմ կեանքս:

5 զիս դասեցին անոնց շարքին՝ որ գերեզման կ'իջնեն.
եւ անօգնական մարդու նման դարձայ:

6 Մեռեալներու մէջ լքուած,
ինչպէս վիրաւորները որ գերեզմանի մէջ կը ննջեն,
զորս դուն չես յիշեր, որովհետեւ քեզմէ մերժուած են:

1- Սաղմոսերգուն իր բոլոր դժբախտութիւնները կը վերագրէ Աստուծոյ: Չկայ ակնարկութիւն գրպարտող կամ հալածող քշմամիներուն եւ ոչ ալ ուղղակի կամ անուղղակի խոստովանութիւն յանցանքին: Սպասման վիճակին մէջ, սաղմոսերգունին հոգին կը խաղաղի եւ կը բացւի վստահութեան:

7 Գուբին խորերը դրին զիս,
խաւարի եւ մահուան ստուերին մէջ:

8 Բարկութիւնդ իմ վրաս հաստատուեցաւ,
եւ բոլոր ալեկոծումներդ իմ վրաս բերիր:

9 Հեռացուցիր ինձմէ իմ բոլոր ծանօթներս,
եւ անոնք իրենց նշաւակ դարձուցին զիս.
մատնուեցայ եւ չէի կրնար խուսափիլ:

10 Աչքերս նուաղեցան թշուառութենէ,
Տիրոջ աղաղակեցի օրն ի բուն,
եւ ձեռքերս քեզի՛ բարձրացուցի:

11 Միթէ սքանչելիքն⁶ ր պիտի գործես մեռեալներուն համար,
եւ կամ բժիշկները յարուածի՞ւն պիտի տան անոնց՝
որ քեզ գովաբանեն:

12 Միթէ ոեւէ մէկը որ գերեզմանի մէջ է,
պիտի պատմէ՞ երբեք քու ողորմութիւնդ
կամ քու ճշմարտութիւններդ՝ երբ կորսուին:

13 Միթէ քու սքանչելի գործերդ կը ճանչցուի՞ն խաւարի մէջ,
կամ արդարութիւնդ՝ մոռացուածեան երկրին մէջ:

14 Ես քեզի՛ աղաղակեցի, Տէ՛ր,
թող աղօթքս հասնի քեզի առաւօտէն սկսեալ:

15 Ինչո՞ւ կը մերժես իմ հոգիս, Տէ՛ր,
ինչո՞ւ երեսդ կը դարձնես ինձմէ:

16 Ես տնանկ եմ եւ բեռներու տակ կքած՝ մանկութենէս ի վեր,
բարձրութենէ՛ ինկայ եւ խեղակորոյս դարձայ:

- 17 Բարկուլթիւնդ իմ վրաս ծանրացաւ,
եւ արհաւիրքներդ խռովքի մատնեցին զիս:
- 18 Ինչպէս ջուրը՝ անոնք չըջապատեցին զիս ամբողջ օրը,
եւ բոլորը միասին պաշարուած պահեցին զիս:
- 19 Բարեկամներս ու ծանօթներս հեռացուցիր ինծմէ,
եւ թշուառութեան մատնեցիր զիս:

ՍԱՂՄՈՍ 88/89

Աստուած է մեր միակ յոյսը

- 1 Եզրայէլացի Եմանի կողմէ՝ իմաստութիւն:
- 2 Ողորմութիւնդ յաւիտեան պիտի օրհնեմ, Տէ՛ր,
բերանո՛վս պիտի պատմեմ ճշմարտութիւններդ՝
սերունդէ՛ս սերունդ:
- 3 Դուն ըսիր՝ աշխարհը ողորմութեամբ պիտի կառուցուի,
եւ ճշմարտութիւնդ երկնքի մէջ պիտի հաստատուի:
- 4 Ուխտ հաստատեցի իմ ընտրեալիս հետ,
եւ երդում ըրի իմ Դաւիթ ծառայիս:
- 5 յաւիտեան պիտի հաստատեմ քու գաւակդ,
եւ սերունդէ՛ս սերունդ պիտի շինեմ քու գահդ:
- 6 Երկինքը թող գովաբանէ՛ քեզ, Տէ՛ր,
քու սքանչելի գործերուդ համար,
եւ քու ճշմարտութիւնդ՝ սուրբերու խումբերուն մէջ:
- 7 Ո՞վ կայ ամպերուն մէջ, որ հաւասարի քեզի,
կամ ո՞վ կրնայ Տիրոջ նմանիլ՝ Աստուծոյ որդիներուն մէջ:

- 8 Աստուած կը փառաւորուի՛ իր սուրբերու խումբերուն մէջ,
ան մեծ եւ ահարկու է անոնց համար՝ որ անոր շուրջն են:
- 9 Զօրութիւններո՛ւ Տէ՛ր Աստուած, ո՞վ կայ որ նմանի քեզի,
հօր ես դուն, Տէ՛ր, եւ ճշմարտութեամբ չըջապատուած ես:
- 10 Դուն կը տիրես ծովու զօրութիւններուն վրայ,
եւ կը զսպես անոր խռովայոյց ալիքները:
- 11 Դուն կը խոնարհեցնես ամբարտաւանները՝
վերաւորելով զանոնք,
քու բազուկի՛դ զօրութեամբ՝ դուն կը ցրուես թշնամիներդ:
- 12 Քեզի՛ կը պատկանի երկինքը, քո՛ւկդ է երկիրը.
դո՛ւն ստեղծեցիր աշխարհը՝ անոր լրի՛ւ կազմով:
- 13 Դո՛ւն հաստատեցիր հիւսիսն ու հարաւը,
եւ քու անունովդ պիտի ցնծան թաբորն ու Հերմոնը:
- 14 Քո՛ւկդ է բազուկը եւ քո՛ւկդ է զօրութիւնը.
Թող զօրանա՛յ աջդ եւ բարձրանա՛յ ձեռքդ:
- 15 Արդարութեան եւ իրաւունքի վրա՛յ հիմնուած է աթոռդ,
ողորմութիւնն ու ճշմարտութիւնը պիտի քալեն առջեւէդ:
- 16 Երանի՛ այն ժողովուրդին՝ որ գիտէ օրհնել քեզ, Տէ՛ր.
անոնք քու երեսիդ լոյսովը պիտի քալեն:

16- Նոյն երանութիւնը կու տայ Եսայի (51,9-13): Արարիչ Աստուծոյ օրհնաբանութեան կապուած է օրհնաբանութիւնը փրկող եւ մխիթարող Աստուծոյ:

- 17 քու անունով՝ վրե պիտի ցնծան անոնք ամբողջ օրը,
եւ քո՛ւ արդարութեանդ մէջ պիտի բարձրանան:
- 18 Դո՛ւն ես պարծանքը մեր զօրութեան,
եւ քու կամքի՛դ համեմատ պիտի բարձրանայ մեր եղջիւրը:
- 19 Տիրոջմէ՛ կու գայ օգնութիւնը,
Իսրայէլի Սուրբէն, մէ՛ր Թագաւորէն:
- 20 Այն ատեն՝ դուն տեսիլքի մէջ խօսեցար որդիներուդ հետ,
եւ ըսիր. Հզօրին վրա՛յ պիտի դնեմ իմ օգնութիւնս,
պիտի բարձրացնեմ այն զոր ընտրեցի ժողովուրդիս մէջէն:
- 21 Գտա՛յ Դաւիթը, իմ ծառայ,ս,
եւ իմ սուրբ իւղովս օծեցի զինքը:
- 22 Ի՛մ ձեռքս պիտի ընդունի զայն,
եւ ի՛մ բազուկս պիտի զօրացնէ զինք:
- 23 Թշնամին պիտի չկարենայ վնասել անոր,
եւ անօրէնութեան որդին պիտի չնեղէ՛ զինքը:
- 24 Ես պիտի հարուածեմ անոր թշնամիները անոր դիմացը,
եւ պարտութեան պիտի մատնեմ անոնք որ զինքը կ՛ատեն:
- 25 Անոր հետ պիտի ըլլայ ճշմարտութիւնս եւ ողորմութիւն,
եւ ի՛մ անունովս բարձր պիտի ըլլայ անոր եղջիւրը:
- 26 Ծովու վրա՛յ դնել պիտի տամ անոր ձեռքը,
եւ անոր աջը՝ գետերու վրայ:

- 27 Հա՛յր ես դուն, ան պիտի գոչէ ինծի,
Աստուածս ես, փրկութեանս ապաւէ՛նը:
- 28 Ես անդրանիկը պիտի դարձնեմ զինք,
եւ աւելի՛ բարձր քան երկրիս բոլո՛ր թագաւորները:
- 29 Յաւիտեան պիտի պահեմ ողորմութիւնս անոր հանդէպ,
եւ հաւատարմօրէն պիտի պահպանուի այն ուխտը՝
զոր ես կնքած եմ անոր հետ:
- 30 Յաւիտեանապէս պիտի ապահովեմ ես անոր սերունդը,
եւ անոր գահը՝ այնքան ատեն որ գոյութիւն ունի երկինքը:
- 31 Սակայն, եթէ անոր որդիները լքեն օրէնքս,
եւ չուզեն քալել իմ հրամաններուս համեմատ,
- 32 եթէ արհամարհեն իմ արդարութիւնս,
եւ չպահեն իմ պատուիրաններս,
- 33 գաւազանով պիտի հարուածեմ անոնց անօրէնութիւնները,
եւ տանջանքներով՝ անոնց անիրաւութիւնները:
- 34 Բայց պիտի չզրկեմ զանոնք իմ ողորմութեանէս,
եւ պիտի չդաւաճանեմ իմ ճշմարտութեանս:
- 35 Պիտի չդրժեմ իմ ուխտս,
եւ պիտի չանտեսեմ ինչ որ ելած է շրթունքներէս:

- 36 Մէկ անգամ երդում ըրի սրբութեանս վրայ՝
թէ պիտի չստե՛մ Դաւիթին:
- 37 Յաւիտենապէս պիտի մնայ անոր գաւակը,
եւ անոր գահը արեգակի նման պիտի ըլլայ իմ առջեւ:
- 38 Ինչպէս լուսինը՝ որ յաւիտեան հաստատուած է,
իբրեւ վկայ՝ երկինքի մէջ:
- 39 Սակայն հիմա՝ դուն մերժեցիր, անարգեցիր,
եւ երեսի վրայ թողուցիր քու Օծեալդ:
- 40 Դրժեցիր քու ծառայիդ տուած ուխտդ,
եւ գետին գարնելով՝ պղծեցիր անոր սրբութիւնները:
- 41 Քակեցիր անոր բոլոր պարիսպները,
եւ սոսկում հաստատեցիր անոր ամրոցներուն մէջ:
- 42 Ճամբայէն անցնողները յափշտակեցին զայն,
եւ ան՝ իր դրացիներուն ծաղրանքի առարկան դարձաւ:
- 43 Դուն բարձրացուցիր աջը անոնց՝ որ նեղութիւն կու տային,
եւ ուրախացուցիր անոր բոլոր թշնամիները:
- 44 Մերժեցիր աջակցութիւնդ անոր սուրին,
եւ չպաշտպանեցիր զինքը պատերազմի մէջ:

39– «Սակայն դուն»... կը սկսի սաղմոսին ողբը: Կը շեշտէ հակադրութիւնը խոստումներուն եւ տիրող կակածալի կացութեան միջեւ: Իբրեւ հիմնական պատճառ ադէտներուն, սաղմոսերգուն կը յիշէ ուխտին լուծումը Աստուծոյ կողմէ, իբրեւ հետեւանք ժողովուրդին կամ թագաւորին անհաւատարմութեան:

- 45 Անարգեցիր անոր սրբութիւնները,
եւ գետին տապալեցիր անոր գահը:
- 46 Զեղչեցիր անոր կեանքին օրերը,
եւ ամօթով ծածկեցիր զինքը:
- 47 Տակաւին մինչեւ ե՞րբ երեսդ պիտի դարձնես մեզմէ,
եւ դեռ բարկութիւնդ պիտի բորբոքի կրակի նման:
- 48 Սակայն յիշէ՛ հիմա եւ տե՛ս, ո՞վ է իմ հանգիստս.
միթէ՛ ի զո՞ւր ստեղծած ես մարդոց բոլոր զաւակները:
- 49 Ո՞վ է այն մարդը որ աշխարհ կու գայ եւ մահ չի տեսներ,
կամ ինքզինքը կընայ փրկել դժոխքէն:
- 50 Ո՞ւր մնացին քու երբեմնի ողորմութիւններդ, Տէ՛ր,
որո՞ւ համար ճշմարտութեամբդ երդում ըրիր Դաւիթին:
- 51 Տէ՛ր, յիշէ՛ ծառայիդ կրած նախատինքները,
զորս ստացայ բազմաթիւ ազգերէ՝ մինչեւ հոգիիս խորը:
- 52 Այն զոր նախատեցին քու թշնամիներդ, Տէ՛ր,
զայն նախատեցին՝ քու Օծեալի՞դ փոխարէն:
- 53 Օրհնեա՛լ ըլլայ Տէրն Աստուած, յաւիտեա՛նս յաւիտենից:
Թող ըլլա՛յ, այնպէ՛ս թող ըլլայ:

48– «Ո՞վ է իմ հանգիստս» ... խօսող անհատը որ հ. 51-ի մէջ կոչուած է Աստուծոյ «ծառան» կը թուի ըլլալ նոյնիմէն պարտութեան մատուցած թագաւորը եւ կամ անոր յաջորդը:

ՍԱՂՄՈՍ 89/90

Մարդուն խեղճութիւնը

Աստուծոյ մարդուն՝ Մովսէսի աղօթքը:

- 1 *Տէ՛ր, դուն ապաւէ՛ն եղար մեզի՝ սերունդէ սերունդ:*
- 2 *Լեռները հաստատելէ առաջ, երկիրն ու ամբողջ տիեզերքը ստեղծելէ առաջ, դուն՝ յաւիտենականութենէն մինչեւ յաւիտենականութիւն կաս:*
- 3 *Տառապանքի մի՛ մատներ մարդը, քանի դո՛ւն ըսիր. Ինծի՛ վերադարձէք, մարդո՛ւ որդիներ:*
- 4 *Տիրոջ աչքերուն առջեւ, հազար տարին՝ երէկուան անցած օրին պէս է, ինչպէս գիշերուան մէկ պահը:*
- 5 *անոնց տարիները խեղճ կերպով պիտի անցնին. առտուն՝ անոնք խոտի նման պիտի բուսնին:*

1- Սաղմոսը հաւաքական ողբ-աղօթքն է, ինչպէս կ'երեւի գլխաւոր անցքէն (հ. 3-15): Ներշնչուած է ոչ թէ ազգային աղէտ մը, այլ խորհրդաձուլութենէն մարդուն վաղանցուկ եւ դիւրաբեկ կեանքին վրայ: Խորհրդաձուլութիւնը կ'արդարացնէ իմաստութեան թեմաներուն ներկայութիւնը սաղմոսին մէջ (հ. 11-12): Հին Կտակարանի մարդը ունի բազմաթիւ պատճառներ ողբալու, գիտակցելով իր գոյութեան բնածին անպահովութեան: Հակառակ ասոր, չի տեսներ ինքզինքն զատապարտուած կորուստի:

- 6 *կանաչազարդ պիտի ծլին ու ծաղկին առտուն, խակ իրիկունը՝ պիտի թարշամին, պիտի չորնան ու գետին իյնան:*
- 7 *Մենք նուաղեցանք քու բարկութենէդ, եւ խռովեցանք քու սրտմտութեանդ պատճառով:*
- 8 *Դուն մեր մեղքերը դրիր դիմացդ, եւ մեր կեանքը՝ քու երեսիդ լոյսին տակ:*
- 9 *Մեր բոլոր օրերը նուաղեցան, քու բարկութեանդ պատճառով խռովեցանք, մեր կեանքի օրերը, անդադար՝ սարդոստայնի կը նմանին:*
- 10 *Մեր կեանքին օրերուն թիւը՝ եօթանասուն տարի է, եթէ աւելի՛ ութսուն, ինչ որ դե՛ռ աւելին ըլլայ՝ ցաւերով եւ նեղութիւններով լեցուն է. եւ հեզութիւնը կ'իջնէ մեր վրայ ու կը զգաստանանք:*
- 11 *Սակայն ո՞վ կրնայ գիտնալ բարկութեանդ սաստկութիւնը, կամ վախէ՞դ տարուած, դատել ցասումիդ մեծութիւնը:*
- 12 *Արդ, ցո՛յց տուր ինծի քու աջդ, եւ իմաստութիւնդ՝ անոնց հանդէպ որ խոնարհ են սրտով:*
- 13 *Դարձի՛ր մեզի, Տէ՛ր. մինչեւ ե՞րբ. միխլթարութի՛ւն բեր քու ծառաներուդ վրայ:*

11- Տեսնել եւ ճանչնալ Աստուծոյ մտքը մեր կեանքին դէպքերուն մէջ, հաւատքի եւ կրօնական գետնի վրայ ներշնչարան է իմաստութեան եւ հոգեւոր կեանքի, սրբացնելու համար մեզ յուզող եւ ցնցող, եկող եւ անցնող դէպքերը:

14 Քո՛ւ ողորմութեամբդ լեցուեցանք առաւօտը,
ցնծացինք եւ ուրախացանք մեր կեանքին բոլոր օրերուն:

15 Ուրախ եղանք փոխան այն օրերուն՝
ուր խոնարհեցուցիր մեզ,
եւ փոխան այն տարիներուն՝ ուր չարչարանք տեսանք:

16 Նայէ՛, Տէ՛ր, քո՛ւ ծառաներուդ եւ ձեռքիդ գործերուն,
եւ առաջնորդ եղիր անոնց որդիներուն:

17 Թող մեր վրա՛յ ըլլայ Տէր Աստուծոյ լոյսը.
Տէ՛ր, ուղղէ՛ մեր ձեռքերուն գործերը,
մեր ձեռքերուն գործերուն յաջողութի՛ւն տուր:

ՍԱՂՄՈՍ 90/91

Խնդրանք՝ Աստուծոյ պաշտպանութեան

Օրհնաբանական եւ գոհաբանական սաղմոս Դաւիթի:

1 Այն օր Բարձրեալին օգնութեան տակ կը բնակի,
Աստուծոյ հովանիին տակ պիտի հանգչի երկինքի մէջ.

1- Մարգարէական պատգամներու ռեով, սաղմոսերգուն կու տայ իմաստութեան ուսուցումը անոնց որ անվերապաօրէն կ'ապաւինին Աստուծոյ պաշտպանութեան: Նման ուսուցումով սաղմոսերգուն կը ձգտի հաղորդել հաւատացեալներուն ապահովութիւնը թէ՛ Աստուած կարող է եւ կ'ուզէ փրկել հաւատացեալը թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ բարոյական ամէն վտանգէ:

2 Ան պիտի ըսէ Տիրոջ. դո՛ւն ես իմ պաշտպանս,
Աստուած է իմ ապաւէնս,
եւ ես անոր վրա՛յ դրած եմ իմ յոյսս:

3 Ա՛ն պիտի փրկէ զիս որսորդին որոգայթէն,
եւ խռովութիւն պատճառող անոր խօսքերէն:

4 Ան իր թիկունքին վրայ պիտի առնէ քեզ,
եւ դուն՝ իր թեւերուն հովանիին տակ պիտի գտնես յոյսդ.
Իբրեւ զէնք՝ անոր ճշմարտութի՛ւնը պիտի շրջապատէ քեզ:

5 Դուն պիտի չվախնա՛ս գիշերուան երկիւղէն,
ո՛չ ալ ցերեկ օրով սլացող նետէն.

6 ո՛չ խաւարի մէջ շրջող վտանգներէն,
ո՛չ ալ ցերեկ օրով դեւին լարած որոգայթէն:

7 Հազարներ պիտի իյնան քո՛ւ մէկ կողմդ եղողներէն,
եւ տասնեակ հազարներ՝ քո՛ւ աջ կողմէդ,
եւ անոնք երբեք պիտի չկարենան մօտենալ քեզի:

8 Բայց դուն՝ քո՛ւ աչքերովդ պիտի նայիս միայն,
եւ պիտի տեսնես մեղաւորներուն ստացած հատուցումը:

9 Քանի որ իմ յո՛յսս ես դուն, Տէ՛ր.
Դուն Բարձրեա՛լը ըրած ես քեզի ապաւէն.

6- Սաղմոսերգուն ցոյց կու տայ թէ՛ մարդը օրուան պահերուն ենթակայ է թափուն եւ անյայտ չարիքներու ազդեցութեան: Անոնց դիմաց, ապահով պաշտպանն ու ապաստանն է Աստուած:

- 10 *Հարիք պիտի չհասնի՝ քեզի,
եւ փորձանքներ պիտի չմօտենան քու յարկիդ:*
- 11 *Ան, իր հրեշտակներուն պատուիրած է քեզի համար՝
որ քեզ պահպանեն քու բոլո՛ր ճամբաներուդ վրայ:*
- 12 *Իրենց բազուկներուն վրայ պիտի առնեն քեզ անոնք,
որ երբեք քարի չզարնես ոտքերդ:*
- 13 *Դուն իժերու եւ քարբերու վրայէն պիտի քալես,
եւ ոտնակոխ պիտի ընես առիւծն ու վիշապը:*
- 14 *Քանի որ իմ վրա՛ս դրած է իր յոյսը՝ ես պիտի փրկեմ՝ զինքը,
հովանի՛ պիտի ըլլամ անոր,
որովհետեւ ան ճանչցած է իմ անունս:*
- 15 *Ան պիտի կանչէ զիս, եւ ես պիտի լսեմ զինքը,
անոր քո՛վ պիտի ըլլամ իր նեղութեան ատեն.
պիտի փրկեմ եւ պիտի փառաւորեմ զինքը:*
- 16 *Ես պիտի լիացնեմ զինքը երկար օրերով,
եւ իմ փրկութի՛ննս ցոյց պիտի տամ անոր:*

14– Հաւատացեալին կողմէ ապաւինումն Աստուծոյ պաշտպանութեան, կը բխի քանաչումէ եւ սէրէ: Կ’ապրի անվերապահ ապաւինումն Աստուծոյ որովհետեւ կը քանչնայ Տիրոջ անունը: Այս փոխադարձ քանաչումին մասին Աստուծոյ եւ հաւատացեալին, տես Բարի հովիւին առակը (Յովի 10,14):

16– «Երկար օրեր»... օրհնութիւնն է գոր կը հայցէին թագաւորին համար (սղմ 20,5): Պարգեւն է խոստացուած անոր որ կը հասնի իմաստութեան եւ գայն կը գործադրէ (Առակ 3,2,16): Խորունկ իմաստով, յայտնութիւնը աստուածային փրկութեան, կը տանի մարդը հաղորդակ-

ՍԱՂՄՈՍ 91/92

Արդարին օրհներգութիւնը

- 1 *Օրհնաբանական սաղմոս շաբաթ օրուան համար:*
- 2 *Լա՛ւ է փառաւորել Տէրը,
եւ սաղմոս ըսել քու անունիդ, Բարձրեա՛լ:*
- 3 *Ողորմութիւնդ հռչակել առաւօտը,
եւ ճշմարտութիւնդ՝՝ գիշերը:*
- 4 *Գովաբանել քեզ տասնադի սաղմոսարանով
եւ օրհնութեան երգերով:*
- 5 *Ուրախացուցիր զիս, Տէ՛ր, արարածներուդ միջոցաւ,
քու ձեռքերուդ գործերով՝՝ ես պիտի ցնծամ:*
- 6 *Որքա՛ն մեծ են քու գործերդ, Տէ՛ր,
եւ խորիմաստ են քու խորհուրդներդ:*

ցելու Աստուծոյ անանց կեանքին: Այս իմաստով, կեանքը երկար օրերով կ’անցնի ժամանակաւորի սահմաններէն անդին եւ կը յանգի իմաստի լիութեան՝ յաւիտեանական կեանքով՝ Աստուծոյ մէջ եւ Աստուծոյ հետ: 2– Սաղմոսագուն կը յայտնէ իր ուրախութիւնը հռչակելու Տիրոջ գործերը (հ. 2-6), կը քաջակէ երջանկութիւնը եւ սրտի անդորրութիւնը մանաւանդ երբ կը տեսնէ պատրանքներու մէջ օրօրուող աշխարհը (հ. 7-12): Հոգեկան գոհունակութիւնը կը գտնէ Տիրոջ հետ մտերմութեան մէջ: 6– Անքննելի են Աստուծոյ խորհուրդները ուր անբարոյս ձեռքերը քան թախտը: «Անոնց հոգին Աստուծոյ ձեռքերուն մէջն է: Յաչս ամբարիշտին կը թուի թէ անոնք կ’անհետանան, սակայն անոնք կը հանգչին խաղաղ ու անոնց յոյսը լի է անմահութեամբ» (Իմաստ 3,1...):

- 7 Անզգամ մարդը պիտի չըմբռնէ յայ բաները,
եւ անմիտը պիտի չհասկնայ զանոնք:
- 8 Ո՛րքան ալ բուսնին մեղաւորները խոտի նման,
եւ ծաղկին անօրէնութիւն գործողները,
սակայն յաւիտենական մահով պիտի մեռնին անոնք:
- 9 մինչ դուն՝ յաւիտենապէս Բարձրեալ ես, Տէ՛ր․
որովհետեւ ահա՛ են քու թշնամիներդ․
ահա՛, քու թշնամիներդ կորուստի պիտի մատնուին:
- 10 պիտի ցրուին բոլո՛ր անոնք՝
որ անօրէնութիւն կը գործեն:
- 11 Միեղջերուի ժանիքին նման բարձր պիտի ըլլայ իմ եղջիւրս,
եւ ձէթի առատութեան մէջ պիտի անցընեմ իմ ծերութիւնս:
- 12 Աչքո՛վս տեսայ վիճակը թշնամիներուս՝
որ չար նպատակով եկած էին իմ վրաս,
ես իմ ականջներո՛վս պիտի լսեմ զանոնք:
- 13 Արմաւենիներո՛ւ նման պիտի ծաղկին արդարները,
եւ Լիբանանի մայրիներուն չափ պիտի բազմանան:
- 14 Անոնք Տիրոջ տան մէջ տնկուած պիտի ըլլան,
եւ մեր Աստուծոյ գաւիթներուն մէջ պիտի ծաղկին:

14- Լամբրոնացիները կը մեկնաբանէ համարը մերձեցնելով զայն Եկեղեցւոյ: «Տիրոջ տունը Եկեղեցին է, իսկ գաւիթին վրայ տնկուածները՝ տեղական Եկեղեցիներն են, որոնք ծաղկեցան զանազան երանգներով․ ոմանք մարտիրոսութեան արեամբ՝ իբրեւ վարդ, ուրիշներ՝ խոստովա-

- 15 Նոյնիսկ իրենց ծերութեան օրերուն,
պարարտ ու առատ պիտի ըլլան, փափուկ եւ դալար,
- 16 որպէսզի պատմեն՝ թէ ուղիղ է մեր Տէր Աստուածը,
եւ անարդարութիւն չկա՛յ անոր մօտ:

ՍԱՂՄՈՍ 92/93

Փառաբանութիւն Աստուծոյ

Շաբթուան առաջին օրը, երբ երկիրը հաստատուեցաւ․
գովաբանական օրհնութիւն Դաւիթի:

- 1 Տէրը թագաւորեց, վայելչութիւն զգեցաւ,
զօրութիւն զգեցաւ Տէրը, եւ կապեց զայն իր մէջքին:
- 2 Աշխարհը հաստատեց՝ որ չսասանի․
պատրաստ է քու աթոռդ սկիզբէն ի վեր․
դուն յաւիտենապէս կաս:
- 3 Բարձրացա՛ն գետերը, Տէ՛ր,
իրենց ձա՛յնը բարձրացուցին գետերը,
գետերը պիտի յորդին իրենց ընթացքին մէջ:

նոդական դաւանութեամբ, իբրեւ մանուշակ, կուսական ամօթխածու-
թեամբ՝ իբրեւ բրնձ, ժուժկալութեամբ՝ իբրեւ մանուշակներ»:

16- Պիտի մնան թարմ եւ փափուկ, հաւատքի թարմութեամբ եւ պի-
տի վկայեն: Աշխարհի բոլոր պատրանքներուն եւ անիրաւութիւններուն
դիմաց միայն Տէրը արդար է եւ անոր հաւատարմութիւնը գրաւականն
է անոր խոստումներուն:

3- Վկայութիւնները՝ Աստուծոյ օրէնքն են, կամ Յայտնութիւնը:

4 **Ջուրերու հսկայ ձայնէն՝ սքանչելի եղան ծովու ալիքները․ սքանչելի՛ ես դուն, Տէ՛ր, բարձունքներուն մէջ՝**

5 **Մենք բոլորովին հաւատացինք վկայութիւններուդ․ Տէ՛ր, սրբութիւն կը վայելէ քու տանդ, երկա՛ր օրերու համար:**

ՍԱՂՄՈՍ 93/94

Տէրը արդարութեան Աստուած է

Սաղմոս Դաւիթի: Չորեքշաբթի օրուան համար:

1 **Աստուած՝ վրէժխնդիր՛ր Տէ՛ր, դուն յայտնուեցար իբր վրէժխնդիր՛ր Աստուած:**

2 **Բարձրացի՛ր, դուն որ երկիրը կը դատես, եւ հատուցում ըրէ ամբարտաւաններուն:**

3 **Մինչեւ ե՞րբ մեղաւորները, Տէ՛ր, մինչեւ ե՞րբ մեղաւորները պիտի պարծենան:**

4 **Իրենց ձայնը բարձրացնելով՝ անիրաւութիւն պիտի խօսին, պիտի խօսին բոլոր անոնք որ անօրէնութիւն կը գործեն:**

1– Սաղմոսագրուն կու տայ իր ազդարարութիւնը չարագործներուն եւ կը յորդորէ բարիները պահելու անասան իրենց վատաեութիւնը Աստուծոյ վրայ:

«Աստուած վրէժխնդիր»: Այս տիտղոսով Աստուած դիտուած է իբրև գերագոյն վարձահատոյց․ այսինքն պաշտպան տկարներուն եւ հատուցանող՝ ամէն անիրաւութեան:

4–«Իրենց ձայնը բարձրացնելով պիտի խօսին»... Ամբարշտութիւնը

5 **Անոնք քու ժողովուրդդ խոնարհեցուցին, Տէ՛ր, եւ քու ժառանգութիւնդ չարչարեցին:**

6 **Այրին ու պանդուխտը սպաննեցին, եւ որբերը կոտորեցին․**

7 **եւ ըսին՝ Տէրը չի՛ տեսներ այս բաները, Յակոբի Աստուածը չ'իմանար:**

8 **Իմացէ՛ք, ժողովուրդներու անզգամներ եւ անմիտներ, մինչեւ ե՞րբ պիտի չհասկնաք:**

9 **Կը կարծէ՞ք թէ՛ ան, ահանջը լարելով հանդերձ՝ չի՛ լսեր, կամ ի՛նքը որ աչքը ստեղծած է՝ չի տեսներ:**

10 **Այն որ ազգերը կը պատժէ, պիտի չյանդիմանէ՞ միթէ, ինքը որ մարդուն գիտութիւն կը սորվեցնէ:**

11 **Տէրը կը ճանչնա՛յ մարդոց խորհուրդները, եւ գիտէ թէ՛ ո՛րքան ընդունայն են անոնք:**

12 **Երանի՛ այն մարդուն գոր դուն կը խրատես, Տէ՛ր, եւ քու Օրէնքիդ ճամբով կը կրթես զայն:**

յատկանշող այսպիսի խօսքը հաւանաբար ակնարկութիւնն է արդարութեան յոռի մատակարարութեան, որուն գոհ են մանաւանդ ամէնէն տկարները ժողովուրդին․ այրիները, որբերը եւ պանդուխտները (Ես 1,17․ Մաղ 3,5․ Սղմ 67,6):

7–«Տէրը չի տեսներ», այսինքն հոգ չընէր եւ չի միջամտեր, ըստ ամբարիշտին համոզումին:

13 Դուք կը մեղմացնես անոր փորձանքի օրերը,
մինչեւ որ մեղաւորին համար խորխորատ փորուի:

14 Տէրը չի՛ լքեր իր ժողովուրդը,
եւ անտես չ'ընէր իր ժառանգութիւնը:

15 Մինչեւ որ իրաւունքը արդարութեան վերածուի,
պիտի ընդունին զայն բոլո՛ր անոնք որ սրտով ուղիղ են:

16 Ո՞վ պիտի ելլէ չարերուն դէմ՝ ինծի հետ,
կամ ո՞վ պիտի միանայ ինծի, ելլելու համար անոնց դէմ՝
որ անօրէնութիւն կը գործեն:

17 Եթէ Տէրը օգնած չըլլար ինծի,
քիչ կը մնար որ հոգիս դժոխքի մէջ բնակէր:

18 Եթէ ըսէի թէ՛՝ ահա՛ սասանեցան ոտքերս, Տէ՛ր,
քու ողորմութիւնդ օգնութեան պիտի հասնէր ինծի:

19 Ո՛րքան բազմանային սրտիս ցաւերը՝
ա՛յնքան աւելի մխիթարութիւնդ կ'ուրախացնէր իմ հոգիս:

20 Թող քեզի հաւասար աստիճանի հասնի անօրէնին աթոռը,
որ ամէն հնարք բանեցնելով՝ հրամանիդ դէմ կը գործէ:

21 Անոնք արդարին հոգի՛ն որսացին,
եւ անբիծ արիւնը յանցաւոր հանեցին:

22 Տէրը իմ ապաւէնս եղաւ,
եւ Աստուած՝ իմ յոյսիս նեցուկը:

23 Թող Տէրը հատուցանէ անոնց՝
իրենց գործած անօրէնութեան չափով,
եւ մեր Տէր Աստուածը թող կործանէ զանոնք՝
իրենց չարութեան աստիճանով:

ՍԱՂՄՈՍ 94/95

Կոչ՝ գԱստուած փառաբանելու

Դաւիթիւն գովարանական օրհնութիւնը:

1 Եկէ՛ք, ցնծա՛նք Տիրոջմով,
եւ աղաղակենք Աստուծոյ, մեր Փրկչին:

2 Առաւօտ կանուխ գոհաբանութեամբ անոր առջեւ ելլենք,
եւ բարձրաձայն սաղմոսներ ուղղենք անոր:

3 Մե՛ծ է Աստուած,
ան մեծ թագաւո՛րն է ամբո՛ղջ երկրին:

4 Երկրիս ամբողջ տարածութիւնը անոր ձեռքերուն մէջ է,
լեռներու բարձունքները անո՛ր կը պատկանին:

5 Անո՛ր է ծովը, ա՛ն ըրած է զայն,
անոր ձեռքե՛րը ստեղծեցին ցամաքը:

14– Հակառակ ամբարիշտներու համոզումին (հ․ 7) Աստուած չի լքեր եւ չի մոռնար իր հաւատարիմները, որովհետեւ լքումը պիտի ըլլար համագոր դրժումին՝ հայրերուն հետ կնճուած ուխտին: Աստուծոյ գիտութեան պէս սակայն, անբնական եւ անոր միջամտութեան ժամն ու եղանակը:

- 6 Եկէ՛ք, երկրպագե՛նք անոր,
գետին իյնանք եւ լանք մեր Տիրոջ, մեր Արարչին առջեւ:
- 7 Ա՛ն է մեր Տէր Աստուածը, մենք որ անոր ժողովուրդն ենք
եւ անոր արօտին ոչխարները:
- 8 Եթէ ըսէք այօր անոր ձայնը՝ մի՛ խստացնէք ձեր սրտերը,
ինչպէս Դաւնութեան աղբիւրին քով
եւ փորձութեան օրը անապատի մէջ,
- 9 ուր որ ձեր հայրերը փորձեցին զիս եւ քննադատեցին,
թէպէտ անոնք տեսած էին իմ գործերս:
- 10 Քառասուն տարի շարունակ,
ես ջանք թափեցի այդ ժողովուրդին վրայ,
եւ ըսի. Անոնք մի՛շտ մոլորած են իրենց սրտին մէջ,
եւ չուզեցին ճանչնալ իմ ճամբաներս:
- 11 Ուստի երգում ըրի բարկութեանս մէջ եւ ըսի.
Թող չմտնեն իմ հանգիստիս մէջ:

6– Առաջին յորդորը (հ. 1–2) սահմանուած է դաւանութեան՝ Տիրոջ իբրեւ միակ եւ գերակայ Աստուծոյ (հ. 3–5): Երկրորդ յորդորը սահմանուած է դաւանութեան՝ Տիրոջ իբրեւ Հովիւի իր ժողովուրդին (հ. 7): Խոնարհութիւնը, ծնրադրութիւնը կամ երկրպագութիւնը հաւատացեալին խոնարհ փնտրումն են Աստուծոյ տէրութեան:

11– Հանգիստը՝ Աւետեաց երկիրն է իբրեւ վայր հանգիստի, անապատին մէջ քառասուն տարիներու փնտրութեանէն ետք: Նոր Կտակարանին եւ ծիսական լեզուին մէջ, հանգիստը մեկնաբանուած եւ առնուած է իբրեւ երկնային հանգիստ՝ երջանկութեան մէջ: Այս հանգիստին մաղթանքն է գոր քրիստոնեայ հաւատացեալը կու տայ սիրելի մեջեջեայներուն:

ՍԱՂՄՈՍ 95/96

Տէրը թագաւոր եւ դատաւոր է

Սաղմոս Դաւիթի: Երբ որ տաճարը շինուեցաւ:

- 1 Օրհնեցէ՛ք Տէրը նո՛ր օրհնութեամբ,
Տէ՛րը օրհնեցէք, համա՛յն երկիր:
- 2 Օրհնեցէ՛ք Տէրը, օրհնեցէ՛ք անոր անունը,
աւետեցէ՛ք անոր փրկութիւնը ամէն օր:
- 3 Հռչակեցէք անոր փա՛ռքը հեթանոսներուն մօտ,
եւ անոր սքանչելիքները՝ բոլո՛ր ժողովուրդներուն մէջ:
- 4 Մե՛ծ է Տէրը եւ գերազա՛նցօրէն օրհնեալ,
ահազդու է ան՝ բոլո՛ր կուռքերէն աւելի:
- 5 Հեթանոսներուն բոլոր կուռքերը դեւե՛ր են,
Տէ՛րն է որ ստեղծած է երկինքը:
- 6 Գոհութիւնն ու մեծվայելչութիւնը՝ անոր դիմաց,
սրբութիւնն ու մեծվայելչութիւնը՝ իր սրբավայրի մէջ:

1– «Նոր օրհնութեամբ»․ Աստուծոյ փրկութիւնը օրհնաբանող երգն է: Այս փրկութիւնը կը տրուի անհատին կամ հաւաքականութեան: Նոր օրհնութեամբ գովաբանութիւնը շեշտուած է Եսայեան մարգարտութիւններուն մէջ, ուր փրկութիւնը կը տրուի Տիրոջ «Ծառային» կողմէ որ ունի առաքելութիւնը իրաւունքը տանելու բոլոր ազգերուն:

5– Արմատական է սաղմոսերգուին միաստուածութեան դաւանութիւնը: Ժամանակակից աշխարհն ալ ունի կարիքը ազատագրութեան՝ գաղափարականի, վայելիքի, մամոնայի եւ իշխանութեան կուռքերէն:

7 Տիրո՛ջ մատուցէք, ազգե՛ր եւ ժողովուրդներ, Տիրո՛ջ մատուցէք փառքը եւ պատիւը:

8 Փա՛ռք տուէք անոր անունին. ընծաներ առէք ձեզի հետ եւ մտէք անոր սրահը:

9 Երկրպագեցէ՛ք Տիրո՞ջ՝ անոր սրբավայրի գաւիթներուն մէջ, եւ անոր ի տես՝ թող խռնվի՛ բովանդակ երկիրը:

10 Ըսէ՛ք հեթանոսներուն դիմաց՝ թէ Տէրը թագաւորեց. ան աշխարհը հաստատեց՝ որ չսասանի, եւ ան արդարութեամբ կը դատէ ժողովուրդները:

11 Թող ուրախանա՛յ երկինքը, թող ցնծա՛յ երկիրը, եւ ծովը իր ամբո՛ղջ տարածքով թող խայտայ:

12 Թող ցնծա՛ն դաշտերը եւ ամէ՛ն ինչ որ կայ անոնց վրայ, եւ այն ատեն պիտի ցնծան անտառի բոլո՛ր ծառերը,

13 տեսներով որ Տէրը կու գայ. ան կու գայ՝ դատելու համար երկիրը. ան արդարութեամբ պիտի դատէ տիեզերքը, եւ իր ճշմարտութեամբը՝ բոլո՛ր ժողովուրդները:

7- Սաղմոսերգուն իր հրաւերը կամ յորդորը կ'նղղէ ազգերու տոհմերուն որպէս զի իրենց հաւատքին պատիւի եւ փառքի տուրքն ընծայեն Տիրոջ եւ անոր անունին, հանդերձ ընծաներով:

ՍԱՂՄՈՍ 96/97

Աստուած է գերագոյն տէրը

Սաղմոս Դաւիթի, երբ որ հաստատուեցաւ երկիրը:

1 Տէ՛րը թագաւորեց, թող ցնծա՛յ երկիրը, թող ուրախանան՝ բազմաթիւ կղզիները:

2 Ամպ եւ մէգ պատած է անոր շուրջը, անոր աթոռը հաստատուած է իրաւունքի եւ արդարութեան վրայ:

3 Անոր առջեւէ՛ն պիտի քայլէ կրակը՝ այրելով անոր շուրջ գտնուող թշնամիները:

4 Անոր փայլատակումները տիեզերքին երեւցան. երկիրը տեսաւ եւ սասանեցաւ:

5 Լեռները մոմի նման պիտի հալին ի տես Տիրոջ, ի տես՝ ամբո՛ղջ երկրին Տիրոջ:

6 Երկինքը պիտի պատմէ անոր արդարութիւնը, եւ բոլո՛ր ժողովուրդները պիտի տեսնեն անոր փառքը:

1- Տիրոջ թագաւորութիւնը կը ներկայացուի շքեղ աստուածայայտնութեամբ: Ան ուրախութիւն եւ հրեմուտք է ժողովուրդին եւ արդարներուն, որովհետեւ կը բերէ լոյսը եւ ուրախութիւնը փրկութեան: Իսկ կուռքերուն եւ Աստուծոյ հակառակորդներուն համար սարսափ է եւ կործանում: Սաղմոսը օրհներգութիւնն է Տիրոջ թագաւորութեան:

**7 Ամօթահա՛ր պիտի ըլլան բոլոր անոնք՝
որ կուռքերուն կ'երկրպագեն,
եւ անոնք որ անոնց արձաններով կը պարծենան.
անոր պիտի երկրպագեն անոր բոլո՛ր հրեշտակները:**

**8 Երբ Սիոնը այս բաները լսեց՝ ուրախացաւ:
Յուզայի դուստրերը պիտի ցնծան՝
որ դուն, Տէ՛ր, արդարութիւնը կը գործադրես:**

**9 Որովհետեւ դուն բարձրացած ես ամբողջ երկրի վրայ,
գերազանց բարձրութեամբ՝ բոլո՛ր կուռքերուն վրայ:**

**10 Դուք որ կը սիրէք Տէրը՝ ատեցէ՛ք չարութիւնը.
Տէրը կը պահպանէ իր սուրբերուն կեանքը,
եւ պիտի փրկէ զիրենք մեղաւորին ձեռքերէն:**

**11 Լո՛յս ծագեցաւ արդարներուն վրայ,
ուրախութիւն եղաւ անոնց համար որ սրտով ուղիղ են:**

**12 Ուրախացէ՛ք, արդարներ, Տիրոջ մէջ,
եւ փառաւորեցէ՛ք զինքը՝ յիշելով անոր սրբութիւնը:**

10– Կեանքի անմեղութիւնը եւ սրտի մաքրութիւնը նախդիր պայ–
մաններն են աստուծային օրհնութեան ընկալման եւ նպաստաւորման,
անոր թագաւորութեան փրկարար արդարութեամբ:

11– Լոյսը կը ծագի կամ կը մաղուի արդարին համար: Պատկերն իր
բնիկութեամբ կը մեղմացնէ նախորդ արտայայտութիւններուն ուժգնու–
թիւնը: Աստուծոյ արքայութեան լոյսը մեղմօրէն նախ կը ծագի հոգիին մէջ,
կը համակէ եւ ապա կը յորդի եւ կը ծաւալի դէպի դուրս: Փրկութեան լոյսը
եւ արդարութիւնը ցանուած են մարդկութեան մէջ: Հարկ է հաւատալ եւ սպա–
սել: Կը հաւատան եւ կը սպասեն, ոչ թէ՛ ձեռնածալ, անոնք որ կը սիրեն լոյսը
աւելի քան խաւարը եւ աւելի Աստուծոյ փառքը քան փառքն աշխարհի:

ՍԱՀՄՈՍ 97/98

Տէ՛րն է աշխարհի դատաւորը

Օրհնութեան սաղմոս Դաւիթի:

**1 Օրհնեցէք Տէրը նո՛ր օրհնութիւններով,
որովհետեւ սքանչելի՛ գործեր ըրաւ ան.
անոր ա՛ջը եւ անոր սուրբ բազո՛ւկը փրկեց զայն:**

**2 Տէրը ցոյց տուաւ իր փրկութիւնը,
ազգերու առջեւ յայտնի ըրաւ իր արդարութիւնը:**

**3 Ան յիշեց Յակոբը իր ողորմութեամբ,
եւ ճշմարտութիւնը Իսրայէլի տան վրայ,
եւ երկրի բոլո՛ր ծագերը տեսան
մեր Աստուծոյն փրկութիւնը:**

**4 Աղաղակեցէ՛ք Տիրոջ, համա՛յն երկիրներ եւ օրհնեցէ՛ք,
ցնծացէ՛ք եւ սաղմոսներ երգեցէք:**

**5 Սաղմո՛ս երգեցէք մեր Աստուծոյն՝ օրհնելով զայն.
օրհնութեամբ եւ սաղմոսներու ձայնով:**

**6 Կռածոյ փողերու օրհնութեան ձայներով,
օրհնութեամբ, ցնծութեամբ եւ փողի եղջիւրներու ձայնով,
աղաղակեցէ՛ք Տէր թագաւորին առջեւ:**

**7 Թող փոթորկի՛ ծովը իր ամբողջ տարածքով,
բովանդակ տիեզերքն ու անոր բոլո՛ր բնակիչները:**

**8 Եւ գետերը ծա՛լի թող զարնեն
երկու ձեռքերով միասին:**

9 *Լեռները թող ցնծա՛ն Տիրոջ առջեւ,
որովհետեւ կու գա՛յ եւ հասա՛ծ է Տէրը՝
դատելու համար երկիրը։
ան արդարութեամբ կը դատէ աշխարհը
եւ ուղղութեամբ՝ իր ժողովուրդը։*

ՍԱՂՄՈՍ 98/99

Սուրբ եւ արդար թագաւորը

- 1** *Սաղմոս Դաւիթի։*
- 2** *Տէրը թագաւորեց եւ բարկացան ժողովուրդները։
ան քերովէներուն վրայ նստաւ, եւ երկիրը սասանեցաւ։*
- 3** *Մեծ է Տէրը՝ Սիոնի մէջ,
եւ բարձր է ան, բոլոր ժողովուրդներէն վեր։*
- 4** *Քու փառաւոր անունիդ գոհաբանութի՛ւն պիտի տրուի,
որովհետեւ ան ասէ՛ղ է եւ սուրբ։*
- 5** *Թագաւորին պատիւը՝ իրաւունքը սիրելն է։
դո՛ւն ցոյց տուիր կեանքի ուղղութիւնը,
եւ հաստատեցիր Յակոբի իրաւունքն ու արդարութիւնը։*
- 6** *Փառաւորեցէ՛ք մեր Տէր Աստուածը,
երկրպագեցէ՛ք անոր ոտքերուն պատուանդանին առջեւ,
որովհետեւ սո՛ւրբ է ան։*

6–«Պատուանդան»... յատուկ ասացումս է որով կը յատկանշուին նախ Ուխտի Տապանակը, ապա տաճարը եւ Սիոն։ Եսայեան մարգարեու–

- 7** *Մովսէս եւ Ահարոն՝ անոր երէցներն են,
եւ Սամուէլը անոնց մէջ է՝ որ անոր անունը կը կանչեն։
անոնք Տիրո՛ջ կը դիմէին, եւ ան կը լսէր զանոնք։*
- 8** *Ան, ամպի սիւնի մէջջէն կը խօսէր անոնց հետ,
եւ անոնք կը պահէին այն վկայութիւնն ու հրամանները,
զորս ա՛ն տուած էր անոնց։*
- 9** *Տէ՛ր, Աստուած մեր, դուն կը լսէիր զանոնք,
ո՛վ Աստուած, դուն կը քաւէիր անոնց մեղքերը,
եւ վրէժը կը լուծէիր անոնց բոլոր գործերուն։*
- 10** *Բարեբանեցէ՛ք մեր Տէր Աստուածը,
երկրպագեցէ՛ք անոր սուրբ լեռան վրայ,
որովհետեւ սո՛ւրբ է մեր Տէր Աստուածը։*

ՍԱՂՄՈՍ 99/100

Կոչ՝ փառաբանութեան

- 1** *Գոհաբանական սաղմոս․ Դաւիթի։*

թեան մէջ (66,2) ամբողջ աշխարհը կոչուած է պատուանդան, իսկ երկինքը՝ աթոռ Տիրոջ։

7–Մովսէս եւ Ահարոն յիշուած են իբրեւ միջնորդներ եւ բարեխօսներ։ Կոչուած են փահանաներ ոչ միայն որովհետեւ Դեւիի ցեղէն էին, այլ որովհետեւ անոնց գործը միջնորդի եւ բարեխօսի՝ դիտուած է իբրեւ փահանայական գործ։

1–Հակիրճ օրհներգութեան մէջ խտացուած է ամբողջ հաւատքի ապրումը ժողովուրդին, Տէրը նշմարիտ Աստուածն է, ինք կը ստեղծէ, բա–

2 Աղաղակեցէ՛ք Տիրոջ, համա՛յն երկիր:

3 Ուրախութեամբ ծառայեցէք Տիրոջ. ցնծութեամբ ելէք անոր առջեւ եւ գիտցէք թէ՛ ան է մեր Տէր Աստուածը. ան ստեղծեց մեզ, եւ մենք մեզմէ՛ չեղանք, մենք անոր ժողովուրդն ենք եւ ոչխարներն անոր արօտին:

4 Փառաբանելով մտէք անոր դռներէն եւ օրհնաբանեցէք զինքը՝ անոր յարկերուն տակ. գոհաբանեցէ՛ք Տէրը եւ օրհնեցէ՛ք անոր անունը:

5 Քահոյց է Տէրը, յաւիտեան է անոր ողորմութիւնը եւ սերունդէ սերունդ՝ անոր ճշմարտութիւնը:

ՍԱՂՄՈՍ 100/101

Արդար իշխանաւորը

Սաղմոս Դաւիթի:

1 Քու ողորմութեանդ եւ արդարութեանդ համար պիտի օրհնեմ քեզ, Տէ՛ր, եւ սաղմոս պիտի երգեմ քեզի:

րի է եւ կը շոայլէ պարգեւներ իր ժողովուրդին, անոր սէրը կը մնայ սերունդէ սերունդ. եւ սերունդէ սերունդ՝ հաւատացեալ ժողովուրդները հրաւիրուած են վերաձայնելու գովաբանութիւն եւ գոհութիւն: Թեպէտ կարն, սակայն սաղմոսը կրնայ հանդիսանալ անսպառ ներշնչարան աշխուժացնելու ժողովուրդին մասնակցութիւնը ծիսական պաշտամունքի աղօթքներուն:

2 Եւ նկատի պիտի առնեմ անբծութեան ճամբան, մինչեւ որ ան դիմացս ելլէ, որովհետեւ ես անբիծ սրտով ապրած եմ տանս մէջ:

3 Ես աչքիս առջեւ չունեցայ անիրաւ գործեր, ատեցի անոնք որ ուրացուցիւն կը գործէին, եւ անոնք չմօտեցան ինծի:

4 Այն որ սրտով մոլորած էր, կը խուսափէր ինծմէ. եւ ես կարեւորութիւն չէի տար անզգամին:

5 Բացէ՛ ի բաց կը վռնտէի իմ քովէս՝ այն որ գաղտնաբար իր ընկերոջ դէմ կը խօսէր, եւ հաց անգամ չէի ուտեր այն մարդուն հետ՝ որ իր նայուածքով ամբարտաւան էր կամ սրտով ազա՛ս:

6 Աչքս ուղղուած է երկրի վրայ եղող հաւատարիմներուն, որպէսզի անո՛նք նստին ինծի հետ. այն որ անբծութեան ճամբէն կը քայլէր՝ ան ծառայեց ինծի:

2-«Մինչեւ որ ան դիմացս ելլէ» կամ, ըստ ուրիշներու՝ «նշմարտութիւնդ ե՞րբ պիտի գայ»: Թագաւորը կը խոստանայ, սակայն գիտակից է իր տկարութեան: Չի կրնար պահել խոստումը, չի կրնար հնազանդիլ, եթէ Տէրը թիկունք չէ իրեն:

6- Թագաւորին նախընտրանքը կ'երթայ անոնց որ հաւատարիմ են Տիրոջ, կը պահեն անոր ուխտը: Աստուծոյ սէրը կը մղէ զայն ապրողները դէպի իրենց նմանները, որոնք կ'ուզեն գործադրել նոյն սէրը: Հաւատարիմները երկրին պիտի ունենան համարձակութիւնը բազմաբարձրութիւն հետ, մինչդեռ, ամբարտաւանները, ստախոսները, ամբարիշտները պիտի հեռացուին երկրէն, Տիրոջ քաղաքէն:

Սաղմոսը կը թուէ մեզի խոստումները թագաւորի մը: Սակայն այս

7 Իմ տանս մէջ չէր բնակեր այնպիսի մէկը՝
որ ամբարտաւանութիւն գործէր,
եւ իմ աչքերուս առջեւ յաջողութիւն չգտաւ՝
այն որ անօրէն խօսքեր կ'ըսէր:

8 Առաւօտները կը լռեցնէի երկրի բոլոր մեղաւորները,
որպէսզի անհետացնեմ բոլոր անոնք՝
որ Տիրոջ քաղաքին մէջ անօրէնութիւն կը գործեն:

ՍԱՂՄՈՍ 101/102

Աղօթք՝ փորձանքի ատեն

1 Բորոտին աղօթքը՝ երբ, վիատած, Տիրոջ առջեւ կը
պարզէ իր խնդրանքները:

2 Տէ՛ր, լսէ՛ աղօթքս,
թող աղաղակս հասնի՛ քեզի:

3 Նեղութեանս այս օրերուն, երեսդ մի՛ դարձներ ինծմէ:
Ականջդ խոնարհեցուր ինծի,
եւ այն օրը ուր քեզի կը դիմեմ՝ փութով լսէ գիս:

4 Օրերս ծուխի նման սպառեցան,
եւ ոսկորներս ցրուած մագերու նման չորցան:

Քազաւորէն անդին, խորհրդաւոր Թագաւորը որուն կը սպասէին՝ Քրիստոսն էր: Բայց Քրիստոսի խօսքն ու գործը չեն համապատասխաներ սաղմոսին Քազաւորին խօսքին ու գործին: Քրիստոսի Ուխտին դռները բաց են բոլոր մարդոց:

5 Սիրտս խոտի նման չորցաւ եւ ցամքեցաւ,
եւ հացս անգամ մոռցայ ուտել:

6 Հառաչանքիս ձայնէն՝
ոսկորներս միսերուս փական:

7 Անապատի հաւալուսնին նմանեցայ,
եւ աւերակներուն վրայի բուռն պէս եղայ:

8 Տքնեցայ, եւ եղայ նման ճնճղուկին՝
որ միայնակ մնացած է տանիքին վրայ:

9 Թշնամիներս հալածեցին զիս օրն ի բուն,
եւ անոնք որ զիս կը գովէին՝ իմ անունովս երդում կ'ընէին:

10 Մոխիրը իբրեւ հաց կերայ,
եւ ըմպելիս արցունքով խառնեցի,

11 քու բարկութեանդ գայրոյթին պատճառով,
որովհետեւ դուն բարձրացուցիր եւ խոնարհեցուցիր զիս:

12 Ստուերի պէս անցան իմ օրերս,
եւ ես խոտի նման ցամքեցայ:

13 Բայց դուն յաւիտեան կաս, Տէ՛ր,
եւ քու յիշատակդ սերունդէ սերունդ պիտի մնայ:

14 Դուն պիտի ելլես եւ գթաս Սիրտի վրայ,
անոր վրայ գթալու ժամանակը հասած է արդէն:

15 Քու ծառաներդ սիրած են անոր քարերը,
եւ անոնք պիտի գուրգուրան անոր հողին վրայ:

- 16 Հեթանոսները պիտի վախնան քու անունէդ,
եւ երկրի բոլոր թագաւորները՝ քու փառքէդ:
- 17 Տէ՛րը կը շինէ Սիոնը,
եւ ան՝ ի՛ր փառքով պիտի երեւի անոր մէջ:
- 18 Ան նայեցաւ խոնարհներու աղօթքին,
եւ չարհամարհեց անոնց խնդրանքները:
- 19 Այս բաները գրի պիտի առնուին՝ գալիք սերունդին համար,
եւ Տէրը պիտի օրհնէ այն ժողովուրդը որու տէր դարձած է:
- 20 Տէրը՝ բարձունքէն, իր սրբավայրէն նայեցաւ,
երկինքէն երկրի վրայ նայեցաւ,
- 21 լսելու համար կապեալներուն հառաջանքը,
եւ ազատ արձակելու համար մահապարտները:
- 22 որպէսզի Սիոնի մէջ պատմուի Տիրոջ անունը,
եւ ան օրհնուի Երուսաղէմի մէջ:
- 23 որպէսզի ժողովուրդները մէկտեղ հաւաքուին,
եւ թագաւորները Տիրոջ ծառայեն:
- 24 Ան պատասխանեց անոր՝ իր զօրութեան ճամբուն վրայ,
եւ ըսաւ. ըսէ՛ ինձի, որքանո՞վ նուազած են օրերս:
- 25 Զիս մի՛ հաներ կեանքիս կէսին,
որովհետեւ տարիներդ սերունդէ սերունդ կը տարածուին:
- 26 Տէ՛ր, դուն սկիզբէն հաստատեցիր երկրիս հիմերը,
եւ երկինքը քու ձեռքերուդ գործն է:

- 27 Անոնք կ'անցնին, բայց դուն կաս ու կը մնաս յաւիտեան.
անոնք պիտի մաշին հագուստի նման,
դուն վերարկուի նման պիտի փոխես զանոնք
եւ անոնք պիտի փոխուին:
- 28 Բայց դուն՝ բոլորովին նո՛յնը կը մնաս,
եւ քու տարիներդ երբեք չեն անցնիր:
- 29 Ծառաներուդ որդիները պիտի բնակին անոր մէջ,
եւ անոնց որդիները յաջողութիւն պիտի գտնեն յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ 102/103

Աստուած սէր է

Սաղմոս Դաւիթի:

- 1 Օրհնէ՛ Տէրը, իմ հոգի՛ս,
եւ բոլոր ոսկորներս թող օրհնեն անոր սուրբ անունը:

27– Անցքը ներշնչուած է Եսայեան մարգարէութենէն (41,4. 43,10. 51,6–8) եւ յատկացուած է Քրիստոսի (Եբր 1,10–12) ցոյց տալու համար անոր գերակայութիւնը իբրեւ Աստուծոյ Որդիին:

29–Քու Ծառաներուդ որդիները, այսինքն քու ծառաներդ. յաւիտեանակաւութիւնն Աստուծոյ գրաւական է հաւատացեալ ժողովուրդին յաւերժութեան:

1–Սաղմոս 102 մէկն է սաղմոսարանին գոհարներէն: Միեւնոյն օրի– ներգութեան, ինչպէս համանուագի մը մէջ, կը միանան մարդիկ, երկ– նային եւ երկրային գորութիւնները (հ. 20–21), սաղմոսներգուն եւ իր ժողովուրդը: Ան գիտակից է մարդկային մտացկոտ տկարութեան,

2 Օրհնէ՛ Տէրը, իմ հոգի՛ս,
եւ մի՛ մոռնար անոր անթիւ բարիքները:

3 Ան կը քաւէ մեղքերդ,
եւ կը բուժէ բոլոր հիւանդութիւններդ:

4 Ան կը փրկէ կեանքդ ապականութենէ,
ողորմութեամբ եւ գթութեամբ կը պսակէ քեզ:

5 Ան՝ իր բարութեամբը կը յագեցնէ իղձերդ,
եւ երիտասարդութիւնդ կը նորոգէ արծիւի նման:

6 Տէրը իր ողորմութիւնը կը գործադրէ,
եւ իրաւունքը կու տայ բոլոր զրկուածներուն:

7 Տէրը ցոյց տուաւ Մովսէսին իր ճամբան,
եւ իր կամքը՝ Իսրայէլի որդիներուն:

8 Գթած եւ ողորմած է Տէրը,
երկայնամիտ է եւ բազումողորմ:

ասոր համար, յորդորով, հրամայականով տիպոկի մէջ է յամախ յիշո-
ղութենէ գուրկ ապերախտին հետ որ կը նիրհի իւրաքանչիւր հաւատաց-
եալին մէջ. «օրհնէ Տէրը, հոգի իմ, մի՛ մոռնար անոր պարգեւները»:

1- Սաղմոսերգուն կ'ուզէ օրհնել Տէրը իր ողջ էութեամբ, ոսկորնե-
րով, որովհետեւ իր մէջ հաշտուած են հոգին եւ մոռացկոտ «Նս»ը: Կը
զգացնէ խորտակումը որուն ենթարկուած էր մեղքով եւ հիւանդութիւնը՝
որ հետեւանքն է մեղքին: Մօտալուտ է եղած նոյնիսկ մահը, սակայն Տէ-
րը ներած է, բուժած է եւ կը փրկէ: Կ'ուզէ օրհնել Տէրը որովհետեւ իր
կեանքն ամբողջ կը տեսնէ խաղաղ՝ աստուածային գթութեան հովանիին
տակ:

9 Տէրը չի բարկանար անվերջ կերպով,
ան որս չի պահեր յաւիտեան:

10 Ան չէ պատժած մեզ՝ մեր մեղքերուն չափովը,
եւ մեր անօրէնութեան համեմատ չէ հատուցած մեզի:

11 Այլ՝ ո՛րքան բարձր է երկինքը երկրէն,
նո՛յնքան ալ իր ողորմութիւնը՝
կը տարածուի իր երկիւղածներուն վրայ:

12 Ո՛րքան հեռու է արեւելքը արեւմուտքէն՝
նոյնքան հեռացուց ան մեր անօրէնութիւնները մեզմէ:

13 Ինչպէս հայրը կը գթայ իր որդիներուն՝
Տէրն ալ նոյնպէս պիտի գթայ իր երկիւղածներուն:

14 Որովհետեւ ան գիտէ թէ մենք արարածներ ենք,
եւ կը յիշէ թէ մենք հող ենք:

15 Մարդուն օրերը խոտի նման են,
կը նմանին վայրի ծաղիկին որ կը ծաղկի:

16 Հովը կը փչէ անոր վրայ՝ եւ ան չկայ արդէն,
եւ անոր տեղն անգամ յայտնի չըլլար:

17 Բայց Տիրոջ ողորմութիւնը իր երկիւղածներուն հանդէպ՝
յաւիտեանս յաւիտենից կը մնայ,
եւ անոր արդարութիւնը կը շարունակէ որդիէ որդի:

17- Կայ անհուն հեռաւորութիւնը մարդուն եւ Աստուծոյ միջեւ (հ.
11-12) մարդուն մեղքին եւ Աստուծոյ շնորհքին միջեւ (հ. 13): Կայ ան-

**18 Անոնք որ կը պահեն անոր ուխտը՝
կը յիշեն անոր պատուիրանները եւ կը կատարեն զանոնք:**

**19 Տէրը երկինքի մէջ հաստատած է իր աթոռը,
անոր թագաւորութիւնը ամէնուն վրայ կը տիրէ:**

**20 Օրհնեցէ՛ք Տէրը, դուք՝ անոր բոլոր հրեշտակները,
որ հզօր էք զօրութեամբ,
որ անոր հրամանները կը կատարէք՝
երբ լսէք անոր պատգամներուն ձայնը:**

**21 Օրհնեցէ՛ք Տէրը,
դուք՝ անոր բոլոր զօրքերը, պաշտօնեաները,
եւ դուք որ կը գործադրէք անոր կամքը:**

**22 Օրհնեցէ՛ք Տէրը,
դուք բոլորդ՝ անոր գործերը.
անոր իշխանութիւնը ամէն տեղ է.
դո՛ւն ալ օրհնէ Տէրը, իմ հոգիս:**

համեմատութիւն մը որուն գօրութեամբ շնորհքը պիտի ըլլայ միշտ աւելի հզօր եւ աւելի առատ քան արարքները մարդուն տկարութեան: Աստուած իր սիրով եւ շնորհքով չի կրնար եթէ ոչ գթալ մարդուն, իր արարածին որ շարունակ է հողէ (14): Մարդը կը մնայ տկար եւ վաղանցուկ, յանդիման աստուածային սիրոյն, որ կ'երթայ մէկ յաւիտեակամութենէ մինչեւ միւսը:

22–Տիրոջ շնչոյն սաղմոսին, ուրախութեան շնչուն է. հաւատացեալ հոգիին խորունկութենէն ժայթփող ուրախութեան: Կը պարզէ մեր աչքերուն առջեւ խորհրդաւոր եւ մարդուն խոկումները կեդրոնացնող չքնադ համայնապատկերը: Համայնապատկերին մէջ կը զգացնէ մեզի մարդուն մեծութիւնը: Մեծութիւնը բանաւոր եւ հոգեւոր մարդուն որ ծնրադիր կամ կանգնած եւ բազկատարած իր օրհնագրութեան մէջ կը

ՍԱՂՄՈՍ 103/104

Արարիչին փառաբանութիւնը

Սաղմոս Դաւիթին. աշխարհագործ արարածներուն մասին:

**1 Օրհնէ՛ Տէրը, հոգի՛ իմ:
Մե՛ծ ես իրապէս դուն, Տէր Աստուած՝ իմ.
փառք եւ վեհութիւն զգեցած ես դուն:**

**2 Դուն լոյսը առիր վրադ՝ իբր վերնագգեստ,
եւ երկինքը լարեցիր՝ իբրեւ վրան:**

**3 անոր վերնայարկերը դրիր ջուրերու վրայ.
ան կը քայլէ ամպերու վրայ
եւ կը շրջի հովերու թեւերուն վրայ:**

խտացնէ օրհնագրութիւնը տիեզերքին: Սակայն այս մեծութեան վերիա-յեցողութեան մէջ ինկած սաղմոսագրուն չի մոռնար դիւրաբեկութիւնը մարդուն, գոր կը պատկերացնէ քննոյշ, յուզիչ եւ մեղամաղանութեամբ երանգաւորուած պատկերով:

1–Յորդորակը կրկնութիւնն է նախորդ սաղմոսի յորդորակին: Սաղմոսը ամբողջութեամբ, սաղմոսարանի ամենէն գոյտը ընդլայնումնեւրէն մէկն է: Կը ներշնչուի Ծննդոց գիրքէն, ցոյց կու տայ Աստուծոյ խնամակալ սէրը արարածներուն հանդէպ: Հ. 1–3 կը ներկայացնէ Տէրը գերակալ գօրութեամբ լուսեղէն երկինքի մէջ: Հ. 3–9 արարչութիւնն է երկինքի, հ. 10–18 արարչութիւնը ջուրին, հ. 19–23 նկարագրութիւնն է ստեղծման՝ լուսատուներուն եւ ժամանակին եւ վերջապէս հ. 24–30 արարչութիւնը մարդուն որ կը հաստատուի տիեզերքի մէջ իբրեւ տէր արարածներուն եւ փոխանորդ Արարչին: Եզրակացութիւնը (31–35) օրհնաբանութիւնն է սիրով ստեղծող եւ նախախնամող Արարչին:

- 4 Ան՝ իր հրեշտակները ստեղծած է իբրեւ հողի,
եւ իր պաշտօնեաները՝ իբրեւ հրեղէն բոցեր:
- 5 Ան հիմերու վրայ հաստատած է երկիրը՝
որ չսասանի յաւիտեան:
- 6 Անդունդները զայն կը կրեն իբր վերարկու,
եւ ջուրերը լեռներու վրայ պիտի կանգնին:
- 7 Անոնք պիտի փախչին քու սաստէդ,
եւ պիտի սարսին քու որոտացող ձայնէդ:
- 8 Անոնք կը բարձրանան ու լեռ կը դառնան,
կ'իջնեն եւ դաշտի կը վերածուին՝
հո'ն ուր հաստատած ես դուն զանոնք:
- 9 Դուն սահման դրիր անոնց, եւ անոնք անդին չեն անցնիր,
եւ չեն վերադառնար՝ երկիրը ծածկելու համար:
- 10 Դուն աղբիւրներ հոսեցուցիր հովիտներէն,
եւ ջուրերը լեռներու մէջէն պիտի անցնին:
- 11 որպէսզի բոլոր վայրի գազանները խմելիք ունենան,
եւ վայրի էջերն անգամ յագեցնեն իրենց ծարաւը:
- 12 Երկինքի թռչունները հոն պիտի դնեն իրենց բոյները,
եւ ժայռերու մէջէն լսելի պիտի ընեն իրենց ձայնը:

5- Հիմերու տիեզերաբանութեան համաձայն երկիրը հաստատուած էր անդնդային ջուրերու վրայ: Արարչին գորութիւնը գրաւականն է աշ-
խարհի ամասանութեան եւ տեւողութեան (Յոբ 26,7- 33,6):

- 13 Ան՝ իր շտեմարաններէն կ'ոռոգէ լեռները,
եւ երկիրը կը լեցուի իր տուած պտուղներով:
- 14 Դուն բուսցուցիր խոտը՝ անասուններուն համար,
կանանչութիւնը՝ մարդոց պէտքերուն համար.
եւ երկրէն հաց հանեցիր:
- 15 գինին կ'ուրախացնէ, իւղը կը գուարթացնէ,
եւ հացը կ'ամրացնէ մարդու սիրտը:
- 16 Տիրոջ ծառերը պիտի յագենան
նաեւ Լիբանանի մայրիները, զորս դուն տնկեցիր:
- 17 Երկինքի թռչունները ձագ պիտի բերեն հոն,
եւ արագիլի բոյնը ապաւէն է անոնց համար:
- 18 Բարձր լեռները եղջերուններուն համար են,
եւ ժայռերը՝ ապաստանարան են նապաստակներուն:
- 19 Դուն լուսինն ըրիր՝ ժամանակը ճշդելու համար,
եւ արեւը՝ որ գիտցաւ իր մայրամուտին ժամը:
- 20 Դուն խաւարը ըրիր եւ գիշեր եղաւ.
անոր մէջ սկսան շրջիլ անտառի գազանները:
- 21 Առիւծի կորիւնները կը մոնչեն եւ կը յափշտակեն հոն,
եւ Աստուծոյ կը խնդրեն իրենց կերակուրը:
- 22 Արեւածագին կը հաւաքուին անոնք,
եւ իրենց որջերուն մէջ կը հանգստանան:
- 23 Մարդը կ'ելլէ եւ կը գործէ,
եւ իր ձեռքին վաստակին մէջ կը մնայ մինչեւ երեկոյ:

- 24 Որքա՛ն մեծ են գործերդ, Տէ՛ր,
դուն ամէն բան իմաստու՞թեամբ կատարած ես,
եւ երկիրը լեցուած է քու ստեղծած բաներովդ:
- 25 Ահա մեծ եւ ընդարձակ ծովը,
ուր կան անհամար զեռուններ, մեծ եւ մանր գազաններ:
- 26 Անոր վրայ կ'երթեկէն նաւեր,
եւ վիշապը՝ զոր ստեղծած ես անով զբաղելու համար:
- 27 Ամէնքը քեզի՛ կը հային,
եւ դուն կու տաս անոնց կերակուրը յարմար ժամուն:
- 28 Դուն կու տաս անոնց, եւ անոնք կը կերակրուին,
ձեռքերդ կը բանաս եւ կը կերակրես ամէնքը՝
քու կամքիդ համեմատ:
- 29 Եթէ երեսդ դարձնես անոնցմէ՝ կը խռովին,
եթէ անոնց շունչն առնես՝ կը թուլնան եւ հող կը դառնան:
- 30 Երբ շունչդ զրկես անոնց՝ անոնք քուկդ կ'ըլլան,
եւ դուն կը նորոգես երկրիս երեսը:

30– «Երբ դրկես շունչդ...» կամ հոգիդ: Աստուծոյ շունչը կամ հոգին ոչ միայն կենսատու սկզբունքն է գոր Տէրը կը հաղորդէ իւրաքանչիւր կենդանի էակին, այլ նաեւ, իմաստի լիութեամբ, ինչպէս կը մեկնաբանեն սուրբ Հայրերը, նոյնիմէն Սուրբ Հոգին է: Արարչագործութեան պատմութիւնը ուրուագծելով, սաղմոսագրու կը բանայ հեռակարը տիեզերքի եւ մանաւանդ մարդուն վերանորոգութեան: Ամբողջական մարդուն, հոգի եւ մարմին, վերանորոգումը կը կատարէ

- 31 Տիրող փառքը թող յաւիտեա՛ն տեւէ,
թող Տէրը ուրախանա՛յ իր արարածներուն մէջ:
- 32 Երբ ան երկրին կը նայի՝ երկիրը կը դողայ,
երբ լեռներուն կը մօտենայ՝ անոնք կը սկսին մխալ:
- 33 Ես Տէրը պիտի օրհնեմ ամբողջ կեանքիս ընթացքին,
սաղմոսներ պիտի երգեմ իմ Աստուծոյս՝
այնքան ատեն որ գոյութիւն ունենամ:
- 34 Թող քաղցրօրէն հնչէ անոր առջեւ իմ օրհնութիւնս,
եւ ես ուրախ պիտի ըլլամ Տիրողմով:
- 35 Թող չքանան մեղաւորները երկրէս,
եւ թող անհետանան ամբարիշտներն անոր վրայէն:
Օրհնէ՛ Տէրը, իմ հոգիս: Ալէլուիա:

ՍԱՂՄՈՍ 104/105

Աստուծոյ նախախնամութիւնը՝ անցեալին

- 1 Բարեբանեցէ՛ք Տէրը, կանչեցէ՛ք անոր անունը,
պատմեցէք անոր գործե՛րը հեթանոսներուն մօտ:
- 2 Օրհնեցէք եւ սաղմոս երգեցէք անոր,
պատմեցէք անոր անհամար սքանչելիքները:

Քրիստոս, որուն առաքելութիւնը կը շարունակէ Հոգին: Մարդուն վերանորոգումը կը հասնի ժամկէտին երբ յարութեամբ վերադառնայ գոյութեան, անցնելով մարմինին հողացումի հանգրուանէն:

- 3 Հպարտացէ՛ք անոր սուրբ անունով՝
թող ուրախանան սիրտերը բոլոր անոնց՝
որ Տէրը կը փնտռեն:
- 4 Փնտռեցէ՛ք Տէրը, եւ հզօր կը դառնաք,
անոր երեսը փնտռեցէ՛ք ամէ՛ն ժամանակ:
- 5 Յիշեցէ՛ք սքանչելիքները զորս ան կատարած է՝
անոր հրաշքներն ու բերնէն ելած օրինական պատգամները:
- 6 դո՛ւք, Աբրահամի զաւակներ, անոր ծառաները՝
դո՛ւք, Յակոբի որդիներ, անոր ընտրեալները:
- 7 Ա՛ն է, ի՛նքն է մեր Տէր Աստուածը,
եւ ամբողջ երկրի վրայ է անոր իշխանութիւնը:
- 8 Ան յիշած է իր յաւիտենական ուխտը,
եւ իր այն խօսքը զոր հազարամեակներու համար տուած է:
- 9 այն ուխտը զոր ան Աբրահամի հետ կնքած է,
եւ իր երդումը՝ Իսահակի հետ:
- 10 Ան՝ Յակոբին հետ ալ հաստատեց իր հրամանը,
եւ Իսրայէլի հետ կնքած ուխտը յաւիտենական հռչակեց,
- 11 ըսելով. Ձեզի՛ պիտի տամ Քանանի երկիրը,
եւ ձեր ստացած ժառանգութեան վիճակը:
- 12 Սակաւաթիւ էին անոնք,
թիւով աննշան եւ պանդուխտ էին հոն:
- 13 անոնք անցան մէկ ազգէն միւսը,
թագաւորութենէ մը տարբեր ժողովուրդներու:

- 14 Ան չթողուց մարդոց որ վնաս հասցնեն անոնց,
եւ թագաւորներ պատժեց անոնց պատճառով:
- 15 Մի՛ մօտենաք, ըսաւ, օծեալներուս,
եւ չարիք մի՛ հասցնէք մարգարէներուս:
- 16 Սով բերաւ անոնց երկրին վրայ,
եւ անոնց հացին պաշարը սպառեց:
- 17 Մարդ մը ղրկեց անոնց առջեւէն, Յովսէփը,
որ իբրեւ գերի վաճառուեցաւ:
- 18 Զայն նուաստացուցին՝ չղթայելով անոր ոտքերը,
եւ անոր հոգին երկաթեայ կապանքներէ անցաւ:
- 19 մինչեւ որ կատարուի անոր խօսքը՝
եւ Տիրոջ խօսքը փորձութենէ անցուց զինքը:
- 20 Թագաւորը մարդ ղրկեց եւ ազատ արձակեց զայն,
եւ իր ժողովուրդին իշխան կարգեց զինքը:
- 21 Իր տան տէրը նշանակեց զայն
եւ իշխան՝ իր բոլոր ստացուածքներուն վրայ:
- 22 որ դաստիարակէ անոնց իշխանները՝ իր ուզածին պէս,
եւ իմաստուն դարձնէ անոնց ծերերը:
- 23 Իսրայէլը Եգիպտոս մտաւ,
եւ Յակոբը պանդուխտ դարձաւ Քամի երկիրը:
- 24 Տէրը աճեցուց իր ժողովուրդը,
եւ իրենց թշնամիներէն աւելի զօրացուց զիրենք:

25 Շրջեց անոնց սիրտը, եւ անոնք սկսան ասել իր ժողովուրդը եւ նենգութեամբ վարուիլ իր ծառաներուն հետ:

26 Ղրկեց իր Մովսէս ծառան
եւ Ահարոնն՝ իր ընտրեալը:

27 Անոնց տուաւ իմաստը իր նշաններուն եւ հրաշքներուն,
զորս ինք պիտի ընէր Քամի երկրին մէջ:

28 Խաւար ղրկեց, եւ խաւարեցուց զանոնք,
որովհետեւ անոնք դառնացուցին իր խօսքը:

29 Արիւնի վերածեց անոնց գետերը,
եւ ոչնչացուց անոնց բոլոր ձուկերը:

30 Գորտերը ողողեցին անոնց երկիրը
եւ անոնց թագաւորներուն շտեմարանները:

31 Հրամայեց, եւ շանաճանճ ու մթեղ եկաւ
անոնց բոլոր սահմաններուն մէջ:

32 Անձրեւները կարկուտի վերածուեցան,
եւ հրդեհներ ծագեցան անոնց երկրին մէջ:

33 Հարուածեց անոնց այգիներն ու թզենիները,
եւ կոտորեց բոլոր ծառերը անոնց սահմաններէն ներս:

34 Հրամայեց, եւ եկան մարախներ ու մարախի ձագեր,
զորս կարելի չէր հաշուել:

35 Ասոնք լափեցին անոնց ամբողջ երկրին խոտերը,
եւ ոչնչացուցին անոնց դաշտերուն ամբողջ բերքը:

36 Ան զարկաւ Եգիպտացիներու բոլոր անդրանիկները,
առաջին պտուղը անոնց վաստակներուն:

37 Ոսկիով եւ արծաթով դուրս հանեց զանոնք,
եւ հիւանդ մէկը չմնաց անոնց ժողովուրդին մէջ:

38 Եգիպտոսը ուրախացաւ որ անոնք ելան,
որովհետեւ Տիրոջ սարսափը ինկած էր անոնց վրայ:

39 Յերեկը ամպ մը տարածեց՝ որ հովանի ըլլայ իրենց,
եւ գիշերը՝ կրակով կը լուսաւորէր զանոնք:

40 Անոնք խնդրեցին, եւ լորամարգի իջաւ,
եւ զանոնք երկնքի հացով կ'ըտացուց:

41 Ժայռին զարկաւ, եւ ջուրեր բխեցան,
ու գետեր սկսան հոսիլ անապատի մէջ:

42 Ան յիշեց իր սուրբ խօսքը,
զոր տուած էր իր Աբրահամ ծառային:

43 Իր ժողովուրդը ցնծութեամբ դուրս հանեց,
եւ ուրախութեամբ՝ իր ընտրեալները:

44 Հեթանոսներուն գաւառները տուաւ անոնց,
եւ այլ ժողովուրդներու վաստակներուն
ժառանգորդը ըրաւ զիրենք:

45 որպէսզի անոնք պահեն իր պատուիրանները,
եւ իր Օրէնքին հետամուտ ըլլան:

ՍԱՂՄՈՍ 105/106

Տիրոջ բարութիւնը Իսրայէլի հանդէպ

Ալէլուիա:

- 1 Գոհուածի՛ն մատուցէք Տիրոջ, որովհետեւ քաղցր է անորովհետեւ յաւիտենական է անոր ողորմութիւնը:
- 2 Ո՞վ կարող է նկարագրել զօրութիւնները Տիրոջ, եւ լսելի դարձնել անոր բոլոր օրհնութիւնները:
- 3 Երանի՛ անոնց՝ որ կը պահեն անոր պատուիրանները, եւ արդարութիւն կը գործեն ամէն ժամանակ:
- 4 Յիշէ՛ մեզ, Տէ՛ր, ըստ հաճութեանդ՝ ժողովուրդիդ հանդէպ, եւ այցելէ՛ մեզի՝ երբ փրկութիւնդ կը բերես:

1- Սաղմոս 105 կը փակէ սաղմոսարանին չորրորդ գիրքը: Ամբողջութիւնը կը ներկայանայ իրրեւ գուգահեռ ընդլայնումը 77 եւ 104 սաղմոսներուն: Երեք սաղմոսներն ալ ունին հիմնական նոյն թեման՝ անհատում բարութիւնը եւ ներողամտութիւնը Աստուծոյ բարութեան՝ ժողովուրդին հանդէպ: Մինչ միւս սաղմոսներուն մէջ, լայն տեղ տրուած է թէ՛ յիշատակութեան փոփոխութեան եւ թէ՛ խոստովանութեան՝ անցեալի անհաւատարմութեան, 105ին մէջ խոստովանութիւնն է որ ընդարձակօրէն ընդլայնուած է, նպատակով՝ ընդունելու Աստուծով գթութեան եւ ներումի նոր միջամտութիւնը՝ ժողովուրդին համար, որ կ'ապրի տարագրութեան տառապանքը: Ներմուծումին (1-6) կը յաջորդեն խոստովանութիւնը (7-46), պաղատանքը եւ խոստումը գովարանութեան (47): Յաւելեալ փառատրութիւնը կը փակէ սաղմոսը:

- 5 Տուր որ ընտրեալներդ ըլլալու քաղցրութիւնը վայելենք, ուրախ ըլլանք քու ժողովուրդիդ ուրախութեամբ, եւ պարծենանք՝ որ բաժինն ենք քու ժառանգութեանդ:
- 6 Մեր հայրերուն նման՝ մե՛նք ալ մեղանչեցինք, անօրհնութեամբ ապրեցանք եւ յանցաւոր եղանք:
- 7 Մեր հայրերը չհասկցան քու սքանչելիքներդ Եգիպտոսի մէջ, չյիշեցին անթիւ ողորմութիւններդ, եւ բարկացուցին քեզ, մինչ կարմիր Ծովէն կ'անցնէին:
- 8 Սակայն ան փրկեց զիրենք՝ իր անունին համար, որպէսզի ճանչնան իր զօրութիւնները:
- 9 Ան սաստեց կարմիր ծովուն, եւ ան ցամքեցաւ, եւ առաջնորդեց զիրենք այդ անդունդներէն այնպէս՝ ինչպէս ըրած էր անապատին մէջ:
- 10 Ո՞ղջ պահեց զանոնք՝ զիրենք ատողներուն ձեռքէն, եւ փրկեց զանոնք՝ իրենց թշնամիներուն ձեռքէն:
- 11 Ծովը ծածկեց իրենց նեղիչները, եւ անոնցմէ ո՛չ մէ՛կը ողջ մնաց:
- 12 Անոնք հաւատացին իր խօսքերուն, եւ անոր օրհնութիւնները երգեցին:
- 13 Սակայն, շատ չանցած մոռցան անոր գործերը, եւ մտիկ չըրին անոր խորհուրդներուն:
- 14 Յանկութենէ ցանկութիւն տարուեցան անապատի մէջ, եւ զԱստուած փորձեցին այդ անջրդի վայրերուն մէջ:

- 15 Ան կատարեց անոնց խնդրանքները,
եւ լիուլի յագեցուց անոնց բաղձանքները:
- 16 Անոնք, այդ բանակատեղիին վրայ,
բարկացուցին Մովսէսը եւ Ահարոնը՝ Տիրոջ սուրբքը:
- 17 Երկիրը բացուեցաւ եւ կուլ տուաւ Դադանը,
եւ ծածկեց Աբիրոնի բանակը:
- 18 Կրակ ելաւ անոնց խումբին մէջ,
եւ բոցերը լափեցին յանցաւորները:
- 19 Հորթ շինեցին Քորեբի վրայ,
եւ երկրպագութիւն ըրին անոր արձանին:
- 20 Եւ իրենց Փառքը փոխանակեցին
խոտակեր հորթի մը կերպարանքով:
- 21 Մոռցան զԱստուած, իրենց Կենարարը,
որ մեծամեծ գործեր կատարած էր Եգիպտոսի մէջ,
- 22 անոր սքանչելիքները՝ Քամի երկրին մէջ,
եւ անոր ահարկու արարքները՝ Կամիր Մովի վրայ:
- 23 Ան վճռած էր բնաջնջել զանոնք,
եթէ արգելք չըլլար անոր ընտրեալը՝ Մովսէս-
ան Տիրոջ ղիմեց եւ իջեցուց անոր բարկութիւնը,
որպէսզի չբնաջնջուէին անոնք:
- 24 Անոնք արհամարհեցին ցանկալի երկիրը,
եւ չհաւատացին անոր խօսքին:

- 25 Տրտնջեցին իրենց բանակավայրերուն վրայ
եւ մտիկ չըրին Տիրոջ ձայնին:
- 26 Եւ ան՝ բարձրացուց իր ձեռքը անոնց վրայ,
հարուածելու համար զանոնք անապատին մէջ,
- 27 ցիրուցան ընելով անոնց զաւակները հեթանոսներուն մէջ,
եւ սփռելով զանոնք աշխարհի բոլոր մասերուն վրայ:
- 28 Անոնք պղծուեցան՝ Բել-Փեգովրի միանալով,
զոհեալի եւ դիակի միս ուտելով:
- 29 Բարկացուցին զինքը իրենց գործերով,
եւ աղէտը իջաւ անոնց վրայ:
- 30 Այն ատեն ելաւ Փեննէէս,
քառութիւն ըրաւ, եւ մահը խափանուեցաւ:
- 31 Այդ արարքը արդարութիւն սեպուեցաւ իրեն համար՝
սերունդէ սերունդ, մինչեւ յաւիտեան:
- 32 Զայն բարկացուցին Հակոռակութեան Ջուրերուն քով,
եւ Մովսէս տառապեցաւ իրենց համար:
- 33 բայց որովհետեւ դառնացուցին անոր հոգին,
ան տրտնջաց իր շրթունքներով:
- 34 Եւ անոնք չբնաջնջեցին այն ազգերը
որոնց մասին Տէրը խօսած էր անոնց:

32– Աստուածաշունչի մատեանները չեն յիշատակեր թէ ի՞նչ բանի մէջ կայացած էր Մովսէսի յանցանքը, որուն հետեւանքով գրկուեցաւ Աւետեաց երկիրը մտնելու ուրախութեան:

- 35 **Հեթանոսներուն հետ խառնակուեցան,**
եւ անոնց գործերէն օրինակ առին:
- 36 **Անոնց կուռքերուն ծառայեցին,**
ինչ որ իրենց գայթակղութեան պատճառ դարձաւ:
- 37 **Դեւերու զոհեցին իրենց մանչ ու աղջիկ զաւակները,**
եւ անմեղ արիւն թափեցին:
- 38 **Քանանի կուռքերո՛ւն զոհեցին**
իրենց մանչ ու աղջիկ զաւակներուն արիւնը,
եւ անոնց արիւնով շաղախուեցաւ երկիրը:
- 39 **անոնց գործերո՛վ պղծուեցաւ ան,**
որովհետեւ անոնք՝ իրենց կենցաղով պոռնկեցան:
- 40 **Եւ Տէրը սաստկօրէն բարկացաւ իր ժողովուրդին դէմ,**
եւ գարշանք զգաց իր ժառանգութեան հանդէպ:
- 41 **Հեթանոսներուն ձեռքը մատնեց զանոնք:**
եւ անոնք որ կ'ատէին զիրենք, տիրեցին իրենց վրայ:
- 42 **Անոնց թշնամիները նեղեցին զիրենք,**
եւ իրենք ընկճուեցան անոնց ձեռքերուն տակ:
- 43 **Ան շատ անգամ փրկեց զանոնք,**
բայց անոնք դառնացուցին զինքը իրենց միտքերով,
եւ աւելի խորացան իրենց անօրէնութեան մէջ:

39–«Պոռնկեցան»... Մարգարեական ռեի յատուկ ասուածքն է նշանակելու համար ժողովուրդին անհաւատարմութիւնը՝ Աստուծոյ (Երմ 2․ Եզկ 23․ Ովս 1,3):

- 44 **Սակայն Տէրը, լսելով անոնց աղօթքին ձայնը,**
նայեցաւ անոնց, իրենց նեղութիւններուն ատեն:
- 45 **Յիշեց իր ուխտը, եւ իր անչափ ողորմութեամբ՝**
ետ առաւ իր որոշումը:
- 46 **եւ գթութեան մղեց բոլոր անոնք**
որ գերի առած էին զիրենք:
- 47 **Փրկէ՛ մեզ, Տէ՛ր Աստուած, եւ հանէ՛ հեթանոսներու մէջէն,**
եւ մենք պիտի բարեբանենք քո սուրբ անունը,
եւ պիտի պարծենանք քեզ օրհնաբանելով:
- 48 **Օրհնեա՛լ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը,**
յաւիտեա՛նս յաւիտենից:
եւ ամբողջ ժողովուրդը թող ըսէ՝
թող ըլլա՛յ, թող այդպէ՛ս ըլլայ:

ՍԱՂՄՈՍ 106/107

Աստուած մարդուն փրկիչը

Ալէլուիա:

- 1 **Բարեբանեցէ՛ք Տէրը, որովհետեւ քաղցր է ան,**
եւ յաւիտենական է անոր ողորմութիւնը:

1– Եսայեան մարգարեութիւններէն քաղուած յիշատակութիւններով լեցուն գոհաբանական օրհներգութիւն մըն է սաղմոսը: Կը վերաբարձէր աստուածային միջամտութիւնները, սփիւռքէն դէպի Երուսաղէմ՝ քանա-

- 2 Թող ա՛յդ ըսե՛ն Տիրոջ փրկեալները,
զորս ան փրկած է թշնամիին ձեռքէն:
- 3 Ան հաւաքած է զանոնք աշխարհի բոլո՛ր մասերէն.
արեւելքէն եւ արեւմուտքէն, հիւսիսէն եւ հարաւէն:
- 4 Անոնք մոլորեցան անապատին մէջ, անջրդի ճամբու վրայ,
եւ չէին գտած բնակելիք քաղաք մը:
- 5 Անոնք անօթեցած էին եւ ծարաւի,
եւ իրենց հոգին նուաղած էր իրենց մէջ:
- 6 Անոնք սակայն Տիրոջ աղաղակեցին իրենց նեղութեան մէջ,
եւ ան փրկեց զիրենք իրենց վիշտերէն:
- 7 Ուղիղ ճամբու վրայ առաջնորդեց զիրենք,
որ կարենային իրենց բնակելիք քաղաքը երթալ:
- 8 Թող փառաբանեն անոնք Տիրոջ ողորմութիւնները,
սքանչելիքներուն համար զորս ըրաւ մարդոց որդիներուն,
- 9 որովհետեւ ան քաղցած հոգիները յազեցուց,
եւ բարիքներով լիացուց կարօտեալ հոգիները,
- 10 որ խաւարի մէջ կը նստէին, մահուան ստուերներուն տակ,
եւ խեղճութեան շղթաներով կաշկանդուած էին:

պարիորդոդ ուխտաւորներուն ի նպաստ: Նպաստաւորեալները կը պատմեն հերթաբար վտանգները զորս դիմագրաւած են եւ կը հռչակեն Աստուծոյ միջամտութիւնը:

- 11 Որովհետեւ անոնք դառնացուցին Աստուծոյ խօսքը,
եւ Բարձրեալին պատուէրները բարկութեան մղեցին:
- 12 Անոնց սրտերը, ցաւերու պատճառով, կքեցան,
անոնք տկարացան եւ ոչ մէկը չկար որ օգնէր անոնց:
- 13 Իրենց նեղութեան մէջ, անոնք Տիրոջ աղաղակեցին,
եւ ան դուրս հանեց զիրենք իրենց վիշտերէն:
- 14 Ան փրկեց զանոնք խաւարէն եւ մահուան ստուերներէն,
ու խզեց անոնց կապանքները:
- 15 Թող անոնք փառաբանեն Տէրը իր ողորմութեան համար,
եւ սքանչելիքներուն համար՝
զորս ան ըրաւ մարդոց որդիներուն.
- 16 որովհետեւ ան փշրեց պղինձէ դռները,
եւ խորտակեց երկաթեայ նիւթերը:
- 17 Օգնեց անոնց երբ անօրէնութեան ճամբուն մէջ էին,
որովհետեւ իրենց մեղքերուն պատճառով
չատ ընկճուած էին:
- 18 Անոնց սիրտը կը գարչէր ամէն կերակուրէ,
եւ անոնք մինչեւ մահուան դուռը հասած էին:
- 19 Իրենց այդ նեղութեան մէջ, Տիրոջ աղաղակեցին,
եւ ան ազատեց զանոնք իրենց վիշտերէն:
- 20 Իր խօսքը զրկեց անոնց եւ բժշկեց զանոնք,
եւ իրենց ապականութենէն փրկեց զանոնք:

- 21 Թող փառաբանե՛ն Տէրը իր ողորմածութեան համար,
եւ մարդոց որդիներուն ըրած սքանչելիքներուն համար:
- 22 Թող օրհնութեան գոհեր մատուցանեն անոր,
եւ ցնծութեամբ թող պատմեն անոր գործերը:
- 23 Անոնք որ ծով կ'իջնէին նաւերով,
եւ մեծ գործեր կ'ընէին ընդարձակ ջուրերու վրայ,
- 24 անոնք ալ տեսան Տիրոջ գործերն ու սքանչելիքները՝
անդունդներու խորութիւններուն մէջ:
- 25 Ան խօսք մը ըսաւ, եւ հով ու մրրիկ ելաւ,
եւ բարձրացան ծովուն ալիքները:
- 26 անոնք մինչեւ երկինք կը բարձրանային
եւ մինչեւ անդունդները կ'իջնէին,
եւ անոնց հոգիները կը հալէին ու կը մաշէին:
- 27 Անոնք խռովեցան ու սարսափի մատնուեցան,
եւ հարբածի նման, իրենց միտքն անգամ կորսնցուցին:
- 28 Իրենց այդ նեղութեան մէջ, Տիրոջ աղաղակեցին,
եւ ան փրկեց զանոնք իրենց վիշտերէն:
- 29 Զեփիւռի վերածեց մրրիկը,
եւ անոր ալիքները խաղաղեցան:
- 30 անոնք ուրախացան երբ հանդարտեցան,
եւ իրենց ուզած նաւահանգիստը առաջնորդեց զանոնք:

- 31 Թող փառաբանե՛ն Տէրը իր ողորմածութեան
եւ սքանչելիքներուն համար՝
զորս ըրաւ ան մարդոց որդիներուն:
- 32 Թող փառաւորե՛ն զայն ժողովուրդի հաւաքոյթի մէջ,
եւ ծերերու խորհուրդին մէջ թող օրհնե՛ն զինքը:
- 33 Ան գետերը ցամքեցուց,
եւ ջուրերու հոսանքները ծարաւուտ երկրի վերածեց:
- 34 պտղաբեր երկիրը աղով լի հող դարձուց՝
անոնց բնակիչներուն չարութեան պատճառով:
- 35 Բայց անապատը ջուրի ճահիճներու վերածեց,
եւ ծարաւուտ հողերը հոսուն գետերով օժտեց:
- 36 Անոր վրայ բնակեցուց քաղցածները,
որոնք քաղաքներ շինեցին իրենց բնակութեան համար:
- 37 Արտեր վարեցին, այգիներ տնկեցին,
եւ արմտիքի բերքը քաղեցին իրենց համար:
- 38 Ան օրհնեց զանոնք, եւ անոնք շատ բազմացան,
եւ անոնց անասունները երբեք չնուազեցան:
- 39 Սակայն իրենք նուազեցան եւ չարչարանքի մատնուեցան,
չարիքներու եւ վիշտերու հետեւանքով:
- 40 Անոնց իշխանները նախատինքի ենթարկուեցան,
եւ չեղելով ուղիղ ճամբէն անապատի մէջ դեգերեցան:

41 Սակայն ան օգնեց չքաւորին, անոնց այդ խեղճութեան մէջ, եւ ոչխարներու նման առաջնորդեց անոնց ազգը:

42 Թող տեսնեն ուղղամիտները եւ ուրախանան, եւ անօրէնները թող փակեն իրենց բերանը:

43 Ո՞վ է այն իմաստունը որ պիտի պահէ այս բաները, եւ պիտի հասկնայ Տիրոջ ողորմութիւնը:

ՍԱՂՄՈՍ 107/108

Առաւօտեան օրհներգ

1 Օրհնութեան սաղմոս՝ Դաւիթէն:

2 Պատրաստ է սիրտս, ո՛վ Աստուած, պատրաստ է սիրտս՝ քեզ օրհնելու, եւ սաղմոս երգելու քեզի՝ իմ փառքովս:

3 Զարթի՛ր, ո՛վ փառքս, սաղմոսներով եւ օրհնութեան երգերով զարթի՛ր, եւ ես ալ պիտի արթննամ առաւօտները:

4 Պիտի գոհաբանեմ քեզ ժողովուրդներուն մէջ, Տէ՛ր, ազգերու դիմաց սաղմոսներ պիտի երգեմ քեզի:

43- Հաւատացեալը, վերաբերելով իր կեանքին դէպքերը նոյն եղանակով, կը տեսնէ թէ ամէն ինչ շնորհք է, ամէն կատարեալ պարգեւ՝ ի վերուստ է, որովհետեւ ինչպէս կ'ըսէ Քրիստոս, «առանց ինծի ոչինչ կարող է՛ք ընել»: Ոչինչը՝ ընտրանքն է շնորհքէն դուրս:

5 Ողորմութիւնդ մեծցաւ մինչեւ երկինք, եւ ճշմարտութիւնդ մինչեւ ամպերը հասաւ:

6 Բարձրացի՛ր եւ մինչեւ երկինք հասիր, Աստուած. բովանդակ երկրի վրայ է քու փառքը:

7 Ինչպէս որ փրկուեցան քու սիրելիներդ՝ այնպէս ալ ազատէ մեզ աջովդ եւ լսէ՛ մեզ:

8 Աստուած խօսեցաւ իր սրբավայրէն. ե՛ս ալ պիտի բարձրանամ, պիտի բաժնեմ Սիւքէմը, եւ Յարկաց Հովիտները պիտի չափեմ:

9 Ի՛մս է Գաղաադը, ի՛մս է Մանասէն, Եփրեմ՝ որ գլուխս կը զօրացնէ, եւ Յուդան՝ իմ թագաւորս,

10 իսկ Մովաբ՝ յոյսիս աւազանը. Եդոմի վրայ պիտի ուղղեմ քայլերս, եւ ալազգիները պիտի հնազանդին ինծի:

11 Ո՞վ պիտի տանի զիս դէպի ամուր քաղաք մը, կամ ո՞վ մինչեւ Եդովմ պիտի առաջնորդէ զիս,

12 եթէ ոչ դո՛ւն, Աստուած, որ մերժեցիր մեզ, եւ չպատերազմեցար մեր զօրքերուն կողքին, ո՛վ Աստուած:

13 Քու օգնութի՛ւնդ տուր մեզի, մեր նեղութեան մէջ, որովհետեւ խաբկանք է փրկութիւն յուսալ մարդոցմէ:

14 Մեծ գործեր պիտի կատարենք Աստուծմով, եւ ան ամօթի պիտի մատնէ մեր թշնամիները:

ՍԱՂՄՈՍ 108/109

Թախանձանքի աղօթք

- 1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:
- 2 Ո՛վ Աստուած զոր կ'օրհնեմ, լուռ մի՛ մնար, որովհետեւ մեղաւորին բերանը, նենգաւորի՛ն բերանը բացուած է ինծի դէմ. անոնք նենգաւոր լեզուով խօսեցան իմ վրաս.
- 3 եւ ատելութեամբ լի խօսքերով պաշարեցին զիս. առանց պատճառի պաշքարեցան ինծի դէմ:
- 4 Միրոյս փոխարէն՝ անոնք կը մատնէին զիս. բայց ես կ'աղօթէի:
- 5 Անոնք չարիք հասցուցին ինծի՝ բարիքին դիմաց, եւ ատելութիւն՝ սիրոյս փոխարէն:

1- Սաղմոսարանին ամէնէն արտասուվոր եւ վիճաբանուած միաւորն է: Զարամադթութիւնները դառն են, անգութ, սարսուռ տուող: Առաջին ընթերցումով, կ'ունենանք տպաւորութիւնը թէ՛ չարամադթութիւնները արտաբերուած են Տիրոջ հաւատարիմին կողմէ: Ամբաստանուած յանի-րաւի, ան կոչ կ'ընէ Աստուծոյ հարուածող բազուկին: Այս է սաղմոսին աւանդական բացատրութիւնը: Յանգելու համար սակայն սաղմոսին ամբողջութիւնը բացատրող ընդունելի լուծումին, հարկ է նկատի առնել հետեւեալները. Հին Կտակարանի բարոյական սկզբունքները տակաւին չունին Նորին գերբնական կատարելութեան ձգտելու հրաւերը, ի գին նոյնիսկ ներումով հակառակորդին: Հարկ է նաեւ չարամադթութիւններու յորձանքէն բաժին հանել արեւելեան նոտմաբանութեան:

- 6 Անոր դիմաց մեղաւոր մը դիր, եւ սատանան թող կենայ անոր աջին:
- 7 Թող դատապարտուած դուրս ելլէ իր դատէն, եւ մեղքի վերածուին անոր աղօթքները:
- 8 Թող կարճնան անոր կեանքին օրերը, եւ ուրիշի մը փոխանցուի անոր ստացած պաշտօնը:
- 9 Թող որբ դառնան անոր որդիները, եւ այրիանայ անոր կիներ:
- 10 Թող թափառական ու պանդուխտ ըլլան անոր որդիները, մուրացկան դառնան ու վտարուին իրենց բնակավայրէն:
- 11 Թող փոխատուն խուզարկէ անոր բոլոր ինչքերը, եւ օտարները յափշտակեն իր աշխատանքին պտուղը:
- 12 Թող չգտնուի՛ մէկը որ ուզէ օգնել անոր, եւ ո՛չ ոք թող ողորմի անոր որբերուն:
- 13 Թող անոր որդիները ոչնչանան, եւ իր անուներ ջնջուի անոր գերդաստանէն:
- 14 Թող անոր հօր մեղքերը յիշուին Տիրոջ առջեւ, եւ անոր մօր մեղքերը չջնջուին.
- 15 Թող Տիրոջ առջե՛ւ մնան անոնք ամէ՛ն ժամ. եւ ջնջուի՛ անոր յիշատակը երկրէս.

6- «Սատանան»... պաշտօնապէս ամբաստանողը ատեանին առջեւ եւ բանբերն է բոլոր հակառակորդներուն (Ձաբ 3,1):
 8- Այս համարը կը յառաջընթան Յուդայի համար (Գ Առ 1,16):

- 16 քանի որ ան չմտածեց ողորմութիւն ընել,
հալածեց աղքատն ու տնանկը,
սպաննելով այն որ խոնարհ է արտով:
- 17 Ան սիրեց անէծքը, եւ այդ պիտի վիճակուի՝ իրեն-
մերժեց օրհնութիւնը, եւ այդ հեռո՛ւ պիտի մնայ իրմէ:
- 18 Հագուստի նման զգեցաւ անէծքը,
ան՝ ջուրի նման պիտի թափանցէ անոր փորին մէջ,
եւ ձէթի նման՝ անոր ոսկորներուն մէջ:
- 19 Թող ան ըլլայ՝ անոր հագած զգեստին պէս,
ամէն օր իր մէջքին կապած գօտիին պէս:
- 20 Ա՛յս պիտի ըլլայ բաժինը անոնց՝
որ կը զրպարտէին զիս Տիրոջ առջեւ,
եւ չարախօսութիւն կ'ընէին իմ մասիս:
- 21 Բայց դուն՝ Տէ՛ր, ո՛վ Տէր, վարուէ՛ ինծի հետ այնպէս՝
ինչպէս կը վայելէ անունիդ,
որովհետեւ քաղցր է ողորմութիւնդ, եւ փրկէ՛ զիս:
- 22 որովհետեւ ես աղքատ եւ տնանկ եմ,
եւ սիրտս ճմլուած է կուրծքիս տակ:
- 23 Ես անհետացող ստուերի մը նման չքացայ,
եւ մարախի պէս թօթափեցայ:
- 24 Ծունկերս տկարացան ծոմապահոթենէ,
եւ մարմինս այլագունեցաւ իւղի պակասէն:
- 25 Ես անոնց նախատինքին առարկայ դարձայ,
տեսան զիս, եւ իրենց գլուխը շարժեցին:

- 26 Օգնէ՛ ինծի, Տէր Աստուած իմ,
փրկէ՛ զիս քու ողորմութեամբդ:
- 27 Թող գիտնան թէ քու ձե՛ռքդ կայ հոն,
եւ թէ դո՛ւն ըրիր այս բաները, Տէ՛ր:
- 28 Անոնք պիտի անիծեն, իսկ դուն՝ պիտի օրհնես:
Անոնք որ ինծի դէմ ելան, ամօթով պիտի մնան,
մինչ քու ծառադ՝ քու մէջդ պիտի գտնէ իր ուրախութիւնը:
- 29 Ամօթով պիտի մնան անոնք որ գէշ կը խօսէին իմ մասիս,
եւ իրենց ամօթը վերարկուի նման պիտի կրեն իրենց վրայ:
- 30 Բայց ես բերանովս Տէրը պիտի փառաբանեմ բարձրաձայն,
եւ բազմութիւններու մէջ պիտի օրհնեմ քեզ:
- 31 Որովհետեւ ան տնանկիս աջ կողմը կեցաւ,
զիս փրկելու համար անոնցմէ որ կը հալածեն հոգիս:

ՍԱՂՄՈՍ 109/110

Մեսիային քահանայութիւնը

Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

1 Տէրն ըսաւ իմ Տիրոջս՝ նստէ իմ աջ կողմս,
մինչեւ որ ոտքերուդ պատուանդան դնեմ թշնամիներդ:

30–Սաղմոսերգուն արդէն իսկ ունի համոզումը թե՛ իր կողմին, Տէ-
րը իբրեւ ջատագով վկայ, առած է տեղը սատանային՝ ամբաստանողին
(հ. 6) եւ կ'ապահովէ յաջող ելքը իր դատին: Զքնաղ գարթնումն է հա-
ւատքի, որով ամբաստանեալը կ'այժմէականացնէ իր փրկութիւնը:
1–Սաղմոսարանին ամենէն կարեւոր եւ միաժամանակ ամենէն

2 *Տէրը իշխանութեան գաւազան պիտի ղրկէ քեզի Սիոնէն, եւ դուն պիտի տիրես քու թշնամիներուդ վրայ:*

դժուար կտորներէն մէկն է այս սաղմոսը: Անոր բովանդակութիւնը Մեսիական է եւ ցոյց կու տայ Քրիստոսի առանձնաշնորհումները՝ տիեզերական թագաւորի եւ յաւիտեանական քահանայի (Զաբ 6,12-13), որոնք տրուած են ոչ թէ մարդկային գահակալութեամբ, այլ ուղղակի Աստուծով: Նոր կտակարանով Յիսուս կ'իրականացնէ սաղմոսին բովանդակութիւնը եւ ասոր համար ամենէն աւելի յառաջընթացածն է (Մտք 22,44. 27,11. 28,18. Գ Առ 2,34-35. Եբր 1,13. Յայտ 19,11): Վերջին համարները կը շեշտեն Մեսիային ռազմական հանգամանքը, կը հային Քրիստոս-Ռատաւորի իշխանութեան՝ տրուած Հօրմէն (Մտք 26,64. Յովի 5,22. Գ Առ 7,56. 10,46):

«Տէրն ըսաւ իմ Տիրոջս»... Ծանօթ բանաձեւն է մարգարեական գրականութեան, նշանակելու համար աստուածային պատգամը որ կը փակէ մարգարէութիւնը եւ կամ քիչ բացառութեամբ գայն կը սկսի (Ես 1,2,4. 56,3. Զաբ 12,1): Պատգամը ուղղուած է նոր թագաւորին, իսկ գայն արտասանողը արքունի պաշտօնեան է կամ մարգարէն, ինչպէս Նաթան՝ Դաւիթի: Յիսուս այս սաղմոսը կը յառաջընթացի իր եւ փարիսեցիներուն միջեւ յուզուած բանավեճերուն առիթով եւ կը խնդրէ անոնցմէ որ բացատրեն եւ հաշտեցնեն թէ՛ ինչպէս Մեսիան, ըլլալով որդի, Դաւիթի, միաժամանակ կը հռչակուի անոր գերակայ (Մտք 22,43. Մրկ 12,36):

«Նստէ աջ կողմս»... Բանաձեւն է գահակալութեան որով թագաժառանգը կը իրաւիքուի Աստուծոյ կողմէ ընդունելու արքայական իշխանութիւնը: Նստիլ Աստուծոյ աջ կողմը, գահին վրայ (1 Մնաց 28,5) կը նշանակէ մասնակցութիւնը աստուածային իշխանութեան: Նոր Կտակարանը, մեկնելով այս բանաձեւէն, Քրիստոսի փառքով Համբարձումին մէջ կը տեսնէ ընկալումն իշխանութեան՝ բազմելով Աստուծոյ աջ կողմը (Գ Առ 2,33-34. Մրկ 16,19. Եփս 1,20. Կող 3,11. Եբր 10,12. Մտք 26,24. Ղկ 22,69. Յայտ 3,21):

3 *Քեզի հետ է սկիզբը օրերու զօրութեան, քու սուրբերուդ վայելչութեան մէջ՝ արուսեակէն առաջ՝ ես արգանդէ ծնայ քեզ:*

4 *Տէրը երդում ըրաւ եւ պիտի չզղջայ երբեք, թէ դուն՝ յաւիտեանական քահանայ ես, Մելքիսեղեկի կարգին համաձայն:*

5 *եւ Տէրը քու աջ կողմդ է, եւ թագաւորները պիտի խորտակէ՝ իր բարկութեան օրը:*

6 *Ան կը դատէ հեթանոսները եւ կը բազմացնէ հարուածները, ան շատերուն գլուխները կը ջախջախէ երկրի վրայ:*

7 *Ան կը խմէ ճամբու հեղեղատէն, ասոր համար բարձր կը պահէ իր գլուխը:*

3- Այս համարը սաղմոսին ամենէն մութ անցքն է, նշան բնագրին աղաւաղումին եւ ասոր հետեւանքն են հին եւ նոր թարգմանութիւններուն վարանումները:

4- «Քահանայ ըստ կարգին Մելքիսեղեկի»... ըստ Յեբուսացիներու ականութեան, Նդուսաղէմի նախախորայելեան շրջանին, Մելքիսեղեկ կը յիշուի իբրեւ թագաւոր եւ քահանայ: Կը դիմաւորէ Աբրահամը երբ ասիկա կը վերադառնար յաղթական: Նահապետը տասանորդ կը վճարէ անոր: Հրեական հնագոյն ականութեան համաձայն, թագաւորներն ունէին քահանայական որոշ առանձնաշնորհումներ, սակայն երբեք չեն կոչուած քահանայ յաւիտեան (1 Թագ 13,9-10. 2 Թագ 6,17-18):

6- Տէրը կը յայտնուի կրկնակի պաշտօններով իբրեւ դատաւոր եւ տուող փրկութեան՝ պատմութեան եւ մեսիական կատարածնային ժամանակներու մէջ: Մարգարէներուն մօտ երկու պաշտօնները կը միաձուլուին (Ես 63, 1-6. Եզկ 38,21-23):

ՍԱՂՄՈՍ 110/111

Տիրոջ գործերուն փառաբանութիւնը

Ալեյուիա:

1 Բորոր սրտով, Տէ՛ր, պիտի փառաբանեմ քեզ, արդարներու ժողովներուն եւ հաւաքոյթներուն մէջ:

2 Մեծ են Տիրոջ գործերը, եւ անոր կամքը՝ ամէն բանի մէջ:

3 Անոր գործերը փառաբանութիւն են եւ շքեղութիւն. անոր արդարութիւնը յաւիտեանս յաւիտենից կը մնայ:

4 Ան իր սքանչելիքներուն յիշատակը յանձնեց արդարներուն. ողորմած է Տէրը եւ զթած:

5 Ան կերակուր կու տայ իր երկիւղածներուն, եւ միշտ յիշած է իր յաւիտենական ուխտը:

6 Ան իր գործերուն զօրութիւնը ցոյց տուաւ իր ժողովուրդին, անոր տալով հեթանոսներուն ժառանգութիւնը:

7 Անոր ձեռքին գործերը արդար են եւ իրաւացի, եւ անոր պատուիրանները՝ իրաւունքի վրայ հիմնուած:

8 Անոնք հաստատուած են յաւիտեանս յաւիտենից, եւ տրուած՝ ճշմարտութեան ու արդարութեան համաձայն:

1- Այս օրհներգութեամբ կը սկսի ալեյուիական երկրորդ հաւաքածոն (110-116): Հալելու-Յահ, Ալեյուիա, ծիսական բացագանչութիւնն է որ կը նշանակէ՝ գովաբանեցե՛ք Տէրը:

9 Տէրը փրկութիւն ղրկեց իր ժողովուրդին, եւ պատուիրեց որ յաւիտեան պահուի իր ուխտը, որովհետեւ սուրբ եւ ասեղ է անոր անունը:

10 Տիրոջ երկիւղը սկիզբն է զգօնութեան, իմաստուն են բոլոր անոնք որ կը կատարեն զայն. անոր օրհնութիւնը յաւիտեանս յաւիտենից կը մնայ:

ՍԱՂՄՈՍ 111/112

Գովերգ՝ արդար մարդուն

Ալեյուիա:

1 Երանի՛ այն մարդուն որ Տիրոջ երկիւղն ունի, եւ մեծ սիրով կը պահէ անոր պատուիրանները:

2 Հզօր պիտի ըլլայ անոր զաւակը երկրիս վրայ, եւ պիտի օրհնուի արդարներու ազգը:

3 Փառք եւ ճոխութիւն պիտի ըլլայ անոր տան մէջ, անոր արդարութիւնը յաւիտեանս յաւիտենից պիտի մնայ:

4 Խաւարի մէջ լոյս ծագեցաւ արդարներուն. ողորմած, զթած եւ արդար է Տէրը:

5 Ազնիւ մարդը կ'ողորմի եւ փոխ կու տայ, իր խօսքերը կը կշռէ դատաստանի մէջ:

1- Սղմ 111 կը դրուատէ երջանկութիւնը մարդուն որ իր կեանքը կը պայմանաւորէ Տիրոջ երկիւղով եւ սիրով անոր պատուիրաններուն: 4.- Հակառակութիւնները եւ կսկիծը կրնան մթագնել արդարին

- 6 Ան յաւիտեան պիտի չսասանի,
եւ յաւիտենական պիտի ըլլայ արդարին յիշատակը.
- 7 ան պիտի չվախնայ չար համբաւէն,
որովհետեւ անոր սիրտը պատրաստ է յուսալու Աստուծոյ:
- 8 Անոր սիրտը հաստատուն է եւ պիտի չվախնայ երբեք,
մինչեւ որ դիմացը ելլէ իր թշնամիներուն:
- 9 Ան բաժնեց եւ տուաւ աղքատներուն.
անոր արդարութիւնը յաւիտեանս յաւիտենից պիտի մնայ,
եւ անոր եղջիւրը բարձր պիտի կենայ փառքով:
- 10 Մեղաւորը պիտի տեսնէ եւ բարկանայ,
ակռաները պիտի կրճտէ եւ պիտի հալի,
եւ մեղաւորներուն ցանկութիւնը պիտի կորսուի:

ՍԱՂՄՈՍ 112/113

Փառաբանութիւն Աստուծոյ բարութեան

Ալեյուիա:

- 1 Օրհնեցէ՛ք Տէրը, մանուկնե՛ր,
օրհնեցէ՛ք Տիրոջ անունը:
- 2 Օրհնեա՛լ ըլլայ Տիրոջ անունը,
այս օրուանէ մինչեւ յաւիտեան:

կեանքը: Սակայն մթութեան օրերուն, կեանքին վերեւ կը շողայ լոյսը աստուածային բարութեան: «Այս է լոյսը՝ Սէրը, որով Քրիստոս՝ նշմարիտ լոյս, կը բնակի մեր սրտերուն մէջ» (Լամբրոնացի):

- 3 Արեւելքէն մինչեւ արեւմուտք՝
օրհնեա՛լ է Տիրոջ անունը:
- 4 Բարձր է Տէրը՝ բոլո՛ր ազգերէն վեր,
եւ երկինքի մէջ է անոր փառքը:
- 5 Ո՞վ կայ նման մեր Տէր Աստուծոյն,
որ բարձունքներուն մէջ կը բնակի.
- 6 ան խոնարհները կը տեսնէ,
երկինքի մէջ թէ երկրի վրայ:
- 7 Ան աղքատները կը կանգնէ երկրի վրայէն,
եւ տառապեալները կը վերցնէ աղբակոյտէն:
- 8 Ան կը բազմեցնէ զանոնք իբր իշխան՝
իր ժողովուրդին իշխաններուն հետ:
- 9 Ան կը բնակեցնէ ամուլ կիւր ուրախալի տան մէջ,
իբր մայր մը՝ որդիներով երջանիկ:

ՍԱՂՄՈՍ 113/114^Ա

Զատկական երգ

Ալեյուիա:

- 1 Երբ իսրայէլ ելաւ Եգիպտոսէն
եւ Յակոբի տունը՝ այլազգի ժողովուրդին մէջէն,

7- «Աղբատները... տառապեալները», նախ Աստուծոյ ժողովուրդն է, գոր փրկեց գերութենէն, եւ այգա ամէն հաւատացեալ աղբատ կամ հաւաքականութիւն որոնց տկարութեան թիկունք է Տէրը:

2 անոր սրբարանը Հրէաստանը եղաւ,
եւ Իսրայէլ՝ անոր իշխանութեան վայրը:

3 Ծովը տեսաւ եւ փախաւ,
եւ Յորդանանը ետ դարձաւ:

4 Լեռները ցնծացին խոյերու նման,
եւ բլուրները՝ մաքիներու գառնուկներուն պէս:

5 Ի՞նչ պատահեցաւ քեզի, ծո՛վ,
զո՞վ տեսար եւ փախար,
կամ դո՛ւն, Յորդանան,
ինչո՞ւ ետ դարձար նորէն:

6 Խոյերու նման ցնծացէք, լեռներ,
եւ մաքիներու գառնուկներուն պէս, բլուրներ:

7 Երկիրը սասանեցաւ Տիրոջ տեսքէն,
Յակոբի՛ Աստուծոյն տեսքէն:

8 Ան ջուրի վտակներու վերածեց ժայռը,
եւ աղբերակներու՝ ապառաժները:

ՍԱՂՄՈՍ 114/115Բ

Միակ ճշմարիտ Աստուածը

1 Մի՛ տար մեզի, Տէ՛ր, մեզի մի՛ տար,
այլ քո՛ւ անունիդ տուր փառքը,
քու ողորմութեանդ եւ ճշմարտութեանդ համար:

2 Թող երբե՛ք չըսուի հեթանոսներուն միջեւ,
թէ ո՞ւր է ասոնց Աստուածը:

3 Երկինքի մէջ է մեր Աստուածը եւ երկրի վրայ,
ան ստեղծած է ամէ՛ն բան եւ ինչ որ ուզած է:

4 Ոսկի եւ արծաթ են հեթանոսներուն կուռքերը,
մարդկային ձեռակերտներ են անոնք:

5 Բերան ունին եւ չեն խօսիր,
աչք ունին եւ չեն տեսներ:

6 Ականջ ունին եւ չեն լսեր,
քիթ ունին եւ չեն հոտոտեր:

7 Ձեռք ունին եւ չեն շօշափեր,
ոտք ունին եւ չեն քայլեր,
եւ անոնց կոկորդէն ձայն չ'ելլեր:

8 Անոնք պիտի դառնան անոնց նման՝ որ շինած են զիրենք,
եւ բոլոր անոնք որ անոնց վրայ դրած են իրենց յոյսը:

9 Տիրո՛ջ վրայ դրած է Իսրայէլի տունը իր յոյսը,
ա՛ն է իրենց օգնականն ու ապաւէնը:

10 Տիրո՛ջ վրայ դրած է Ահարոնի տունը իր յոյսը,
ա՛ն է իրենց օգնականն ու գործակիցը:

11 Տիրոջ երկիւղածները Տիրոջ վրայ դրած են իրենց յոյսը,
ա՛ն է իրենց օգնականն ու փրկիչը:

12 Տէրը յիշեց մեզ եւ օրհնեց մեզ,
Տէրը օրհնեց Իսրայէլի տունը,
Տէրը օրհնեց Ահարոնի տունը:

13 Տէրը օրհնեց իր երկիւղածները,
փոքրերն ու մեծերը:

14 Թող Տէրը մեծնայ ձեր մէջ,
ձեր եւ ձեր որդիներուն մէջ:

15 Օրհնուած էք դուք Տիրոջ կողմէ,
որ ստեղծած է երկինքն ու երկիրը:

16 Տիրո՛ջ կը պատկանին երկինքն ու բոլոր երկինքները,
եւ երկիրը տուած է մարդոց որդիներուն:

17 Մեռեալները չէ՛ որ պիտի օրհնեն քեզ,
ո՛չ ալ մէկը անոնցմէ որ դժոխք կ'իջնեն:

18 այլ մենք, ողջէ՛րս պիտի օրհնենք Տէրը,
այսօրուընէ մինչեւ յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ 114/116

Գոհարանական աղօթք

Ալէլուիա:

1 Ես սիրեցի, որ Տէրը լսէ աղօթքիս ձայնը:

2 որովհետեւ ան դէպի ինծի խոնարհեցուց իր ականջը,
եւ ես իրեն ուղղեցի իմ կոչս՝ կեանքիս բոլոր օրերուն:

Իմաստի նոյն երանգը կը պահէ բառը քրիստոնեայ ծիսական աղօթքնե-
րուն մէջ՝ թէ ննչեցեալներուն եւ թէ կենդանի հաւատացեալներուն համար:
Յիշուիլ Աստուծոյ կողմէ կեանքի դժուար պայմաններուն մէջ, գրաւա-
կանն է ամրացնելու հաւատացեալներուն վստահութիւնը եւ յոյսը:

3 Մահուան երկունքը չըջապատեց զիս,
դժոխքի վիշտերը պաշարեցին զիս,
եւ նեղութիւնն ու անձկութիւնը եկան իմ վրաս:

4 եւ ես Տիրոջ անունը կանչեցի:
Ո՛վ Տէր, փրկէ՛ իմ հոգիս:

5 Ողորմած եւ արդար է մեր Տէր Աստուածը,
եւ ան կ'ողորմի:

6 Տէրը կը գթայ տկարներուն վրայ, կը պաշտպանէ զանոնք:
Ես խեղճութեան մատնուեցայ եւ Տէրը ազատեց զիս:

7 Հանգիստիդ վերադարձիր, հոգի՛ս,
որովհետեւ Տէրը օգնութեան հասաւ քեզի:

8 Ան մահէն փրկեց հոգիս,
աչքերս՝ արցունքէն եւ ոտքերս սայթաքումէ:

9 Հաճոյ պիտի ըլլամ ես Տիրոջ առջեւ՝
ողջերու աշխարհին մէջ:

ՍԱՂՄՈՍ 115/116

Գոհարանական աղօթք

Ալէլուիա:

10 Ես հաւատացի ինչ որ խօսեցայ,
հակառակ որ շատ խոնարհած էի:

10– Այս սաղմոսը յատուկ էր գատկական ընթրիքին՝ «Սէտեր»ին:

11 Իմ զարմանքիս մէջ,
ես ըսի թէ ամէն մարդ սուտ է:

12 Ի՞նչ կրնամ տալ ես Տիրոջ՝
փոխարէն այն բոլոր բաներուն զորս ան տուաւ ինծի:

13 Փրկութեան բաժակը պիտի առնեմ,
եւ Տիրոջ անունը պիտի կանչեմ:

14 Աղօթքներս պիտի նուիրեմ Տիրոջ՝
իր ամբողջ ժողովուրդին առջեւ:

15 Թանկագին է Տիրոջ առջեւ՝
իր սուրբերուն մահը:

Գոհաբանութեան երգն է հաւատացեալին: Երգին կ'ընկերանայ գոհութեան գոհը որովհետեւ Տէրը ազատած է զինք մահացու վտանգէն, գոր կը յիշէ սարսուռով եւ անձկութեամբ:

13- «Բաժակը փրկութեան»... Հաւանաբար գոհին ընկերացող բաժակն է: Զոհը մատուցանող հաւատացեալին բարեկամները կը խմէին նոյն բաժակէն եւ կը մասնակցէին անոր գոհութեան եւ ուրախութեան:

15- «Թանկագին է Տիրոջ առջեւ»... տեսնել մահը իր հաւատացեալներուն եւ որուն առջեւ չի կրնար մնալ անտարբեր: Հին թարգմանութիւնները այս անցքը կը վերընթեռնուն յարութեան վարդապետութեան լոյսին տակ: Մահը անբաժան է մարդուն կեանքին պայմաններէն, սակայն մահով ան չի մխրճուիր անէութեան մէջ, որովհետեւ Աստուծոյ սէրը կը փրկէ մահէն՝ յարութեամբ: Յիսուս կու տայ մեզի այս ստուգութիւնը: Կը հաւատանք սիրոյն որ կը փրկէ եւ ասիկա միակ բայտն է երջանիկ վերակենդանութեան՝ յարութեամբ:

16 Քու ծառադ եմ ես, Տէ՛ր,
քու աղախինի՛դ որդին:

17 Դուն կապանքներս քակեցիր·
օրհնութեան պատարագ պիտի մատուցանեմ քեզի,
եւ Տիրոջ անունը պիտի կանչեմ:

18 Աղօթքներս պիտի նուիրեմ Տիրոջ,
իր ամբողջ ժողովուրդին առջեւ,

19 Տիրոջ տան դաւիթներուն մէջ·
քո՛ւ մէջդ, Երուսաղէ՛մ:

ՍԱՂՄՈՍ 116/117

Հրաւեր օրհնութեան

Ալեյուիա:

1 Օրհնեցէ՛ք Տէրը, համա՛յն ազգեր,
զովաբանեցէ՛ք զայն, համա՛յն ժողովուրդներ:

2 Թող անոր ողորմութիւնը բազմանայ մեր վրայ,
եւ Տիրոջ ճշմարտութիւնը յաւիտեան՝ մնայ:

1- Յստակ են թէ՛ իմաստը եւ թէ՛ կառոյցը այս կարն սաղմոսին· գովաբանութիւնը Տիրոջ եւ անոր բարեբանութիւնը: Մէկ է Աստուած, անոր սէրը կը պարփակէ բոլոր մարդիկը: Անփոփոխ է Աստուած, անոր հաւատարմութիւնը սիրոյ խոստումին, կը մնայ յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ 117/118

Տաղաւարներու օրհներգութիւն

Ալէլուիա:

- 1 Փառաբանեցէ՛ք Տէրը, որովհետեւ բարի՛ է ան, որովհետեւ յաւիտենակա՛ն է անոր սէրը:
- 2 Թող գոչէ՛ Իսրայէլի Տունը. յաւիտենակա՛ն է անոր սէրը:
- 3 Թող գոչէ՛ Ահարոնի Տունը. յաւիտենակա՛ն է անոր սէրը:
- 4 Թող գոչէ՛ն Տիրոջ երկիւղածները. յաւիտենակա՛ն է անոր սէրը:
- 5 Ես Տիրոջ դիմեցի իմ նեղութեանս մէջ, եւ լսեց զիս, եւ անդորրութիւն տուաւ ինծի:
- 6 Տէ՛րն է իմ օգնականս, ես բանէ մը չեմ վախնար. ի՞նչ կրնան ընել ինծի մարդիկը:
- 7 Տէ՛րն է իմ օգնականս, եւ ես անվա՛խ կը դիմագրաւեմ թշնամիներս:
- 8 Աւելի լաւ է Տիրոջ վրայ դնել իր յոյսը, քան մարդոց վստահիլ:
- 9 Աւելի լաւ է Տիրոջ վրայ դնել իր յոյսը, քան իշխաններուն վստահիլ:
- 10 Բոլոր ազգերը դարձան իմ շուրջս, բայց ես Տիրոջ անունով յաղթեցի անոնք:

- 11 Անոնք շուրջս դարձան ամէն կերպով, միասնաբար պաշարեցին զիս, բայց ես Տիրոջ անունով վանեցի զանոնք:
- 12 Մեղուներու նման՝ անոնք դարձան իմ շուրջս, եւ ինչպէս փուշը կրակի մէջ՝ այնպէ՛ս բորբոքեցան. բայց ես, Տիրոջ անունով՝ ետ մղեցի զանոնք:
- 13 Մինչ ետ կը մղէի զանոնք, երերացի, եւ գլորելու մօտ էի, բայց Տէրը օգնութեան հասաւ ինծի:
- 14 Տէ՛րն է իմ գորութիւնս եւ ապաւէնս, ի՛նքը եղաւ իմ փրկութիւնս:
- 15 Արդարներու յարկերուն տակ, ցնծութեան եւ փրկութեան ձայներ բարձրացան, Տիրոջ աջը իր ոյժը գործածեց.
- 16 Տիրոջ աջը բարձրացուց զիս, Տիրոջ աջը իր ոյժը գործածեց:
- 17 Ես պիտի չմեռնի՛մ, այլ պիտի ապրի՛մ, եւ Տիրոջ գործերը պիտի պատմեմ:
- 18 Տէրը խիստ կերպով պատժեց զիս, բայց մահուան չմատնեց զիս:
- 19 Բացէ՛ք արդարութեան դռները իմ առջեւս, որ անկէ ներս մտնեմ եւ Տէրը փառաւորեմ:

19– Տաճարի մուտքը կոչուած էր արդարութեան դուռ, որովհետեւ

20 Տիրոջ դուռն է այս,
եւ արդարնե՛րը միայն կը մտնեն ասկէ:

21 Գոհութիւն պիտի տամ քեզի, Տէ՛ր,
որովհետեւ լսեցիր զիս եւ իմ փրկիչս եղար:

22 Վէ՛մը գոր շինարարները անարգեցին,
ա՛ն եղաւ անկիւնաքարը:

23 Տիրոջմէ՛ եղաւ այս,
եւ սքանչելի՛ է այս մեր աչքերուն առջեւ:

24 Ա՛յս է օրը զոր ըրաւ Տէ՛րը,
եկէ՛ք, ցնծա՛նք եւ ուրախու՛թիւն ընենք այսօր:

25 Տէ՛ր, փրկէ՛ մեզ,
Տէ՛ր առաջնորդէ՛ մեզի:

ան կը պաշտպանէ սրբութիւնը տանարի աստուածային Հիւրին: Մահ-
ուան պատիժով արգիւրած էր մուտքը՝ ոչ-մաքուրներուն (Եփս 1,14):
Քրիստոնեայ աւանդութիւնը այս համարը կը պատշանեցնէ Յիսուսի
(Յովհ 10,9). որ ինքզինք կը կոչէ դուռն երկինքի:

22-«Վէ՛մը» համեմատութեամբ մեծ եւ տաշուած քարն էր որ կը մի-
ացնէր կամարին երկու պատերը, տալով անոնց ամրութիւն եւ գեղեց-
կութիւն (Երմ 51,26): Վէ՛մը պատկերն էր Իսրայէլի կամ անոր պետին
(Ես 28,16-17): Պատկերը իմաստի լրումը պիտի գտնէ Քրիստոսով եւ
Եկեղեցիով: Շնորհիւ Քրիստոսի, մարդկութեան երկու հատուածները,
ժողովուրդը հին Կտակարանի եւ ազգերը կը միանան կազմելու համար
Աստուծոյ նոր ժողովուրդը (Մտք 21,42. Մրկ 8,31. Ղուկ 9,22. Գ Առ
4,11):

24-Համարը կը շեշտէ ընդունուած փրկութեան գերբնական համգա-
մանքը:

26 Օրհնեա՛լ ես, դուռն՝ որ Տիրոջ անունով կու գաս,
մենք՝ Տիրոջ տունէն օրհնեցինք քեզ:

27 Մեր Տէր Աստուա՛ծը յայտնուեցաւ մեզի,
մինչեւ սեղանի անկիւնները՝
ուրախու՛թեան տօներ կատարեցէք, մատղաշ ոստերով:

28 Իմ Աստուա՛ծս ես դուռն, ես քե՛զ պիտի փառաւորեմ.
Իմ Աստուա՛ծս ես դուռն, ես քե՛զ պիտի մեծարեմ:
Ես քե՛զ պիտի փառաւորեմ, Տէ՛ր,
որովհետեւ լսեցի՛ր զիս եւ փրկու՛թիւն տուիր ինծի:

29 Փառաբանեցէ՛ք Տէրը, որովհետեւ բարի է ան.
որովհետեւ անոր սէրը յաւիտենակա՛ն է:

ՍԱՂՄՈՍ 118/119

Գովերգ՝ Աստուծոյ օրէնքին

Ալեֆ

Ալէլուիա:

1 Երանի՛ անոնց՝ որ անբծօրէն կ'ապրին իրենց ճամբուն մէջ,
եւ Տիրոջ օրէնքներուն համեմատ կ'ընթանան:

27- Բազմութիւնը իր գոհութիւնը կը յայտնէ գովաբանելով գԱստ-
ուած: Փրկութիւնը բացատրուած է պատկերով անցքին՝ խաւարէն լոյ-
սին: Քահանաները կը հրաւիրեն բազմութիւնը որ ոստերը ի ձեռն
կազմեն թափօրը եւ բարձրանան դէպի տանար, մինչեւ խորանը Ողջա-
լէզներու:

2 Երանի՛ անոնց՝ որ կը հետեւին անոր վկայութիւններուն, եւ իրենց ամբողջ հոգիով կը փնտռեն զինքը:

3 որովհետեւ անօրէնութիւն գործողները չէ՛ն որ կը քալեն անոր ճամբաներէն:

4 Դուն՝ քու պատուիրաններդ հռչակեցիր, որպէսզի ես հաւատարմօրէն պահեմ զանոնք:

5 Երանի՛ թէ յաջող կերպով ընթանան ուղիներս, որպէսզի արդար կամքդ գործադրեմ:

6 Ես այն ատեն պիտի չամչնամ, քու պատուիրաններդ պահելու ջանք ընելով:

7 Ես պիտի փառաբանեմ քեզ, Տէ՛ր, սրտիս ամբողջ անկեղծութեամբ, երբ սերտեմ քու արդարութեանդ իրաւունքները:

8 Ես իրաւունքներդ պահեցի, զիս մի՛ թողուր մինչեւ վերջ:

Բէթ

9 Ինչո՞վ կընայ երիտասարդը իր ճամբան ուղղել, եթէ ոչ՝ քու խօսքերդ պահելով:

5- Հաւատարմութիւնը Աստուծոյ խօսքին, ապրումը աստուածային յայտնութեան, ոչ թէ ըստ գիրին, այլ ըստ հոգիին, կ'արժանացնեն երանութեան եւ կը տանին երջանկութեան, որովհետեւ միայն այս «երջանկութիւնը կը բովանդակէ բոլոր բարիքները, ինչպէս դժբախտութիւնը բովանդակութիւնն է բոլոր չարիքներուն» (Շնորհալի):

9- Օրէնքին պահպանումը կու տայ պարգեւը մաքուր կեանքի, կը դնէ

10 Բոլո՛ր սրտովս ես փնտռեցի քեզ, հեռու մի՛ պահեր զիս քո պատուիրաններէդ:

11 Սրտիս խորը պահեցի քու խօսքերդ, որպէսզի չմեղանչեմ քեզի դէմ:

12 Օրհնեա՛լ ես դուն, Տէ՛ր, սորվեցո՛ւր ինծի քու արդարութիւնդ:

13 Շրթունքներովս պիտի պատմեմ քու բերնէդ ելած բոլոր վճիռները:

14 Քու վկայութեանդ ճամբուն վրայ ուրախացայ, այնքան՝ որքան ամենամեծ հարստութեան համար:

15 Քու պատուիրաններդ պահելու հոգ տարի, եւ զգուշութեամբ քալեցի քու ճամբաներուդ վրայ:

16 Քու իրաւունքներդ պատմեցի, եւ չմոռցայ քու խօսքերդ:

նամբուն վրայ՝ փնտնելու Տէրը (հ. 10) որ իր յայտնութեամբ կը սորվեցընէ արդարութիւնը, կու տայ հոգիին աւելի ուրախութիւն, քան աշխարհի բոլոր հարստութիւնները: Աստուծոյ յայտնութեան խօսքը՝ հոգի է եւ կեանք: Խորհրդածութիւնը Աստուծոյ խօսքին, կը տանի գիտութեան՝ մարդուն գոյութեան խորհուրդին, ծագումին, վախճանին, վաւերական երջանկութեան, որուն կը ձգտի էութեան թափուն իղձերով: Հաւատացեալը, որքան խորացնէ մանաչումը, վերապեցողութիւնը այդ խօսքին, այնքան աւելի մաքուր նամբաներով կ'իրականացնէ իր կեանքը՝ ստոր բոլոր տարողութեամբ՝ թէ՛ անցաւորի եւ թէ՛ յաւիտեանակնութեան մէջ: Մաքուր նամբան է նոյնիման Գրիստոս որ է մանկնշմարտութիւն եւ կեանք:

Գաւեղ

17 Բարիքներովդ հատուցում ըրէ քու ծառայիդ, որպէսզի ապրիմ եւ պահեմ քու խօսքերդ:

18 Բա՛ց իմ աչքերս, որպէսզի օրէնքներուդ հրաշալիքները տեսնեմ:

19 Ես պանդուխտ եմ երկրի վրայ, ծածուկ մի՛ պահեր ինծմէ քու պատուիրաններդ:

20 Հոգիս կը տենչայ՝ որ քու իրաւունքներդ ցանկամ մշտապէս:

21 Դուն սաստեցիր ամբարտաւաններուն. անիծեա՛լ են անոնք որ քու պատուիրաններէդ խոտորեցան:

22 Հեռու պահէ ինծմէ նախատինքն ու արհամարհանքը, քանի որ ես քու վկայութիւններդ փնտռած եմ:

23 Որովհետեւ իշխանները կը բազմէին եւ չարախօսութիւն կ'ընէին իմ մասիս, մինչ քու ծառայդ քու իրաւունքներուդ կը խորհէր:

17– Սաղմոսերգուն կը հայցէ Աստուծմէ որ շնորհեով լուսաւորէ զինք, որպէս զի օրէնքէն քաղէ զօրութիւն եւ հասնի երջանկութեան: Երջանկութիւնը, հաւատացեալին ժամանումն է Յայտնութեան վերհայեցողութեամբ՝ հանդիպումին Աստուծոյ, ժամանակաւորի մէջ, իսկ անդեմականի մէջ՝ անոր տեսութեան դէմ յանդիման: Հանդիպումով Աստուծոյ հետ, պիտի ընդունի հոգիին մէջ կեանքը անդորրացնող լիութիւնը, քանի որ պիտի ունենայ իբրեւ խորհրդատու, արդարութիւն Աստուծոյ:

24 Որովհետեւ քու վկայութիւններդ էին խօսքերուս նիւթը, եւ քու արդարութիւնդ՝ մտածումներուս առարկան:

Դալէթ

25 Հոգիս հողին մօտեցաւ, կեանք տուր ինծի, Տէ՛ր, խօսքիդ համաձայն:

26 Ես ճամբաներս պատմեցի քեզի, եւ դուն մտիկ ըրիր ինծի. արդարութիւնդ սորվեցուր ինծի:

27 Զարգացո՛ւր զիս քու արդարութեանդ ճամբաներով, որպէսզի քու սքանչելիքներուդ մասին խորհրդածեմ:

28 Կը հիւծի՛ հոգիս, յուսահատելու աստիճան, զօրացո՛ւր զիս քու խօսքերովդ:

29 Հեռացո՛ւր ինծմէ մեղքի ճամբաները, եւ օրէնքներուդ համեմատ՝ ողորմէ՛ ինծի:

25–«Հոգիս մօտեցաւ հողին»․ սաղմոսերգուն կը պատմէ Աստուծոյ իր նամբաները, այսինքն իր կեանքին ընթացքը, կրած դժուարութիւնները եւ կը խնդրէ ուսուցումը պատուիրաններու քննապարհին որպէս զի հասնի խորհրդածութեան՝ Աստուծոյ սքանչելիքներուն: Ամէն կեանք սքանչելիք մըն է, հիւսուած Աստուծոյ բարութեան բազմազան եւ բազմաթիւ սքանչելիքներով: Սաղմոսերգուն ընտրած է այս նամբան. կը հայցէ որ փարատի հոգիին մէջ սպրդած տխրութիւնը, հեռացումը սուտին, որպէս զի մնայ Աստուծոյ հանդէպ հաւատարմութեան քննապարհին վրայ (Խ. 28–30): Լաստը փրկութեան՝ փարումն է Տիրոջ վկայութեան, կամքին:

30 Ես քու ճշմարտութեանդ ճամբաները ընտրեցի, եւ չմոռցայ քու իրաւունքներդ:

31 Ես քու վկայութեանդ փարեցայ, ամօթով մի՛ ձգեր զիս, Տէ՛ր:

32 Ես քու պատուիրաններուդ ճամբէն ընթացայ, որովհետեւ անով դուն անդորրութիւն տուիր իմ սրտիս:

Հէ

33 Օրէնագէտ ըրէ զիս, Տէ՛ր, իրաւունքներուդ ճամբուն մէջ, եւ ես զանոնք պիտի փնտռեմ ամէն ժամանակ:

34 Իմաստուն դարձուր զիս, որ քու օրէնքդ քննեմ. ես ամբողջ սրտովս պիտի պահեմ զայն:

35 Քու պատուիրաններուդ շաւիղէն առաջնորդէ զիս, որովհետեւ ես անոնց մէջ կը գտնեմ հաճոյքս:

36 Խոնարհեցո՛ւր սիրտս դէպի վկայութիւններդ, եւ ո՛չ դէպի ազահուլութիւն:

33– Գիտակից իր տկարութեան՝ պահելու օրէնքը եւ միաժամանակ տեսնելով հմայքը հեթանոսութեան դիրքին կեանքին եւ հաւանական անկումը փորձութեան մէջ, (36, 37, 39) սաղմոսագրուն կը հայցէ շնորհքը որպէս զի Աստուած պահէ զինք արդարութեան վիճակին մէջ (հ. 38) ըստ իր խոստումներուն: Կը խնդրէ խորունկ ցանաչումը օրէնքին, որպէս զի միայն անոր մէջ գտնէ իր ուրախութիւնը (հ. 35) եւ պահէ զայն առանց դժուարութեան:

37 Դարձո՛ւր աչքերս՝ որ չտեսնեմ ինչ որ սնտախ է, եւ քու ճամբաներուդ մէջ կենդանացո՛ւր զիս:

38 Քու երկիւղովդ հաստատէ տուած խօսքդ՝ քու ծառայիդ մէջ:

39 Վերցո՛ւր վրայէս նախատինքները որոնցմէ կը կասկածէի, որովհետեւ քաղցր են քու դատաստաններդ:

40 Ահա՛, ես քու պատուիրաններո՛ւդ ցանկացայ, քու արդարութեամբդ՝ կեանք տուր դուն ինձի:

Վաւ

41 Ողորմութիւնդ թող իջնէ՛ իմ վրաս, Տէ՛ր, եւ քու փրկութիւնդ՝ քու խօսքիդ համեմատ:

42 Ես պիտի պատասխանե՛մ անոնց՝ որ կը նախատեն զիս իրենց խօսքերով, որովհետեւ ես քու խօսքիդ վրայ դրած եմ իմ յոյսս:

43 Բերնէս բացակայ մի՛ ըներ ճշմարտութեան խօսքը, որովհետեւ ես քո՛ւ իրաւունքներուդ վրայ դրած եմ յոյսս:

44 Ես քու օրէնքներդ պահեցի ամէն ժամանակ, միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

41– Սաղմոսագրուն թարգմանութիւնը եւ վստահութիւնը Տիրոջ հանդէպ առարկայ են հակառակորդներու հեզմանքին: Ատակ պատասխանը տալու համար անոնց, ան կը հիմնուի Տիրոջ խոստումներուն վրայ եւ կը հայցէ շնորհքը միշտ աւելի հաւատարմութեան: Շնորհքով, պիտի ըլլայ աւելի հաւատարիմ, աւելի եռանդուն եւ աւելի երջանիկ (հ. 47):

45 Ես անդորրուժեան մէջ կ'ապրէի,
որովհետեւ քու պատուիրաններդ փնտուեցի:

46 Քու վկայութիւններդ կը պատմէի թագաւորներուն առջեւ,
եւ չէի քաշուեր անոնցմէ:

47 Կը խորհէի քու պատուիրաններուդ՝
զորս ես սիրեցի:

48 Զեռքերս բարձրացուցի դէպի պատուիրաններդ՝
զորս սիրեցի, եւ խորհեցայ քու արդարութեանդ մասին:

ԶԷ

49 Յիշէ՛ այն խօսքը զոր քու ծառայիդ ըսիր,
որով դուն յոյս տուիր ինծի:

50 Ան պիտի մխիթարէ զիս թշուառութեանս մէջ,
որովհետեւ քու խօսքդ կեանք տուաւ ինծի:

51 Ամբարտաւանները շատ մեծ անիրաւութիւններ ըրին ինծի,
սակայն ես չչեղեցայ քու օրէնքներէդ:

52 Յիշեցի յաւիտենական իրաւունքներդ, Տէ՛ր,
եւ մխիթարուեցայ:

53 Տրտմութեամբ համակուեցայ մեղաւորներուն պատճառով,
որովհետեւ անոնք թողուցին քու օրէնքներդ:

49– Աստուծոյ խօսքը, յանձնառութիւնն է որով Տէրը կը խոստանայ փրկութիւնը (Ղկ 1,54):

54 Քու օրէնքներդ գովելի են ինծի համար,
իմ պանդխտութեանս վայրին մէջ:

55 Քու անունդ յիշեցի, Տէ՛ր, գիշերուայ ընթացքին,
եւ քու օրէնքներդ պահեցի:

56 Ինծի համար՝ դէպի կեանք տանող ճամբան եղաւ ան,
որովհետեւ ես քու արդարութիւնդ փնտուեցի:

ԽԷԹ

57 Դո՛ւն ես իմ բաժինս Տէ՛ր, եւ ես ըսի՝
Թէ՛ պէտք է պահեմ քու օրէնքներդ:

58 Ամբողջ սրտովս քու դէ՛մքդ փնտուեցի.
ողորմէ՛ ինծի, խօսքիդ համաձայն:

54– Օրէնքներդ, առարկան են գովաբանութեանս, որովհետեւ աղբիւր են ուրախութեան: Յայտնութիւնը Աստուծոյ սիրոյն եւ իմաստուն ծրագիրներուն, կու տան հաւատացեալին միջոցները յաղթահարելու դժբախտութիւնները: Ամբարիշտին հեզմանքը չի կրնար ըլլալ պատճառ շեղումի՝ օրէնքէն, որ կը հաղորդէ մխիթարութիւն եւ կորով (հ. 53): Հակառակ կեանքին վաղանցուկ հանգամանքին եւ անոր ընկերացող փորձանքներուն, հաւատացեալը՝ Աստուծոյ խօսքին խորհրդածութեան եւ ապրումին մէջ կը գտնէ հմայքը եւ ուրախութիւնը կեանքին (հ. 54) (Յբ 35, 10. Սիր 44,6):

57– Սաղմոսներգուն կը հայցէ շնորհքը խորացնելու ցանաչումը Օրէնքին, բարոյքելու եւ խորացնելու համար հոգեւոր կեանքը եւ մտերմութիւնն Աստուծոյ հետ (58,64): Ընդունելու համար այս պարգեւը, կը պարգէ Տիրոջ առջեւ իր նուիրումը (հ. 57) իր հսկումները (59–60), հաւատարմութիւնը գովաբանելու Տէրը (62) եւ նախասիրութիւնը սրտակցելու միայն Աստուծոյ երկիւղածներուն (63):

59 Ես քննեցի ճամբաներս,
եւ դէպի քու վկայութիւններդ ուղղեցի ոտքերս:

60 Պատրաստ գտնուեցայ, եւ չայլայլեցայ,
որովհետեւ քու օրէնքներդ պահեցի:

61 Մեղքի կապանքները բոլորեցին զիս,
բայց ես չմոռցայ քու օրէնքներդ:

62 Կէս գիշերին կ'ելլէի եւ կը փառաւորէի քեզ, Տէ՛ր,
քու արդար իրաւունքներուդ համար:

63 Ես կը յարաբերէի քու այն երկիւղածներուդ հետ՝
որոնք քու պատուիրաններդ կը պահեն:

64 Երկիրը Տիրոջ ողորմութեամբ լեցուեցաւ.
քու արդարութիւնդ սորվեցուր ինծի:

Տէք

65 Դուն, քու խօսքիդ համաձայն,
քաղցրութեամբ վարուեցար ծառայիդ հետ, Տէ՛ր:

66 Քաղցրութիւն, խրատ եւ գիտութիւն սորվեցուր ինծի,
որովհետեւ ես կը վստահիմ քու պատուիրաններուդ:

67 Խոնարհելէս առաջ՝ ես մեղք կը գործէի,
ասոր համար խղճմտօրէն պահեցի քու խօսքերդ:

68 Քաղցր ես դուն, Տէ՛ր,
քու քաղցրութեամբդ սորվեցուր ինծի արդարութիւնդ:

69 Ամբարտաւաններուն անիրաւութիւնները
ինծի դէմ բազմացան,
բայց ես՝ բոլոր սրտով պատուիրաններդ փնտռեցի:

70 Անոնց սիրտը թանձրացաւ կաթի նման,
բայց ես քու օրէնքներդ հռչակեցի:

71 Լա՛ւ եղաւ ինծի համար՝ որ խոնարհեցուցիր զիս,
որպէսզի քու արդարութիւնդ ճանչնամ:

72 Ինծի համար աւելի կ'արժեն քու բերնէդ ելած օրէնքները,
քան ոսկիի կամ արծաթի հագարաւոր գումարները:

Յօդ

73 Քու ձեռքերդ ստեղծած ու կազմած են զիս,
իմաստուն ըրէ զիս, որ քու պատուիրաններդ սորվիմ:

74 Թող ուրախանա՛ն քու երկիւղածներդ,
որովհետեւ ես քու խօսքերուդ վրայ դրած եմ իմ յոյսս:

69–Սուրբ եւ գրպարտութիւնը եղած են միշտ աղբիւր տառապան-
քի: Հաւատացեալ հոգին սակայն դուրս կու գայ տառապանքի այդ աշ-
խարհէն աւելի մաքուր եւ աւելի կատարեալ եւ կը հաստատէ Աստուծոյ
հետ աւելի խորունկ մտեքմութիւնը: Տէրը իրեն կը կանչէ վաստակեալ
բեռնաւորները, որոնք անոր սրտին մէջ կը գտնեն հանգիստ:

73–Սաղմոսերգուին հաւատարմութիւնը Աստուծոյ օրէնքին կը բխի
երկու իրողութիւններէ: Որպէս արարած՝ Արարչին պարտական է հնա-
գանդութիւն (հ. 73): Որպէս հաւատացեալ՝ կը պարտի օրհնաբանու-
թիւնը բարի եւ բարեբար Աստուծոյ որ կը խոնարհեցնէ, սակայն
բարձրացնելու համար (հ. 75):

75 Ճանչցայ, Տէ՛ր, թէ արդար են դատաստաններդ, եւ դուն՝ իրաւամբ խոնարհեցուցիր զիս:

76 Ողորմութիւնդ թող ըլլայ իմ մխիթարանքս, այն խօսքիդ համաձայն գոր ըսիր քու ծառայիդ:

77 Գթութիւնդ թող իջնէ իմ վրաս, եւ ես պիտի ապրիմ, որովհետեւ քու օրէնքներդ հաճոյք են ինծի համար:

78 Ամօթահար թող ըլլան այն ամբարտաւանները՝ որ սին պատճառներով անիրաւութիւն գործեցին ինծի դէմ, բայց ես քու պատուիրաններդ պիտի փնտռեմ:

79 Թող խրատեն զիս քու երկիւղածներդ, եւ անոնք որ կը ճանչնան քու վկայութիւններդ:

80 Անբիծ թող ըլլայ սիրտս քու արդարութեամբդ, որպէսզի ամօթով չմնամ:

Քաֆ

81 Քու փրկութեանդ կարօտն ունի իմ հոգիս, որովհետեւ ես քու խօսքերուդ վրայ դրած եմ իմ յոյսս:

82 Քու խօսքերուդ յարեցի աչքերս, եւ ըսի. Ե՞րբ պիտի մխիթարէ ան զիս:

83 Ես եղայ նման տիկին՝ եղեամի ատեն սառած, սակայն ես չմոռցայ քու արդարութիւնդ:

83– Ամբարիշտներու հակառակութիւնը կը մղէ սաղմոսերգուն աւելի խորացնելու արժէքը եւ ցանաչուը Աստուծոյ Օրէնքին եւ բարեկամութեան:

84 Որքա՞ն պիտի տեւեն քու ծառայիդ այս օրերը, ե՞րբ իրաւունք պիտի տաս ինծի՝ հալածիչներուս դէմ:

85 Անօրէնները խորհուրդներ տուին ինծի, բայց անոնք քու օրէնքներուդ համաձայն չէին:

86 Ճշմարիտ են քու բոլոր պատուիրաններդ. ի գուր կը հալածեն զիս. դո՛ւն օգնէ ինծի:

87 Քի՛չ մնաց որ ջնջէին զիս երկրի վրայէն, բայց ես չթողուցի քու պատուիրաններդ:

88 Քու ողորմութեամբ ազատէ՛ զիս, եւ ես պիտի պահեմ քու բերնէդ ելած վկայութիւնները:

Լամէդ

89 Խօսքդ յաւիտեան կը մնայ, Տէ՛ր, երկինքի մէջ:

90 Ճշմարտութիւնդ կը մնայ սերունդէ սերունդ. դո՛ւն հաստատեցիր երկիրը, ան կա՛յ ու կը մնա՛յ:

91 Յերեկը քու հրամանիդ կը սպասէ, որովհետեւ ամէն ինչ կը գտնուի՝ քու ծառայութեանդ մէջ:

92 Եթէ քու Օրէնդներդ կանոն ըրած չըլլայի ես ինծի, շատոնց արդէն կորսուած կ'ըլլայի խեղճութեանս մէջ:

89– Սաղմոսերգուն, խորասուգուելով Օրէնքին խորհրդածութեան մէջ, կը հասնի եզրակացութեան անոր յաւիտեական եւ յաւերժական ծագումին:

93 Յաւիտեան պիտի չմոռնամ քու արդարութիւնդ, որովհետեւ դուն անո՛վ կեանք տուիր ինծի:

94 Քո՛ւկդ եմ ես, կեանք տուր ինծի, որովհետեւ ես արդարութիւնդ փնտռեցի:

95 Մեղաւորները զիս կը փնտռէին՝ կորուստի մատնելու համար զիս, որովհետեւ քու վկայութիւններդ ունէի մտքիս մէջ:

96 Ամէն բանի վերջաւորութեան՝ անոր վախճանը դիտեցի, եւ քու պատուիրաններդ շատ հեշտ եղան ինծի համար:

Մէմ

97 Ես այնքա՛ն սիրեցի քու օրէնքներդ՝ որ ամէն օր անոնց մասին կը խօսէի:

98 Բոլո՛ր թշնամիներէս աւելի իմաստուն դարձուցիր զիս քու պատուիրաններուդ մէջ, որովհետեւ յաւիտեան ի՛մս էին անոնք:

99 Բոլո՛ր ուսուցիչներէս աւելի իմաստուն դարձայ, որովհետեւ վկայութիւններդ եղան խօսքերուս նիւթը:

100 Ծերերէ՛ն ալ աւելի իմաստուն դարձայ, որովհետեւ քու պատուիրաններդ փնտռեցի:

97–Սաղմոսերգուն ամբողջ սրտով հաւատարիմ է օրէնքին պահպանումին: Պահպանում՝ ոչ գիրին որ կը ջլատէ, այլ հոգիին: Շնորհիւ այս հաւատարմութեան, ան տիրացած է իմաստուն դատողութեան եւ հասած է կեանքի անբասիրութեան՝ աղբիւր ջինջ երջանկութեան:

101 Ուտքերս հեռու պահեցի ամէն չար ճամբէ, որպէսզի քու խօսքերդ կարենայի պահել:

102 Քու իրաւունքներէդ չխտտորեցայ, որովհետեւ դուն օրէնսագէտ դարձուցիր զիս:

103 Որքա՛ն քաղցր են քու խօսքերդ իմ քիմքիս, աւելի քան մեղրը բերնիս համար:

104 Քու պատուիրաններէդ իմանալով՝ ես ատեցի չարերուն բոլոր ճամբաները, որովհետեւ դուն օրէնսագէտ ըրիր զիս:

Նուն

105 Քու խօսքդ ճրա՛դ է ոտքերուս համար, եւ լոյս կու տայ ան իմ շաւիղներուս:

106 Երդում ըրի եւ առաջադրեցի՝ որ պիտի յարգեմ բոլո՛ր արդար իրաւունքներդ:

107 Բոլորովին խեղճութեան մատնուեցայ, Տէ՛ր, կեանք տուր ինծի, խօսքիդ համաձայն:

105–Հաւատացեալին մանապաքիորդութեան ընթացքին, անոր հաւատարմութիւնը պարզ եւ հաստատ, կը բախի դժուարութիւններու եւ հակառակութիւններու: Պատրաստ է ամէն ժամ իր կեանքը վտանգելու (հ. 109) եւ կը կրէ տառապանքներ: Կու գայ մթութիւնը, քայլերը կրնան մոլորիլ: Կը հայցէ որ Տիրոջ խօսքն ըլլայ նրազ իր քայլերուն (հ. 105) կը խնդրէ որ իր աղօթքն ըլլայ հանելի (հ. 108), որպէս զի յաղթահարէ նեղ հակառակութիւններուն եւ միայն Տիրոջ խօսքը մնայ եւ ըլլայ ցնծութիւն իր սրտին (հ. 111):

108 Հաճէ՛ ընդունիլ, Տէ՛ր, բերնէս ելած իղձերը,
եւ քու օրէնքներդ սորվեցուր ինծի:

109 Հոգիս քու ձեռքիդ մէջ է ամէն վայրկեան,
ես չեմ մոռցած քու օրէնքներդ:

110 Մեղաւորները որոգայթ լարեցին ինծի,
բայց ես չչեղեցայ պատուիրաններէդ:

111 Վկայութիւններդ յաւիտեանական ժառանգութիւնս են,
որովհետեւ անոնք սրտիս ցնծութիւնն են:

112 Ես խոնարհեցուցի սիրտս՝ իբրեւ հատուցում,
քու արդարութիւնդ կատարելու համար յաւիտեան:

Սամէֆ

113 Ես ատեցի անօրէնները,
եւ քու օրէնքներդ սիրեցի:

114 Դո՛ւն ես իմ Օգնականս եւ Փրկիչս,
եւ քու խօսքերուդ վրայ դրած եմ իմ յոյսս:

115 Հեռացէ՛ք ինծմէ, չարե՛ր,
որովհետեւ ես Աստուծոյս պատուիրանները պիտի պահեմ:

113– Սէրը օրէնքին եւ հաւատարմութիւնը՝ Տիրոջ հանդէպ, կը մղեն սաղմոսերգուն բնագոյական խորշանքի երկդիմի սրտերուն հանդէպ (հ․ 113), որովհետեւ չկայ աւելի վտանգաւոր բան, քան բարեկամութիւնը երկդիմի սրտերուն, որոնց երբեք կարելի չէ վստահիլ, եւ օրինակը ամբարիշտներուն, որոնք ցրտութիւն կ'իջեցնեն հաւատացեալ հոգիին եւ Աստուծոյ միջեւ:

116 Օգնէ՛ ինծի, խօսքիդ համաձայն, եւ կեանք տուր ինծի,
մի՛ թողուր որ, յուսախաբ դառնալով՝ ամօթով մնամ:

117 Օգնէ՛ ինծի եւ փրկէ՛ զիս,
եւ իրաւունքներուդ վրայ պիտի խորհրդածեմ ամէն օր:

118 Դուն արհամարհեցիր բոլոր անոնք՝
որ ապստամբեցան քու պատուէրներուդ դէմ,
որովհետեւ անոնց խորհուրդները լի էին անիրաւութեամբ:

119 Ես յանցաւոր համարեցայ երկրի բոլոր մեղաւորները,
ասոր համար սիրեցի քու պատուիրաններդ:

120 Քու երկիւղովդ բեւեռէ իմ մարմինս,
որպէսզի վախնամ քու դատաստաններէդ:

Այիւն

121 Ես գործեցի ըստ իրաւունքի եւ արդարութեան,
մի՛ մատներ զիս իմ նեղիչներուս ձեռքը:

122 Բարութեամբ ընդունէ զիս, քու ծառա՛դ,
որպէսզի ամբարտաւանները չզզուեցնեն զիս:

123 Աչքերս, Տէ՛ր, կ'ականկալեն քու փրկութիւնդ,
եւ արդարութեանդ խօսքերը:

121– Այս հատուածին մէջ, սաղմոսերգուն կը հայցէ վախճանն իր փորձանքներուն: Կը հիմնէ իր պաղատանքը Աստուծոյ խոստումներուն վրայ ի նպաստ անոնց որ հաւատարիմ են (հ․ 127-128): Կը սպասէ տեսնել Տէրը գործի՝ ընդդէմ ամբարիշտներուն, հատուցանելու համար անոնց, այս աշխարհի վրայ:

124 Քու ողորմութեամբդ վարուէ քու ծառայիդ հետ,
եւ արդարութիւնդ սորվեցուր ինծի:

125 Քու ծառա՛դ եմ ես, իմաստո՛ւն ըրէ զիս,
որ քու վկայութիւններդ ճանչնամ:

126 Ժամանա՛կն է յառնելու, Տէ՛ր,
անոնք քու օրէնքներդ խափանեցին:

127 Ասոր համար ես քու պատուիրաններդ աւելի՛ սիրեցի՝
քան ամէն տեսակ ոսկի եւ թանկագին քար:

128 Քու բոլո՛ր պատուիրաններդ հեշտ թուեցան ինծի,
որովհետեւ ատեցի չարերուն ճամբանե՛րը:

ՓԷ

129 Աքանչելի են քու վկայութիւններդ,
ասոր համար հոգիս կը փնտռէ զանոնք:

130 Քու խօսքերուդ յայտնութիւնը՝
մանուկները կը լուսաւորէ եւ իմաստուն կը դարձնէ:

131 Բերանս բացի եւ շունչ առի,
քու պատուիրաններո՛ւդ տենչաց իմ հոգիս:

129–Սաղմոսերգուի ին համար, խորունկ քննաշուրճ՝ յայտնութիւնը Աստուծոյ խօսքին, միակ անխալական միջոցն է գանազանելու չարը բարիէն, որովհետեւ այդ խորունկ եւ պայծառ քննաշուրճ աստուածային խօսքին կը լուսաւորէ հաւատացեալին ընթացքը (հ. 129–130): Անոր հոգին ունի անյագ ծարարը Աստուծոյ խօսքերէն ժայթփող իմաստութեան, ինչպէս մարդը որ կը շնչէ լիաթոճ մահուր եւ կագդուրիչ օդը (131):

132 Նայէ՛ ինծի եւ ողորմէ՛ ինծի,
քու անունդ սիրողներուն իրաւունքին համաճայն:

133 Ուղղէ՛ ճամբաները իմ առջեւս, խօսքիդ համաճայն,
եւ մի՛ թողուր որ ոչ մի մեղք տիրէ իմ վրաս:

134 Փրկէ՛ զիս մարդոց զրպարտութենէն,
եւ ես քու պատուիրաններդ պիտի պահեմ:

135 Յոյց տուր երեսդ քու ծառայիդ,
եւ քու արդարութի՛ւնդ սորվեցուր ինծի:

136 Արցունքի վտակներ իջան աչքերէս,
որովհետեւ անոնք չպահեցին քու պատուիրաններդ:

Ձադէ

137 Արդա՛ր ես դուն, Տէ՛ր,
եւ ուղիդ են կու դատաստաններդ:

138 Դուն հռչակեցիր վկայութիւններուդ արդարութիւնը,
եւ անոնք գերազանցօրէն ճշմարիտ են:

139 Քու նախանձը մաշեցուց զիս,
որովհետեւ թշնամիներս քու խօսքերդ մոռցան:

137– Բարոյական տառապանքին մէջ իսկ գոր կը պատեառէ իրեն մարդուն ամբարշտութիւնը, սաղմոսերգուն կը քննաշուրճ անխառն ուրախութիւնը որ կը բխի իր հաւատարմութեանէն Աստուծոյ օրէնքին հանդէպ (139, 141, 143): Կը տեսնէ արդարութիւնը օրէնքին տրամադրութիւններուն, իրրեւ գրաւական Աստուծոյ արդարութեան, որուն կրնայ ապաւինիլ հաւատացեալ ամէն հոգի:

140 Շա՛տ ընտիր են քու խօսքերդ,
եւ քու ծառայ սիրեց զանոնք:

141 Ես մանուկ եմ եւ արհամարհուած,
բայց չմոռցայ քու արդարութիւնդ:

142 Արդարութիւնդ յաւիտենակա՛ն արդարութիւն է,
եւ ճշմարիտ են օրէնքներդ:

143 Նեղութիւններն ու վիշտերը հասան իմ վրաս,
բայց ես քու պատուիրաններուդ մասին խօսեցայ միշտ:

144 Քու վկայութիւններդ յաւիտենապէս արդար են,
իմաստուն ըրէ զիս եւ կեանք պարգեւէ ինծի:

Քոֆ

145 Բոլոր սրտովս ես քեզ կանչեցի, լսէ՛ զիս, Տէ՛ր,
որովհետեւ ես քու արդարութիւնդ փնտռեցի:

146 Քեզի՛ աղաղակեցի, փրկէ՛ զիս,
եւ ես քու վկայութիւններդ պիտի պահեմ:

145– Սաղմոսագրուն կ'ապաւինի Օրեմիին (152) եւ համոզուած թէ՛ չի կրնար յարատեւել հաւատարմութեան մէջ առանց շնորհիին (151, 153), կը հայցէ Աստուծոյ օժանդակութիւնը, գիշեր ցերեկ խորհրդածելու Աստուծոյ խօսքին վրայ:

Սրտի կանչն է հաւատացեալներուն, հաւատքի աղաղակն է որ կը հասնի մինչեւ ականջներն Աստուծոյ: Հաւատքի աղաղակէն Տէրը չի կրնար մնալ հեռու, այլ ընդհակառակն մօտ է եւ այս մօտիկութիւնը պիտի հասնի իր լրումին Քրիստոսով որ է Աստուած-մեզի-հետ (Ես 7,14-Եր 23,23):

147 Առաւօտը կանխեցի եւ ելայ աղաղակեցի,
եւ իմ յոյս դրի քու խօսքերուդ վրայ:

148 Աչքերս սեւեռած էի առտուան՝
քու խօսքերդ մտիկ ընելու համար:

149 Լսէ՛ ձայնս, Տէ՛ր, քանի որ դուն ողորմած ես.
քու օրէնքներուդ համեմատ կեանք տուր ինծի, Տէ՛ր:

150 Իմ հալածիչներս անօրէն բաներ վերազրեցին ինծի,
որովհետեւ հեռու մնացին քու օրէնքներէդ:

151 Դուն մօտս ես, Տէ՛ր,
եւ ճշմարիտ են քու բոլոր պատուիրաններդ:

152 Սկիզբէն հասկցայ քու վկայութիւններէդ՝
թէ՛ յաւիտենապէ՛ս հաստատած ես զանոնք:

Ռէշ

153 Տե՛ս խեղճութիւնս եւ փրկէ՛ զիս,
որովհետեւ ես չմոռցայ քու օրէնքներդ:

154 Դո՛ւն տես իմ դատաստանս եւ փրկէ՛ զիս,
կեանք տուր ինծի՝ քու խօսքիդ համաձայն:

155 Փրկութիւնը հեռու է ամբարիշտներէն,
որովհետեւ անոնք քու իրաւունքներդ չպահեցին:

155–«Փրկութիւնը հեռու է ամբարիշտներէն»․ կրնայ մեկնաբանուիլ կրկնակի իմաստով․ կամ ամբարիշտներուն համար չկայ փրկութեան յոյս, եւ կամ ինք սաղմոսագրուն չունի յոյս ազատելու ամբարիշտնե-

- 156 Բազմաթիւ են քու գլթուլթեանդ ձեւերը, Տէ՛ր, կեա՛նք տուր ինձի քու օրէնքներուդ համեմատ:
- 157 Բազմաթիւ են անոնք որ կը հալածեն ու կը նեղեն զիս, բայց ես չխոտորեցայ քու վկայութիւններէդ:
- 158 Կը նայէի անխիղճ մարդոց եւ կը հիւծէի, որովհետեւ քու պատուիրաններդ չպահեցին անոնք:
- 159 Տէ՛ս, ես սիրեցի՛ քու պատուիրաններդ, քու ողորմութեամբդ՝ կեա՛նք տուր ինձի, Տէ՛ր:
- 160 Քու խօսքերուդ սկզբնաւորութիւնը՝ ճշմարտութիւնն է, յաւիտեանական են արդարութեանդ բոլոր իրաւունքները:

Շիւն

161 Իչխանները հալածեցին զիս անտեղի կերպով, բայց սիրտս վախցաւ քու խօսքերէդ:

րէն: Մինչ ամբարիշտները յախուռն ամբարտաւանութեամբ կը մղեն զինք փնտոտելու կեանքի եւ փրկութիւն օրէնքէն դուրս, ապա (157-158) կը հաստատէ եւ կը դաւանի թէ՛ միայն Տիրոջ կողմէ տրուած միջոցներով փրկութիւնը կարելի է:

161- Արտաքին ազդեցութեան եւ ճնշումին, մղելու զինք անհաւատարմութեան (161), սաղմոսագուն կը հակադրէ իր համարձակ եւ անվերապահ վարումը Աստուծոյ խօսքին (167, 168) եւ հոգեկան ուրախութիւնը (162) կը մնայ անխառն՝ տառապանքի առեղծուածին դիմաց: Աստուծոյ սիրոյն մէջ կը լուծուին կեանքի անբնական եւ հակասական կացութիւնները եւ անխուսափելի կսկիծները:

- 162 Ես ցնծացի քու խօսքերուդ վրայ, ինչպէս մէկը որ մեծ գանձ մը գտած է:
- 163 Ես մեղքը ատեցի եւ արհամարհեցի, եւ քու օրէնքներդ սիրեցի:
- 164 Օրը եօթն անգամ ես պիտի օրհնեմ քեզ, քու իրաւունքներուդ եւ արդարութեանդ համար:
- 165 Մեծ է խաղաղութիւնը անոնց՝ որ օրէնքդ կը սիրեն, եւ սայթաքում չկայ անոնց քով:
- 166 Քո՛ւ վերկուլթեանդ սպասեցի ես, Տէ՛ր, եւ քու պատուիրաններդ սիրեցի:
- 167 Իմ հոգիս պահեց քու վկայութիւններդ, եւ չափէն աւելի սիրեց գանոնք:
- 168 Ես քու պատուիրաններդ եւ վկայութիւններդ պահեցի, որովհետեւ քու առջեւ եմ իմ բոլոր ճամբաներս:

Թաւ

- 169 Քու առջե՛ւդ թող ելլեն ինդրանքներս, Տէ՛ր, եւ քու խօսքիդ համաձայն՝ իմաստուն ըրէ զիս:
- 170 Քու առջե՛ւդ թող ելլեն աղօթքներս, Տէ՛ր, եւ քու խօսքովդ փրկէ՛ զիս:
- 171 Թող շրթունքներէս քու օրհնութիւններդ բխին, երբ դուն արդարութիւններդ սորվեցնես ինձի:

172 Թող իմ լեզուս քու խօսքերդ խօսի,
որովհետեւ արդար են քու բոլոր պատուիրաններդ:

173 Թող քու ձեռքդ կեանք տայ ինձի,
որովհետեւ ես քու պատուիրաններդ ընտրեցի:

174 Ես քու փրկութեանդ ցանկացի, Տէ՛ր,
եւ քու օրհնքներդ էին իմ խօսքիս նիւթը:

175 Թող ապրի՛ հոգիս եւ օրհնէ՛ քեզ,
եւ քու օրհնքներդ պիտի օգնեն ինձի:

176 Ես մոլորեցայ կորսուած ոչխարի նման,
փնտռէ՛ ծառար, որովհետեւ ես չմոռցայ պատուիրաններդ:

ՍԱՂՄՈՍ 119/120

Աստուծոյ պաշտպանութիւնը խնդրելու համար

Երգ ուխտաւորներու:

1 Նեղութեանս մէջ Տիրոջ աղաղակեցի,
եւ ան լսեց զիս:

2 Տէրը փրկե՛ց իմ հոգիս՝
նենգաւորներու շրթունքներէն եւ չար լեզուէն:

3 Ի՞նչ պիտի շահիս կամ ի՞նչ օգուտ պիտի քաղես,
նենգաւոր՝ լեզու:

4 Դուն կը նմանիս հզօրի նետին,
որ հրաշէկ դարձած՝ կը խրի կաղնիին մէջ:

5 Վա՛յ ինձի, որովհետեւ երկար տեւեց պանդխտութիւնս,
եւ ես կեդարի վրաններուն մէջ բնակեցայ:

6 Հոգիս շատ անգամ բնակեցաւ այնպիսիներու հետ՝
որոնք կը զլանային նոյնիսկ ողջոյն տալ:

7 Ես խաղաղարար մարդ եմ,
բայց երբ ես կը խօսէի՝ անոնք ինձի դէմ կը պայքարէին:

ՍԱՂՄՈՍ 120/121

Աստուած է մեր պաշտպանը

Երգ ուխտաւորներու:

1 Աչքերս բարձրացուցի դէպի լեռները,
ուսկի՞ց օգնութիւն պիտի գայ ինձի:

2 Օգնութիւն պիտի գայ ինձի Տիրոջմէ,
որ ստեղծած է երկինքն ու երկիրը:

3 Մի՛ թողուր որ ոտքերդ սասանին,
եւ պահապանդ թող չննջէ,
ինչպէս չի ննջեր եւ քուն չի մտներ՝
Իսրայէլի Պահապանը:

1,2- Սաղմոսը վստահութեամբ լի աղօթքն է ուխտաւորներուն, որոնք Պաղեստինի լեռնային եամբաներէն կը բարձրանային դէպի Երուսաղէմ եւ կամ կը վերադառնային դէպի իրենց բնակավայրը: Իւրաքանչիւրը կը հարցնէ անձկութեամբ. Ո՞րքէ պիտի գայ ինձի օգնութիւնը: Պատասխանը կու տայ մոյնիմն հաւատացեալը. Օգնութիւնը պիտի գայ Տիրոջմէ:

- 4 **Տէրը պիտի պահէ քեզ**
եւ **Տէրը իր աջ ձեռքով պիտի ընդունի քեզ:**
- 5 **Արեւը պիտի չվնասէ քեզի օր ցերեկով,**
ոչ ալ լուսինը՝ գիշերուայ մէջ:
- 6 **Տէրը պիտի պահէ քեզ ամէն չարիքէ,**
Տէրը պիտի պահէ քու հոգիդ:
- 7 **Տէրը պիտի պահէ քու ելքդ ու մոռտքդ,**
ասկէ ետք՝ մինչեւ յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ 121/122

Ուրախութիւն՝ Երուսաղէմի համար

Երգ ուխտաւորներու:

- 1 **Ես ուրախութեամբ լեցուեցայ՝ երբ ինծի կ'ըսէին.**
Տիրոջ տունը պիտի երթանք մենք:
- 2 **Երուսաղէ՛մ, մեր ոտքերը հասած էին**
մինչեւ քու դռներդ:
- 3 **Իբրեւ քաղաք շինուած է Երուսաղէմը,**
եւ բնակութիւնը՝ անոր շուրջը:
- 4 **Հո՛ն ելան ցեղերը, Տիրո՛ջ ցեղերը,**
Իսրայէլի վկայութիւնները՝
Տիրոջ անունը փառաբանելու համար:
- 5 **Հո՛ն դրուած են դատաւորներու աթոռները,**
Դաւիթի տա՛ն մէջ դրուած են աթոռները:

- 6 **Հարցուցէ՛ք Երուսաղէմի բարօրութեան**
եւ շինութիւններուն մասին, դուք որ կը սիրէք զայն:
- 7 **Խաղաղութի՛ւն թող տիրէ քու ամրոցներուդ մէջ,**
եւ շէնութիւն քու ամուր աշտարակներուդ վրայ:
- 8 **Եղբայրներուս եւ ընկերներուս սիրոյն համար,**
ես խաղաղութիւն մաղթեցի քեզի համար.
- 9 **Եւ մեր Տէր Աստուծոյն տան համար,**
մենք խնդրեցինք որ բարօրութիւն տիրէ քու մէջդ:

ՍԱՂՄՈՍ 122/123

Խնդրանք Աստուծոյ օգնութեան

Երգ ուխտաւորներու:

- 1 **Ես աչքերս քեզի բարձրացուցի,**
Տէ՛ր, որ երկինք կը բնակիր:
- 2 **Ինչպէս իրենց տիրոջ ձեռքին վրայ է ծառաներուն աչքը,**
ինչպէս անոր տիկնոջ ձեռքին վրայ է աղախինին աչքը,

1- Կարն, պարգ, ֆնարերգական շունչով գեղուն տաղ մըն է այս սաղ-
մուր:
2- Գեղեցիկ է պատկերը որ ուրուագծուած է դիտող աչքերու գոր-
ծող եւ նշաններ հաղորդող ձեռքերու խօսուել տեսարանով: Կը պատկե-
րացնէ մեր աչքերուն առջեւ անպարագիծ աշխարհը հոգեւոր կեանքի:
Կարիքը, կախումը եւ վստահութիւնը հաւատացեալին թելադրուած են
գրեթէ աննշմար արտայայտութեամբ աչքերուն:

այնպէս քեզի ուղղուած են մեր աչքերը, Տէր Աստուած մեր, մինչեւ որ ողորմիս մեզի:

3 Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, ողորմէ՛ մեզի, որովհետեւ չափազանց արհամարհանքով լեցուեցանք:

4 Եւ դե՛ռ աւելի՛ մեր հոգիները լեցուեցան մեզ նախատողներու նախատինջներով եւ ամբարտաւաններու արհամարհանքով:

ՍԱՂՄՈՍ 123/124

Աստուած է մեր փրկիչը

Երգ ուխտաւորներու:

1 Եթէ Տէրը եղած չըլլար մեզի հետ, թող ըսէ Իսրայէլ,

2 եթէ Տէրը մեզի հետ եղած չըլլար, երբ մարդիկ յարձակեցան մեր վրայ,

3 անոնք, իրենց կատաղի բարկութեան մէջ, պիտի ուզէին ողջ ողջ կլլել մեզ:

4 Այն ատեն, ջուրերն անգամ պիտի կլլէին մեզ. մեր հոգիները հեղեղներու մէջէն անցան:

1, 2, 3- Սաղմոսերգուն աչքի առջեւ ունի դիրաբեկ կացութիւնը ժողովուրդին եւ կը խորհրդածէ գայն անցեալի աստուածային սքանչելիքներու լոյսին տակ:

5 Մեր հոգիները անցան անընդհատ ջուրերու մէջէն:

6 Օրհնեա՛լ ըլլայ Տէրը, որ չթողուց մեզ որ որս դառնանք անոնց ակռաներուն:

7 Մեր հոգիները, ճնճղուկներու նման՝ ազատուեցան որսորդներու որոգայթէն. անոնց որոգայթները փշրուեցան եւ մենք ազատ մնացինք:

8 Օգնութիւնը կու գայ մեզի Տիրոջ անունէն, որ ստեղծած է երկինն ու երկիրը:

ՍԱՂՄՈՍ 124/125

Աստուած է մեր պաշտպանը

Երգ ուխտաւորներու:

1 Այն որ Տիրոջ վրայ դրած է իր յոյսը՝ նման է Սիռն լեռան. այն որ կը բնակի Երուսաղէմի մէջ, պիտի չսասանի յաւիտեան:

2 Ան լեռներով շրջապատուած է, եւ Տէրը իր ժողովուրդին շուրջն է, ասկէ ետք՝ մինչեւ յաւիտեան

1- Բազմաթիւ են գաղափարները որ կը բովանդակուին այս սաղմոսին մէջ. հաւաքական վստահութիւնը, մարգարէական խոստումը, (հ. 3), խնդրանքը (հ. 4) եւ դատապարտութիւնը անոնց որ մոլորած են յափշտակութեամբ:

3 *Տէրը չի թողուր որ անօրէններու գաւազանը մնայ՝
արդարներուն վիճակուած երկրին վրայ·
եւ արդարները իրենց ձեռքը պիտի չերկարեն՝
անօրէնութիւն գործելու համար:*

4 *Տէրը բարիք կ'ընէ բարիներուն,
եւ անոնց՝ որ ուղիղ են սրտով:*

5 *Իսկ անոնք որ մոլորած են՝ յափշտակութիւն ընելով,
Տէրը գանոնք կը դասէ անոնց հետ՝ որ անիրաւութիւն կը գործեն:
Խաղաղութիւն թող ըլլայ Իսրայէլի վրայ:*

ՍԱՂՄՈՍ 125/126

Ափսոսանքի կարօտը

Երգ ուխտաւորներու:

1 *Երբ Տէրը վերադարձուց Սիոնի գերեալները,
մենք միտիթարութեամբ լեցուեցանք:*

2 *Այն ատեն, մեր բերանները խնդութեամբ լեցուեցան,
եւ մեր լեզուները՝ ցնծութեամբ:
Այն ժամանակ՝ հեթանոսները կ'ըսէին·
Մե՛ծ բաներ ըրաւ Տէրը՝ անոնց ընելով ինչ որ ըրաւ:*

3 *Մե՛ծ շնորհք ըրաւ մեզի Տէրը,
եւ ուրախութեամբ լեցուց մեզ:*

4 *Տէ՛ր, վերադարձուր մեր գերեալները այնպէս՝
ինչպէս հարաւի հեղեղները:*

5 *Անոնք որ արցունքով կը ցանէին՝
թող ցնծութեամբ հնձեն:*

6 *Անոնք որ իրենց սերմանիքը չալկած՝ լացով ելան ու գացին,
ցնծութեամբ թող ելլեն ու դառնան՝ ցորենի խուրձերով:*

ՍԱՂՄՈՍ 126/127

Ապարդիւն է ամէն ջանք՝ առանց Աստուծոյ

Երգ ուխտաւորներու:

1 *Եթէ Տէրը չկառուցանէ տունը՝
ի գուր կը յոգնին գայն կառուցողները·
եթէ Տէրը չպաշտպանէ քաղաքը՝
ի գուր կը տքնին անոր պահապանները:*

2 *Դուք պարապ տեղ կ'ելլէք առաւօտ կանուխ,
կամ ուշ ատեն կը քնանաք իրիկունը,
արդ, ոտքի՛ ելլէք, ցորքան չէք քունի մէջ,
ուտելու համար հացը՝ ձեր ցաւերուն պտուղը·
Տէրը կու տայ պէտք եղածը իր ժամանակին՝
քունի մէջ եղող իր սիրելիներուն:*

3 *Տիրոջ ժառանգութիւնը՝ որդիներն են,
իր վարձատրութիւնը, իր որովայնին պտուղները:*

1- Իմաստութեան շունչով օծուն ուսուցում մըն է սաղմոսը: Մարդուն ամէնէն տաժանակիր վաստակը, առօրեայ հացը, բազմադաս ընտանիքը, պարգևներն են Աստուծոյ:

3- «Տիրոջ ժառանգութիւնը»· այս ասացածով առ հասարակ

4 *Ինչպէս է նետը՝ հզօր մարդու ձեռքին մէջ, այնպէ՛ս են նաեւ երիտասարդութեան զաւակները:*

5 *Երանի՛ անոր որ անոնցմով կը յազեցնէ իր ցանկութիւնը, որովհետեւ անոնք ամօթով պիտի չմնան, եթէ թշնամիները բանակցին անոնց հետ՝ դրան մօտ:*

ՍԱՂՄՈՍ 127/128

Տիրոջ օրհնութիւնը

Երգ ուխտաւորներու:

1 *Երանի բոլո՛ր անոնց որ Տիրոջ երկիրդն ունին եւ անոր ճանապարհներէն կ'ընթանան:*

2 *Քու ձեռքերուդ վաստակը պիտի ուտես, երանի՛ քեզի, եւ բարիքներով պիտի լիանաս:*

3 *Քու կ'ինդ պիտի ըլլայ այնպէս՝ ինչպէս տունիդ մէկ անկիւնը տնկուած վայելչազեղ այգին, եւ որդիներդ՝ ինչպէս նորատունկ ձիթենիները՝ քու սեղանիդ շուրջը:*

նշանակուած է Աւետեաց երկիրը: Սաղմոսին մէջ, այս բառը կը նշանակէ թէ՛ որդիները պարգեւն են Աստուծոյ, որպէս զի ապահովեն գոյատեւումը եւ անդորրութիւնը ժողովուրդին:

1- Սաղմոսը կը շարունակէ նախորդին իմաստութեան ուսուցումը. Եթէ ոչինչ հնարաւոր է առանց Աստուծոյ, ամէն ինչ հնարաւոր է Աստուծով: Աստուծոյ օրհնութեամբ, արդարը կը գտնէ երջանկութեան ամէնէն քաղցրը՝ ընտանեկան ջիւղ կեանքին մէջ:

4 *Այսպէ՛ս պիտի օրհնուի ամէն մարդ՝ որ Տիրոջմէ կ'երկնչի:*

5 *Տէրը պիտի օրհնէ քեզ Սիոնէն, եւ ամէն բարիք պիտի տեսնես Երուսաղէմի մէջ, կեանքիդ բոլո՛ր օրերուն,*

6 *եւ պիտի տեսնես որդիներուդ որդիները: Խաղաղութի՛ւն Իսրայէլի վրայ:*

ՍԱՂՄՈՍ 128/129

Աղօթք նեղութեան ատեն

Երգ ուխտաւորներու:

1 *Բազմաթիւ անգամներ պայքարեցան ինծի դէմ, մանկութենէս ի վեր, ըսաւ Իսրայէլ:*

2 *Բազմաթիւ անգամներ պայքարեցան ինծի դէմ, մանկութենէս ի վեր, բայց չկրցան յաղթել ինծի:*

3 *Մեղաւորները թիկունքս հարուածեցին, եւ երկար ժամանակ անօրհնութիւններ գործեցին:*

4 *Տէրը արդար է, եւ կը խորտակէ մեղաւորներուն պարանոցը:*

5 *Ամօթահար պիտի ըլլան եւ պիտի նահանջեն բոլո՛ր անոնք որ կ'ատեն Սիոնը:*

6 *Պիտի դառնան տանիքներու խոտին պէս, որ չորացած է արդէն՝ ձեռքի մէջ առնուելէ առաջ:*

7 Հնձողը իր բռունցքն անգամ չի լեցներ անով,
եւ ոչ ալ խուրճը կապողը՝ իր գիրկը:

8 Անոնց քովէն անցնողներէն եւ ո՛չ մէկը պիտի ըսէ-
Տիրոջ օրհնութիւնը թող ըլլայ ձեզի հետ-
եւ ոչ ալ՝ Տիրոջ անունով մենք կ'օրհնենք ձեզ:

ՍԱՂՄՈՍ 129/130

Վստահութեան եւ գղջումի աղօթք

1 Երգ ուխտաւորներու:

2 Խորուժիւններէն կ'աղաղակեմ քեզի, Տէ՛ր-
Տէ՛ր, լսէ՛ իմ ձայնս. թող ազանջդ ուշադիր ըլլայ՝
աղօթքիս ձայնը լսելու համար:

3 Եթէ անօրէնութիւններս քննես, Տէ՛ր,
ո՞վ կրնայ կանգնիլ քու առջեւդ, Տէ՛ր:

1-Այս պաղատանքը Ապաշխարութեան կարգի 6րդ սաղմոսն է: Խո-
նարի աղօթքն է եւ վստահութեամբ լի՝ աստուածային գթառատ սիրոյն
վրայ: Չունի սաղմոս 50ին խորութիւնը եւ անոր հոգեկան եւ հոգեբա-
նական նոխարիւնը: Մեղքին եւ անոր ներումին հետեւանքները չի տես-
ներ արտաքին երեսոյթներու մէջ, այլ մարդուն հոգիին խորը:
Յանցաւորը կ'իրականացնէ իր հոգեկան տագնապը եւ անդունդներէն
պաղատանքի ձայնը կը բարձրացնէ դէպի Աստուած: Խորութիւնները,
ինչպէս սղմ 68,3 եւ Ես 51,10 անցներուն մէջ, կը նշանակեն դժոխքը,
խորհրդանիշ մահուան թագաւորութեան եւ օտարացումին՝ Աստուծմէ
եւ անոր փրկարար գործէն:

3-«Եթէ անօրէնութիւններս քննես»... յիշատակութիւնը յանցանքին
կը պայմանաւորէ ազատագրութեան աղօթքը: Սաղմոսերգուն կ'ընդունի

4 Որովհետեւ քեզմէ՛ կու գայ քաւութիւնը-
քո՛ւ անունիդ համար ես համբերեցի, Տէ՛ր:

5 Հոգիս քու խօսքի՛դ սպասեց,
հոգիս Տիրո՛ջ վրայ դրաւ իր յոյսը:

6 Առաւօտեան պահէն մինչեւ իրիկուն,
Առաւօտեան պահէն՝ սկսեալ,
Տիրոջ վրայ յուսաց Իսրայէլը:

7 Տիրոջմէ՛ կու գայ ողորմութիւնը,
եւ առատ է անոր փրկութիւնը:

8 Եւ ան է որ կը փրկէ Իսրայէլը՝
անոր բոլո՛ր նեղութիւններէն:

ՍԱՂՄՈՍ 130/131

Վստահութեան աղօթք

Երգ ուխտաւորներու:

1 Տէ՛ր, սիրտս չհպարտացաւ,
եւ աչքերս զուարճուժիւն չփնտռեցին:

իր յանցանքը, իր անկումը անդունդին մէջ: Յորհման ներումը չէ տրուած,
յանցանքը կը մնայ Աստուծոյ առջեւ ներկայ, որպէս զի տրուի արժանի
պատիժը: Յանցանքին բարձումը, մոռացումը, անոր ներումն է:

5- Յոյսով սպասումը հոգիին՝ Աստուծոյ կամ անոր խօսքին, բաց-
ւածքն է աստուածային ներումի շնորհքին: Յոյսով ներումի խօսքին
սպասող սաղմոսերգուն իր հոգեվիճակը կը պատկերացնէ գիշերային
պահակին պրկուած սպասումով՝ արշալոյսին:

1- Կարն եւ չքնաղ տաղ մըն է սաղմոսը, օժտուած գողտր բնիշու-

*ես մեծամեծներու ետեւէն չգացի,
ոչ ալ անոնց՝ որոնք ինծմէ երեւելի են:*

2 *Այլ ընդհակառակը, ես խոնարհեցայ,
ինչպէս մօր կաթէն կտրուած մանուկը,
որ կ'ուզէ վերադառնալ նոյնին:
Բայց եթէ ինքզինքս հպարտացուցի,
թող ա՛յլպէս հատուցում ստանայ հոգիս:*

3 *Իսրայէլը Տիրոջ վրայ դրած է իր յոյսը,
ասկէ ետք՝ մինչեւ յաւիտեան:*

ՍԱՂՄՈՍ 131/132

Տապանակի փոխադրութեան տարեդարձին առիթով

Երգ ուխտաւորներու:

1 *Յիշէ՛, Տէ՛ր, Դաւիթը,
եւ անոր ա՛յնքան մեծ հեզութիւնը:*

թեամբ: Համարուած է իբրեւ ամէնէն գեղեցիկներէն մին ամբողջ սաղ-
մոսարանին: Սաղմոսերգուն, թերեւս պարագլուխներէն մէկը ժողովոր-
դին, հետապնդել է սոփ կեանքի ամբարտաւանութիւնը եւ ուրիշ
մեծութիւններ, կ'ապրի շնորհքի ազդեցութեան տակ, փորձառութիւնը
խաղաղ եւ անվրդով ներքին կեանքի:

3- Սաղմոսերգուն իր փորձառութիւնը կը հաղորդէ ժողովորդին
պարզ յորդորով: Նոյն փորձառութիւնը կրնայ ապրիլ բրիստոնեայ հա-
ւատացեալ անհատը կամ հաւաքականութիւնը: Փոխանակ հետապնդե-
լու փառքի եւ մեծութեան երազանքներ, առանց սնուցանելու յաղթու-
թեան եւ վրէժի ցանկութիւններ, հարկ է ապրիլ կոչումը հաւատացեալի:
Գրիստոսի անունով կանչուածներու մէջ, մեծութիւնը ծառայութեան

2 *Թէ՛ ի՛նչպէս երգում ըրաւ ան՝ Տիրոջ,
եւ ուխտ ըրաւ Յակոբի Աստուծոյն հետ:*

3 *Թէ՛ Պիտի չմտնեմ իմ տանս յարկէն ներս
եւ պիտի չելլեմ անկողնիս մահիճը:*

4 *Թոյլ պիտի չտամ աչքերուս որ քունի մտնեն,
ո՛չ ալ աչքերուս թարթիչներուն՝ որ ննջեն:
Հանգիստ պիտի չտամ իմ մարմնիս,*

5 *մինչեւ որ բնակութեան վայր մը գտնեմ՝
Յակոբի Տէր Աստուծոյն համար:*

6 *Ահա, լսեցի՛նք անոր մասին Եփրաթայի մէջ,
եւ մայրիներու դաշտերուն մէջ գտանք զինք:*

7 *Մտնենք անոր յարկերը, երկրպագենք այն տեղ՝
ուր կանգ առած են անոր ոտքերը:*

8 *Ե՛լ, Տէ՛ր, եւ եկ՛ուր քու Հանգիստիդ վայրը,
դո՛ւն, եւ քու սուրբ կտակին վրանը:*

9 *Երէցներդ թող արդարութիւն զգենուն
եւ սուրբերդ խայտալով թող ցնծան:*

10 *Քու սիրելիիդ՝ Դաւիթի սիրոյն համար,
երեսդ մի՛ դարձնէր քու Օծեալէդ:*

11 *Տէրը ճշմարտօրէն երգում ըրաւ Դաւիթին, եւ չստեց անոր:
Քու ծոցէդ ելած մէկը պիտի նստեցնեմ քու աթոռիդ վրայ:*

առաքելութիւնն է եւ պարտականութիւնը պարտի մնալ գերծ աշխարհիկ
մեծութեան ցանկութեանէն:

12 Եթէ որդիներդ պահեն օրէնքը եւ վկայութիւնները
զորս ես պիտի սորվեցնեմ անոնց՝
անոնց որդիները, յաւիտեանս յաւիտենից՝
պիտի նստին քու գահիդ վրայ:

13 Տէրը ցոյց տուաւ իր հաճութիւնը Սիոնի հանդէպ
եւ ընտրեց հոն բնակիլ:

14 Եւ ըսաւ. Այս է հանգիստիս վայրը, յաւիտեանս յաւիտենից,
հո՛ս պիտի բնակիմ, որովհետեւ հո՛ս գտայ իմ հաճութիւնս:

15 Օրհնելով պիտի օրհնեմ ասոր արդիւնքները,
եւ հացով պիտի լիացնեմ իր աղքատները:

16 Փրկութեամբ պիտի զգեստաւորեմ ասոր քահանաները,
եւ ասոր սուրբերը իսայտալով պիտի ցնծան:

17 Հո՛ն ծագել պիտի տամ Դաւիթի եղջիւրը,
եւ պիտի պատրաստեմ իմ Օծեալիս ճրագը:

18 Ամօթո՛վ պիտի պատեմ անոր թշնամիները,
մինչ իմ սրբութիւնս պիտի ծաղկի անոր վրայ:

ՍԱՂՄՈՍ 132/133

Եղբայրական սեր

Նրբ ուխտաւորներու:

1 Ի՛նչ գեղեցիկ է եւ ի՛նչ վայելուչ՝
որ եղբայրները միասին բնակին:

2 Նման է այն օծանելիքին՝
որ կ'իջնէ Ահարոնի գլխուն եւ մօրուքին վրայ,
եւ մօրուքէն իջնելով՝ կը հասնի մինչեւ զգեստին քղանցքը:

3 Նման է ցօղին՝ որ Հերմոնէն կ'իջնէ Սիոն լեռան վրայ,
հոն՝ ուր Տէրը պատրաստած է
օրհնութիւն եւ յաւիտենական կեանք:

ՍԱՂՄՈՍ 133/134

Նրբկոյեան աղօթք

Նրբ ուխտաւորներու:

1 Օրհնեցէ՛ք Տէրը, բոլո՛ր ծառաները Տիրոջ,
որ կը գտնուիք հոս, մեր Տիրոջ տան մէջ,
եւ մեր Աստուծոյն գաւիթներուն մէջ:

2 Դէպի սրբավայր բարձրացուցէք ձեր ձեռքերը գիշեր ատեն,
եւ Տէ՛րը օրհնեցէ՛ք:

3- Հոն՝ Տէրը կու տայ կամ կը պատրաստէ օրհնութիւնը. հաւատաց-
եալներուն եղբայրութիւնը ամրապնդուած եւ խորացուած պաշտամուն-
քի ժամանակ, Աստուծոյ կամփին տնօրինումով կը բովանդակէ
գրաւականը շնորհքի եւ երջանկութեան: Քրիստոնեայ հաւատացեալը
իր յատուկ եղբայրակցութիւնը հաւատակիցիս հետ կը գտնէ Քրիստոսի
մէջ, քանի որ ամենքն կ'անոնեն անոր լիութենէն (Յովն. 1,16):

1- Քահանաները կը հրաւիրեն Աստուծոյ օրհնութիւնը ուխտաւորնե-
րուն վրայ (հ. 3): Ընդունիմք յորդորը սաղմոսին որ կը հրաւիրէ գովաբա-
նութեան եւ օրհներգութեան: Սէրը Տիրոջ՝ ծառայութիւն է: Փորձաբար
եւ գրաւականը սիրոյն եւ յանձնառութեան, ծառայութեան կեցուածքն է:

2- Քրիստոս կ'աղօթէր գիշերը եւ յանձնարարեց աղօթքը սենեակին

3 *Տէրը՝ որ ստեղծած է երկինքն ու երկիրը, թող օրհնէ՛ ձեզ Սիրոնէն:*

ՍԱՂՄՈՍ 134/135

Փառաբանութիւն տիրոջ

Ալեյուիա:

1 *Օրհնեցէ՛ք Տիրոջ անունը, Տէ՛րը օրհնեցէք, Տիրո՛ջ ծառաներ,*

2 *դուք որ կը գտնուիք Տիրոջ տան մէջ, եւ մեր Աստուծոյն գաւիթներուն մէջ:*

3 *Օրհնեցէ՛ք Տէրը, որովհետեւ բարի է ան, սաղմոս ըսէք անոր անունին, որովհետեւ քաղցր է ան:*

4 *Տէրը ընտրեց Յակոբը՝ իրեն համար, եւ Իսրայէլը՝ իբր իր ժառանգութիւնը:*

առանձնութեան մէջ, դեմ յանդիման եւ սիրտ սրտի՝ Աստուծոյ հետ: Հաւաքական աղօթքն ունի իր հմայքը եւ վայելչութիւնը երբ կը յայտնէ հաւատացեալներուն՝ աղօթքին մէջ բովանդակուած խորհուրդը: Անհատական աղօթքն ալ սակայն, ունի իր խորութիւնը եւ կ'ընծայէ հնարաւորութիւնը դնելու հոգիին վերացումին եւ երկխօսութեան մէջ Աստուծոյ հետ. առանձնական կեանքի տարողութիւնները եւ յատուկ շեշտը եւ երանգը օրհնաբանութեան:

3-Յորդորէն ետք (հ. 1-2), առաջին պատճառը Տիրոջ օրհնաբանութեան, անոր բարութիւնն ու քաղցրութիւնն են:

5 *Ես գիտցա՛յ թէ մեծ է Տէրը, եւ Տէրը աւելի մեծ է քան բոլո՛ր կուռքերը:*

6 *Տէրը, ինչ որ ուզեց՝ իրագործեց, երկինքի մէջ թէ երկրի վրայ, ծովերու մէջ եւ բոլոր անդունդներուն խորը:*

7 *Ան ամպեր կը բարձրացնէ երկրի ծայրերէն, իր փայլատակումները անձրեւի կը վերածէ, եւ հովեր կը հանէ իր շտեմարաններէն:*

8 *Ան հարուածեց Եգիպտոսի բոլո՛ր անդրանիկները, մարդէն մինչեւ անասուն:*

9 *Իր նշաններն ու հրաշքները ղրկեց քեզի, Եգիպտո՛ս, Փարաւոնին եւ անոր ամբո՛ղջ բանակին վրայ:*

10 *Ան հարուածեց բազմաթիւ ազգեր, եւ սպաննեց հզօր թագաւորներ:*

11 *Սեհոնը՝ Ամովհացիներու թագաւորը, Ովղը՝ Բեշանի թագաւորը, եւ Քանանացիներու բոլո՛ր թագաւորութիւնները:*

12 *Անոնց երկիրները իբր ժառանգութիւն տուաւ, ժառանգութիւն՝ ի՛ր ժողովուրդին, Իսրայէլին:*

13 *Տէ՛ր, յաւիտենակա՛ն է քու անունդ, Տէ՛ր, սերունդէ սերունդ է քու յիշատակդ:*

14 *Տէրը կը դատէ իր ժողովուրդը, եւ իր ծառաներուն մէջ կը գտնէ իր մխիթարութիւնը:*

- 15 Արծաթ ու ոսկի են հեթանոսներուն կուռքերը,
մարդկային ձեռակերտներ են անոնք:
- 16 Բերան ունին՝ բայց չեն խօսիր,
աչքեր ունին՝ եւ չեն տեսներ:
- 17 Ականջ ունին՝ եւ չեն լսեր,
եւ չունչ չկա՛յ անոնց բերնին մէջ:
- 18 Անոնց պէս պիտի ըլլան՝ անոնք որ շինեցին զանոնք.
ինչպէս բոլոր անոնք որ անոնց վրայ դրած են իրենց յոյսը:
- 19 Տո՛ւն Իսրայէլի, օրհնեցէ՛ք Տէրը,
տո՛ւն Ահարոնի, օրհնեցէ՛ք Տէրը:
- 20 Տո՛ւն Ղեւիի, օրհնեցէ՛ք Տէրը,
Տիրոջ երկիւղածներ, օրհնեցէ՛ք Տէրը:
- 21 Օրհնութի՛ւն Տիրոջ՝ Սիոնէն,
անոր՝ որ Երուսաղէմ կը բնակի:

ՍԱՂՄՈՍ 135/136

Շնորհակալութեան աղօթք

Ալեյուիա:

- 1 Գովաբանեցէ՛ք Տէրը, որովհետեւ բարի է,
եւ յաւիտենական է անոր սէրը:

1– Եբրայական աւանդութեան մէջ, այս սաղմոսը կը վայելէ յատուկ

- 2 Գովաբանեցէ՛ք աստուածներու Աստուածը,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 3 Գովաբանեցէ՛ք տէրերու Տէրը,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 4 Ի՛նք միայն կատարած է մեծամեծ սքանչելիքներ,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 5 Ան իր իմաստութեամբը ստեղծած է երկինքը,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 6 Ան՝ ջուրերու վրայ հաստատած է երկիրը,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 7 Ի՛նք ստեղծած է մեծամեծ լուսատուները,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 8 Ա՛ն ստեղծած է արեւը, իբրեւ ցերեկուայ իշխանաւոր,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 9 Ա՛ն ստեղծած է լուսինն ու աստղերը,
իբրեւ իշխանաւորներ գիշերուան,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:

նախընտրանք իբրեւ գոհաբանութեան երգ: Յօրինուած է Լիթանիայի կառոյցով. գոհութեան հրաւերին՝ բազմութիւնը կը պատասխանէ միեւնոյն կրկնեբարձով՝ «յաւիտենական է անոր սէրը»: Սաղմոսը կը բարեբանէ աստուածային գոհութիւնը որ կը յայտնուի արարչագործութեամբ եւ փրկութեան պատմութեան մէջ՝ ելճով Եգիպտոսէն եւ հաստատութեամբ Աւետեաց երկրին մէջ:

- 10 Ան զարկած է Եգիպտացիներու երկիրը,
անոնց անդրանիկներով միասին,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 11 Ան հանած է Իսրայէլը անոնց մէջէն,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը,
- 12 իր ձեռքը բարձրացնելով եւ բազուկը զօրացնելով,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 13 Ան ճեղքած եւ երկու մասի բաժնած է մեծ ծովը,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 14 Ան անցուցած է Իսրայէլը անոր մէջէն,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 15 Ան ընկղմած է Փարաւոնն ու անոր զօրքերը
Կարմիր Մովուն մէջ,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 16 Ան անապատ հանած է իր ժողովուրդը,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 17 Ան հարուածած է մեծամեծ թագաւորները,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 18 Ան սպաննած է հզօր թագաւորները,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 19 Սեհոնը՝ Ամովհրացիներու թագաւորը,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:

- 20 Ուրբը՝ Բեշանի թագաւորը,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 21 Ան՝ իբրեւ ժառանգութիւն տուած է անոնց երկիրները,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 22 իբրեւ ժառանգութիւն՝ իր Իսրայէլ ծառային,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 23 Տէրը յիշած է մեզ, մեր նուաստացումին մէջ,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 24 Ան փրկած է մեզ՝ մեր թշնամիներուն ձեռքէն,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 25 Ան է որ կերակուր կու տայ բոլոր կենդանիներուն,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:
- 26 Գովաբանեցէ՛ք երկնաւոր Աստուածը,
որովհետեւ յաւիտենական է անոր սէրը:

26– Այս սաղմոսը գոհաբանական աղօթքի տիպարն է, ուղղուած աստուածային սիրոյն: Յատկանշական է ամէն համարի վերջաւորութեան ուղղուող բացազանչութիւնը՝ «Որովհետեւ յաւիտենական է անոր սէրը»: Կը յիշուին Տիրոջ հրաշալիքները կատարուած ի նպաստ հրեայ ժողովուրդին, տիեզերքի ստեղծագործութենէն սկսեալ մինչեւ ներկայ ժամանակները:

ՍԱՂՄՈՍ 136/137

Ա. Բարաքայանի ռոքերգուֆիւն

Սաղմոս՝ Դաւիթի: Երեմիայի ձեռնով: Եբրայականի մէջ անվերնագիր:

- 1 *Բաբելոնի գետերուն եզերքը նստած, մենք կու լայինք, երբ հոն Սիոնը կը յիշէինք:*
- 2 *Անոնց ուռենիներէն՝ մենք կախած էինք մեր նուագարանները:*
- 3 *Մեզ գերի տանողները օրհնութեան երգեր կ'ուգէին մեզմէ, մեզ գերի տանողները կը ստիպէին մեզ եւ կ'ըսէին. Սիոնի օրհնութեան երգերէն՝ երգեցէք մեզի:*
- 4 *Բայց ինչպէ՞ս կրնայինք մենք երգել Տիրոջ օրհնութիւնները՝ օտար երկրի մէջ:*
- 5 *Եթէ մոռնամ քեզ, Երուսաղէ՛մ, թող աջ թեւս մոռնայ զիս:*

1–Տարագրեալ դեւտացի մը կ'ոգեկոչէ դառն յիշատակները տարագրութեան:
 4–Տիրոջ երգը նուիրական էր եւ գայն երգել օտար եւ անմաքուր հոռի վրայ համարուած էր սրբապօղոթիւն (Ովս 9,3. Ամս 7,17):
 5–Աստիճակները որ կ'արտայայտուի սաղմոսին մէջ, երկրորդ երեսն է հզօր սիրոյն գոր սաղմոսերգուն ունի Սիոնի եւ Երուսաղէմի հանդէպ:

- 6 *Թող լեզուս քիմքի՛ս կպչի, եթէ չյիշեմ քեզ, եթէ նախ քե՛զ չերգեմ, Երուսաղէ՛մ, աղբի՛ւրը իմ ուրախութեանս:*
- 7 *Մի՛տքդ բեր Եդոմի որդիները, Տէ՛ր, որոնք Երուսաղէմի այդ օրերուն կ'ըսէին. Քակեցէ՛ք, քակեցէ՛ք, մինչեւ հիմե՛րը կործանեցէք զայն:*
- 8 *Ո՛վ թշուառական դուստր Բաբելացիներու, երանի՛ անոր՝ որ պիտի հատուցանէ քեզի այն բոլո՛ր չարիքները զորս դո՛ւն ըրիր մեզի:*
- 9 *Երանի՛ անոր՝ որ պիտի բռնէ մանուկներդ, եւ ժայռին պիտի զարնէ զանոնք:*

7–Մարգարէութիւնն է Բաբելոնի անկումին: Չարամադութիւնը վայրագ է եւ դաժան: Մաս կը կազմէր ժամանակի բարբերուն (Երմ 51, 22-25. 2 Թագ 8,12. Ովս 10,14. Ես 13,16): Բաբելոն մնացած է իբրեւ խորհրդանիշ բռնաւորութեան, վայրագ ոյժի: Նոյնիսկ արդի աշխարհին մէջ կը մնան բաբելոններ՝ ոստաններ ամբարտաւանութեան եւ ամբարշտութեան Աստուծոյ եւ մարդուն հակառակ: Սաղմոսը կրնայ մեզի օգտակար ըլլալ, ադօթով եւ գործով սատարելու չարութեան եւ ամբարտաւանութեան արմատախլումին: Յաւերթական ոչ-մոռացումը Երուսաղէմի, կրկնակի հրաւերն է հայ հաւատացեալին՝ կրկնակի հաւատարմութեան. հաւատարմութիւնը իր նուիրական հողերուն եւ հայրենիքին, հաւատարմութիւնը իբրեւ հաւատացեալի՝ վերին եւ ճշմարիտ Երուսաղէմի: Կ'ապրինք կրկնակի նժոյճութիւնը, ունինք կրկնակի պարտականութիւնը մնալու հաւատարիմ:

ՍԱՂՄՈՍ 137/138

Շնորհակալական աղօթք

Սաղմոս Դաւիթի:

1 Քե՛զ պիտի գովաբանեմ, Տէ՛ր, իմ բոլոր սրտովս, հրեշտակներուն առջեւ սաղմոս պիտի ըսեմ քեզի:

2 Քանի որ դուն լսեցիր իմ բերնիս խնդրանքները, քու սուրբ տաճարիդ մէջ պիտի երկրպագեմ քեզի, քու անունդ պիտի փառաբանեմ՝ ողորմութեանդ եւ ճշմարտութեանդ համար. դուն ամէ՛ն բանի մէջ բարձրացուցիր քու սուրբ անունդ:

3 Այն օրը ուր քեզի դիմեմ, փութով լսէ՛ք զիս, եւ բազմապատկէ՛ ոյժս հոգիիս մէջ:

4 Թող փառաբանեն քեզ երկրիս բոլո՛ր թագաւորները, Տէ՛ր, որովհետեւ անոնք լսեցին քու բերնիդ խօսքերը:

5 Թող օրհնեն անոնք քու ճամբաներդ, եւ ըսեն. Մե՛ծ է Տիրոջ փառքը:

6 Բա՛րձր է Տէրը, ան կը տեսնէ խոնարհները, եւ հեռուէն կը ճանչնայ հպարտները:

7 Եթէ ես նեղութիւններու մէջէն ալ քալեմ, դուն ողջ պիտի պահես զիս թշնամիի մոլուցքէն, որովհետեւ երբ ձեռքդ կ'երկարես ինծի՝ քու աջդ կը փրկէ զիս:

8 Եւ Տէրը պիտի հատուցանէ ինծի: Քու ողորմութիւնդ յաւիտենական է, Տէ՛ր, մի՛ անտեսեր մեզ, քու ձեռքիդ գործերը:

ՍԱՂՄՈՍ 138/139

Աստուած ամէն տեղ է

Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

1 Տէ՛ր, դուն փորձեցիր եւ ճանչցար զիս:

2 Դուն գիտես իմ նիստս ու կացս. դուն հեռուէն գիտես արդէն իմ խորհուրդներս:

3 Իմ շաւիղներս եւ վիճակս դուն խուզարկած ես, եւ իմ բոլոր ճամբաներս առաջուց տեսած ես.

4 որովհետեւ նենգութիւն չկա՛յ իմ լեզուիս վրայ: Ահա՛, Տէ՛ր, դուն գիտես թէ՛ իմ ապագաս եւ թէ՛ անցեալս:

1– Սաղմոսերգուին նպատակն է տալ ընդհանուր գիծերով ինչ որ մարդուն բանականութիւնը՝ լուսաւորուած Յայտնութեամբ, կարող է ըսել Աստուծոյ ամենագիտութեան (հ. 1–6) եւ ամենուրեք ներկայութեան (հ. 7–12) եւ կանխագիտութեան մասին (հ. 1–16): Խորհրդածութիւն մըն է Աստուծոյ մասին, երկխօսութեամբ Աստուծոյ հետ: Խորհրդածութեան կը յաջորդէ յայտարարութիւնը սաղմոսերգուին արդարութեան (19–24): Աստուած կը քննէ եւ կը նանչնայ մարդը ոչ իբր դատաւոր, այլ իբր հայր, եւ մարդուն մէջ կ'արթնցնէ վստահութիւն եւ մտերմութիւն, կու տայ անոր համարակութիւնը երկխօսութեան իր Արարչին հետ (Ամս 3,2):

5 Դո՛ւն ստեղծեցիր զիս
եւ վրաս դրիր քու ձեռքդ:

6 Սքանչելի՛ է ծանօթութիւնը զոր դուն ունիս իմ մասիս,
այնքան բարձր է ան՝ որ կարող չեմ ըմբռնել զայն:

7 Ո՞ւր կրնամ երթալ հեռու քու Հոգիէդ,
կամ ո՞ւր կրնամ փախչիլ քու երեսէդ:

8 Եթէ երկինք ելլեմ՝ հո՛ն ես դուն,
եթէ դժոխք իջնեմ՝ դա՛րձեալ հոն՝ մօտս ես դուն:

9 Եթէ թեւեր առնեմ առաւօտուն
եւ ծովուն ծայրերը երթամ բնակիմ,

10 հո՛ն ես քու ձեռքդ պիտի առաջնորդէ ինձի,
եւ աջդ պիտի պահպանէ զիս:

11 Ես ըսի. Արդեօք խաւարը կրնա՞յ ծածկել զիս,
կամ գիշերը՝ փոխանակ լոյսի փափկութեան:

12 Սակայն խաւարը՝ խաւար չէ՛ քեզի համար,
եւ գիշերը՝ ցերեկուան պէս լուսաւոր պիտի ըլլայ,
եւ անոր խաւարը՝ լոյսի հաւասար է:

12-Նոյնիսկ խաւարին մէջ կեղծիքներու եւ խաբբայութիւններու, մարդը չի կրնար խուսափիլ Աստուծոյ տեսութենէն: Յոր եւ իր բարեկամները նոյն խորհուրդին դիմաց կ'եզրակացնեն. «Ձկայ ո՛չ խաւար ո՛չ թանձր ստուեր, ուր կարեան թափնուիլ չարագործները: Աստուած կը փոզգերծէ խաւարին մէջ թափնուած արարքները»: Նախընտրելի է խոնարհութեամբ հայցել. «Խորհրդոց գիտող, խաւարիս շնորհեա խորհուրդ լուսաւոր» (Շնորհալի):

13 Քեզի՛ ենթակայ ես իմ երիկամներս,
եւ դո՛ւն ընդունեցար զիս իմ մօրս գրկէն:

14 Պիտի փառաւորեմ քեզ, Տէ՛ր,
որովհետեւ դուն ահեղ ես եւ սքանչելի,
սքանչելի ես քու գործերդ,
եւ հոգիս լաւ կը ճանչնայ զանոնք:

15 Ոսկորներէս մէ՛կն իսկ թաքուն չմնաց քեզմէ,
երբ ծածկաբար կազմեցիր զիս,
եւ ես՝ երկրի խորերուն մէջ ստացայ իմ կեանքիս ոյժը:

16 Աչքերդ տեսան արարքներս՝ նախքան անոնք կատարուին,
եւ անոնք բոլորը քու գիրքդ մէջ գրուեցան:
Ցերեկը մոլորեցան, եւ ոչ ոք առաջնորդեց անոնց:

17 Շատ յարգելի եղան ինձի համար՝ բարեկամներդ,
ո՛վ Աստուած, եւ անոնց իշխանները շատ զօրացած են:

18 Երբ սկսայ թուել՝ աւազէն աւելի ելաւ անոնց թիւը,
արթնցայ, եւ տեսայ որ քո՛վդ եմ տակաւին:

19 Երանի՛ սպաննէիր մեղաւորները, ո՛վ Աստուած.
հեռացէ՛ք ինձմէ, արեան ծարաւի մարդիկ:

20 Հակառակութեամբ եւ նախանձով լեցուած՝
անոնք պիտի չկարենան գրաւել քու քաղաքդ:

18-«Արթնցայ եւ տեսայ՝ որ տակաւին քեզի հետ եմ»: Խորհրդածութիւններու աւարտին, սաղմոսագրուն կը հասնի եզրակացութեան. մարդը իր էութեամբ եւ իր խորհուրդով կը մնայ կապուած աստուածային իրականութեան:

21 Քեզ ատողները ատեցի, Տէ՛ր, եւ ինքզինքս հիւժեցի քու թշնամիներուդ պատճառով:

22 Անչափ ատելութեամբ ես ատեցի զանոնք, եւ անոնք թշնամի դարձան ինծի:

23 Քննէ՛ զիս, Աստուած՝, եւ ճանչցիր սիրտս. քննէ՛ զիս եւ ճանչցիր իմ շաւիղներս:

24 Եւ տես թէ կա՞ն անօրէնութիւններ ճամբաներուս մէջ, եւ քու յաւիտեանական ճամբաներէդ առաջնորդէ զիս:

ՍԱՂՄՈՍ 139/140

Աղօթք՝ չարերէն պաշպանուելու համար

1 Աւարտին: Սաղմոս Դաւիթի:

21- Սաղմոսերգուի մտին մէջ կը մնայ տարտամ գանգանութիւնը մեղքին եւ մեղաւորին միջեւ: Հարկ է սպասել Նոր Կտակարանին, որպէս զի գանգանութիւնը դեռ անլի յստականայ եւ յայտնութիւնը տրուի մարդուն թէ՛: Աստուած իբր Հայր բարեգութ, կը սպասէ հօրեմական տունէն հեռացող անառակին:

23- Ամէն ինչ կ'իյնայ Աստուծոյ ամենատեսութեան ակնարկին առջեւ: Փոխանակ թափուցանելու սրտին գաղտնիքները, նախընտրելի է խոստովանիլ գանոնք «Ծածկագէտ Աստուծոյ»: Աստուծոյ ինչպէս նաեւ Քրիստոսի հայեացքը կը հասնի մինչեւ խորը մեր խղմամտակին:

1- Այս եւ յաջորդ չորս սաղմոսները կը կազմեն անհատական ողբի հաւաքածոն: Անոնց մէջ կը գտնենք կոչը՝ Աստուծոյ ուղղուած, պաղատանքը հալածեալին, յոյսը՝ Աստուծոյ փրկարար միջամտութեան վրայ:

2 Ազատէ՛ զիս, Տէ՛ր, չար մարդէն, անիրաւ մարդէն փրկէ՛ զիս:

3 Անօրէնութիւն խորհեցան իրենց սրտին մէջ, եւ պատերազմի պատրաստուեցան օրն ի բուն:

4 Սրեցին իրենց լեզուն՝ օձի լեզուին պէս, իժի թոյն կայ անոնց շրթունքներուն տակ:

5 Պահէ՛ զիս, Տէ՛ր, մեղաւորի ձեռքէն եւ փրկէ՛ չար մարդէն. անոնք խորհեցան խափանել իմ ընթացքս:

6 Ամբարտաւանները որոգայթ լարեցին ինծի, լարեր քաշեցին իբրեւ թակարդ՝ ոտքերուս, եւ շաւիղներուս շուրջ սայթաքումի առիթներ դրին:

7 Բայց ես ըսի. Դո՛ւն ես իմ Տէր Աստուածս, լսէ՛ իմ աղօթքիս ձայնը, Տէ՛ր:

8 Տէ՛ր, Տէ՛ր, դո՛ւն ես իմ փրկութեանս զօրավիզը, եւ գլխուս հովանին՝ պատերազմի ժամանակ:

9 Տէ՛ր, մի՛ մատներ զիս մեղաւորներու ցանկութեան, որ իմ մասիս գէշ կը խորհին, զիս գետին մի՛ գարներ, որպէսզի անոնք չբարձրանան, եւ իրենց ծրագիրները չիրագործուին:

10 Իրենց աշխատանքին նպատակը, իրենց շրթունքներուն վաստակը՝ թող ծածկէ զիրենք:

11 Հրաշէկ կայծակներ նետէ անոնց վրայ եւ կործանէ զանոնք, որ չկարենան ողջ մնալ տառապանքներէն:

12 Չարախօս մարդը թող չյաջողի աշխարհի վրայ․
մեղաւոր մարդուն գործած չարիքները
կորուստի թող մատնեն զայն:

13 Ես գիտցայ թէ դո՛ւն, Տէ՛ր, ձեռք կ'առնես
խեղճին դատաստանը եւ տնանկին իրաւունքը:

14 Արդարները գոհութիւն պիտի մատուցանեն անունիդ,
եւ սուրբերը պիտի բնակին քու ներկայութեանդ:

ՍԱՂՄՈՍ 140/141

Աղօթք՝ չարէն պաշպանուելու համար

Սաղմոս Դաւիթի:

1 Տէ՛ր, ես քե՛զ կը կանչեմ, լսէ՛ զիս,
մի՛տ դիր աղօթքիս ձայնին երբ կոչս կ'ուղղեմ քեզի:

2 Աղօթքս՝ խունկի նման պիտի բարձրանայ առջեւդ,
Տէ՛ր, եւ ձեռքերս պիտի բարձրանան՝ իբր երեկոյի պատարագ:

3 Պահապան մը դիր, Տէ՛ր, իմ բերանիս,
եւ ամուր դուռ մը՝ չրթունքներուս,

2- Ակնարկութիւնն է խունկին որ կ'ընկերանար երեկոյեան ընծային եւ աղօթքին (Ելք 30,8․ Ղեւ 2,2):

3- Սաղմոսերգուն կը հայցէ Աստուծմէ որ գերծ պահէ զինք չարին հմայէն եւ մանաւանդ լեզուի մեղէն (հ․ 4), որպէս զի ի դերեւ հանէ ամբարիշտներուն խայծերը զինք հեռացնելու հաւատարմութենէն Աստուծոյ հանդէպ (հ․ 5):

4 որ սիրտս չմոլորի չար խօսքերէն, եւ պատճառ չփնտռեմ՝
այն մարդոց նման որ անօրէնութիւն կը գործեն,
եւ գործակից չըլլամ անոնց ծրագիրներուն:

5 Թող արդարը խրատէ զիս ողորմութեամբ,
թող դէմ առ դէմ յանդիմանէ զիս,
բայց մեղաւորին իւրը թող չօծէ իմ գլուխս,
եւ աղօթքս չըլլայ անոր կամքին համաձայն:

6 Անոնց դատաւորները գլորեցան ժայռէն վար․
թող լսե՛ն իմ խօսքերս, քա՛ղցր են անոնք:

7 Ինչպէս թանձր հողը որ կը սփռուի երկրի վրայ՝
անոնց ոսկրները եւս պիտի ցրուին դժոխքին մօտ:

8 Քեզի՛ յառած եմ աչքերս, Տէ՛ր, Տէ՛ր իմ,
ես քեզի՛ յուսացի, հոգիս մի՛ առներ ինծմէ:

9 Պահէ՛ զիս այն որոգայթէն որ գաղտնօրէն դրուած է դէմս,
եւ սայթաքումներէն անոնց՝ որ անօրէնութիւն կը գործեն:

10 Անոր ցանցերուն մէ՛ջ թող իյնան մեղաւորները,
մինչ ես մինակ եմ՝ մինչեւ անցնիմ:

6- Սաղմոսին խօսքերը կը հնչեն իբրեւ հեռաւոր նախարանը Առաք-
եալին խօսքին․ «Թոշակը մեղքին մահն է» (Հոով 6,23):

10- Սաղմոսերգուն կը պահպանէ իր հաւատարմութիւնը Տիրոջ հանդէպ, կեանքէն ետք անցնելու համար անպատում եւ անվախնան երջան-
կութեան:

ՍԱՂՄՈՍ 141/142

Աղօթք՝ հալածանքի ատեն

1 Դաւիթի իմաստութեան: Աղօթք՝ այն ժամանակ ուր ան քարայրին մէջ էր:

2 Ես իմ ձայնովս Տիրո՛ջ գոչեցի,
ձայնովս Տիրո՛ջ աղաչեցի:

3 Ես Տիրոջ առջեւ պիտի սփռեմ աղօթքս,
անոր առջեւ պիտի պատմեմ նեղութիւններս:

4 Երբ հոգիս կը նուաղէր իմ մէջս,
դուն ճանչցար, Տէ՛ր, իմ շաւիղներս.
այն ճամբուն վրայ ուրկէ ես կ'երթայի,
որոգայթ մը գաղտնի պահուած էր ինծմէ:

5 Աջ կողմս կը նայէի, եւ կը տեսնէի թէ՛
ո՛չ մէկը կար որ ճանչնար զիս.
փախչելու կարելիութիւնը կորսնցուցի,
եւ մէ՛կը չկար որ իմ հոգիովս մտահոգուէր:

6 Քեզի՛ աղաղակեցի, Տէ՛ր, եւ ըսի.
Դո՛ւն ես իմ յոյսս ողջերու աշխարհին մէջ:

7 Աղօթքի՛ս նայէ, Տէ՛ր,
որովհետեւ չա՛տ ընկճուած եմ ես,

1–Սաղմոսը անակութեան աղաղակն է արդարին, որ կը գտնուի, հա-
կառակորդներու սաղբանով, մեղ կացութեան մէջ:

փրկէ՛ զիս հալածիչներու ձեռքէն,
որովհետեւ անոնք ինծմէ աւելի զօրաւոր են:

8 Տէ՛ր, հանէ՛ բանտէն իմ հոգիս,
ես գոհութիւն պիտի մատուցանեմ քու անունիդ.
քու արդարներդ ինծի՛ կը սպասեն՝
մինչեւ որ դուն հատուցանես ինծի:

ՍԱՂՄՈՍ 142/143

Խոնարհիմ աղաչանքը

Սաղմոս Դաւիթի: Այն ժամանակ երբ իր որդին՝ Աբիսողոմ, կը
հալածէր զինքը:

1 Տէ՛ր, լսէ՛ աղօթքս,
սիրո՛վ մտիկ ըրէ խնդրանքներուս.
քու արդարութեամբդ՝ լսէ՛ զիս:

2 Եւ դատի մի՛ մտներ քու ծառայիդ հետ,
որովհետեւ ո՛չ մի մարմնեղէն արարած
կրնայ արդարանալ քու առջեւդ:

3 Թշնամին հալածեց հոգիս,
եւ մինչեւ երկիր խոնարհեցուց իմ կեանքս.
խաւարի մէջ նստեցուց զիս,
ինչպէս մէկը՝ որ յաւիտենապէս մեռած է:

4 Հոգիս յուսալքուեցաւ մէջս,
եւ սիրտս խռովքի մատնուեցաւ ներսս:

5 Յիշեցի երբեմնի հին օրերը՝
մտաբերեցի քու անհամար գործերդ,
եւ քու ձեռքերուդ գործերուն մասին խորհեցայ:

6 Քեզի՛ բարձրացուցի իմ ձեռքերս՝
ինչպէս հողը՝ այնպէս ծարաւի է քեզի իմ հոգիս:

7 Փռւթո՛վ լսէ զիս, Տէ՛ր,
որովհետեւ հոգիս նուաղեցաւ իմ մէջս՝
երեսդ մի՛ դարձներ ինձմէ՛, ապա թէ՛ ոչ՝
ես պիտի նմանիմ անոնց՝ որ գերեզման կ'իջնեն:

8 Առաւօտէն սկսեալ՝ ողորմութիւնդ լսելի ըրէ ինձի,
որովհետեւ քու վրադ դրած եմ, Տէ՛ր, իմ յոյսս:
Յո՛յց տուր ինձի այն ճամբան ուրկէ՛ պէտք է երթամ,
որովհետեւ հոգիս դէպի քե՛զ բարձրացուցի:

9 Փրկէ՛ զիս, Տէ՛ր, իմ թշնամիներէս,
որովհետեւ քե՛զ ըրած եմ իմ ապաւէնս:

10 Սորվեցո՛ւր ինձի քու կամքդ կատարել,
որովհետեւ դո՛ւն ես իմ Աստուածս:
Քու սուրբ եւ բարի Հոգիդ՝
թող առաջնորդէ ինձի դէպի երկիրն ուղիղ:

10- «Հոգիդ բարի». Սուրբ Հայրերը կը մեկնաբանեն անցքը իբրեւ սկնարկութիւն մը Սուրբ Հոգիին:

11- Յստակ արտայայտութիւնն է փրկութեան իբրեւ ճիշդ պարգեւի՝ տրուած մարդասեր եւ բարի Աստուծոյ շնորհով (Հո 3,21- 4,8):

11 Քու անունի՛դ համար, Տէ՛ր,
ըրէ՛ որ ես ապրիմ քու արդարութեամբդ,
եւ հանէ՛ նեղութենէն իմ հոգիս:

12 Ողորմութեամբդ պիտի ոչնչացնես թշնամիներս,
եւ կորուստի պիտի մատնես բոլոր անոնք՝ որ կը նեղեն զիս,
որովհետեւ ես քու ծառա՛դ եմ:

ՍԱՂՄՈՍ 143/144

Աղօթք՝ յաղթութեան ասմար

Սաղմոս Դաւիթի: Գողիադին համար:

1 Օրհնեա՛լ ըլլայ Տէր Աստուածս,
որ ձեռքս մարզեց պատերազմի
եւ մատներս՝ ճակատամարտի համար:

2 Ողորմութիւնս եւ ապաւէնս, օգնականս եւ փրկիչս՝
ապաւէնս է ան եւ ես անո՛ր վրայ դրած եմ իմ յոյսս՝
ա՛ն է որ ժողովուրդները կը հնազանդեցնէ ինձի:

3 Տէր, ո՞վ է մարդը՝ որ դուն ինքզինքդ յայտնես անոր,
կամ մարդու որդին՝ որ ա՛յլքան արժէք տաս անոր:

4 Մարդը նման է հովին,
եւ անոր օրերը ստուերի պէս կ'անցնին:

5 Տէ՛ր, ըրէ՛ որ հակի երկինքը, եւ վար իջիր,
լեռներուն մօտեցիր՝ որ ծուխ արձակեն:

6 Փայլակներդ շողացուր եւ խռովութեան մատնէ զանոնք, նետերդ արձակէ եւ ցրուէ զանոնք:

7 Կարկառէ՛ ձեռքդ բարձունքէն, փրկէ՛ զիս յորդառատ ջուրերէն, եւ օտարներու որդիներուն ձեռքէն:

8 որոնք իրենց բերնով սնոտի բաներ խօսեցան, եւ որոնց աջը մեղքի՛ աջ է:

9 Աստուած՝ նոր օրհնութիւններով պիտի օրհնեմ քեզ, տասնադի տաւրիով սաղմոսներ պիտի երգեմ քեզի,

10 դուն՝ որ փրկուեցիս կը շնորհես թագաւորներուն, եւ կը փրկես Դաւիթ ծառադ մահաբեր սուրէն:

11 Փրկէ՛ զիս եւ ազատէ՛ օտարներու որդիներու ձեռքէն, որոնք իրենց բերնով սնոտի բաներ կը խօսին եւ իրենց աջը՝ մեղքի՛ աջ է:

12 Մեր մանչերը, իրենց մանկութենէն ի վեր, հաստատուն են՝ նորատունկ բոյսերու նման, եւ դուստրները՝ զարդարուած եւ պաճուճուած, տաճարի նման:

13 Մեր շտեմարանները լի՛ են, կը յորդին՝ մէկը միւսէն աւելի՝ ոչխարները բազմածին են, եւ օր ըստ օրէ կը բազմանան:

14 Մեր նախիրները պարարտ են, անոնց ցանկապատերը խրամատներով չեն բաժնուած, եւ մեր հրապարակներուն վրայ աղաղակ չկայ:

15 Արդ, երանի՛ պիտի տամ այն ժողովուրդին՝ որ այս բաները ունի, բայց երանի մանաւանդ ա՛յն ժողովուրդին՝ որու Տէ՛րն է իր Աստուածը:

ՍԱՂՄՈՍ 144/145-2

Փառաբանութիւն Աստուծոյ

1 Օրհնաբանութեան սաղմոս: Դաւիթէն:

Ալէֆ

1 Կը փառաբանե՛մ քեզ, Աստուած իմ, թագաւոր իմ. կ'օրհնե՛մ անունդ յաւիտեան, եւ յաւիտեա՛նս յաւիտենից:

Բէթ

2 Ես օրն ի բուն պիտի օրհնեմ քեզ, եւ անունդ պիտի գովաբանեմ յաւիտեան, եւ յաւիտեա՛նս յաւիտենից:

Գամէլ

3 Մե՛ծ է Տէրը, եւ գերազանցօրէն օրհնեալ, եւ սահման չունի անոր մեծութիւնը:

15- Երկրաւոր բարօրութիւնը պարգեւն է Տիրոջ եւ կը հիմնուի Ուխտի վրայ գոր Աստուած կնիւած էր նահապետներուն հետ (Մննդ 15, 1-6. 22, 16-19): Խոստումը ունի մեսիական երանգ (Ես 9,2 . 25,6):

1- Հոս, ցոյց կը տրուի մարդուն՝ ցանցնալ զԱստուած բնութեան երեւոյթներուն մէջ եւ հրաւիրել տիեզերքը երկրպագութեան եւ գովաբանութեան:

Դալէք

4 Սերունդէ սերունդ թող գովեն քեզ քու գործերդ,
եւ թող պատմեն քու հզօր արարքներդ:

Հէ

5 Թող հռչակեն փառքիդ սրբութեան մեծ վայելչութիւնը,
եւ թող պատմեն սքանչելի գործերդ:

Վաւ

6 Թող նկարագրեն քու ահիդ հզօրութիւնը,
եւ թող հռչակեն քու մեծութիւնդ:

Զէ

7 Թող յիշատակեն քու անչափ քաղցրութիւնդ,
եւ թող ցնծան արդարութեամբդ:

Խէք

8 Գթած եւ ողորմած է Տէրը,
երկայնամիտ եւ բազումողորմ:

Տէք

9 Քաղցր է Տէրը ամէնուն հանդէպ,
եւ անոր գթութիւնը՝ իր բոլոր արարածներուն վրայ է:

8– Չբնաղ համարին մէջ, սաղմոսերգուն կը բազմացնէ բառերը որոնք կը յատկանշեն Տիրոջ բարութիւնը: Աստուած, երբ կը ստեղծէ, կ'արդարացնէ, կը ներէ, կը վարձատրէ կամ կը պատժէ, կը գործէ իբր Հայր եւ ասով իսկ հիմնովին կը տարբերի իմաստուններուն Աստուծմէ:

Յօղ

10 Քու բոլո՛ր գործերդ, Տէ՛ր, թող փառաբանեն քեզ,
եւ քու սուրբերդ թող օրհնեն քեզ:

Քաֆ

11 Թող հռչակեն անոնք քու արքայական փառքդ,
եւ թող պատմեն քու հրաշալի գործերդ:

Լամէղ

12 Որպէսզի մարդոց որդիները ճանչնան քու զօրութիւնդ,
եւ քու արքայական փառքիդ մե՛ծ վայելչութիւնը:

Մէմ

13 Թող արքայական իշխանութիւնդ տեւէ յաւիտենապէս,
եւ տէրութիւնդ տարածուի սերունդէ սերունդ:

Նուն

14 Տէրը հաւատարիմ է իր բոլո՛ր խօսքերուն մէջ,
եւ արդար է իր բոլո՛ր գործերուն մէջ:

Սամէֆ

15 Տէրը կը հաստատէ բոլո՛ր անոնք որ սայթաքած էին,
եւ կը կանգնէ բոլո՛ր անոնք որ գլորած էին:

11– Զի բաւեր նանաչումն Աստուծոյ սփանչելիքներուն՝ հաւատաց-
եալներուն կողմէ, այլ հարկ է որ ասոնք աւետեմ զանոնք որպէս զի մար-
դու որդիները նանչնան նոյն սփանչելիքները: Աստուծոյ ժողովուրդը
ունի դերը վկայող առաքելութեան:

Այլիմ

16 Ամէնուն աչքերը վրա՛դ սեւեռած են յոյսով,
եւ դուն ուտելիք կու տաս անոնց՝ պէտք եղած ժամուն.
դո՛ւն կու տաս անոնց՝ եւ անոնք կը կերակրուին:

Փէ

17 Դուն կը բանաս ձեռքերդ,
եւ կը լիացնես զանոնք քու քաղցր կամքովդ:

Զադէ

18 Տէրը արդար է իր բոլո՛ր ուղիներուն մէջ,
եւ սուրբ է ան՝ իր բոլո՛ր գործերուն մէջ:

Քոֆ

19 Մօ՛տ է Տէրը բոլո՛ր անոնց՝ որ զինքը կը կանչեն,
բոլո՛ր անոնց՝ որ անկեղծութեամբ կը դիմեն իրեն:

Ռէշ

20 Տէրը կը կատարէ իր երկիւղածներուն կամքը,
կը լսէ անոնց աղօթքը եւ կեանք կու տայ անոնց:

Շիմ

21 Տէրը կը պահպանէ բոլոր անոնք՝ որ զինքը կը սիրեն,
եւ Տէրը կը բնաջնջէ բոլո՛ր մեղաւորները:

18- Գեղեցիկ արտայայտութիւն մըն ալ այս սաղմոսին մէջ. Աստուած մօտ է իր բանաւոր արարածին՝ մարդուն, գոր կարգած է փոխանորդ արարչութեան վրայ: Պայմանը որպէսզի աստուածային բարութիւնը անցնի գործի, մարդուն կանչին հաւատքը եւ վստահութիւնն են:

Թաւ

22 Թող բերանս Տիրոջ օրհնութիւնները հիւսէ,
թող ամէն կենդանի անոր սուրբ անունը օրհնէ,
յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից:

ՍԱՂՄՈՍ 145/146

Աղերս՝ Աստուծոյ օգնութեան

1 Ալելուիա: Անգէի եւ Զաբաբիայի:

2 Տէ՛րը օրհնէ, հոգի՛ս:
Տէ՛րը պիտի օրհնեմ կեանքիս ընթացքին:
Սաղմոս պիտի երգեմ իմ Աստուծոյս՝
որքան ատեն որ գոյութիւն ունիմ:

3 Բան մի՛ յուսաք մարդոց որդիներէն՝ լիխաններէն,
որովհետեւ փրկութիւն չկայ անոնցմէ:

4 Հազիւ հոգին ելլէ անոնցմէ՝ անոնք հող կը դառնան,
եւ նոյն օրը՝ անոնց բոլոր ծրագիրները կը կորսուին:

5 Երանի՛ անոր՝ որուն օգնականն է Յակոբի Տէր Աստուածը,
եւ որ իր յոյսը դրած է Տէ՛ր Աստուծոյ վրայ,

6 որ ստեղծած է երկինքն ու երկիրը,
ծովն ու ամէ՛ն ինչ որ անոնց մէջ կը գտնուի,
եւ որ յաւիտեան հաւատարիմ է ճշմարտութեան.

1- Կը վերաբարէ նախորդ սաղմոսին գաղափարները. վստահութիւն միայն Տիրոջ վրայ (հ. 5), Աստուած ամենակալ Արարիչ է (հ. 6), օգնական եւ նախախնամող մանաւանդ տկարներուն (7-9):

7 ան՝ գրկուածնեբուն իրենց իրաւունքը կու տայ,
եւ հացը՝ անօթինեբուն.

ան՝ Տէրն է որ կ'արձակէ գերիները:

8 Տէրը կը բանայ կոյրեբու աչքերը,

եւ Տէրը կը կանգնէ գլորեալները.

Տէրը կը սիրէ արդարները:

9 Տէրը կը պաշտպանէ պանդուխտները,

Տէրը սիրով կ'ընդունի որբերն ու այրիները,

եւ կորուստի կը մատնէ ամբարիշտներուն ծրագիրները:

10 Թող յաւիտեան թագաւորէ Տէրը, քո՛ւ Աստուածդ,

ո՛վ Սիրոն, սերունդէ՛ սերունդ: Ալէ՛լուիա:

ՍԱՂՄՈՍ 146/147

Աստուած ամենագոր է

Ալէլուիա: Անգէի եւ Զաբարիայի:

1 Օրհնեցէ՛ք Տէ՛րը,

որովհետեւ հաճոյ են սաղմոսները մեր Աստուծոյն.

քա՛ղցր պիտի ըլլայ անոր օրհնութիւնը:

8–Ն. 8–9 կը թուէ գրկեալները՝ հաւատարիմները Տիրոջ եւ անոր ուխտին, որ յատուկ կերպով կը վայելեն Աստուծոյ օգնութիւնը: Մեր ալ գովաբանութիւնը պարտի բարձրանալ դէպի Աստուած որ Տէրն է երկինքի եւ երկրի (Կող 1,15–18): Օրինաբանութիւն Հօր՝ որ Քրիստոսով գործեց սքանչելիքներ. գապեց բնութեան ոյժերը, դարմանեց բնութեան խանգարումները մարդուն

2 Տէրը կը շինէ Երուսաղէմը,
եւ մէկտեղ կը հաւաքէ Իսրայէլի ցրուած զաւակները:

3 Ան կը բժշկէ կոտորած սրտերը,

եւ կը պատէ անոնց բոլոր վէրքերը:

4 Ան կը համրէ աստղերուն բազմութիւնը,

եւ իրենց անուններով կը կանչէ զանոնք բոլորը:

5 Մե՛ծ է մեր Տէրը, մե՛ծ է անոր զօրութիւնը,

եւ սահման չունի անոր իմաստութիւնը:

6 Տէրը իր պաշտպանութեան տակ կ'առնէ հեզերը,

եւ մինչեւ գետին կը խոնարհեցնէ ամբարտաւանները:

7 Գոհաբանեցէ՛ք եւ օրհնեցէ՛ք Տէրը,

զայն օրհնելով՝ սաղմո՛ս ըսէ՛ք անոր:

8 Ան՝ ամպերով զգեստաւորեց երկինքը.

իր անձրեւը պատրաստեց երկրին համար.

խոտերը բուսցուց լեռներուն վրայ,

եւ կանանչութիւնը՝ մարդոց գործածութեան համար:

9 Ան է որ կերակուր կը հայթայթէ անասուններուն

եւ ագռաւի ձագերուն՝ որ դէպի իրեն կ'աղաղակեն:

10 Ո՛չ ձիերու ոյժէն կը տպաւորուի Տէրը,

ոչ՝ ալ հսկային մկաններէն կ'ախորժի ան:

վրայ, կատարեց բացումը մարդկային բնութեան ամբողջական վերանորոգումին, կեանքի կոչելով մեռեալները եւ տուա մեզի յոյսը վերստին կենդանութեան եւ անվայսեան երջանկութեան՝ հոն ուր ինքն է, Հօր աջին:

11 Բայց Տէրը իր հաճոյքը կը գտնէ իր երկիւղածներուն մօտ,
եւ անոնց մօտ՝ որ իր ողորմութեան վրայ
կը դնեն իրենց յոյսը:

ՍԱՂՄՈՍ 147 (շարունակութիւն)

Շնորհակալութիւն Աստուծոյ

Ալեյուիա: Անգէի եւ Զաֆարիայի:

12 Գովաբանէ՛ Տէրը, Երուսաղէ՛մ,
եւ օրհնէ՛ քու Աստուածդ, Սիոն՝:

13 Որովհետեւ ան զօրացուց նիգերը քու դռներուդ,
եւ օրհնեց ծոցիդ մէջ եղող որդիներդ:

14 Ան խաղաղութիւն հաստատեց սահմաններուդ վրայ,
եւ ցորենի առատութեամբ լիացուց քեզ:

15 Ան իր խօսքը կ'առաքէ երկիր,
եւ անոր պատգամները արագ կ'ընթանան:

16 Ան կը սփռէ ձիւնը բուրդի նման,
եւ մշուշը կը ցրուէ փոշիի պէս:

15– Աստուծոյ Խօսքը պատգամաբերն է անոր կամփին: Սաղմոսին անցքը կը բովանդակէ աստուածաբանութիւնը Խօսքին որ կը ներկայաւնայ իբր անձնաւորուած (Առակ 1,20–33. Իմաստ 7,22–30): Խօսքին աստուածաբանութիւնը կ'աւետէ Երրորդութեան Վարդապետութիւնը (Յովհ 1,1–18):

17 Ան սառուցը կը ցանէ պատառներու նման.
ո՞վ կ'ընայ դիմանալ անոր ցուրտին:

18 Ան իր խօսքը կը զրկէ եւ կը հալեցնէ զանոնք,
հովերը կը փչեն, եւ ջուրերը կը հոսին:

19 Ան իր խօսքը յայտնեց Յակոբին,
իրաւունքն ու արդարութիւնը՝ Իսրայէլի:

20 Տէրը այսպէս չըրաւ բոլոր ժողովուրդներուն,
եւ իր դատաստանը չյայտնեց անոնց:

ՍԱՂՄՈՍ 148

Աստուծոյ արարչութեան գովքը

Ալեյուիա: Անգէէն եւ Զաֆարիայէն:

1 Օրհնեցէ՛ք Տէրը երկինքէն,
օրհնեցէ՛ք զայն բարձունքներէն:

2 Օրհնեցէ՛ք զայն, անոր բոլոր հրեշտակները.
օրհնեցէ՛ք զայն, անոր բոլոր բանակները:

1– Սաղմոսը հրաւերն է ամբողջ արարածներուն գովաբանելու Արարիչը: Ընծայել Աստուծոյ տիեզերական օրհնաբանութիւնը, այս է նպատակը սաղմոսերգուին: Նախ կոչ կ'ընէ երկնային արարածներուն (հ. 1–4), ապա երկրի արարածներուն (հ. 7–12): Կը սկսի հրեշտակներէն (հ. 2), կ'անցնի աստղերուն (հ. 3) եւ տիեզերքի տարրերուն (հ. 4 եւ 3): Երկրորդ հրաւերին մէջ, կոչը նախ ուղղուած է ֆիզիքական աշխարհին. կը սկսի անդունդներէն, կ'անցնի լեռներուն, բուսական աշխարհին եւ վերջապէս մարդուն (հ. 11–12):

- 3 Օրհնեցէ՛ք զայն, արեգա՛կ եւ լուսին,
օրհնեցէ՛ք զայն, բոլո՛ր աստղերն ու լոյսը:
- 4 Օրհնեցէ՛ք զայն, երկինքներո՛ւ երկինքներ,
եւ ջուրեր՝ որ երկինքի վերեւ կը գտնուիք:
- 5 Օրհնեցէ՛ք Տիրոջ անունը,
որովհետեւ ան ըսաւ՝ եւ եղան,
հրամայեց՝ եւ հաստատուեցան:
- 6 Կարգեց զանոնք՝ յաւիտեանս յաւիտենից,
սահման դրաւ անոնց եւ անդին պիտի չանցնին անոնք:
- 7 Օրհնեցէ՛ք Տէրը, վիշապնե՛ր, երկրիս վրայէն,
եւ բոլո՛ր անդունդները:
- 8 Հուր եւ կարկուտ, ձիւն եւ սառ, հով եւ մրրիկ,
որ անոր հրամանները կը կատարէք:
- 9 Բոլոր լեռներն ու բլուրները,
պտղաբեր ծառերն ու մայրիները բոլոր:
- 10 զագաններն ու անասունները բոլոր,
սողուններն ու թեւաւոր թռչունները բոլոր:
- 11 երկիրներու թագաւորներն ու անոնց բանակները,
իշխաններն ու երկրի դատաւորները բոլոր:
- 12 երիտասարդներ ու կուսաններ,
ծերեր ու մանուկներ,
օրհնեցէ՛ք Տիրոջ անունը,
որովհետեւ անոր անո՛ւնն է միայն վսեմ:

- 13 փառաբանութի՛ւն անոր՝ երկնքի մէջ եւ երկրի վրայ·
որովհետեւ Տէրը բարձրացուց իր ժողովուրդին ճակատը:
- 14 օրհնութիւն՝ անոր բոլո՛ր սուրբերէն, Իսրայէլի՛ որդիներէն,
եւ ա՛յն ժողովուրդէն որ Տիրոջ մօտ է:

ՍԱՂՄՈՍ 149

Յաղթանակի երգ

Ալիւլալիա:

- 1 Նո՛ր օրհնութեամբ օրհնեցէք Տէրը·
օրհնութիւն անոր՝ սուրբերու հաւաքոյթներուն մէջ:
- 2 Իսրայէլը ուրախ եղաւ իր Արարիչով,
Միոնի որդիները թող ցնծա՛ն իրենց թագաւորով:
- 3 Թող անոր անունը փառաբանեն օրհնութեամբ,
թող սաղմոս ըսեն անոր՝
սաղմոսերգութեամբ եւ օրհնութեան երգերով:
- 4 Տէրը իր հաճութիւնը ցոյց կու տայ իր սուրբ ժողովուրդին,
եւ փրկելով՝ կը փառաւորէ հեզերը:
- 5 Սուրբերը թող պարծենան իրենց փառքով,
իրենց հանգիստին մէջ թող ցնծան անոնք:

1– Օրհնաբանութիւնը կը կատարուի ծիսական պաշտամունքի ժամանակ, ինչպէս ցոյց կու տայ ժողովուրդին եւ երգիչներու եւ նուագողներու ներկայութիւնը:

6 եւ իրենց բերաններով թող փառաւորեն զԱստուած․
անոնց ձեռքերուն մէջ երկսայրի սուրբեր կան,

7 հասուցում առնելու համար հեթանոսներէն,
ի յանդիմանութիւն բոլոր ժողովուրդներուն․

8 որպէսզի կապանքներով կապեն անոնց թագաւորները,
եւ երկաթէ ձեռնակապերով՝ անոնց զօրավարները․

9 որպէսզի անոնց վրայ գործադրեն զրուած դատավճիւրը․
ա՛յս է փառքը զոր անոր սուրբերը պիտի ունենան:

ՍԱՂՄՈՍ 150

Գովարանական երգ

Ալեյուիա:

1 Օրհնեցէ՛ք զԱստուած իր սրբավայրին մէջ,
իւր հօօր հաստատութեա՛ն մէջ օրհնեցէ՛ք զայն:

6-«Երկսայրի սուրբ», ըստ ոմանց, Օրէնքն է տրուած մասամբ գրաւոր եւ մասամբ բերանացի ականդութեամբ: Ըստ ուրիշներու, երկսայրի սուրբ Աստուծոյ գովարանութիւնն է, խաղաղարար գեղք եւ միանգամայն ահարկու՝ հաւատացեալներու ձեռքերուն մէջ, տարածելու համար Աստուծոյ թագաւորութիւնը:

1- Վերջին սաղմոսը ընդլայնուած փառատրութիւնն է որ կը փակէ արեւմտաւոր վերջին հաւաքածոն եւ ամբողջ սաղմոսարանը: Կը բովանդակէ տասը յորդորներ օրհնաբանութեան: Առաջին ինը յորդորները ընդհանուր են, իսկ տասներորդը ուղղուած է կենդանի ամէն շունչի,

2 Օրհնեցէ՛ք զայն իւր զօրութեան մէջ,
իւր անչափ մեծութեա՛ն մէջ օրհնեցէ՛ք զայն:

3 Օրհնեցէ՛ք զայն օրհնութեան երգերով,
սաղմոսներով եւ օրհնաբանութեա՛մբ օրհնեցէ՛ք զայն:

4 Օրհնեցէ՛ք զայն ցնծութեամբ,
գովեցէ՛ք զայն՝ ուրախութեամբ:

5 Օրհնեցէ՛ք զայն քա՛ղցր բառերով,
լսելի՛ բարբառով օրհնեցէ՛ք զայն․
գոհաբանակա՛ն ձայնով օրհնեցէ՛ք զայն:

6 Դուք բոլո՛րդ, հոգեղէ՛ն արարածներ,
օրհնեցէ՛ք Տէրը:

այսինքն յատուկ կերպով բանաւոր մարդուն (Հ. 6): Օրհնաբանութեան հրաւերը նախ տրուած է տանարին մէջ համախմբուած հաւատացեալներուն եւ ապա, երկնային զօրութիւններուն: Օրհնաբանութիւնը կը սկսի երկրէն, կ'արագանգէ երկինքի մէջ եւ կը ծաւալի ամբողջ տիեզերքի վրայ, ընկերակցութեամբ հնչող նուագարաններու:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՄԵՃԱՑՈՒՄՅԷ

Ղկ 46-55

46 Մարիամ ըսաւ:

Անձս կը փառաւորէ Տէրը,

47 *եւ Հոգիս կը ցնծայ իմ փրկիչ Աստուծովս.*

48 *Որովհետեւ իր աղախինին նուաստութեան նայեցաւ,
եւ ահա, ասկէ ետք բոլոր ազգերը երանի՛ պիտի տան ինծի.*

49 *որովհետեւ Հզօրը մեծամեծ բաներ ըրաւ ինծի,
եւ սուրբ է անոր անունը:*

50 *Անոր ողորմութիւնը՝ իր երկիւղածներուն վրայ է,
սերունդէ սերունդ:*

51 *Հրաշալի բաներ ըրաւ ան իր բազուկով,
ամբարտաւանները՝ իրենց սրտին խորհուրդովը ցրուեց:*

52 Հզօրներն իրենց դահէն տապալեց,
եւ խոնարհները բարձրացուց:

53 Անօթիները բարիքներով լիացուց
եւ հարուստները ձեռնունայն արձակեց:

54 Պաշտպան կանգնեցաւ իր Իսրայէլ ծառային՝
յիշելով իր ողորմութիւնը,

55 ինչպէս խօսած էր մեր հայրերուն՝
Աբրահամին եւ անոր սերունդին, յաւիտեան:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԶԱԲԱՐԻԱՅԻ

Ղկ 1, 68-79

68 Օրհնեա՛լ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը,
որ այցելեց մեզի եւ փրկեց իր ժողովուրդը,

69 եւ փրկութեան զօրութիւնը յարոյց մեզի,
իր ծառային՝ Դաւիթի տունէն:

70 ինչպէս ատենօք,
իր սուրբ մարգարէներուն բերնով խոստացած էր՝

71 թէ պիտի ազատէ մեզ մեր թշնամիներէն
ու բոլոր մեզ ատողներու ձեռքէն:

72 ողորմութիւն պիտի ընէ մեր հայրերուն,
յիշելով իր սուրբ ուխտը,

73 այն երդումով՝
զոր ըրած էր մեր հօր՝ Աբրահամին,

74 որով ազատած էր մեզ
մեր թշնամիներուն ձեռքէն,

75 որպէսզի ծառայենք իրեն մեր կեանքին բոլոր օրերուն
առանց երկիւղի, սրբութեամբ եւ արդարութեամբ:

76 Իսկ դուն, մանո՛ւկ,
Բարձրեային մարգարէն պիտի կոչուիս,
որովհետեւ Տիրոջ առջեւէն պիտի երթաս՝
պատրաստելու համար անոր ճամբաները:

77 Ժողովուրդին տալով փրկութեան գիտութիւնը,
իրենց մեղքերու թողութեան համար,

78 շնորհիւ մեր Աստուծոյ գթառատ ողորմութեան,
որով արեգակը բարձունքէն այցելեց մեզի,

79 որպէսզի լուսաւորէ զանոնք՝
որ խաւարի ու մահուան ստուերներու մէջ կը նստէին,
եւ ուղղէ մեր ոտքերը՝ խաղաղութեան ճամբուն վրայ:

ՍԻՄԵՈՆ ԾԵՐՈՒՆԻԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Ղկ 2, 29-32

29 Ո՛վ Տէր, խաղաղութեամբ արձակէ՛ հիմա քու ծառադ,
քու խօսքիդ համաձայն:

30 որովհետեւ աչքերս տեսան քու փրկութիւնդ,

31 զոր պատրաստեցիր բոլոր ժողովուրդներուն առջեւ,

32 իբրեւ լոյս՝ լուսաւորելու համար հեթանոսները,
եւ փառք՝ Իսրայէլի, քու ժողովուրդիդ:

ՕՐՀՆԵԱԼ Է ԱՍՏՈՒԱԾ

Եփս 1, 3-10

- 3 Օրհնեալ է Աստուած եւ Հայրը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որ օրհնեց մեզ ամէն հոգեւոր օրհնութիւններով ի Քրիստոս՝ երկինքի մէջ:
- 4 Անոր միջոցաւ՝ ան այսպէս ընտրեց մեզ, աշխարհի ստեղծումէն առաջ, որ մենք ըլլանք սուրբ եւ անբիծ սիրոյ մէջ՝ Անոր առջեւ.
- 5 եւ կանխաւ սահմանեց մեզ իր որդեգրութեան, Յիսուս Քրիստոսով, ըստ իր կամքին հաճութեան,
- 6 ի գովութիւն անոր շնորհքի փառքին, զոր Ան պարգեւեց մեզի իր Սիրելիով:
- 7 Անոր շնորհիւ, մենք փրկութիւնը ստացանք իր արիւնով, եւ մեղքերու թողութիւնը, ըստ ճոխութեան անոր շնորհքին,
- 8 զոր ինքը տուաւ մեզի առատաձեռնութեամբ, ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ:
- 9 Յոյց տուաւ մեզի իր կամքին խորհուրդը, ըստ իր հաճութեան, զոր կանխաւ սահմանեց անոր մէջ,
- 10 որպէսզի իրականացնէ գայն, երբ հասնի լրումը ժամանակներուն.

բովանդակելով ամէն ինչ Քրիստոսով, երկնաւոր ու երկրաւոր արարածները միանգամայն:

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Կող 1, 12-20

- 12 Գոհութիւն պիտի մատուցանէք Հօր, որ կանչեց ձեզ սուրբերուն վիճակին մասնակցութեան, լոյսի մէջ:
- 13 Ան փրկեց մեզ խաւարին իշխանութենէն եւ փոխադրեց մեզ իր սիրելի Որդիին Արքայութեան մէջ,
- 14 որով մենք ստացանք փրկութիւնը՝ անոր արիւնով եւ մեղքերու թողութիւնը՝ անոր մարմինով:
- 15 Ի՛նքն է պատկերը անտեսանելի Աստուծոյ, անդրանիկը բոլոր արարածներուն.
- 16 որովհետեւ անով ստեղծուեցան ամէն արարածները, երկինքի մէջ եւ երկրի վրայ, տեսանելիներն ու անտեսանելիները, Աթոռները, Իշխանութիւնները, Տէրութիւնները եւ Զօրութիւնները. ամէն ինչ ստեղծուեցաւ Անով եւ Անոր համար:
- 17 Ան ամէն բանէ աւելի առաջ է, եւ ամէն ինչ անով գոյութիւն ունի:

18 Ի՛նքն է Գլուխը Մարմինին, Եկեղեցւոյ.
Ի՛նքն է Սկիզբը, անդրանիկը՝ բոլոր մեռեալներուն մէջ,
եւ հարկ է որ ի՛նքն ունենայ գլխաւորութիւնը.

19 որովհետեւ Անոր մէջ հաճեցաւ բնակիլ
աստուածութեան լրումը,

20 Անով հաշտեցնելով ամէն արարածները՝
կնքելով խաղաղութիւնը անոր խաչին արիւնով,
երկինքի մէջ եւ երկրի վրայ:

ԱՆ՝ ՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԵՐՊԱՐԱՆՔՆ ՈՒՆԵՐ

Փիլ 2, 6-11

6 Ինք, որ Աստուծոյ կերպարանք ունէր,
յափշտակութիւն չհամարեց հաւասար ըլլալ Աստուծոյ:

7 Բայց ինքզինքը ունայնացուց
ծառայի աստիճան առնելով,
մարդոց նման դառնալով
եւ մարդու տեսքով յայտնուելով:

8 Խոնարհեցուց ինքզինքը,
հնազանդ դառնալով մինչեւ մահ
եւ մինչեւ մահը՝ խաչին:

9 Ասոր համար Աստուած զայն աւելի բարձրացուց,
եւ շնորհեց անոր անուն մը՝
որ գերազանց է ամէն անունէ:

10 որովհետեւ Յիսուս Քրիստոսի անունին առջեւ,
ծունկի պիտի գայ ամէն էակ,
երկնաւոր թէ երկրաւոր
եւ երկրի խորերը բնակող:

11 Եւ ամէն լեզու պիտի հռչակէ՝
թէ Յիսուս Քրիստո՛սն է Տէրը՝
Հօր Աստուծոյ փառքին համար:

ԱՐԺԱՆԻ ԵՍ, ՏԵՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ

Յայտ 4, 11. 5, 9-12

11 Դուն, մեր Տէրն ու մեր Աստուածը,
արժանի ես ընդունելու փառքը, պատիւը եւ զօրութիւնը,
որովհետեւ դո՛ւն ստեղծեցիր տիեզերքը.
ան չկար, եւ եղաւ քու կամքովդ, եւ կը մնայ հաստատուն:

9 Դուն, Քրիստոս եւ Տէր մեր,
արժանի ես առնելու զիրքը եւ բանալու անոր կնիքները,
որովհետեւ դուն զոհուեցար
եւ քու արիւնովդ գնեցիր մեզ Աստուծոյ համար՝
բոլոր ազգերու, լեզուներու
եւ հեթանոս ժողովուրդներու ձեռքէն.

10 Մեր Աստուծոյն համար, Դուն ըրիր անոնցմով,
թագաւորներ եւ քահանաներ՝
որ թագաւորեն երկրի վրայ:

11 Ես տեսայ եւ լսեցի ձայնը հրեշտակներու հոյլին,
որ կը շրջապատէին աթոռը

եւ կենդանիներն ու Երէջները
եւ թիւով բիւր բիւրաւոր եւ հազար հազարաւոր էին
եւ կ'աղաղակէին բարձր ձայնով․

12 Արժանի է զենեալ Գառնուկը՝
ընդունելու զօրութիւնը,
իշխանութիւնը եւ պատիւը,
փառքը եւ գովաբանութիւնը:

ԱՍՏՈՒԱԾ ՏԷՐ ԵՒ ԹԱԳԱՒՈՐ

Յայտ 15, 3-4

3 Մեծ եւ սքանչելի են քու գործերդ,
Տէր Աստուած Ամենակալ․
արդար եւ ուղիղ են քու ճանապարհներդ,
Թագաւորը բոլո՛ր ազգերուն:

4 Ո՞վ պիտի չերկնչի քեզմէ, Տէ՛ր,
եւ պիտի չփառաւորէ քու սուրբ Անունդ,
որովհետեւ միայն դո՛ւն սուրբ ես,
եւ երկրպագութեան արժանի․
բոլոր ազգերը պիտի գան,
պիտի խոնարհին քու առջեւդ
երբ քու արդարութիւնդ յայտնուի:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԹԱԳԱՒՈՐԷ

Յայտ 11, 17-18 . 12, 10-12

17 Գոհութիւն կը մատուցանենք քեզի,
Տէր Աստուած Ամենակալ՝ Այն որ է եւ էր,

որ ձեռք առիր քու մեծ զօրութիւնդ
եւ հաստատեցիր քու թագաւորութիւնդ:

18 Ազգերը զայրացան, բայց հասաւ բարկութիւնդ
եւ ժամանակը մեռեալներուն՝ որ դատուին,
եւ տաս վարձատրութիւնը քու ծառաներուդ՝
մարգարէներուն եւ սուրբերուն,
եւ կործանես անոնք որ երկիրը կը կործանեն:

10 Ահաւասիկ յաղթանակը,
զօրութիւնը եւ թագաւորութիւնը մ'եր Աստուծոյն,
եւ իշխանութիւնը՝ անոր Օծեալին․
որովհետեւ դահալիթեցաւ մեր եղբայրներուն չարախօսը,
այն որ զիշեր եւ ցերեկ
կը չարախօսէր անոնց դէմ Աստուծոյ առջեւ:

11 Բայց անոնք յաղթեցին՝ Գառնուկին արիւնով
եւ անոր խօսքով՝ որուն վկայեցին,
որովհետեւ վիշապը արհամարհեցին ցմահ:

12 Ասոր համար, թող ուրախանայ երկինքը
եւ ամէն անոնք որ կը բնակին անոր մէջ:

ԳՈՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յայտ 19, 1-2 . 5-8

1 Ալէլուիա․ փրկութիւն, փառք, պատիւ
եւ զօրութիւն մ'եր Աստուծոյ.

2 որովհետեւ անոր դատաստանները
հաւատարիմ են եւ արդար․

5 Գովաբանեցէ՛ք մեր Աստուածը,
դուք ամէնքդ որ կը ծառայէք անոր,
եւ դուք, փոքրեր ու մեծեր,
որ անոր երկիրդն ունիք:

6 Թագաւորեց Տէրը,
մեր Ամենակալ Աստուածը. Ալէլուիա:

7 Ուրախանանք եւ ցնծանք,
փառք տանք Աստուծոյ.
ահաւաստիկ հարսանիքն է Գառնուկին,
պատրաստ է անոր հարսը.

8 անոր տուին որ հագնի սպիտակ,
մաքուր ու լուսափայլ բեհեզը.
եւ բեհեզը բարի գործերն են սուրբերուն:

9 Երանի՛ անոր որ հրաւիրուած է
Գառնուկին հարսանեկան ընթրիքին:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՕՐՀՆԵՍՅՈՒՔ ՉՏԵՐ

Ելից Գիրք 15, 1-21

1 Օրհնե՛նք Տէրը, որովհետեւ սքանչելի է անոր փառքը,
ան ծովուն մէջ զահալիժեց անոնց երկվարներն ու հեծեալները:

2 Տէ՛րն է զօրութիւնս եւ ապաւէնս,
ի՛նքն է փրկութիւնս:
Ի՛նքն է Աստուածս, եւ ես կը փառաւորեմ զայն,
իմ հօրս Աստուածն է ան, եւ ես կը բարբերեմ զայն:

3 Տէրը կը խորտակէ պատերազմները,
Տէ՛ր է անոր անունը:

4 Ան ծով զահալիժեց փարաւոնի կառքերն ու անոր բանակը,
անոր հեծեալներուն ընտրանին եւ գինեալները.
Կարմիր ծովուն խորը ընկղմեցան անոնք:

5 Անդունդները ծածկեցին զանոնք,
եւ անոնք քարերուն նման ծովու յատակը իջան:

- 6 Քու աջդ, Տէ՛ր, սքանչելի է իր զօրութեամբ,
քու աջդ, Տէ՛ր, կը խորտակէ թշնամիները:
- 7 Քու փառքիդ մեծութեամբ կը փշրես հակառակորդներդ,
քու բարկութիւնդ կը դրկես եւ ան՝ եղէգի նման կ'այրէ զանոնք:
- 8 Քու բարկութեանդ շունչէն ջուրերը բաժնուեցան,
պարիսպի նման սառեցան ջուրերը,
ալիքները սառեցան ծովուն մէջ:
- 9 Թշնամին ըսաւ. «Պիտի հալածե՛մ, պիտի հասնի՛մ անոնց,
պիտի հարուածե՛մ, եւ պիտի բաժնե՛մ աւարը,
եւ պիտի յագենա՛մ, սուրէ պիտի անցընեմ զանոնք
եւ պիտի իշխեմ անոնց վրայ»:
- 10 Բայց դուն՝ հողմդ դրկեցիր, եւ ծովը ծածկեց զանոնք,
ընկղմեցան անոնք եւ կապարի նման՝
յատակն իջան ահարկու ջուրերուն:
- 11 Աստուածներու մէջ, ո՞վ նման է քեզի, Տէ՛ր,
եւ կամ ո՞վ կրնայ նմանիլ քեզի,
դուն որ սքանչելի ես սրբութեամբդ,
ահարկու ես զօրութեամբդ, եւ հրաշալիքներ կը գործես:
- 12 Կը տարածես աջդ,
եւ երկիրը կը կլանէ զանոնք:
- 13 Բայց դուն՝ սիրովդ կ'առաջնորդես
քու փրկած ժողովուրդիդ,
քու զօրութեամբդ կ'առաջնորդես անոր
դէպի սրբութեանդ բնակավայրը:

- 14 Ժողովուրդները լսեցին եւ դողացին.
սարսափը պատեց Քանանի բնակիչները:
- 15 Այն ատեն տազնապեցան Եդովմի դատաւորները.
դողը բռնեց Մովաբի իշխանները,
հալեցան Քանանի բնակիչները:
- 16 Ահն ու սարսափը կ'իջնեն անոնց վրայ,
քու բազուկիդ զօրութեամբ, անոնք պիտի քարանան,
մինչեւ որ անցնի քու ժողովուրդդ, Տէ՛ր,
մինչեւ որ անցնի այս ժողովուրդդ զոր ստացար:
- 17 Դուն կը տանիս զանոնք,
եւ քու ժառանգութիւնդ կը գետեղես լերան վրայ,
այն վայրը՝ զոր դուն իբրեւ բնակարան ընտրեցիր քեզի.
Իբրեւ քո՛ւ սրբավայրդ, Տէ՛ր,
զոր քու ձեռքերդ պատրաստեցին.
- 18 Տէր, Դուն կը թագաւորես յաւիտեանս յաւիտենից:
- 19 Որովհետեւ փարաւոնը ծով իջաւ իր կառքերով,
երկարներով եւ ընտիր սպառազէններով,
Տէրը ծովուն ջուրերը տարածեց անոնց վրայ,
եւ Իսրայէլի որդիները հետիոտն անցան ծովէն:
- 20 Մարիամ մարգարէուհին, Ահարոնի քոյրը,
թմբուկն առաւ ձեռքը,
եւ բոլոր կիները հետեւեցան անոր
թմբուկներով եւ պարերով:
- 21 Մարիամ հնչեցուց երգը եւ ըսաւ.
«Օրհնե՛նք Տէրը,

որովհետեւ ան փառքով փառաւորուեցաւ,
երկվարներն ու հեծեալները ծովը գահաւիժեց ան»:

ՄՏԻԿ ԸՐԷ, ԵՐԿԻՆՔ

Օրէնքի Երկրորդ Գիրք 32, 1-21

1 Մտի՛կ ըրէ, երկի՛նք, ես պիտի խօսիմ,
թող լսէ՛ երկիրը բերնիս պատգամները:

2 Թող պատուէրս ընդունուի անձրեւի նման,
եւ պատգամներս թող իջնեն ցօղի նման,
ինչպէս անձրեւը մարգագետնի վրայ
եւ տեղատարափը՝ դալարիքի վրայ:

3 Որովհետեւ Տիրոջ անունը կանչեցի-
օրհնութիւն տուէք մեր Տէր Աստուծոյ:

4 Աստուած մը որուն գործերը ուղիղ են
եւ ճամբաները արդարութեան վրայ հիմնուած.
Աստուած մը որ վստահելի է,
որուն քով չկայ անիրաւութիւն.
արդար եւ անարատ է Տէրը:

5 Բայց անոնք մեղանչեցին
եւ դադրեցան անոր որդիներն ըլլալէ,
մեղապարտ ազգ դարձան
եւ ծուռ ճամբաներ բռնեցին:

6 Դուք այդպէ՞ս կը հատուցանէք Տիրոջ,
ո՛վ յիմար եւ իմաստութենէ գուրկ ժողովուրդ:

Ինքը չէ՞ այն հայրը որ ի՛րը դարձուցած է քեզ,
որ մէջտեղ բերած է քեզ, որ ստեղծած է քեզ:

7 Յիշէ՛ անցեալի անհամար օրերը,
քննութենէ անցուր տարիները՝ սերունդէ սերունդ:
Հարցո՛ւր քու հայրերուդ,
եւ անոնք պիտի պատմեն քեզի-
հարցո՛ւր քու ծերերուդ,
եւ անոնք պիտի ըսեն քեզի:

8 Երբ Բարձրեայը ցրուեց բոլոր ազգերը իրարմէ
ու ցիրուցան ըրաւ Ադամի որդիները,
եւ սահմաններ ճշդեց ազգերուն համար՝
Աստուծոյ որդիներուն թիւին համեմատ,

9 Տիրոջ բաժին ինկաւ իր ժողովուրդը՝ Յակոբը,
եւ իբրեւ վիճակով ստացուած ժառանգութիւն՝ Իսրայէլը:

10 Ան հոգ տարաւ անոնց՝ անապատի մէջ,
ի՛նքը եղաւ անոր պաշտպանը երբ ծարաւի էր ան՝
այդ սոթակէզ, անջրդի վայրերուն մէջ.
Ի՛նքը խրատեց եւ իր աչքին բիբին պէս պահեց զիրենք:

11 Ինչպէս արծիւը որ հովանի կը կենայ իր բոյնին վրայ,
եւ գգուանքով կը փայփայէ իր ձագերը՝
ա՛յնպէս պարզեց ան իր թեւերը:
ա՛յնպէս առաւ զայն
եւ տարաւ իր թիկունքին վրայ:

12 Տէ՛րը միայն առաջնորդ էր անոնց,
եւ անոնց մօտ օտար աստուած չկար:

13 Երկրի բարձունքները հանեց զանոնք,
արտերու բերքերով կերակրեց զանոնք,
քարէն հանուած մեղրով
եւ ժայռէն ելած իւղով դիեցուց զանոնք:

14 կովու կաթէ շինուած կարագ տուաւ անոնց,
ոչխարի կաթ խմցուց անոնց,
գառնուկներու, խոյերու, հորթերու
եւ ցուլերու պարարտ միւս տուաւ անոնց
եւ ցորենի ատոք հասկերով լիացուց զանոնք:
խաղողի արիւնը իբրեւ գինի կը խմէին անոնք:

15 Յակոբ կերաւ, յագեցաւ եւ յղիացաւ,
եւ արհամարհեց իր սիրելին, գիրցաւ, ուռեցաւ, լայնցաւ,
եւ լքեց իր Տէր Աստուածը, իր Արարիչը:
ապստամբեցաւ իր Աստուծոյն, իր Փրկչին դէմ:

16 Զիս բարկացուցին օտարներով,
եւ իրենց գարշութիւններով դառնացուցին զիս:

17 Զոհ մատուցին դեւերուն՝ փոխանակ Աստուծոյ,
կուռքերու գորս չէին ճանչնար,
եւ նոր ու անցաւոր աստուածներու,
գորս չէին ճանչնար ձեր հայրերը:

18 եւ դուն՝ թողուցիր զԱստուած որ քեզ ծնած է,
մոռցար զԱստուած որ քեզ կերակրած է:

19 Բայց երբ Տէրը տեսաւ, նախանձով լեցուեցաւ,
զայրոյթի հասաւ անոր բարկութիւնը՝
իւր մանչ եւ աղջիկ զաւակներուն դէմ:

20 Եւ ըսաւ. Երեսս պիտի դարձնեմ անոնցմէ,
եւ ցոյց պիտի տամ անոնց՝
Թէ ի՞նչ պիտի պատահի գալիք ժամանակներուն,
որովհետեւ ճամբէ շեղած ազգ մըն են անոնք,
զաւակներ՝ որոնց մէջ հաւատք չէ մնացած:

21 Իրենց աստուածներով՝ անոնք նախանձս գրգռեցին,
եւ իրենց կուռքերով՝ բարկացուցին զիս:
Արդ, ես անոնց նախանձը պիտի շարժեմ՝
ժողովուրդով մը որ արժանի չէ ազգ կոչուելու
եւ պիտի զայրացնեմ զիրենք անմիտ ժողովուրդի մը ձեռքով:

ՀՈՒՐԸ ԲՈՐԲՈՔԵՅԱԻ

Օրէնքի Երկրորդ Գիրք 32, 22-38

22 Բոցավառ կրակ կը բորբոքի իմ բարկութենէս,
որ մինչեւ դժոխքին յատակը պիտի տանի ու այրէ,
պիտի լափէ երկիրն ու անոր արմտիքը,
եւ կրակի պիտի վերածէ լեռներուն հիմերը:

23 Չարիքներ պիտի կուտակեմ անոնց գլխուն վրայ
եւ իմ նետերս պիտի սպառեմ անոնց վրայ :

24 Սովէն պիտի մաշին անոնք
եւ կեր պիտի դառնան թռչուններու.
անբուժելի նետեր պիտի դրկեմ անոնց վրայ
եւ գազաններու ժանիքներ՝
որ քաշկուտեն զիրենք գետնին երեսը:

25 Դուրսը՝ սուրը բնաջինջ պիտի ընէ իրենց զաւակները,
իսկ պատսպարաններուն մէջ՝ սարսափը,
պարմանին թէ պարմանուհին,
ծծկեր երախան թէ ալեւոր ծերը:

26 Եւ ես ըսի ինքնիրենս. Յիրուցան կ'ընէի ասոնք,
կը ջնջէի ասոնց յիշատակը մարդկութեան մէջէն,
եթէ չըլլար թշնամիներուն մոլեգնութիւնը:

27 որպէսզի չկարծեն թէ իրենք երկար պիտի ապրին
եւ հակառակորդները ելլեն եւ յոխորտան,
ըսելով թէ Տէրը չէ որ ըրաւ այս բաները,
այլ ձեռքերը որ մենք բարձրացուցինք:

28 Որովհետեւ ասոնք խելակորոյս ազգ մըն են,
եւ իմաստութիւն ալ չկայ անոնց մէջ,

29 քանի որ չկրցան անդրադառնալ այս բաներուն.
բայց պիտի անդրադառնան ապագային:

30 Ինչպէ՞ս մէ'կ հոգի
պիտի կարենար հալածել հազարաւորներ,
կամ երկու հոգի՝
վանել բիւրաւորներ,
եթէ Աստուած ինքը չմատնէ զանոնք իրենց ձեռքը:

31 Որովհետեւ իրենց աստուածները
մեր Աստուծոյն պէս չեն
եւ մեր թշնամիները՝ չարամիտ են:

32 Որովհետեւ անոնց որթատունկը՝
Սողոմի որթատունկէն է, եւ անոնց ուռենին՝ Գոմորէն :
Անոնց խաղողը լեղի խաղող է,
եւ անոնց ողկոյզները դառն են :

33 Անոնց գինին վիշապներու թոյն է
եւ իժերու մաղձ՝ որ չի բուժուիր:

34 Զէ՞ որ այս ամէնը քովս հաւաքուած է
եւ ես կնքուած պահած եմ զանոնք զանձատանս մէջ:

35 Այդ բոլորը՝
պիտի հատուցանեմ վրէժխնդրութեան օրը,
երբ սայթաքի անոնց ոտքը,
որովհետեւ մօտ է անոնց կորստեան օրը,
ու հասնելու վրայ է ձեր վախճանը:

36 Որովհետեւ Տէրը պիտի հաստատէ
իր ժողովուրդին իրաւունքը,
եւ իր ծառաներուն մէջ պիտի գտնէ իր մխիթարութիւնը,
երբ զանոնք գտաւ ուժասպառ,
լքուած եւ գերութեան մատնուած:

37 Եւ Տէրը ըսաւ. Ո՞ւր են անոնց աստուածները,
որոնց վրայ անոնք դրած էին իրենց յոյսը:

38 որոնց զոհերուն ճարպերը կ'ուտէիք դուք
եւ որոնց նուիրուած գինին կը խմէիք.
Թող ելլեն անոնք եւ օգնեն ձեզի,
եւ թրկունք թող կանգնին ձեզի:

ԵՍ ԵՄ ԱՅՆ ՈՐ Է

Օրէնքի Երկրորդ Գիրք 32, 39-43

39 Տեսէ՛ք, տեսէ՛ք, ե՛ս եմ այն որ է,
եւ ինծմէ՛ զատ գոյուլթիւն չունի մէկը:
Ե՛ս կը մեռցնեմ եւ ե՛ս կեանք կու տամ,
ե՛ս կը հարուածեմ եւ ե՛ս կը բժշկեմ:
Եւ չկա՛յ մէկը՝
որ կարենայ ինքզինքը ազատել իմ ձեռքէս:

40 Որովհետեւ՝ դէպի երկինք պիտի բարձրացնեմ ձեռքս,
երգում պիտի ընեմ իմ աջովս ու պիտի ըսեմ.
Կենդանի՛ եմ ես յաւիտեան:

41 Արդ, փայլակի նման պիտի սրեմ իմ սուրս,
եւ դատավճիռներ պիտի արձակեմ իմ ձեռքովս.
Վրէժս պիտի լուծեմ իմ թշնամիներէս,
եւ զիս ատողներուն պիտի փոխարինեմ ինչ որ արժանի է:

42 Եւ նետերս պիտի արբեցնեմ անոնց արիւնով
եւ սուրս պիտի ուտէ գերի ինկած թշնամիներու
արիւնլուայ գլուխներէն:
Ուրախացի՛ր անոր հետ, երկինք,
եւ Աստուծոյ բոլոր զաւակները թող երկրպագէ՛ն անոր:

43 Ուրախացէ՛ք, ազգեր, անոր ժողովուրդին հետ,
եւ Աստուծոյ բոլոր հրեշտակները թող զօրացնեն զինքը,
որովհետեւ անոր որդիներուն արեան վրէժը պիտի առնուի:
Այո՛, ան վրէժ պիտի առնէ
եւ պիտի հատուցանէ թշնամիներուն,

պիտի փոխարինէ զինքը ատողները,
եւ Տէրը պիտի մաքրագործէ իր ժողովուրդին երկիրը:

ԱՆՆԱՅԻ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

1 Թագ 2, 1-14

1 Սիրտս զօրացաւ իմ Տիրոջս մէջ
եւ ճակատս բարձրացաւ Աստուծոյ մէջ:
բերանս լայն բացուեցաւ թշնամիներուս դիմաց
եւ ես ուրախութեամբ լեցուեցայ քու փրկութեամբը:

2 Որովհետեւ Տիրոջ նման սուրբ չկայ,
չկայ այնքան արդար մէկը ինչպէս մեր Աստուածը,
չկայ սուրբ՝ քեզմէ դուրս:

3 Մի՛ պարծենաք ամբարտաւան խօսքերով,
ձեր բերնէն մեծաբանութիւն թող չելլէ,
որովհետեւ Տէրը գիտութիւններու Աստուածն է,
եւ ի՛նքը, Աստուած՝ կը պատրաստէ իր հրաշալիքները:

4 Հզօրներուն աղեղներն անգամ կորսնցուցին իրենց ոյժը,
եւ տկարները լեցուեցան զօրութեամբ:

5 Նուաղեցան անոնք որ հացի առատութեան մէջ կ'ապրէին,
եւ անոնք որ անօթի էին՝ հանգստացան երկրի վրայ.
ամուրը ծնունդ տուաւ եօթնեակ զաւակներու,
մինչ բազմածինը զաւակներէ զրկուեցաւ:

6 Տէ՛րն է որ կը մեռցնէ կամ կեանք կու տայ,
որ դժոխք կ'իջեցնէ կամ անկէ դուրս կը հանէ:

7 Տէ՛րն է որ աղքատ կը դարձնէ կամ կը հարստացնէ,
ի՛նքն է որ կը խոնարհեցնէ կամ կը բարձրացնէ:

8 Ան ոտքի կը հանէ գետին ինկած տնանկը
եւ աղբիւսի վրայէն կը յարուցանէ աղքատը՝
ժողովուրդի իշխանաւորներու կողքին
բազմեցնելու համար զանոնք,
եւ փառքի աթոռներ կու տայ անոնց իբրեւ ժառանգութիւն:

9 Ան կը կատարէ ուխտաւորին ուխտը,
եւ արդարներու կեանքին օրերը կ'օրհնէ.
որովհետեւ մարդը
իր սեպհական ուժով չէ որ հզօր կը դառնայ:

10 Տէրը անզօր կը դարձնէ իր հակառակորդները.
Տէրը սուրբ է:

11 Իմաստունը թող չպարծենայ իր իմաստութեամբ,
մեծահարուստը թող չպարծենայ իր հարստութեամբ.

12 այլ թող պարծենայ միայն անով՝
որ արժանի է պարծանքի,
այսինքն՝ որ իմանայ եւ ճանչնայ Տէրը,
որպէսզի իրաւունք եւ արդարութիւն գործադրէ երկրի վրայ:

13 Տէրը երկինք ելաւ եւ որոտաց.
ի՛նք կը դատէ երկրի բոլոր ծագերը.

14 ի՛նքը՝ որ արդարն է,
որ զօրութիւն կու տայ մեր թագաւորներուն,
եւ որ պիտի բարձրացնէ իր Օծեալին ճակատը:

ԻՄԱՍՏՈՒՆԸ ԿԸ ԿԱՌՈՒՑԱՆԷ

Առակաց Գիրք 9, 1-12

1 Իմաստութիւնը տուն չի նեց իրեն համար,
եւ եօթը սիւններ կանգնեց:

2 Մորթեց զոհուելիք անասունները,
խառնեց գինին թակոյկներուն մէջ
եւ սեղանը պատրաստեց:

3 Իր ծառաները ղրկեց,
որ բարձր ձայնով իր խնճոյքին կանչեն. եւ ըսաւ.

4 Այն որ պարզամիտ է, քովս թող գայ:

5 Իսկ պակասամիտներուն ըսաւ. Եկէ՛ք եւ իմ հացէս կերէք,
եւ խմեցէք իմ գինիս, զոր ձեզի համար պատրաստած եմ:

6 Թողուցէք անզգամութիւնը, որ ապրիք,
փնտռեցէք իմաստութիւնը, որ փրկուիք.
Հանճարը գիտակցաբար գործածեցէք,
եւ ուղիղ ճամբէն քալելով՝ պիտի իմանաք խրատին արժէքը:

7 Այն որ չարերը կը խրատէ՝
իր անձին անարգանք կ'ապահովէ,
եւ այն որ ամբարիշտներ կը յանդիմանէ՝
ինքզինքը ատելի կը դարձնէ:

8 Մի՛ յանդիմաներ չարերը՝ որ չատեն քեզ,
յանդիմանէ իմաստունը, եւ ան պիտի սիրէ քեզ,
անմիտը՝ եւ ան աւելիով պիտի ատէ քեզ:

- 9 Իմաստունին առիթ տուր,
եւ ան աւելի իմաստուն պիտի դառնայ,
արդարը զարգացուր, եւ ան աւելին պիտի ընդունի:
- 10 Իմաստութեան սկիզբը՝ Տիրոջ երկիւղն է:
միտքն է որ սուրբ բաներուն ճանաչումը կու տայ.
օրէնքին իմացութիւնը առողջ միտք ունեցողին տրուած է:

11 Այս ձեւով՝ դուն երկար պիտի ապրիս
եւ կեանքիդ տարիները պիտի աւելնան:

12 Որդեա՛կ, եթէ իմաստուն ես՝
քու անձիդ եւ ընկերներուդ օգտակար պիտի ըլլաս,
իսկ եթէ անզգամ ես՝ միայն չարիք պիտի պեղես:

ԵՐԱՆԻ ԻՍԱՍՏՈՒՆ ՄԱՐԳՈՒՆ

Առակաց Գիրք 3, 13-20

- 13 Երանի՛ այն մարդուն որ իմաստութիւնը գտած է,
եւ այն մահկանացուն՝ որ գիտութիւնը ճանչցած է:
- 14 Որովհետեւ աւելի լաւ է գտնել այդպիսի հարստութիւն մը՝
քան ոսկիի եւ արծաթի գանձերը:
- 15 Ան աւելի թանկագին է քան բոլոր թանկագին քարերը,
եւ չկայ որեւէ չար բան որ կարենայ դէմ դնել անոր.
ան յայտնի է բոլոր անոնց որ կը մօտենան անոր ,
եւ չկայ ո՛չ մի թանկագին բան
որ իր արժէքով կարենայ հաւասարիլ անոր:

- 16 Որովհետեւ իր աջին՝ երկար օրեր եւ կեանքի տարիներ կան,
իսկ անոր ձախին՝ փառք ու հարստութիւն:
Արդարութիւն կը բխի անոր բերնէն
եւ օրէնք ու ողորմածութիւն կը կրէ իր լեզուին վրայ :
- 17 Անոր ճամբաները բարիքներու ճամբաներ են,
եւ անոր բոլոր շաւիղները խաղաղութեան կը տանին :
- 18 Կեանքի ծառ է ան բոլոր անոնց համար՝
որ անոր տակ կը պատսպարուին,
եւ այն որ կը յենու անոր՝
հաստատ է, իբր թէ Տիրոջ յենած ըլլար:
- 19 Աստուած իր իմաստութեամբ հիմեր դրաւ երկրիս,
եւ երկինքը հաստատեց իր խորհուրդովը:
- 20 Իր հանճարովը ճեղքեց անդունդները,
եւ ամպերէն անձրեւը հոսեցաւ:

ԱՐԳԱՐՆԵՐՈՒ ՀՈԳԻՆ

Իմաստութեան Գիրք 3, 1-7

- 1 Արդարներուն հոգիները Աստուծոյ ձեռքին մէջ են,
եւ մահը պիտի չմերձենայ անոնց:
- 2 Անզգամներու աչքին՝ անոնք մեռած են,
եւ անոնց մեկնումը դժբախտութիւն համարուած է,
- 3 եւ անոնց մեկնումը մեզմէ՛ ոչնչացում.
մինչ անոնք խաղաղութեան մէջ են:

4 Մարդոց աչքին, անոնք պատժուած են,
բայց անոնց յոյսը անմահութեամբ լի է:

5 Անոնք, դոյզն նեղութիւններ կրելի
ու տառապանքներ քաշելի ետք՝
մեծ բարիքներու պիտի արժանանան,
որովհետեւ Աստուած փորձած է զանոնք
եւ արժանաւոր գտած է:

6 Ինչպէս ոսկին բովերու մէջ՝
ա՛յնպէս քննութենէ անցուց զանոնք,
եւ զոհաբերուած ողջակէզի նման ընդունեցաւ զանոնք:

7 Անոնց այցելութեան ժամանակ՝
պիտի պայծառանան անոնք,
եւ կայծակի նման պիտի սլանան եղէգնուտի մէջէն:

8 Անոնք պիտի դատեն ազգերը
եւ պիտի տիրեն ժողովուրդներուն վրայ,
Տէ՛րը պիտի ըլլայ անոնց թագաւորը յաւիտեան:

9 Անոնք որ անոր վրայ դրած էին իրենց յոյսը՝
պիտի ճանչնան ճշմարտութիւնը,
եւ անոր հաւատարիմները սիրով պիտի սպասեն անոր՝
որովհետեւ անոր շնորհքն ու ողորմութիւնը
սուրբերուն վրայ են,
եւ անոր այցելութիւնը՝ իր ընտրեալներուն վրայ:

10 Ամբարիշտները՝ իրենց դիտաւորութեան համաձայն
պիտի ստանան իրենց պատիժը,
քանի որ անփոյթ եղած են Օրէնքին հանդէպ
եւ Տիրոջ դէմ ապստամբ գտնուած:

11 Որովհետեւ թշուառական է՝
այն որ կ'անարգէ իմաստութիւնն ու խրատը,
սին է անոր յոյսը, անօգուտ են անոր վաստակները
եւ անպէ՛տ՝ անոր գործերը:

ԱՐԳԱՐԻՆ ՀԱՆԳԻՍՏԸ

Իմաստութեան Գիրք 4, 7-16

7 Արդարը, երբ վախճանի՝
իր հանգիստը պիտի գտնէ:

8 Որովհետեւ պատկառելի ծերութիւնը այն չէ՝
որ երկար ժամանակ կը տեւէ,
եւ ոչ ալ տարիներու թիւով կը չափուի:

9 Իմաստութեան չափանիշը՝ անոր սպիտակ մազերն են.
եւ ծերութեան տարիքը՝ անոր անարատ վարքն է:

10 Աստուծոյ հաճոյ դառնալով է որ ան կը սիրուի,
եւ իր կենդանութեան իսկ մեղաւորներու մէջէն կը զատուի:

11 Ան յափշտակուեցաւ՝
որպէսզի չարիքը չայլափոխէ անոր իմաստութիւնը,
կամ նենգութիւնը չմոլորեցնէ անոր հոգին:

12 Որովհետեւ անզգամութեան հմայքը
բարիներն անգամ կը շլացնէ
եւ ցանկութեան ետեւէ ըլլալը
անմեղ միտքերն իսկ կը խանգարէ:

13 Կարճ ժամանակի մէջ կատարեալ դարձողը՝ երկար ժամանակ ապահոված է ինք իրեն համար:

14 Անոր հոգին հաճելի դարձած էր Տիրոջ, եւ այդ պատճառով՝ ան փուլթով հեռացաւ չարիքներու աշխարհէն. իսկ ժողովուրդները տեսան, բայց չհասկցան, եւ ոչ իսկ իրենց մտքէն անցուցին այս բանը,

15 թէ Աստուծոյ շնորհքը իր սուրբերուն հետ է, եւ անոր պաշտպանութիւնը՝ իր ընտրեալներուն վրայ:

16 Արդարին մահը՝ դատապարտութիւնն է կենդանի ամբարիշտներուն, իսկ կանուխէն վախճանող երիտասարդը՝ դատապարտութիւնն է երկարամեայ անիրաւ ծերին:

ԱՄԷՆ ԲԱՆ ԻՐ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒՆԻ

Փողովոզի Գիրք 3, 1-15

1 Ժամանակը ամէնո՛ւն համար է, եւ երկնքի տակ ամէ՛ն ինչ իր ժամանակն ունի:

2 Ժամանակ կայ ծնելու, ժամանակ՝ մեռնելու. ժամանակ կայ տնկելու, ժամանակ՝ տնկուածը քաղելու :

3 Ժամանակ կայ սպաննելու, ժամանակ՝ բժշկելու. ժամանակ կայ քակելու, ժամանակ՝ շինելու:

4 Ժամանակ կայ լալու, ժամանակ՝ ծիծաղելու. ժամանակ կայ կոծելու, ժամանակ՝ պարելու:

5 Ժամանակ կայ քարկոծելու, ժամանակ՝ քարերը հաւաքելու. ժամանակ կայ գրկելու, ժամանակ՝ գրկելէն հրաժարելու:

6 Ժամանակ կայ փնտռելու, ժամանակ՝ կորսնցնելու. ժամանակ՝ պահելու, ժամանակ՝ դո՛ւրս նետելու:

7 Ժամանակ կայ պատռելու, ժամանակ՝ կարկտելու. ժամանակ՝ լռելու, ժամանակ՝ խօսելու:

8 Ժամանակ կայ սիրելու, ժամանակ՝ ատելու. ժամանակ կայ պատերազմի, ժամանակ՝ խաղաղութեան:

9 Ուրեմն ի՞նչ առաւելութիւն ունի՝ այն որ ջանք կը թափէ:

10 Ես տեսայ բոլո՛ր այն զբաղումները զորս Աստուած տուած է մարդու որդիներուն՝ որ զբաղին անոնցմով:

11 Ամէն բան որ ան ըրած է՝ բարի է, ի՛ր ժամանակին համար. ան ամբողջ յաւիտենականութիւնը դրած է անոնց սրտին մէջ. սակայն մարդը չի կրնար ըմբռնել այն բոլոր գործերը զորս Աստուած ըրած է սկիզբէն մինչեւ վախճանը:

12 Ես համոզուեցայ որ այդ բոլորին մէջ չկայ լաւագոյն բան՝ քան ուրախ ըլլալ, եւ բարիք գործել կեանքին մէջ:

13 Որովհետեւ Աստուծոյ պարգեւն է՝ որ մարդ կարենայ ուտել եւ խմել, եւ յաջողութիւն ունենալ իր աշխատանքին մէջ:

14 Եւ գիտցայ որ Աստուծոյ բոլոր ստեղծածները
 յաւիտեան պիտի մնան.
 անոնց վրայ ո՛չ մէկ բան չ'աւելնար,
 եւ կարելի չէ անոնցմէ ո՛չ մէկ բան պակսեցնել .
 Աստուած ստեղծեց զանոնք՝ որպէսզի պատկառին իրմէ:

15 Ինչ որ գոյութիւն առաւ՝ ա՛յդ կայ,
 ինչ որ գոյութիւն պիտի ստանար՝
 գոյութիւնը ստացած է արդէն,
 եւ Աստուած պիտի պահանջէ ինչ որ անհետացած էր:

ԱՂՕԹՔ ԻՍԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Իմաստութեան Գիրք 9, 1-11

- 1 Ո՛վ Աստուած Հայրերուս եւ Տէ՛ր գթութեան.
 դո՛ւն ստեղծած ես ամէն բան քու խօսքովդ:
- 2 Դուն մարդը կազմեցիր քու իմաստութեամբդ՝
 որպէսզի տիրէ քեզմէ ստեղծուած արարածներուն վրայ,
- 3 որ սրբութեամբ ու արդարութեամբ կառավարէ աշխարհը
 եւ ուղիղ հոգիով դատաստան կատարէ:
- 4 Տո՛ւր ինծի այն իմաստութիւնը՝ որ քու գահիդ բաժնեկից է,
 եւ մի՛ մերժեր զիս քու ծառաներուդ դասէն:
- 5 Որովհետեւ ես քու ծառա՛ղ եմ եւ աղախինի՛դ որդին,
 տկար մարդ մը՝ կարճատեւ կեանքով,
 համբակ՝ իմաստութեան եւ օրէնքներու մարզին մէջ:

6 Որովհետեւ, եթէ նոյնիսկ կատարեալ մէկը գտնուի
 մարդկային էակներուն մէջ,
 բայց զուրկ ըլլայ իմաստութենէն որ քեզմէ կը տրուի՝
 ան ոչինչ պիտի համարուի:

7 Դուն ընտրեցիր զիս՝
 որ թագաւորն ըլլամ քու ժողովուրդիդ
 եւ դատաւորը՝ քու մանչ ու աղջիկ զաւակներուդ:

8 Դուն ըսիր որ տաճար կանգնեմ քու սուրբ լերանդ վրայ,
 եւ խորան՝ քու բնակած քաղաքիդ մէջ,
 նմանութեամբ այն սուրբ վրանին
 զոր դո՛ւն պատրաստած էիր սկիզբէն ի վեր:

9 Քեզի հէ՛տ է իմաստութիւնը
 որ կը ճանչնայ քու գործերդ,
 որ քեզի մօտ էր երբ դուն աշխարհը կը ստեղծէիր,
 եւ գիտէր թէ ի՛նչ հաճոյ է քու աչքերուդ
 եւ ի՛նչ է որ համաձայն է քու պատուիրաններուդ:

10 Առաքէ՛ զայն երկինքի սրբավայրէն,
 եւ քու փառքիդ գահէն արձակէ զայն,
 որ գայ եւ կանգնի իմ մօտս,
 որպէսզի գիտնամ թէ ի՛նչ է հաճելին քու առջեւդ:

11 Որովհետեւ ան ամէ՛ն բան գիտէ եւ խելամուտ է .
 ուստի խոհեմաբար պիտի առաջնորդէ զիս իմ գործերուս մէջ,
 պիտի առաջնորդէ զգաստութեամբ
 եւ պահպանէ զիս իր փառքով:

ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐՈՒՆ

Եսայի Մարգարէ 2, 2-5

- 2 Վերջին օրերուն՝ պիտի պատահի որ Տիրոջ լեռը պիտի յայտնուի, եւ Տիրոջ տունը լեռներու գլխուն վրայ պիտի հաստատուի՝ ան պիտի բարձրանայ բոլոր բլուրներէն վեր, եւ բոլոր ազգերը հո՛ն պիտի գան:
- 3 Բազմաթի՛ւ ժողովուրդներ պիտի երթան հոն, ու լսեն. Եկէ՛ք, Տիրոջ լեռը ելլենք, Յակոբի Աստուծոյն տունը, որովհետեւ ան ցոյց պիտի տայ մեզի իր ճամբաները, որպէսզի անոնց վրայէն քալենք. որովհետեւ Սիոնի վրայէ՛ն պիտի գայ Օրէնքը, եւ Երուսաղէմէ՛ն պիտի տրուի Տիրոջ պատգամը:
- 4 Ան պիտի դատէ ազգերը, եւ զգաստութեան պիտի հրաւիրէ շատ մը ժողովուրդներ. անոնք պիտի ձուլին իրենց սուրբըր եւ խորի պիտի վերածեն, եւ իրենց սուրբները՝ մանգաղներու: Ազգերը պիտի չսորվին այլեւս իրարու վրայ սուր վերցնել, եւ անկէ ետք՝ պիտի դադրին պատերազմ ընելէ:
- 5 Եւ դուն, Յակոբի տուն, եկէ՛ք, դէպի Տիրոջ լոյսը երթանք:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆԸ

Եսայի Մարգարէ 9, 1-3 . 5-6

- 1 Ժողովուրդը որ խաւարի մէջ կը քայլէ՛ր՝ մեծ լոյս մը տեսաւ. եւ դուք՝ որ կը բնակիք աշխարհի եւ մահուան ստուերներուն մէջ, լոյս մը պիտի ծագի ձեր վրայ:
- 2 Ժողովուրդին մեծ մասը, զոր դուն մասնակից ըրիր քու ուրախութեանդ, պիտի ուրախանայ քու առջեւը՝ ինչպէս անոնք որ հունձքի ժամանակ կ'ուրախանան, կամ ինչպէս անոնք որ աւարը կը բաժնուին:
- 3 Որովհետեւ վերցուեցաւ այն լուծը որ դրուած էր անոնց վրայ, եւ այն գաւազանը որ անոնց վզին վրան էր. որովհետեւ վերցուեցաւ պահանջատէրերուն գաւազանը ինչպէս Մաղիամի օրերուն:
- 5 Որովհետեւ մանո՛ւկ մը ծնաւ մեզի, որդի՛ մը տրուեցաւ մեզի, որուն ուսերուն վրայ դրուած է իշխանութիւնը, եւ որուն անունը դրուեցաւ՝ մեծ Խորհուրդի Հրեշտակ, սքանչելի Խորհրդակից, Աստուած, Հօր, Իշխան, եւ Հայր հանդերձեալ Աշխարհին:

6 Եւ ես խաղաղութիւն պիտի բերեմ անոր իշխաններուն վրայ եւ առողջութիւն պիտի տամ իրեն.
 մե՛ծ է անոր իշխանութիւնը,
 եւ սահման չունի անոր խաղաղութիւնը.
 Ան պիտի բազմի Դաւիթի աթոռը
 եւ յառաջ պիտի տանի անոր թագաւորութիւնը.
 իրաւունքի եւ արդարութեան մէջ պիտի գորացնէ զայն,
 այս օրունէ մինչեւ յաւիտեանական ժամանակներ:
 Զօրութիւններու Տիրոջ նախանձախնդրութի՛ւնը
 պիտի իրագործէ այս բոլորը:

ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ

Եսայի Մարգարէ 12, 1-6

- 1 **Տէ՛ր, պիտի օրհնե՛մ քեզ,**
 որովհետեւ դուն բարկացար իմ վրաս,
 բայց բարկութիւնդ հեռացուցիր ինծմէ
 եւ ողորմեցար ինծի:
- 2 **Ահա Տէ՛րն է իմ Աստուածս եւ Փրկիչս,**
 ես անո՛ր վրայ պիտի դնեմ իմ յոյսս եւ պիտի չվախնամ,
 որովհետեւ Տէ՛րն է իմ փառքս եւ օրհնութիւնս,
 ի՛նքն է որ փրկութիւն տուաւ ինծի:
- 3 **Ուրախութեան ջո՛ւր առէք**
 փրկութեան աղբիւրներէն.
- 4 **եւ ըսէք այդ օրը. Տէ՛րը օրհնեցէք,**
 անոր անո՛ւնը հնչեցուցէք,

անոր փա՛ռքը պատմեցէք հեթանոսներուն մէջ,
 եւ յիշեցուցէք թէ բարձրացա՛ծ է անոր անունը:

5 **Օրհնեցէ՛ք Տիրոջ անունը,**
 որովհետեւ ան մեծամեծ գործեր ըրաւ,
 եւ ամբողջ երկրի վրայ պատմեցէք բոլոր այս բաները:

6 **Ցնծացէ՛ք եւ ուրախացէ՛ք, Սիոնի՛ բնակիչներ,**
 որովհետեւ Իսրայէլի Սո՛ւրբը բարձրացաւ անոր մէջ:

ՀՈԳԻՍ ԿԸ ՀՍԿԷ ԳԻՇԵՐԸ

Եսայի Մարգարէ 26, 9-21

- 9 **Գիշերուընէ սկսեալ, ո՛վ Աստուած,**
 հոգիս կը փութայ քու առջեւդ ելլելու,
 որովհետեւ քու հրամաններդ լոյս են երկրի վրայ:
 Արդարութի՛ւնը սորվեցէք, երկրի՛ բնակիչներ.
 որովհետեւ ամբարիշտը պապանձեցաւ:
- 10 **Այն որ արդարութիւն չ՛ուսանիր երկրի վրայ՝**
 ան ճշմարտութիւն չի գործադրեր:
 Երկրի երեսէն պիտի վերցուի ամբարիշտը,
 որպէսզի չտեսնէ Տիրոջ փառքը:
- 11 **Տէ՛ր, քու բազուկդ բարձրացած է,**
 բայց անոնք չհասկցան.
 պիտի ամչնան՝ երբ հասկնան,
 եւ նախանձով պիտի լեցուի այս անուղղայ ժողովուրդը.
 Իսկ հիմա՝ կրակը պիտի լափէ հակառակորդները:

12 Խաղաղուժի՛ւն տուր մեզի, Տէ՛ր Աստուած մեր, որովհետեւ դո՛ւն ես որ ամէն բան կու տաս մեզի:

13 Տէ՛ր, մեր Աստուածը, ընդունէ՛ մեզ. Տէ՛ր, քեզմէ՛ գատ ո՛չ մէկը կը ճանչնանք, եւ քո՛ւ անունդ միայն կ'առնենք մեր բերանը:

14 Իսկ մեռեալները՝ կեանք պիտի չտեսնեն կրկին, եւ բժիշկները յարուժիւն պիտի չտան անոնց. ա՛յդ պատճառով՝ դուն առիւր արունները եւ մեռցուցիր ու բնաջնջեցիր զանոնք:

15 Չարիք բեր անոնց վրայ, Տէ՛ր, չարիքներ աւելցուր երկրի երեւելիներուն վրայ. դուն ձեռքդ երկարեցիր մինչեւ երկրին բոլո՛ր ծագերը:

16 Տէ՛ր, նեղութեան մէջ, մենք յիշեցինք քեզ, որովհետեւ քու պատիժդ նուագեցուց մեր նեղութիւնը:

17 Եւ ինչպէս որ այն որ մօտ է ծննդաբերելու, երկունքով կը տառապի եւ կը պոռայ իր ցաւերուն մէջ, մենք ալ անոր պէս եղանք քու առջեւդ՝ մեր Սիրելի՛ն, քու երկիւղիդ պատճառով, Տէ՛ր:

18 Յղացանք, երկունք կրեցինք, քու փրկութեանդ հոգիին ծնունդ տուինք, ըրինք՝ ինչ որ կրնայինք ընել երկրի վրայ. բայց մենք պիտի չկործանինք այլեւս, այլ պիտի կործանին երկրի բնակիչները:

19 Մեռեալները յարուժիւն պիտի առնեն, գերեզմանի մէջ գտնուողները պիտի կանգնին,

եւ պիտի ուրախանան երկրի վրայ, որովհետեւ այն ցօղը որ քեզմէ՛ կու գայ՝ բժշկուժիւն է անոնց համար. բայց պիտի կործանի՛ ամբարիշտներու երկիրը:

20 Գնա՛, ժողովո՛ւրդս, պատսպարաններդ մտիւր, փակէ՛ դռներդ, պահուրտէ՛ ժամանակի մը համար, մինչեւ որ անցնի Տիրոջ բարկութիւնը:

21 Որովհետեւ ահա Տէրը, իր սրբավայրէն ելլելով, իր բարկութիւնը պիտի բերէ երկրի բնակիչներուն վրայ. երկիրը ցոյց պիտի տայ իր վրայ թափուած արիւնը, եւ պիտի չծածկէ անոնք որ սպաննուած են:

ԵՐԲ ԱԻԱՐՏԻՆ ՀԱՄՆԻ ԿԵԱՆՔՍ

Եսայի Մարգարէ 38, 10-20

10 Ես ըսի. երբ աւարտին իմ կեանքիս օրերը՝ մեռեալներու դռները պիտի երթամ, թողով իմ կեանքիս մնացած օրերը:

11 Եւ ըսի. Ալ պիտի չտեսնե՛մ Աստուծոյ փրկութիւնը երկրի վրայ, եւ ոչ ալ պիտի տեսնեմ անոր բնակիչներէն ոեւէ մէկը:

12 Իմ գերդաստանէս դուրս դրուեցայ, թողուցի կեանքիս մնացած օրերը, ելան ու գացին անոնք ինձմէ. նմանեցայ այն մարդուն՝ որ լարուած վրանը կը քակէ. ինձմէ՛ հեռացող հոգիս նմանեցաւ ջուլհակի թելին որ փրթելու կէտին հասած է:

13 Այդ օրը՝ ես տազնապեցայ մինչեւ առաւօտ,
եւ այդ վիճակը՝ առիւծին պէս կրծեց իմ ոսկորներս,
որովհետեւ այդ տազնապս տեւեց լուսածագէն մինչեւ գիշեր:

14 Ինչպէս ծիծեռնակը՝ ա՛յնպէս ճչացի,
ինչպէս աղաւնին՝ ա՛յնպէս հեծեցի,
որովհետեւ աչքերս նուաղեցան՝ բարձունքներուն նայելով,
դէպի երկինք, Տիրոջ՝ որ փրկեց զիս
եւ փարատեց իմ հոգիիս ցաւերը:

15 Ան կարգի դրաւ իմ կեանքիս տարիները,
որոնք դառնութեան պատճառ պիտի ըլլային հոգիիս համար:

16 Տէ՛ր, ա՛յս է պատճառը որ առջեւդ դրուեցաւ այս խնդրանքս,
որովհետեւ դուն արթնցուցիր իմ հոգիս,
եւ ես մխիթարուեցայ, եւ կեանք եկաւ իմ վրաս:

17 Ահա, դառնութիւնը անդորրութեան փոխուեցաւ,
որովհետեւ դուն փրկեցիր զիս՝ որպէսզի չկորսուիմ,
եւ ետդ նետեցիր իմ բոլո՛ր մեղքերս:

18 Որովհետեւ, անոնք որ
մեռեալներու դուռը հասած են արդէն՝
անոնք չէ՛ որ քեզ պիտի փառաբանեն,
ո՛չ ալ մեռեալները պիտի օրհնեն քեզ.
Եւ անոնք որ գերեզման կ'իջնեն՝
չե՛ն կրնար քու ողորմութեանդ վրայ յոյս դնել:

19 այլ ինծի պէս ողջե՛րը միայն պիտի օրհնեն քեզ.
ասկէ ետք, ես զաւակներ պիտի բերեմ՝

որ միայն քու արդարութի՛ւնդ պիտի պատմեն,
ո՛վ փրկիչ Տէրս:

20 Եւ պիտի չդադրի՛մ սաղմոսարանովս քեզ օրհնելէ,
քու դիմացդ, ամբո՛ղջ կեանքիս ընթացքին,
քու տաճարիդ մէջ, Աստուա՛ծ:

ՄԵԽԹԱՐԵՅԷՔ ԻՄ ԺՈՂՈՎՈՒՐՂՍ

Յսայի Մարգարէ 40, 1-8

1 Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք իմ ժողովուրդս,
կ'ըսէ Աստուած:

2 Երուսաղէմի սրտին խօսեցէ՛ք,
քահանանե՛ր, մխիթարեցէ՛ք զայն,
որովհետեւ ան տառապանքներով լեցուած է.
պիտի ներուին անոր մեղքերը,
որովհետեւ ան կրկնապատիկ հատուցում ստացաւ
Տիրոջ կողմէ՝ իր մեղքերուն համար:

3 Ձայն մը կը գոչէ անապատին մէջ.
պատրաստեցէ՛ք Տիրոջ ճամբաները,
եւ հարթեցէ՛ք մեր Աստուծոյն շաւիղները:

4 Բոլոր ձորերը պիտի լեցուին,
բոլոր լեռներն ու բլուրները պիտի խոնարհին,
բոլոր դժուարին ճամբաները հեշտ պիտի դառնան,
բոլոր քարքարուտ տեղերը դաշտի պիտի վերածուին:

5 Տիրոջ փա՛ռքը պիտի երեւի,
ամէն մարմնաւոր էակ Աստուծոյ փրկութիւնը պիտի տեսնէ,
որովհետեւ Տէ՛րը խօսեցաւ:

6 Ահա ձա՛յն մը որ կ'ըսէ՝ Գոչէ՛:

Ես ըսի՝ Ի՞նչ գոչեմ:

Ըսէ որ ամէն մարմին խոտ է,
եւ մարդուն ամբողջ փառքը ծաղիկի խոտին պէս է:

7 Անգամ մը որ չորնայ խոտը՝ անոր ծաղիկն ալ կը թափի,
որովհետեւ Տիրոջ շունչը փչած է անոր վրայ՝
արդարեւ, խո՛տ է այս ժողովուրդը:

8 Անգամ մը որ չորնայ խոտը՝ ծաղիկն ալ կը թափի,
բայց Տիրոջ խօսքը յաւիտեան կը մնայ:

ԱՀԱՒԱՍԻԿ ՁԵՐ ԱՍՏՈՒԱԾԸ

Եսայի Մարգարէ 40, 9-17

9 Ե՛լ այդ բարձր լեռան վրայ, աւետարանի՛չ Սիոնի,
ուժով բարձրացուր քու ձայնդ, աւետարանի՛չ Երուսաղէմի,
բարձրացուցէ՛ք, եւ մի՛ վախնաք,
ըսէ՛ Յուդայի այդ քաղաքին. ահա՛ Լասիկ ձեր Աստուածը:

10 Ահա՛ Լասիկ Տէրը. Տէրը գորութեամբ կու գայ,
անոր բազուկը տիրական իշխանութիւն ունի.
ահա իրեն հետ է իր վարձքը եւ իր առջեւ՝ իր գործերը:

11 Ան, իբրեւ հովիւ՝ պիտի հովուէ իր ոչխարները,
իր բազուկով պիտի հաւաքէ գառնուկները,
իր գրկին մէջ պիտի կրէ գանոնք,
եւ յղի եղողները պիտի քաջալերէ:

12 Ո՞վ ջուրերը չափած է իր ափով կամ երկինքը՝ թիզով,
եւ ամբողջ երկիրը՝ բթամատի եւ ցուցամատի լայնքով:

ն՞վ կշռած է լեռները իրենց ծանրութեամբ
եւ չափած է դաշտերը՝ լարերով:

13 Ո՞վ հասկցած է երբեք Տիրոջ միտքը
կամ ո՞վ խորհրդակից եղած է անոր՝ խելք տալու համար անոր.

14 կամ որու հե՛տ խորհրդակցած է ան՝
որ իրեն խելք տուած ըլլայ.
կամ ո՞վ ցոյց տուած է անոր՝
արդարութեան եւ իմաստութեան ճամբան.
կամ ո՞վ նախապէս փոխ տուած է անոր՝
որ ան փոխադարձէ իրեն:

15 Եթէ բոլոր ազգերը հաւասար են
չիթին որ կը կաթի դոյլէ մը,
կամ կրնան չափուիլ ամենափոքր կշիռքի չափով,
կամ համարփէք կը համարուին բերնէն ելած լորձուկներ:

16 Եթէ Լիբանանը բաւարար է
կրակարանը վառուած պահելու համար,
եւ բոլոր չորքոտանիները չեն բաւեր
ողջակէզ մը ընելու համար,

17 ուրեմն ոչի՛նչ են բոլոր ազգերը
եւ ոչի՛նչ կը համարուին անկէ:

ՈՐՈՒՒ ԿԸ ՆՍԱՆՅՆԷՔ ՏԷՐԸ

Եսայի Մարգարէ 40, 18-26

18 Ուրեմն, դուք որո՞ւ կը նմանցնէք Տէրը,
եւ որո՞ւ կերպարանքով կը պատկերացնէք զինքը:

19 Արձա՞ն մըն է ան, գոր հիւսնը կոփած է, կամ ոսկի՝ գոր ոսկերիչը ձուլած կամ ոսկիով պատած է, եւ ձեւաւորած է զայն՝ կերպարանք մը տալով անոր:

20 Հիւսնը կ'ընտրէ փայտ մը որ չի փտիր, եւ խելացի կերպով՝ կը փնտռէ հնարք մը թէ ինչպէս կարենայ կանգնել զայն՝ որպէսզի տեղէն չշարժի:

21 Դուք չէ՞ք լսած, չէ՞ք իմացած, չէ՞ պատմուած ձեզի սկիզբէն, չէ՞ք գիտցած թէ ո՛վ հաստատած է երկրի հիմերը:

22 Այն՝ որ բռնած է երկրին շրջագիծը, որու բնակիչները մարախներու հաւասար են, որ երկինքը կանգնած է իբրեւ կամար, որ զայն լարած է իբրեւ վրան, որ երկիրը հաստատած է՝ որպէսզի անոր վրայ բնակին:

23 Ան՝ իշխանութենէ գուրկ կը դարձնէ իշխանները, եւ երկիրը ստեղծած է այնպէս՝ իբր թէ ոչինչ ըրած ըլլար:

24 Որովհետեւ ան այնպէս ըրած է՝ որ անոնք չսերմանեն ու չտնկեն, որ անոնց արմատը չխորանայ հողին մէջ. ասոր համար ան փչեց անոնց վրայ եւ անոնք չորցան. եւ փոթորիկը իր հետ պիտի տանի զանոնք՝ չորցած ճիւղերու նման:

25 Արդ, դուք որո՞ւ նմանցուցած էք զիս, որ ես կարենամ անոր համահաւասար ըլլալ, կ'ըսէ Իսրայէլի Սուրբը:

26 Դէպի բարձունքնե՛րը վերցուցէք ձեր աչքերը, եւ տեսէք թէ ո՞վ հաստատած է այդ բլուրը, ո՞վ մէջտեղ հանած է անոնց զարդարանքները, ո՞վ է որ իր մեծագոյն փառքովն ու անդիմադրելի գորութեամբ՝ իրենց անուներով կը կանչէ այդ բլուրը. ուստի չկա՛յ բան մը որ ծածուկ մնացած ըլլայ քեզմէ:

ՆՈՐ ԵՐԳԵՐ ԵՐԳԵՅԷՔ ՏԻՐՈՁ

Եսայի Մարգարէ 42, 10–16

10 Օրհնեցէք Տէրը նո՛ր օրհներգներով, որովհետեւ անոր իշխանութիւնը բարձունքներուն վրայ կը փառաւորուի, եւ երկրի ծագերէն՝ անոր անունը, անոնցմէ՝ որ ծով իջած էին նաւերով, նաեւ կղզիներէն ու անոնց բնակիչներէն:

11 Թող խայտա՛ն անապատն ու անոր աւանները, կեդարի բանակներն ու բնակիչները, թող ուրա՛խ ըլլան Վէմ քաղաքին բնակիչերը եւ լեռներու բարձունքներէն թող գոչեն:

12 Թող փա՛ռք տան անոնք Աստուծոյ եւ կղզիները անոր քաջութիւնը թող պատմեն:

13 Զօրութիւններու Տէր Աստուածը պիտի գայ, եւ պատերազմ պիտի հրահրէ, նախանձ պիտի յարուցանէ, եւ հզօր ձայնով պիտի գոչէ իր թշնամիներուն վրայ:

14 Սկիզբէն ի վեր ես լուռ մնացի,
բայց պէ՞տք է որ միշտ լռեմ ու մտիկ ընեմ.
Համբերեցի յղի կնոջ նման,
բայց հիմա պիտի զարհուրեցնեմ ու միանգամայն ցամքեցնեմ:

15 Լեռներն ու բլուրները հիմնադասակ պիտի ընեմ
եւ պիտի չորցնեմ անոնց բոլոր բոյսերը,
գետերը կղզիներու պիտի վերածեմ,
եւ ճահճները պիտի ցամքեցնեմ:

16 Կոյրերը պիտի առաջնորդեմ այնպիսի ճամբայէ՝
որուն գիտա՛կ իսկ չէին,
եւ այնպիսի՝ շաւիղներէ պիտի քալեցնեմ զանոնք՝
որոնց անծանօթ էին.
անոնց համար՝ խաւարը լոյսի պիտի վերածեմ,
եւ դժուարը դիւրին պիտի դարձնեմ.
այս բաները պիտի ընեմ անո՛նց համար
եւ պիտի չքեմ գիրենք:

ԴՈՒՆ ԵՍ ԱՍՏՈՒԱԾԸ ԵՒ ՉԷԻՆՔ ԳԻՏԵՐ

Նաայի Մարգարէ 45, 15-24

15 Դո՛ւն ես Աստուածը, եւ չէինք գիտեր,
Իսրայէլի Փրկի՛չ Աստուածը:

16 Պիտի ամչնան եւ ամօթահար պիտի ըլլան
քու բոլոր հակառակորդներդ
եւ ամօթով պիտի մնան անոնք:

17 Նորոգուեցէք եւ ինծի՛ եկէք, կղզիներ,
որովհետեւ Իսրայէլը պիտի փրկուի
յաւիտենական փրկութեամբ.
պիտի չամչնան այլեւս անոնք
եւ ամօթ պիտի չկրեն յաւիտեան:

18 Այսպէ՛ս կ'ըսէ Տէրը, որ երկինքը ստեղծած է,
Աստուած՝ որ երկի՛րը ըրած է եւ հաստատած է զայն,
եւ սահմաններ դրած է անոր.
ան ո՛չ մէկ բան ստեղծած է գուր տեղ,
այլ բնակութեան համար ստեղծած է.
Ե՛ս եմ Տէրը, եւ չկա՛յ ուրիշ մէկը:

19 Ես ո՛չ մէկ բան չըսի ծածուկ կերպով
եւ ո՛չ ալ խաւար տեղ մը երկրի վրայ.
Ես չըսի՝ Յակոբի զաւակներուն՝
որ այդ սնտի բաներուն ետեւը երթան:
Ե՛ս եմ, Ե՛ս եմ Տէրը, որ արդարութիւնը կը խօսիմ
եւ ճշմարտութիւնը կը պատմեմ:

20 Հաւաքուեցէք եւ եկէք, միասին խորհրդակցեցէք,
դուք՝ որ փրկուած էք հեթանոսներու մէջէն.
անոնք որ կուռքի վերածուած փայտը կը կրէին՝ չէին հասկցած,
եւ աղօթք կ'ընէին այդ տեսակ աստուածներու՝
որոնք չէին կրնար փրկել գիրենք:

21 Եթէ ըսելիք ունին, հո՛ս թող մօտենան,
որ բոլորը մէկ գիտնան
թէ ո՛վ իրենց լսելի ըրած է սկիզբէն բոլոր այս բաները,
որովհետեւ հիմակուրնէ սկսեալ՝

աւանդուեցաւ ձեզի թէ Ե՛ս եմ Աստուածը,
եւ չկա՛յ մէկը ինծմէ՛ զատ,
եա՛ արդարն ու Փրկիչը·
եւ չկա՛յ մէկը ինծմէ՛ զատ:

22 Ինծի՛ դարձէք եւ պիտի փրկուիք,
դուք որ երկրիս ծայրերէն եկած էք·
Ե՛ս եմ Աստուածը,
եւ չկա՛յ ուրիշ մէկը ինծմէ՛ զատ:

23 Անձիս վրայ կ'երդնում՝
թէ արդարութիւն է այն ամէն բանը որ իմ բերնէս կ'ելլէ,
եւ խօսքերս չեն խաբեր:
որովհետեւ ամէն ծունկ իմ առջեւս պիտի խոնարհի,
ամէն լեզու զիս Աստուած՝ պիտի խոստովանի,

24 Եւ պիտի ըսէ թէ՛
անո՛ր կը վայելէ արդարութիւն եւ փառք:

ԱՅՍՊԷՍ ԿՐՍԷ ՏԵՐԸ

Նաայի Մարգարէ 49, 7-13

7 Այսպէ՛ս կ'ըսէ Տէրը, Իսրայէլի Աստուածը, որ փրկեց քեզ·
սո՛ւրբ համարեցէք այն մարդը որ կ'արհամարհէ իր անձը,
որ կը նախատուի ազգերէն եւ իշխաններու ծառաներէն·
զայն տեսնելով՝ թագաւորներ ոտքի պիտի ելլեն,
եւ իշխաններ պիտի երկրպագեն անոր՝ Տիրոջ համար·
որովհետեւ Իսրայէլի Սուրբը որ ընտրեց քեզ՝
վստահութեան արժանի է:

8 Այսպէ՛ս կ'ըսէ Տէրը՝ Իսրայէլին·
Երբ հասաւ պատեհ ժամանակը՝ ես լսեցի քեզ
եւ փրկութեան օրը՝ օգնեցի քեզի:
Ե՛ս ստեղծեցի քեզ,
եւ իբր ուխտ դրի քեզ՝ հեթանոսներուն համար,
որպէսզի երկիրը կանգնես
եւ աւերակ դարձած ժառանգութիւնը ժառանգես·

9 որպէսզի ըսէք կալանաւորներուն՝ Ելէ՛ք·
եւ անոնց որ խաւարի մէջ են՝ Յայտնուեցէ՛ք:
Անոնք պիտի արածին բոլո՛ր ճամբաներուն վրայ
եւ ճարակ պիտի գտնեն բոլո՛ր շաւիղներուն վրայ:

10 Պիտի չանօթենան՝ անոնք, պիտի չծարաւի՛ն,
եւ խորշակահար պիտի չըլլան արեւին տակ,
եւ այն որ կ'ողորմի՝ պիտի մխիթարէ զանոնք
եւ աղբիւրներու ակերուն մօտ պիտի առաջնորդէ:

11 Բոլոր լեռները՝ ես ճամբաներու պիտի վերածեմ
եւ բոլոր շաւիղները՝ արօտավայրի անոնց համար:

12 Ահա անոնցմէ ոմանք հեռուէն պիտի գան,
ոմանք՝ հիւսիսէն եւ ծովէն եւ ոմանք՝ Պարսիկներու երկրէն:

13 Ուրախացի՛ր, երկի՛նք, թող ցնծա՛յ երկիրը,
թող լեռները ցնծութի՛ւնը կանչեն,
եւ բլուրները՝ արդարութիւնը,
որովհետեւ Աստուած ողորմեցաւ իր ժողովուրդին
եւ իր ժողովուրդին խեղճերը մխիթարեց:

ՏԻՐՈՉ ՔԱՀԱՆԱՆԵՐ ՊԵՏԻ ԿՈՉՈՒԻՔ

Յապի Մարգարէ 61, 6-9

6 Դուք՝ Տիրոջ քահանանէ՛ր պիտի կոչուիք,
մեր Աստուծոյն պաշտօնեանէ՛րը պիտի անուանուիք,
ազգերու հարստութեամբ պիտի սնանիք
եւ անոնց փառքով պիտի պայծառանաք:

7 Զեր ամօթին փոխարէն՝
կրկնապատիկ ուրախութիւն պիտի ունենաք ,
եւ ձեզի տրուած նախատիքին փոխարէն՝ ցնծութիւն.
ապա դարձեալ պիտի ժառանգեն երկիրը,
եւ յաւիտենական ուրախութիւն պիտի ըլլայ
անոնց գլխուն վրայ:

8 Որովհետեւ ե՛ս եմ Տէրը, որ արդարութիւն կը սիրեմ,
եւ անիրաւ յափշտակութիւնը կ'ատեմ,
արդարներուն կու տամ իրենց արժանիքին համեմատ.
եւ ես յաւիտենակա՛ն ուխտ պիտի կնքեմ անոնց հետ:

9 Անոնց զաւակը ազգերուն մէ՛ջ պիտի ճանչցուի,
եւ անոնց սերունդները՝ ժողովուրդներուն մէջ.
ամէն անոնք որ տեսնեն զիրենք՝
պիտի ճանչնան իբր Աստուծոյ օրհնեալ զաւակներ:

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅՆՃԱՄ

Յապի Մարգարէ 61, 10-11

10 Հոգիս թող ցնծա՛յ Տիրոջմով,
որովհետեւ փրկութեան զգեստ

եւ ուրախութեան պատմուճան հազցուց ինծի,
իբրեւ փեսայ՝ պսակ դրաւ ինծի,
եւ իբրեւ հարս՝ զարդերով զարդարեց զիս:

11 Ինչպէս որ երկիրը իր ծաղիկները կ'աճեցնէ,
եւ ինչպէս որ պարտէզը իր սերմանիքը կը բուսցնէ,
այնպէս ալ Տէրը՝ բոլո՛ր ազգերուն առջեւ
իր արդարութիւնն ու ցնծութիւնը պիտի ծագեցնէ:

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԷ՛ ԵՐՈՒՍԱԳԷՄ

Յապի Մարգարէ 60, 1-5

1 Լուսաւորուէ՛, լուսաւորուէ՛, Երուսաղէ՛մ,
որովհետեւ հասա՛ծ է լոյսդ,
եւ Տիրոջ փառքը պիտի ծագի քու վրադ:

2 Որովհետեւ ահա խաւարը ծածկած է երկիրը
եւ մառախուղը՝ հեթանոսները,
բայց Տէրը պիտի յայտնուի՛ քու մէջդ,
եւ Տիրոջ փառքը պիտի երեւի քու մէջդ:

3 Դէպի քո՛ւ լոյսդ պիտի երթան թագաւորները,
եւ հեթանոսները՝ դէպի քեզմէ՛ ծագող լոյսը:

4 Վերցո՛ւր աչքերդ, շո՛ւրջդ նայէ,
եւ տես քու քովդ հաւաքուած մանուկներդ,
որովհետեւ որդիներդ հեռաւոր տեղերէ եկած հասած են
եւ դուստրերդ անոնց ուսերուն վրայ բարձած պիտի բերուին:

5 Այն ժամանակ՝ դուն պիտի տեսնես եւ պիտի հրճուիս,
պիտի հիանաս ու հմայուիս բոլոր սրտովդ,

որովհետեւ քեզի՝ պիտի փոխանցուի հարստութիւնը ծովուն,
ազգերուն եւ ժողովուրդներուն:

ԵՍ ՉԵՄ ԼՈՒԵՐ

Եսայի Մարգարէ 62, 1-7

1 Պիտի չլռե՛մ Սիոնի համար,
եւ պիտի չնեղե՛մ Երուսաղէմի համար,
մինչեւ որ լոյսի պէս չծագի անոր արդարութիւնը,
մինչեւ որ փայլակին նման չբոցավառուի անոր փրկութիւնը:

2 Բոլո՛ր ազգերը պիտի տեսնեն քու արդարութիւնդ,
թագաւորները՝ քու փառքդ,
եւ պիտի տրուի քեզի՝ նո՛ր անուն մը՝ գոր Տէ՛րը պիտի նշանակէ:

3 Վայելչագեղ պսա՛կ պիտի ըլլաս դուն Տիրոջ ձեռքը,
եւ արքայակա՛ն թագ՝ քու Աստուծոյդ ձեռքին մէջ:

4 Պիտի չկոչուիս այլեւս՝ Լքուած,
ասկէ ետք քեզ պիտի չանուանեն՝ Աւերակ.
որովհետեւ քեզ պիտի կոչեն՝ իմ Կամքս
եւ քու երկիրդ՝ Շէն բնակութիւն,
Տէրը իր հաճութիւնը ցոյց պիտի տայ քեզի հանդէպ
եւ քու երկիրդ խիտ բնակութեամբ պիտի լեցուի:

5 Ինչպէս երիտասարդ մը կը բնակի կոյսի մը հետ,
նոյնպէս ալ որդիներդ՝ պիտի բնակին քեզի հետ.
Եւ ինչպէս փեսան ուրախ է հարսին համար,
ա՛յնպէս ալ Տէրը ուրախ պիտի ըլլայ քեզի համար:

6 Պահապաններ պիտի դնեմ պարիսպներուդ վրայ,
որոնք ամբողջ օրն ու ամբողջ գիշերը,
մինչեւ արեւուն ելլե՛լն անգամ՝
պիտի չդադրին Տէրը յիշատակելէ:

7 Որովհետեւ չկա՛յ մէկը քեզի նման՝
որ Երուսաղէմը կանգնէ
եւ պարծանք դարձնէ զայն ամբողջ երկրի վրայ:

ԼՍԵՏԷՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՒՔԸ

Երեմիա Մարգարէ 7, 2-7

2 Տիրոջ խօսքը լսեցէք, համա՛յն Հրէաստան,
որ Տիրոջ երկրպագութիւն ընելու համար՝
այս դռներէն ներս կը մտնէք:

3 Այսպէս կ'ըլլէ Զօրութիւններու Տէրը, Իսրայէլի Աստուածը.
Ուղղեցէ՛ք ձեր ճամբաներն ու ձեր ընթացքը
եւ այս տեղ պիտի բնակեցնեմ ձեզ:

4 Մի՛ վստահիք սուտ խօսքերու
որ բնաւ օգտակար պիտի չըլլան ձեզի,
երբ կ'ըսեն՝ Տիրոջ տաճա՛րը, Տիրոջ տաճա՛րը,
Տիրոջ տաճա՛րն է ասիկա:

5 Եթէ բոլորովին ուղղէք ձեր ճամբան ու ձեր ընթացքը,
եթէ արդարօրէն գործադրէք իրաւունքը մարդուն՝
իր ընկերոջ հանդէպ,

6 եթէ չհարստահարէք օտարականը, որբը եւ այրին,
եթէ անմեղ արիւն չթափէք այդ տեղ,
եթէ օտար աստուածներու ետեւէն չերթաք, ի վնաս ձեզի,

7 Ես ձեզ այդ տեղ պիտի բնակեցնեմ, այն երկիրը զոր անակիզք ժամանակներէ ի վեր եւ յաւիտենապէս տուի ձեր հայրերուն:

ԱՐՅՈՒՆՔ ԹԱՓԵՅԷՔ

Երեմիա Մարգարէ 14, 17-21

17 Գիշեր ցերեկ թող արցունք իջնէ ձեր աչքերէն եւ թող չդադրի, որովհետեւ իմ ժողովուրդիս կոյս աղջիկը չարաչար վիրաւորուեցաւ, իրստ ցաւազին հարուածներով:

18 Երբ դաշտ ելլեմ՝ ահա սուրով կոտորուածներ. երբ քաղաք մտնեմ՝ ահա սովին պատճառած ցաւերը. որովհետեւ թէ՛ մարգարէն եւ թէ՛ քահանան, իրենց չճանչցած երկիրը գացին:

19 Արդեօք դուն զգուանքով մերժեցի՞ր Յուդան, կամ հոգիդ բոլորովին հեռացա՞ւ անկէ. ինչո՞ւ հարուածեցիր մեզ, դարման չկա՞յ մեզի համար. խաղաղութիւն ականկալեցինք, բայց բարիք չեղաւ անկէ, բժշկուելու առիթ՝ բայց ահա խռովութիւն եկաւ:

20 Տէր, մենք ճանչցա՛նք մեր մեղքերը եւ մեր հայրերուն անօրէնութիւնները, որովհետեւ քո՛ւ առջեւդ մեղանչեցինք:

21 Քու անունիդ համար՝ մեղմացո՛ւր բարկութիւնդ եւ մի՛ կործաներ փառքիդ գահը. յիշէ՛ եւ մի՛ դրժեր այն ուխտը զոր ըրիր մեզի հետ:

ՕՐՀՆԵԱԼ ԸԼԼԱՅ ԱՅՆ ՄԱՐԴԸ

Երեմիա Մարգարէ 17, 7-8

7 Օրհնեա՛լ ըլլայ այն մարդը որ Տիրոջ կ'ապաւինի, Տէրը մի՛ շտ անոր յոյսը պիտի ըլլայ:

8 Ան պիտի նմանի ծառի մը՝ որ կ'աճի ջուրի հոսանքներուն մօտ, եւ ջուրի հոսանքներուն համեմատ կը տարածէ իր արմատները. ան պիտի չվախնայ երբ սաստիկ տաք ըլլայ եւ երբ անոր սաղարթը, անտառի վերածուելով՝ շրջապատէ գայն. ան պիտի չվախնայ երաշտութեան տարիէն եւ պիտի չդադրի պտուղ տալէ:

ԼՍԵՅԷՔ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԸ

Երեմիա Մարգարէ 31, 10-14

10 Տիրոջ պատգամը լսեցէք, ազգե՛ր. պատմեցէք հեռաւոր կղզիներուն վրայ եւ ըսէք. Այն որ ցրուեց Իսրայէլը՝ նո՛յնինքն պիտի հաւաքէ գայն. եւ պահապան պիտի ըլլայ անոր այնպէս՝ ինչպէս հովիւը իր հօտին,

11 որովհետեւ Տէրը փրկե՛ց Յակոբը եւ ազատե՛ց գայն իր բռնակալներուն ձեռքէն:

12 Պիտի գան եւ ուրախութիւն պիտի ընեն, ու պիտի ցնծան Սիոն լեռան վրայ. պիտի գան՝

վայելելու Տիրոջ բարիքները, ցորենի, գինիի, բերքի, խաչինքներու, արջառներու եւ ոչխարներու երկրին մէջ՝ անոնց հոգին պտղալից ծառերու նման պիտի դառնայ եւ այլեւս պիտի չանօթենան անոնք:

13 Այն ատեն՝ կոյս աղջիկները, երիտասարդներով միասին, պիտի ցնծան, ծերերը պիտի խայտան, անոնց սուգը եւ ուրախութեան պիտի փոխեմ եւ իրենց տրտմութենէն ետք, բերկրութեամբ պիտի լիացնեմ զիրենք:

14 Պիտի գմայլեցնեմ եւ պիտի արբեցնեմ Ղեւիի քահանայ որդիներուն հոգիները եւ իմ բարիքներովս պիտի լեցուի իմ ժողովուրդս, կ'ըսէ Տէրը:

ՏԷՐ, ՏԵՍ ԵՒ ՆԱՅԷ՛

Ողբ Երեմիա Մարգարէի 2, 20-22

20 Տէ՛ս, Տէ՛ր, եւ նայէ՛, զո՞վ երբեք ենթարկած ես այսպիսի կոտորածի՝ կիները իրենց ծոցին պտուղը կ'ուտէին՝ այնպիսի՛ կոտորած մը ըրիր՝ որ խոհարարներ դրիր, որպէսզի մորթեն ծծկեր մանուկներ, եւ քահանան ու մարգարէն, Տիրոջ սրբավայրին մէջ:

21 Ծերն ու մանուկը ճամբաներու մէջտեղը քնացան, կոյսն ու երիտասարդը, անխտիր, գերութեան տարուեցան՝ դուն սուրէ անցուցիր, կոտորեցիր զանոնք բարկութեանդ օրը, դուն մորթեցիր, ոչնչացուցիր եւ չխնայեցիր անոնց:

22 Պանդխտութեանս տարելիցի օրը, իբր թէ տօնախմբութեան կանչեցիր շուրջս եղողները՝ ո՛չ ոք կրցաւ ազատիլ եւ ո՛չ ալ մէկը մնաց ողջ Տիրոջ զայրոյթին ու բարկութեան օրը, երբ թշնամիներս բազմացան:

ՏԱՌԱՊԱՆՔԻՍ ԱՆԳՈՒՆԴԷՆ

Ողբ Երեմիա Մարգարէի 3, 55-66

55 Քու անունը կանչեցի, Տէր, տառապանքի գուբին մէջէն՝

56 եւ դուն լսեցիր ձայնս՝ ալանջդ մի՛ փակեր խնդրանքիս առջեւ, այլ աւելի՛ բաց զանոնք ինծի համար եւ փրկէ՛ զիս:

57 Դուն ինծի օգնելով՝ համար մօտեցար, եւ ըսիր՝ Ո՛ր օրն ալ դիմես ինծի՛ մի՛ վախնար:

58 Հոգիիս դատը տեսար, Տէ՛ր, դուն իմ կեանքս փրկեցիր:

59 Տեսար իմ խռոված վիճակս, եւ իմ դատս տեսար, Տէ՛ր:

60 Տեսար իմ բոլոր իրաւունքներս, եւ զննեցիր իմ բոլոր մտածումներս:

61 Լսեցիր, Տէ՛ր, անոնց նախատական խօսքերը եւ անոնց բոլոր մտածումները իմ մասիս,

62 անոնց չըթունքներուն խօսքերը
զորս կը խօսէին ինծի հակառակ, օ՛րն ի բուն:

63 Անոնց այդ մտածումներէն հասկցայ,
թէ անոնք ինչու կը նատին եւ ինչու կ'ելլեն:

64 Նայէ՛ անոնց աչքերուն գոռոզովթեան,
եւ յարմար հատուցումը բեր անոնց գլխուն:

65 Իրենց սրտին կարծրութեան համեմատ՝
հատուցում տուր անոնց:

66 Քու զայրոյթովդ հալածէ զանոնք
եւ քու բարկութեամբդ ոչնչացուր զանոնք
երկինքի կամարին ներքեւ:

ՅԻՇԷ՛, ՏԷՐ, ԻՆՉ ՈՐ ԿՐԵՑԻՆՔ ՄԵՆՔ

Ողբ Երեմիա Մարգարէի 5, 1-7 . 15-21

1 Յիշէ՛, Տէր, թէ ինչէ՛ր կրեցինք մենք.
նայէ՛ եւ տե՛ս մեր կրած նախատինքները:

2 Օտարներու ձեռքն ինկաւ մեր ժառանգութիւնը
եւ մեր բնակութիւնը պանդխտութեան վերածուեցաւ:

3 Մենք որբ մնացինք եւ հայր չունինք այլեւս,
մեր մայրերը ժամանակէն առաջ այրի դարձան:

4 Դրամով խմեցինք մեր ջուրը.
եւ չկրցանք փոխանակել մեր փայտը:

5 Մեր պարանոցին վրայ եկաւ լուծը,
հալածական դարձանք եւ հանգիստ չգտանք:

6 Եզիպտացիք ու Ասորեստանցիք ձեռք երկարեցին՝
մեզ հացով յագեցնելու համար:

7 Մեր հայրերը մեղանչեցին,
եւ անոնցմէ մէկը չկայ հիմա.
եւ մեր հայրերուն մեղքերը մեր վրայ մնացին:

15 Մեր սրտերը զրկուեցան ուրախութենէ
եւ մեր պարերուն օրհներգները ողբ դարձան:

16 Մեր գլխէն ինկաւ պսակը.
վա՛յ մեզի, վա՛յ մեզի, որովհետեւ մեղանչեցի՛նք:

17 Անոր համար ցաւագին սիրտ մը տրուեցաւ մեզի,
եւ անոր համար մեր աչքերը խաւարեցան,

18 որովհետեւ քարուքանդ եղաւ Սիոն լեռը,
աղուէսնե՛ր կը մտնէին ու կ'ելլէին սրահներուն մէջ:

19 Սակայն դուն՝ յաւիտեան կաս, Տէ՛ր,
եւ քու աթոռդ ազգէ ազգ կը մնայ:

20 Ինչո՞ւ ի սպառ մոռցար, հարուածեցիր ու լքեցիր մեզ.
դեռ երկա՞ր ժամանակով պիտի թողուս մեզ:

21 Դարձո՛ւր մեզ, Տէ՛ր, որ վերադառնանք.
վերանորոգէ՛ մեզ, Տէ՛ր,
այնպէս՝ ինչպէս էինք անցեալին:

ԵՍ ՊԻՏԻ ԱՌՆԵՄ ՉԵՉ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԷՆ

Եգեկիէլ Մարգարէ 36, 24-28

24 Ես հեթանոսներէ՛ն պիտի առնեմ ձեզ,
բոլո՛ր ազգերէն պիտի հաւաքեմ ձեզ,
եւ ձե՛ր երկիրը պիտի տանիմ ձեզ:

25 Անաղարտ ջուր պիտի թափեմ ձեր վրայ,
պիտի մաքրուիք ձեր պղծութիւններէն,
եւ ձեր բոլո՛ր կոռւքերէն պիտի մաքրեմ ձեզ:

26 Նո՛ր սիրտ պիտի տամ ձեզի,
եւ նո՛ր հոգի պիտի ներարկեմ ձեր մէջ,
ձեր մարմիններէն պիտի հանե՛մ քարէ սիրտը
եւ մարմնեղէն սիրտ պիտի տամ ձեզի:

27 Ի՛մ Հոգիս պիտի դնեմ ձեր մէջ,
եւ այնպէ՛ս պիտի ընեմ՝
որ արդարութի՛ւն գործելով քալէք,
ի՛մ օրէնքներս պահէք,
եւ զանո՛նք գործադրէք:

28 Պիտի բնակիք ա՛յն երկրին մէջ՝
գոր ձեր հայրերուն տուած էի,
դուք ժողովուրդ պիտի ըլլաք ինծի
եւ ես Աստուած պիտի ըլլամ ձեզի:

ՎԵՐԱԳԱՌՆԱՆՔ ՄԵՐ ԱՍՏՈՒԾՈՅՆ

Ովաէ Մարգարէ 6, 1-6

1 Դառնա՛նք եւ մեր Տէր Աստուծո՛յն երթանք.
քանի որ ի՛նքը հարուածեց մեզ՝
ի՛նքն ալ պիտի բժշկէ մեզ,
ի՛նքը վիրաւորեց՝
ի՛նքը պիտի դարմանէ մեզ:

2 Ան պիտի առողջացնէ մեզ երկու օր ետք,
եւ երրորդ օրը ոտքի պիտի ելլենք.
Իրեն առջեւ պիտի ապրինք.

3 Իրեն պիտի ծանօթանանք
եւ Տէրը ճանչնալու հետամուտ պիտի ըլլանք.
պատրաստակամ պիտի գտնենք զինք՝ ինչպէս առաւօտը
եւ մեր վրայ պիտի գայ՝ երկրի վրայ թափուող
զարնան ու աշնան անձրեւին պէս:

4 Ի՞նչ ընեմ քեզի, Եփրեմ, կամ ի՞նչ բերեմ քեզի, Յուդա,
որովհետեւ ձեր զթասրտութիւնը լուսաբացի ամպին նման է
եւ առաւօտեան ցօղին՝ որ կ'անցնի:

5 Այդ է պատճառը, որ ցիրուցան ըրի ձեր մարգարէները
եւ իմ բերնիս խօսքով կոտորեցի զիրենք,
որպէսզի քու իրաւունքներդ լոյսի նման ծագին:

6 Որովհետեւ ես ողորմութի՛ւն կ'ուզեմ եւ ո՛չ թէ՛ զոհ.
եւ ողջակէզէն աւելի՝ Աստուծոյ ճանաչո՛ւմը:

ԱՆՉԿՈՒԹԵԱՆՍ ՄԷՉ

Յովնան Մարգարէ 2, 3-10

3 Անձկուլթեանս մէջ իմ Տէր Աստուծոյս աղաղակեցի եւ ան լսեց զիս․

լսէ՛, Տէր, դժոխքի խորքերէն ելող աղաղակիս ձայնը:

4 Ծովու սրտին խորերը նետեցիր զիս եւ գետեր պաշարեցին զիս․

բոլոր կոհակներդ ու ալիքներդ վրայէս անցան․

5 Եւ ես ըսի թէ՛ Մերժուած եմ քու աչքէդ․ բախտը պիտի ունենամ մ'արդեօք

դարձեալ տեսնելու քու սուրբ տաճարդ:

6 Ջուրեր խուժեցին իմ վրաս,

զիս շնչասպառ ընելու աստիճան, եւ ամեհի անդունդներ պաշարեցին զիս․

գլուխս լեռներու խոռոչներուն մէջ մտաւ,

7 Եւ ես իջայ այն երկիրը

որու նիգերը յաւիտենական փականքներ են, կեանքս դուրս պիտի ելլէ՞՞ առանց ապականելու:

8 Երբ շունչս հատնելու վրայ էր՝

քեզի՛ գոչեցի, Տէ՛րս ու Աստուածս․ յիշեցի՛ Տէրը, մինչեւ քու սուրբ տաճարդ

պիտի բարձրանան աղաչանքներս:

9 Անոնք որ ունայնութեան եւ ստուլթեան կը հետեւին՝ անոնք են որ կը կտրեն իրենց յոյսը ողորմութիւն գտնելու:

10 Բայց ես՝ օրհնութեան եւ գովաբանութեան ձայներով պիտի մատուցանեմ քեզի այն պատարագը զոր ուխտեցի․ հատուցում պիտի ընեմ Տիրոջ՝ որ փրկուլթիւնս է:

ԼՍԵՑԻ՛, ՏԷՐ, ՉԱՅՆԳ ԵՒ ՎԱԽՅԱՅ

Ամբակում Մարգարէ 3, 2-19

2 Տէ՛ր, քու լուրդ առի եւ վախցայ․

Տէ՛ր, քու գործերուդ նայեցայ եւ զարհուրեցայ․ դուն երկու գազաններու միջեւ պիտի ճանչցուիս եւ երբ տարիները մօտենան՝ այն ատեն պիտի յայտնուիս․

երբ ժամանակը հասնի՝ դուն պիտի երեւնաս․ յիշէ՛ ողորմութիւնդ, երբ բարկութեան պատճառով ահուդողի մատնուիմ:

3 Աստուած Թեմանէն պիտի գայ եւ Սուրբը՝ ստուերով ծածկուած ու անտառախիտ լեռներէն:

Անոր փառքը ծածկեց երկինքը եւ անոր օրհնութեամբ լեցուեցաւ երկիրը:

4 Լոյսի պէս պիտի ըլլան անոր ճառագայթները եւ եղջիւրներ պիտի ըլլան անոր ձեռքերուն մէջ․ իր սաստիկ սիրոյն զօրութեան ապացոյցը տուաւ ան․

5 Խօսքը պիտի քալէ անոր առջեւէն եւ դաշտերուն վրայ պիտի տարածուի անոր ետեւէն:

6 Կանգնեցաւ, եւ երկիրը շարժեցաւ.
նայեցաւ, եւ ազգեր հալեցան,
լեռներ խորտակուեցան բռնութեամբ
եւ յաւիտենական բլուրներ հալեցան.
անոր յաւիտենական գնացքը տեսայ,
տարած աշխատանքներուս փոխարէն:

7 Եթովպացիներուն վրանները զարհուրեցան,
ինչպէս նաեւ Մադիամի երկրին տաղաւարները:

8 Տէր, գետերո՞ւն վրայ պիտի բարկանաս միթէ,
գետերո՞ւն դէմ է քու սրտմտութիւնդ,
կամ ալ ծովու վրա՞յ է քու արշաւանքդ,
որ երիվարներուդ վրայ կ'ելլես.
քու ձիավարութիւնդ փրկութեան կը տանի:

9 Լարելով պիտի պրկես աղեղդ իշխանութեան վրայ,
կ'ըսէ Տէրը.
երկիրը պատառեցաւ գետերուն պատճառաւ:

10 Երբ ազգերը տեսնեն քեզ,
երկունքի ցաւեր պիտի ունենան՝
որ ջուրերու ընթացքը կը փոխես.
անդունդները իրենց ձայնը արձակեցին
ամենասաստիկ ուժգնութեամբ:

11 Արեւը խափանեցաւ, լուսինը իր ընթացքին մէջ կասեցաւ.
նետերդ լոյսի մէջէն պիտի ընթանան՝
փայլատակող գէնքերուդ փայլին մէջէն:

12 Սպառնալիքներով նուագեցուցիր երկիրը
եւ բարկութեամբ պիտի խոնարհեցնես ազգերը:

13 Քու ժողովուրդդ ազատելու ելար,
քու օժեալներդ փրկելու համար.
մահ բերիր անօրէններու գլխուն
եւ կապանքները մինչեւ անոնց վիզը հասցուցիր ի սպառ:

14 Ապաեցուցիր ու խորտակեցիր բռնակալներուն գլուխները.
այդ վիճակին մէջ պիտի սասանին անոնք
եւ իրենց սանձը պիտի թողուն,
տնանկին նման որ գաղտնաբար կ'ուտէ:

15 Ծով հանեցիր քու երիվարներդ,
ամեհի ջուրերը պղտորելու համար:

16 Ես զգուշացայ,
եւ սիրտս զարհուրեցաւ շրթունքներուս աղօթքի ձայնէն,
դող անցաւ ոսկորներէս եւ փորս խռովեցաւ իմ ներսս.
հանգիստ պիտի ընեմ նեղութեան օրը,
որ իմ պանդխտացած ժողովուրդիս քով ելլեմ:

17 Որովհետեւ թզենին պիտի չտայ իր պտուղը.
որթատունկը արդիւնաբեր պիտի չըլլայ.
խաբուսիկ պիտի ըլլայ ձիթենիին բերքը.
դաշտերը ուտելիք պիտի չարտադրեն.
հօտերը նուազ ճարակավայրեր պիտի ունենան
եւ եզներ պիտի չըլլան մսուրներուն առջեւ:

18 Սակայն ես Տիրոջմով պիտի ցնծամ
եւ Աստուծոյս, փրկչի՛ս մէջ պիտի գտնեմ իմ ուրախութիւնս:

19 Տէր Աստուա՛ծ է իմ զօրութիւնս
եւ ա՛ն պիտի ուղղէ իմ ոտքերս,

մինչեւ որ վախճանիս հասնիմ:

Ան է որ բարձունքներ պիտի հանէ գիս,
անոր երգով յաղթական դառնալու համար:

ԻՄ ՀՈԳԻՍ ՊԻՏԻ ՀԵՂՈՒՄ

Յովել մարգարէ 2, 28–32

28 Իմ Հոգիէս պիտի հեղում
բոլոր մարմնաւոր էակներուն վրայ,
ձեր որդիներն ու դուստրները պիտի մարգարէանան,
ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն
եւ ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի ունենան:

29 Այդ օրերուն իմ Հոգիէս պիտի հեղում
ծառաներուս եւ աղախիններուս վրայ
եւ անոնք պիտի մարգարէանան:

30 Նշաններ ցոյց պիտի տամ վերը՝ երկինքի մէջ
եւ նշաններ՝ վարը, երկրի վրայ:
արի՛ւն, կրա՛կ եւ ծուխի մրրի՛կ:

31 Արեւը պիտի խաւարի եւ լուսինը արիւն պիտի դառնայ,
մինչեւ որ գայ եւ հասնի Տիրոջ մեծ եւ երեւելի օրը:

32 Եւ ո՛վ որ Տիրոջ անունը կանչէ՝
ան պիտի փրկուի:

ՏԻՐՈՋ ՊԱՏԳԱՄՆ Է ԱՅՍ

Սոփոնիա մարգարէ 3, 8–13

8 Անոր համար՝ սպասէ՛ ինծի, կ'ըսէ Տէրը,
վկայ ըլլալու համար այն օրը ուր պիտի յառնեմ:
ագգերուն վրայ պիտի գործադրեմ դատաստանս,
թագաւորները հաւաքելով՝
անոնց վրայ թափելու համար բարկութիւնս,
իմ բարկութեանս ամբո՛ղջ սաստկութիւնը,
որովհետեւ իմ նախանձախնդրութեանս կրակով՝
պիտի կլանուի ամբողջ երկիրը:

9 Որովհետեւ այն ատեն,
ժողովուրդներուն պիտի դարձնեմ իրենց ազգին լեզուն,
որպէսզի Տիրոջ անունը կանչեն ամէնքը
եւ մէկ լուծի տակ ծառայեն անոր:

10 Եթովպացիներու գետէն պիտի ընդունիմ զիրենք,
ցրուածներուն հետ միասին
եւ անոնք նուէրներ պիտի մատուցանեն ինծի:

11 Այն ատեն պիտի չամչնաս գործերէդ ո՛չ մէկուն համար,
որոնցմով ինծի դէմ մեղանչած էիր,
որովհետեւ այն ատեն պիտի վերցնեմ քեզմէ
քու ամբարտաւանութեանդ չարութիւնը
եւ այլեւս պիտի չյոխորտաս իմ սրբավայրիս լերան վրայ:

12 Քեզի պիտի թողում հեզ եւ խոնարհ ժողովուրդ մը,
որ պիտի երկնչի Տիրոջ անունէն:

13 Իսրայէլի մնացորդները
անիրաւութիւն պիտի չգործեն,
անտաի բաներ պիտի չխօսին
եւ նենգամիտ լեզու պիտի չըլլայ անոնց բերնին մէջ,
որովհետեւ պիտի արածուին եւ պիտի հանգչին անոնք,
եւ ո՛չ մէկը պիտի զարհուրեցնէ զիրենք:

ԱԶԱՐԻԱՅԻ ՕՐՀՆԵՐԳԸ

Դանիէլ մարգարէ 3, 26-45

26 Օրհնեա՛լ ես դուն, Տէ՛ր, մեր հայրերուն Աստուածը,
յաւիտեանապէս թող գովուի ու փառաւորուի քու անունդ:

27 որովհետեւ դուն արդար ես
բոլո՛ր այն բաներուն մէջ զորս բերիր մեր վրայ:
Ուղիղ են քու բոլո՛ր գործերդ, ճիշդ են քու ճամբաներդ
եւ արդար են քու բոլոր դատաստաններդ:

28 Բոլորովին արդար էր այն ինչ որ դուն ըրիր մեզի
եւ մեր հայրերուն՝ Երուսաղէմ սուրբ քաղաքին,
որովհետեւ արդարացի եւ իրաւացի էին այդ ամէնը
զորս դուն ըրիր՝ մեր մեղքերուն պատճառով:

29 Որովհետեւ մեղանչեցինք եւ անօրէնութիւն գործեցինք՝
ապստամբելով քեզի դէմ,
եւ աւելիով ալ մեղանչեցինք՝ ամէն բանի մէջ:

30 Մենք չանսացինք քու պատուիրաններուդ
եւ չըրինք այնպէս ինչպէս դո՛ւն պատուիրած էիր՝
որպէսզի բարիք հասնէր մեզի:

31 Արդար դատաստանով ըրիր բոլոր այն բաները
զորս մեր վրայ բերիր եւ մեզի ըրիր:

32 Մեզ յանձնեցիր անօրէն, դաժան,
եւ ապստամբ թշնամիներու ձեռքը
եւ ամբողջ աշխարհի ամէնէ՛ն անիրաւ
ու ամէնէ՛ն չար թագաւորին:

33 Եւ Հիմա, իրաւունք չունինք մեր բերա՛նն իսկ բանալու,
որովհետեւ ամօթի եւ նախատանքի առարկայ եղանք
քու ծառաներուդ եւ պաշտօնեաներուդ դիմաց:

34 Սակայն, քու անունիդ սիրոյն համար,
մի՛ լքեր մեզ վերջնական կերպով եւ մի՛ լուծեր քու ուխտդ:

35 մի՛ վերցներ քու ողորմութիւնդ մեզմէ,
քու սիրելի Աբրահամիդ,
Իսահակ ծառայիդ եւ քու սուրբիդ՝
Իսրայէլի՛ սիրոյն համար,

36 որոնց խոստացար իրենց զաւակները բազմացնել
երկինքի աստղերուն թիւին չափ
եւ որքան որ աւազ կայ ծովու ափին վրայ:

37 Հիմա սակայն, նուազեցաւ մեր թիւը, Տէ՛ր,
բոլո՛ր ազգերէն ալ աւելի,
եւ տառապանքներու ենթարկուած կ'ապրինք
ամբո՛ղջ աշխարհիս վրայ՝
մեր մեղքերուն պատճառով:

38 Ներկայ ժամանակիս՝ ո՛չ իշխան ունինք, ո՛չ մարգարէ,
ո՛չ առաջնորդ, ո՛չ ողջակէզներ, ո՛չ զոհեր,

ո՛չ պատարագներ, ո՛չ խոունկեր, ո՛չ ալ տեղ մը,
ուր կարենանք մեր երախայրիքը ներկայացնել քեզի՝
քու ողորմութեանդ արժանանալու համար:

39 Ուստի, բեկեալ սրտով, տառապալից հոգիով
կը խնդրենք որ ընդունելի ըլլանք քեզի:

40 Թող քու առջե՛ւդ ըլլայ մեր այսօրուայ պատարագը,
իբրեւ խոյերու եւ զուարակներու ողջակէզ
եւ բիւրաւոր պարարտ գառնուկներուն գոհ,
որպէսզի քեզի հետեւելով՝ կատարեալ ըլլանք,
որովհետեւ ամօթով չի մնար
այն որ իր վստահութիւնը կը դնէ քու վրայ:

41 Եւ հիմա, մեր բոլո՛ր սրտով
քու ետեւէդ կու գանք մենք,
քու երկիւղդ ունինք մեր մէջ եւ քու դէմքդ կը փնտռենք:

42 Ամօթով մի՛ թողուր մեզ,
այլ քու քաղցրութեամբդ վարուէ մեզի հետ,
քու անչափ ողորմութեանդ համեմատ:

43 Փրկէ՛ մեզ՝ քու ըրած սքանչելիքներուդ համեմատ,
եւ քու անունդ թող փառք ստանայ, Տէ՛ր:

44 Ամօթահար թող ըլլան բոլոր անոնք
որ չարիք կը հասցնեն քու ծառաներուդ,
եւ թող ամչնան անոնք որ բռնութիւն գործած են,
եւ թող խորտակուի անոնց զօրութիւնը,

45 եւ թող ճանչնան թէ դո՛ւն ես միակ Տէր Աստուածը,
որ փառաւորուած ես համայն տիեզերքի մէջ:

ԱՆԱՆԻԱՅԻ, ԱԶԱՐԻԱՅԻ ԵՒ ՄԻՍԱՅԷԼԻ ՕՐՀՆԵՐԳԸ

Դանիել մարգարէ 3, 52-90

52 Օրհնեա՛լ ես, Տէ՛ր, Աստուած՝ մեր հայրերուն,
գովեա՛լ ըլլաս միշտ եւ յաւիտեան աւելի՛ փառաւորեալ:
օրհնեա՛լ է քու սուրբ եւ փառաւոր անունդ,
գովեա՛լ ըլլաս միշտ եւ յաւիտեան աւելի՛ փառաւորեալ:

53 Օրհնեա՛լ ես քու փառքիդ սուրբ տաճարին մէջ,
գովեա՛լ ըլլաս միշտ եւ յաւիտեան աւելի՛ փառաւորեալ:

54 Օրհնեա՛լ ես քու արքայութեանդ աթոռին վրայ,
գովեա՛լ ըլլաս միշտ եւ յաւիտեան աւելի՛ փառաւորեալ:

55 Օրհնեա՛լ ես, դուն որ անդունդները կը զննես
եւ քերովբէներէն վեր կը բազմիս:
գովեա՛լ ըլլաս միշտ եւ յաւիտեան աւելի՛ փառաւորեալ:

56 Օրհնեա՛լ ես, դուն որ երկնակամարին վրայ կը նստիս,
գովեա՛լ ըլլաս միշտ եւ յաւիտեան աւելի՛ փառաւորեալ:

57 Տէ՛րը օրհնեցէք, դուք՝ Տիրոջ բոլո՛ր գործերը:
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէք զայն յաւիտեան:

58 Տէ՛րը օրհնէ, երկի՛նք:
օրհնէ՛ եւ փառաւորէ՛ զայն յաւիտեան:

59 Տէ՛րը օրհնեցէք, Տիրո՛ջ հրեշտակներ,
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէք զայն յաւիտեան:

60 Տէ՛րը օրհնեցէք, ջուրե՛րը բոլոր որ երկինքի վերեւ էք,
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:

- 61 Տէ՛րը օրհնեցէ՛ք, համայն զօրութիւննե՛րը Տիրոջ՝
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 62 Տէ՛րը օրհնեցէ՛ք, արե՛ւ եւ լուսի՛ն.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 63 Տէ՛րը օրհնեցէ՛ք, երկինքի աստղե՛րը բոլոր՝
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 64 Տէ՛րը օրհնեցէ՛ք, անձրեւներն ու ցօղե՛րը բոլոր՝
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 65 Տէ՛րը օրհնեցէ՛ք, հովե՛րը բոլոր՝
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 66 Տէ՛րը օրհնեցէ՛ք, հո՛ւր եւ ջերմութի՛ւն.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 67 Տէ՛րը օրհնեցէ՛ք, ցո՛ւրտ եւ սառնամանի՛ք.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 68 Տէ՛րը օրհնեցէ՛ք, եղեա՛մ եւ ձի՛ւն.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 69 Տէ՛րը օրհնեցէ՛ք, ցերե՛կ եւ գիշե՛ր.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 70 Տէ՛րը օրհնեցէ՛ք, լո՛յս եւ խաւա՛ր.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 71 Տէ՛րը օրհնեցէ՛ք, ամպե՛ր եւ փայլատակումնե՛ր.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:

- 72 Թող երկիրը Տէ՛րը օրհնէ՛.
Թող օրհնէ՛ եւ փառաւորէ՛ զայն յաւիտեան:
- 73 Տէ՛րը օրհնեցէ՛ք, լեռնե՛ր եւ բարձունքնե՛ր.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 74 Տէ՛րը օրհնեցէ՛ք, բոլո՛ւր բոյսերը երկրի՝
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 75 Տէ՛րը օրհնեցէ՛ք, աղբիւրնե՛ր.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 76 Տէ՛րը օրհնեցէ՛ք, ծո՛վ եւ գետե՛ր.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 77 Տէ՛րը օրհնեցէ՛ք,
կէտձուկնե՛ր եւ ամէ՛ն տեսակ շարժուն ձուկեր
որ ջուրերու մէջ կ'ապրիք.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 78 Տէ՛րը օրհնեցէ՛ք, երկինքի թռչուննե՛ր.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 79 Տէ՛րը օրհնեցէ՛ք, վայրի կենդանիներ եւ գազաններ,
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 80 Տէ՛րը օրհնեցէ՛ք, մարդո՛ց որդիներ.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:
- 81 Թող Իսրայէլը Տէ՛րը օրհնէ՛.
Թող օրհնէ՛ եւ փառաւորէ՛ զայն յաւիտեան:
- 82 Տէ՛րը օրհնեցէ՛ք, քահանանե՛ր.
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:

83 Տէ՛րը օրհնեցէ՛ք, Տիրո՛ջ ծառաներ․
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:

84 Տէ՛րը օրհնեցէ՛ք, արդարներո՛ւ հոգիներ եւ շունչեր․
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:

85 Տէ՛րը օրհնեցէ՛ք, սուրբե՛ր եւ սրտո՛վ խոնարհներ․
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:

86 Տէ՛րը օրհնեցէ՛ք, Անանիա՛, Ագարիա՛ եւ Միսայէ՛լ․
օրհնեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան:

87 Որովհետեւ ան դժոխքէ՛ն փրկեց
եւ մահուան ճիրաններէ՛ն ազատեց մեզ:

88 Ան փրկեց մեզ այս հնոցէն եւ այս բորբոքած բոցերէն,
եւ այս կրակէ՛ն ազատեց մեզ:

89 Գոհուլթի՛ւն տուէք Տիրոջ, որովհետեւ քա՛ղցր է ան
եւ յաւիտեան է անոր ողորմութիւնը:

90 Օրհնեցէ՛ք աստուածներու Աստուածը,
Տիրոջ բոլո՛ր պաշտօնեաներ․
օրհնեցէ՛ք եւ գոհուլթի՛ւն տուէք անոր,
որովհետեւ յաւիտեան է անոր ողորմութիւնը:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ ՄԱՆԱՍԷԻ

Տէ՛ր ամենակալ, Աստուած Աբրահամի,
Սահակի եւ Յակոբի
եւ անոնց արդար զաւակներուն:

Դուռն ստեղծեցիր երկինքը եւ երկիրը,
եւ անոնց ամէն զարդարանքները:

Քու խօսքիդ հրամանով, սահման դրիր ծովերուն,
փակեցիր անդունդները
եւ ահաւոր ու փառաւորեալ անունովդ կնքեցիր:

Ամէն արարած կը սարսափի եւ կը դողայ
քու զօրութեանդ վախէն:

Անհուն է մեծավայելչութիւնը փառքիդ սրբութեան,
աստիկ է սպառնական բարկութիւնդ
մեղաւորներուն դէմ,
բայց անչափ եւ անքննելի է սէրը պատգամներուդ:

Դուռն, Տէ՛ր, Բարձրեալ, զթասիրտ,
համբերող եւ բազմագութ,
որ կը ցաւիս մարդոց հասած չարիքներուն վրայ:

Դուռն, Աստուած, ապաշխարութիւն չդրիր արդարներուն՝
Աբրահամին, Սահակին եւ Յակոբին վրայ
որոնք չմեղանչեցին քու դէմդ,
բայց ապաշխարութիւն դրիր իմ, մեղաւորիս վրայ,
որովհետեւ մեղքերս աւելի բազմաթիւ են
քան ծովուն աւազը,
եւ անօրէնութիւններս բազմացան:

Ես արժանի չեմ նայելու եւ տեսնելու
երկինքի բարձունքները,
բազմաթիւ անօրէնութիւններուս պատճառով:

Ես ընկճուած եմ երկաթեայ կապանքներուն ճնշումէն,
եւ հանգիստ չունիմ:

Ես գրգռեցի քու բարկութիւնդ,
չարիք գործեցի քու դիմացդ,
կուռքեր կանգնեցի եւ ցատումդ բազմացուցի:

Եւ հիմա, ես ծնկաչոք կը խոնարհեցնեմ սիրտս,
ներում կը հայցեմ քու բարութենէդ:

Մեղանչեցի՛, Տէր, մեղանչեցի՛.
ես լա՛ւ գիտեմ իմ անօրէնութիւնս:

Կ'աղաչեմ քեզի, կը հայցեմ քեզմէ,
ներէ՛ ինծի, Տէր, ներէ՛ ինծի,
կորուստի մի՛ մատներ զիս չարութեանս փոխարէն:

Մի՛ բարկանար ինծի դէմ յաւէտ,
մի՛ յիշեր իմ յանցանքներս,
զիս պարտական մի՛ հաներ անոնց հետ
որ իրենց չարութեամբ երկրի յատակը կ'իջնեն:

Ուստի դուն, Աստուած,
ապաշխարողներու Աստուածն ըլլալով,
ցոյց տուր ինծի, որ արժանի չեմ բարկութեանդ:

Դուն կեանք պիտի չնորհես ինծի,
ըստ քու անբաւ գթութեանդ,
եւ ես պիտի օրհնաբանեմ քեզ
կեանքիս ամէն օրերուն:

Երկիրնքի հրեշտակները կը գավաբանեն քեզ, Տէր,
եւ քեզի՛ կը վայելէ փառքը յաւիտեան. Ամէն:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՏՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ԳԻՐՔԵՐՈՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ծնունդ	Ծնդ	Առակ	Առ
Ելի	Ելի	Ժողովող	Ժող
Ղեկավար	Ղե	Երգ երգող	Ե.Ե
Թիւ	Թիւ	Իմաստութիւն	Իմ
Երկրորդ Օրէնք	Բ.Օ.	Սիրաբ	Սիր
Յետ	Յետ	Եսայի	Ես
Դատարբ	Դատ	Երեմիա	Երմ
Հոռ	Հոռ	Բարու	Բար
Ա. Թագաւորութեանց	1 Թագ	Եզեկիել	Եզկ
Բ. Թագաւորութեանց	2 Թագ	Դանիէլ	Դան
Գ. Թագաւորութեանց	3 Թագ	Ովսիա	Ովս
Դ. Թագաւորութեանց	4 Թագ	Յովել	Յով
Ա. Մնացորդաց	1 Մնաց	Ամովս	Ամս
Բ. Մնացորդաց	2 Մնաց	Արդիու	Արդ
Եզր	Եզր	Յովնան	Յովն
Նեբմի	Նե	Միքէ	Միք
Տովբիթ	Տով	Նաոււմ	Նա
Յուդիթ	Յթ	Ամբակում	Ամբ
Եսթր	Եսթ	Սովոնիա	Սով
Ա. Մակաբայեցուց	1 Մակ	Անգէտս	Անգ
Բ. Մակաբայեցուց	2 Մակ	Զաւարիա	Զաւ
Սաղմոս	Սղմ		

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Աւետարան Մատթէոսի	Մտթ	Ա. Թուղթ Տիմոթէոսի	1 Տիմ
Աւետարան Մարկոսի	Մրկ	Բ. Թուղթ Տիմոթէոսի	2 Տիմ
Աւետարան Ղուկասի	Ղկ	Թուղթ Տիտոսի	Տիտ
Աւետարան Յովհաննէսի	Յովհ	Փիլիմոնի	Փն
Գործերք Առաքելոց	Գ.Առ	Թուղթ Եբրայեցիներու	Եբր
Թուղթ Հռոմայեցիներու	Հռ	Թուղթ Յակոբի	Յակ
Ա. Թուղթ Կորնթացիներու	1 Կոր	Ա. Թուղթ Պետրոսի	1 Պետ
Բ. Թուղթ Կորնթացիներու	2 Կոր	Բ. Թուղթ Պետրոսի	2 Պետ
Թուղթ Գաղատացիներու	Գաղ	Ա. Թուղթ Յովհաննէսի	1 Յովհ
Թուղթ Եփեսացիներու	Եփս	Բ. Թուղթ Յովհաննէսի	2 Յովհ
Թուղթ Փիլիպպեցիներու	Փիլ	Գ. Թուղթ Յովհաննէսի	3 Յովհ
Թուղթ Կոլոսացիներու	Կոլ	Թուղթ Յուդայի	Յուդ
Ա. Թուղթ Թեսաղոնիկեցիներու	1 Թես	Յայտնութիւն	Յայտ
Բ. Թուղթ Թեսաղոնիկեցիներու	2 Թես		

ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ

Ներկայացում 3

ԴԱԻԻԹԻ ՍԱՂՄՈՄՆԵՐԸ

Սաղմոս 1	9
Սաղմոս 2	11
Սաղմոս 3	13
Սաղմոս 4	14
Սաղմոս 5	16
Սաղմոս 6	18
Սաղմոս 7	20
Սաղմոս 8	22
Սաղմոս 9	24
Սաղմոս 10	26
Սաղմոս 11	30
Սաղմոս 12	32
Սաղմոս 13	34
Սաղմոս 14	35
Սաղմոս 15	36
Սաղմոս 16	38
Սաղմոս 17	40
Սաղմոս 18	46
Սաղմոս 19	48
Սաղմոս 20	49
Սաղմոս 21	51
Սաղմոս 22	55
Սաղմոս 23	57

Սաղմոս 24	59
Սաղմոս 25	61
Սաղմոս 26	63
Սաղմոս 27	65
Սաղմոս 28	67
Սաղմոս 29	69
Սաղմոս 30	71
Սաղմոս 31	74
Սաղմոս 32	76
Սաղմոս 33	79
Սաղմոս 34	82
Սաղմոս 35	86
Սաղմոս 36	88
Սաղմոս 37	93
Սաղմոս 38	96
Սաղմոս 39	98
Սաղմոս 40	101
Սաղմոս 41	103
Սաղմոս 42	105
Սաղմոս 43	107
Սաղմոս 44	110
Սաղմոս 45	113
Սաղմոս 46	114
Սաղմոս 47	116
Սաղմոս 48	118
Սաղմոս 49	121
Սաղմոս 50	124
Սաղմոս 51	128

Սաղմոս 52	130
Սաղմոս 53	121
Սաղմոս 54	132
Սաղմոս 55	135
Սաղմոս 56	138
Սաղմոս 57	139
Սաղմոս 58	141
Սաղմոս 59	144
Սաղմոս 60	145
Սաղմոս 61	147
Սաղմոս 62	149
Սաղմոս 63	151
Սաղմոս 64	152
Սաղմոս 65	154
Սաղմոս 66	157
Սաղմոս 67	158
Սաղմոս 68	163
Սաղմոս 69	168
Սաղմոս 70	169
Սաղմոս 71	173
Սաղմոս 72	176
Սաղմոս 73	179
Սաղմոս 74	182
Սաղմոս 75	183
Սաղմոս 76	185
Սաղմոս 77	188
Սաղմոս 78	197
Սաղմոս 79	199

Սաղմնու 80	202
Սաղմնու 81	204
Սաղմնու 81	204
Սաղմնու 82	205
Սաղմնու 83	207
Սաղմնու 84	209
Սաղմնու 85	211
Սաղմնու 86	213
Սաղմնու 87	214
Սաղմնու 88	216
Սաղմնու 89	222
Սաղմնու 90	224
Սաղմնու 91	227
Սաղմնու 92	229
Սաղմնու 93	230
Սաղմնու 94	233
Սաղմնու 95	235
Սաղմնու 96	237
Սաղմնու 97	239
Սաղմնու 98	240
Սաղմնու 99	241
Սաղմնու 100	242
Սաղմնու 101	244
Սաղմնու 102	247
Սաղմնու 103	251
Սաղմնու 104	255
Սաղմնու 105	260
Սաղմնու 106	265

Սաղմնու 107	271
Սաղմնու 108	272
Սաղմնու 109	275
Սաղմնու 110	278
Սաղմնու 111	279
Սաղմնու 112	280
Սաղմնու 113	281
Սաղմնու 114	282
Սաղմնու 115	285
Սաղմնու 116	287
Սաղմնու 117	288
Սաղմնու 118	291
Սաղմնու 119	314
Սաղմնու 120	315
Սաղմնու 121	316
Սաղմնու 122	317
Սաղմնու 123	318
Սաղմնու 124	319
Սաղմնու 125	320
Սաղմնու 126	321
Սաղմնու 127	322
Սաղմնու 128	323
Սաղմնու 129	324
Սաղմնու 130	325
Սաղմնու 131	326
Սաղմնու 132	328
Սաղմնու 133	329
Սաղմնու 134	330

Սաղմոս 135 332
 Սաղմոս 136 336
 Սաղմոս 137 338
 Սաղմոս 138 339
 Սաղմոս 139 342
 Սաղմոս 140 344
 Սաղմոս 141 346
 Սաղմոս 142 347
 Սաղմոս 143 349
 Սաղմոս 144 351
 Սաղմոս 145 355
 Սաղմոս 146 356
 Սաղմոս 147 358
 Սաղմոս 148 359
 Սաղմոս 149 361
 Սաղմոս 150 362

ՕՐՀՆՈՒԹԻԻՆՆԵՐ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Մեծացուցել 365
 Օրհնութիւն Ջափարիայի 366
 Սիմէոն ծերունիի օրհնութիւնը 367
 Օրհնեալ է Աստուած 368
 Գոհութիւն Աստուծոյ 369
 Ան՝ որ Աստուծոյ կերպարանքն ունէր 370
 Արժանի ես, Տէր եւ Աստուած մեր 371
 Աստուած Տէր եւ Քազաւոր 372
 Աստուած կը Քազաւորէ 372
 Գովարանութիւն 373

ՕՐՀՆՈՒԹԻԻՆՆԵՐ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Օրհնեսցուք զՏէր 375
 Մտի՛կ ըրէ երկինք 378
 Հուրը բորբոքեցաւ 381
 Ես եմ՝ այն որ է 384
 Աննայի օրհներգութիւնը 385
 Իմաստունը կը կառուցանէ 387
 Երանի՛ իմաստուն մարդուն 388
 Արդարներու հոգին 389
 Արդարին հանգիստը 391
 Ամէն բան իր ժամանակն ունի 392
 Աղօթք՝ իմաստութեան համար 394
 Վերջին օրերուն 396
 Խաղաղութեան իշխանը 397
 Գոհարանութիւն Տիրոջ 398
 Հոգիս կը հսկէ գիշերը 399
 Երբ աւարտին հասնի կեանքս 401
 Միտքարեցէ՛ք իմ ժողովուրդս 403
 Ահաւասիկ ձեր Աստուածը 404
 Որո՞ւ կը նմանցնէ՛ք Տէրը 405
 Նոր երգեր երգեցէ՛ք Տիրոջ 407
 Դո՛ւն ես Աստուածը եւ չէինք գիտեր 408
 Այսպէ՛ս կ'ըսէ Տէրը 410
 Տիրոջ փահմաններ պիտի կոչուի՛ք 412
 Որախութեամբ կը ցնծամ 412
 Լուսաւորուէ՛ երուսաղէմ 413
 Ես չեմ լոեր 414

Լսեցէ՛ք Աստուծոյ խօսքը	415
Արցունք քափեցէ՛ք	416
Օրհնեալ ըլլայ այն մարդը	417
Լսեցէ՛ք այս պատգամը	417
Տէր, տե՛ս եւ նայէ՛	418
Տառապանքիս անդունդէն	419
Յիշէ՛, Տէր, ինչ որ կրեցիմք մե՛նք	420
Ես պիտի առնեմ ձեզ հեթանոսներէն	422
Վերադառնամք մեր Աստուծոյն	423
Անձկութեանս մէջ	424
Լսեցի՛, Տէր, ձայնդ եւ վախցայ	425
Իմ հոգիս պիտի հեղում	428
Տիրոջ պատգամն է այս	429
Ազարիայի օրհներգը	430
Երեք երիտասարդներու օրհներգը	433
Ապաշխարութեան աղօթք Մանասէի	436